

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԳ 342(479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ)0  
Մ 246

ՄԱՆԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՐՏՅՈՍԻ

*Հրատարակության է երաշխավորել  
Երևանի պետական համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Գիտական խորհրդատու՝ *իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյան*

*Մանասյան Ա.Ա. – ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի  
խորհրդական, իրավաբանական գիտություն-  
ների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրա-  
վունքի ամբիոնի դասախոս*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ

Մ 246 Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավա-  
կան համակարգում և դրանց դերը Սահմանադրության  
կայունության ապահովման գործում/ Ա. Մանասյան, Եր.– ԵՊՀ.  
իրատ., 2013, 248 էջ:

ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ

ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սենագրության շրջանակներում հետազոտվել են «Սահմանադրության կա-  
յունություն ու զարգացում» հասկացությունները, Սահմանադրության զարգաց-  
ման եղանակները, Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության ա-  
ռանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, սահմանադրա-  
կան դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավունքի աղբյուրների համակարգում,  
ինչպես նաև հիշյալ մարմնի իրավական դիրքորոշումների հատկանիշներն ու ո-  
րոշումների կատարման առանձնահատկությունները: Նշված հիմնախնդիրների  
ուսումնասիրության արդյունքում Հեղինակի կողմից կատարվել են բազմաթիվ  
տեսական եզրահանգումներ և ներկայացվել են ՀՀ օրենսդրության ու սահմա-  
նադրական դատարանի պրակտիկայի կատարելագործման մի շարք գործնա-  
կան առաջարկություններ:

Նախատեսված է սահմանադրական իրավունքի, իրավունքի տեսության ու  
փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության հարցերով հետաքրքր-  
վող ընթերցողների լայն շրջանակի համար:

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԳ 342(479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ)0

ISBN 978-5-8084-1752-6

© Մանասյան Ա., 2013

ANAHIT MANASYAN

THE PLACE OF THE CONSTITUTIONAL COURT  
DECISIONS IN THE LEGAL SYSTEM OF THE  
REPUBLIC OF ARMENIA AND THEIR ROLE IN  
ENSURING THE STABILITY OF THE CONSTITUTION

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ  
ՋԱՐԳԱՅՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ..... 10

§ 1. Սահմանադրության կայունությունը և դրա իրավական բնույթը. 10

§ 2. Սահմանադրության զարգացումն ու դրա նշանակությունը  
սահմանադրականության ամրապնդման գործում ..... 40

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ՏԵՂԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ ..... 56

§ 1. Սահմանադրական դատարանի որոշումները՝ որպես ՀՀ  
իրավունքի առանձնահատուկ աղբյուր..... 56

§ 2. Իրավական դիրքորոշումները՝ որպես ՀՀ սահմանադրական  
դատարանի որոշումների անքակտելի բաղկացուցիչ տարր ..... 77

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ..... 117

§ 1. ՀՀ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը՝  
որպես Հիմնական օրենքի զարգացման  
կարևորագույն գրավական ..... 117

§ 2. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը՝  
որպես հայ սահմանադրականության ամրապնդման երաշխիք..... 145

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ..... 193

ՔԵՅՈՄԵ ..... 209

SUMMARY ..... 213

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 216

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ իրավական մտքի զարգացման արդի փուլում սահմանադրականության և պետության սահմանադրական կարգի ամրապնդումը մեծապես պայմանավորվում է սահմանադրական դատարանի որոշումների ընդունման ու կատարման արդյունավետ համակարգի առկայությամբ: Այդ որոշումները բացառիկ կարևորություն ունեն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և հանդիսանում են սահմանադրական արժեքների արմատավորման կարևորագույն գրավականն ու միջոցը: Չնայած այդ հանգամանքին՝ նորաստեղծ հիշյալ ինստիտուտի ու վերջինիս ակտերի առնչությամբ տեսության մեջ և պրակտիկայում առկա են բազմաթիվ խնդրահարույց հարցեր, որոնց լուծման պարագայում միայն սահմանադրական դատարանի որոշումները կարող են լիարժեք իրականացնել իրենց առաքելությունը: Առաջին հերթին հարկ է նկատի ունենալ, որ, չնայած քննարկվող որոշումների ուսումնասիրության ընթացքում առավելապես շեշտադրվում է դրանց դերը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը կամ անհամապատասխանությունն արձանագրելու գործում, ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ ակտերի նշանակությունը դրանով չի սահմանափակվում: Վերջիններիս կարևորագույն առաքելություններից մեկը Հիմնական օրենքի կայունությունն ու զարգացումն ապահովելն է, որպիսի հանգամանքը գրեթե ուսումնասիրված չէ հայ իրավական մտքի շրջանակներում: Ավելին, ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ չկան համալիր գիտական հետազոտություններ նաև «Սահմանադրության կայունություն» ու «Սահմանադրության զարգացում» հասկացությունների և դրանց բովանդակության առնչությամբ, ու այդ առումով հանդիպող առանձին վերլուծությունները վերաբերում են առավելապես հիշյալ կատեգորիաների այս կամ այն առանձին ասպեկտին: Ընդ որում՝ հատկանշական է, որ եթե «Սահմանադրության կայունություն» հաս-

կացության պարագայում խնդիրը վերջինիս իմաստի առնչությամբ միասնական մոտեցման բացակայությունն է, ապա նույնը չի կարելի ասել «Սահմանադրության զարգացում» եզրույթի առնչությամբ, որի բովանդակությունն ընդհանրապես բացահայտված չէ իրավաբանական գրականության շրջանակներում: Իսկ այդ հանգամանքն իր հերթին անհնար է դարձնում Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու գործում սահմանադրական դատարանի ունեցած դերակատարության լիարժեք վերլուծությունը: Հետևաբար ակնհայտ է, որ սահմանադրականության ամրապնդման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեցող հիշատակված հիմնահարցերը սահմանադրագիտության զարգացման ժամանակակից փուլում պահանջում են լուրջ ուսումնասիրություն, ինչը վկայում է հետազոտության թեմայի արդիականության մասին:

Գաղտնիք չէ և այն, որ իրավաբանական գրականության մեջ բացակայում է միասնական մոտեցումը սահմանադրական դատարանի որոշումների բնույթի վերաբերյալ, ինչը մեծապես խոչընդոտում է վերջիններիս կատարման լիարժեք համակարգի արմատավորմանն ու այդ բնագավառին առնչվող գործնական հիմնախնդիրների կարգավորմանը: Ավելին, հաճախ հիշյալ որոշումների նշանակությունը սահմանափակվում է սոսկ վիճարկվող ակտի սահմանադրականության առնչությամբ սահմանադրական դատարանի եզրահանգման շրջանակներով, և պատշաճ ուշադրության չեն արժանանում Դատարանի այլ իրավական դիրքորոշումները: Մինչդեռ դրանք լուրջ դերակատարություն ունեն Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու, հետևաբար՝ երկրում սահմանադրականության ամրապնդման տեսանկյունից, ինչը ենթադրում է, որ վերջիններիս բնույթի ու իրացման կառուցակարգերի առնչությամբ պետք է ձևավորվի հետևողական մոտեցում: Այդ հանգամանքը ենթադրում է նաև սահմանադրական դատարանի հիմնական գործառույթներից մեկի՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության վերա-

բերյալ մշակված տեսության առկայություն, քանզի վերջինս հանդիսանում է Հիմնական օրենքի կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն գրավականներից մեկը: Մինչդեռ հայ իրավական մտքի շրջանակներում հիշյալ ինստիտուտը չի ընկալվում որպես այդ նպատակին ուղղված հիմնական միջոց, և ձևավորվել է այնպիսի մտայնություն, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական դատարանը չի տալիս Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն: Ակնհայտ է, որ այդ հանգամանքները լուրջ խոչընդոտ են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու լիարժեք համակարգի ձևավորման տեսանկյունից, հետևաբար, ունեն հրատապ հաղթահարման կարիք: Առկա չէ նաև միասնական մոտեցում սահմանադրական դատարանի որոշումների կատարման կառուցակարգերի առնչությամբ, ինչն այդ բնագավառում հանգեցնում է ոչ միայն տեսական, այլ նաև գործնական լուրջ խնդիրների: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրության կայունության ու զարգացման, այդ բնագավառում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների դերի, դրանց բնույթի, որոշումներում արտահայտվող իրավական դիրքորոշումների, Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության և քննարկվող որոշումների կատարման կառուցակարգերի առնչությամբ միասնական ու մշակված տեսության բացակայությունը հանգեցրել է նաև գործնական լուրջ հիմնախնդիրների, որոնք պահանջում են հրատապ լուծում ու վկայում են հետազոտության թեմայի արդիականության մասին:

Հենց վերը նշված հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու դրանց լուծումների բացահայտմանն է նվիրված հիշյալ աշխատությունը, որի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն առաջին անգամ համալիր ուսումնասիրվել են Սահմանադրության կայունության ու զարգացման գործում ունեցած դերակատարության տեսանկյունից: Բացահայտվել է «Սահմանադրության կայունություն» ու «Սահմանադրության զարգա-

ցում» հասկացությունների բովանդակությունը, մշակվել է առաջինի ընդհանուր բնորոշումը, և տրվել է «Սահմանադրության զարգացում» եզրույթի սահմանումը: Հիմնավորվել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հանդիսանում են իրավաստեղծ գործունեության արդյունք ու իրավունքի աղբյուր: Աշխատության շրջանակներում առաջին անգամ քննարկվող որոշումները խորությամբ վեր են լուծվել նախադեպի ինչպես անգլոսաֆերիկյան, այնպես էլ ռոմանագերմանական դոկտրինների համատեքստում, հիմնավորվել է, որ դրանց առանձնահատկությունների տեսանկյունից ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հանդես չեն գալիս իրավունքի հիշյալ աղբյուրի տեսքով, այլ հանդիսանում են նոր իրավական երևույթ ու իրավունքի առանձնահատուկ աղբյուր: Տրվել է «սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշում» հասկացության ընդհանուր բնորոշումը, հիմնավորվել է հիշատակված իրավական դիրքորոշումների պարտադիր բնույթը, առաջին անգամ ներկայացվել են սահմանադրական դատարանի և այլ դատական ատյանների միջև օրենքի մեկնաբանության հարցում իրավասությունների սահմանազատման չափանիշները: Աշխատանքում համակողմանի հետազոտվել է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում, մշակվել են վերջինիս մեթոդների ճիշտ ընտրության ու սահմանների հստակեցման չափանիշները: Առաջարկվել է նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման ու հիշյալ գործընթացի ապահովման գործում մեխանիզմ: Արդյունքում ոչ միայն կատարվել են տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են ՀՀ օրենսդրության ու սահմանադրական դատարանի պրակտիկայի կատարելագործման մի շարք գործնական առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել ինչպես հետագա գիտական հետազոտություններում, այնպես էլ այն բոլոր ուսումնական դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է հայ սահմանադրականության զարգացման գործում սահմանադրական դա-

տարանի որոշումների ունեցած դերակատարությանը: Հիմնախնդրի առնչությամբ կատարված վերլուծությունը, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել նաև ՀՀ օրենսդրության ու սահմանադրական դատարանի պրակտիկայի կատարելագործմանը, ինչպես նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման լիարժեք համակարգի ձևավորմանը:

## ԳԼՈՒԽ 1.

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍԻՄՊՆԴԻՍԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ

### § 1. Սահմանադրության կայունությունը և դրա իրավական բնույթը

Կայունությունը Սահմանադրության կարևորագույն հատկանիշներից է, որը հանդես է գալիս որպես սահմանադրականության ամրապնդման ու զարգացման կարևորագույն գրավական: Դա պատահական չէ, քանզի վերջին հարյուրամյակների ընթացքում **համակարգային կայունության** երաշխավորի դերը գերազանցապես վերապահվել է պետության Հիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությանը: Պատճառն այն է, որ հենց վերջինս է ամրագրում կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար<sup>1</sup>: Սահմանադրությունը պետականության յուրօրինակ ատրիբուտ է, որն արտացոլում է ոչ միայն ամբողջ համաշխարհային հանրության, այլ նաև կոնկրետ հասարակության և պետության զարգացման մակարդակն ու միտումները, հասարակական հարաբերությունների հիմքը կազմող սկզբունքներն ու կանոնները, տվյալ միջավայրում իշխանության իրականացման կարգն ու սահմանները և ան-

<sup>1</sup> Տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, էջ 11-12:

հատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը: Հետևաբար, «Սահմանադրությունը հանդիսանում է **կենսագոյի հիմնական կանոնների** շուրջ հասարակական համաձայնություն»<sup>2</sup> և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին ու կազմում են **վերջինիս շրջանակներում առաջացող հարաբերությունների «միջուկը», էությունը**, որպիսի հանգամանքը ենթադրում է հիշյալ կարգավորումների կայունության անհրաժեշտություն:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի «Սահմանադրության կայունություն» հասկացության առնչությամբ, և կարելի է հանդիպել վերջինիս բազմապիսի բնորոշումների: Հեղինակների մի մասի կարծիքով, Սահմանադրության կայունությունը սահմանադրական կարգավորումների անփոփոխելիությունն է<sup>3</sup>, Սահմանադրության բովանդակության կայունությունը, ինչպես նաև ընթացիկ օրենքների համեմատությամբ սահմանադրական նորմերի փոփոխման առավել բարդացված կարգը<sup>4</sup>: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ վերջինս Սահմանադրության հիմնական դրույթների անփոփոխելիությունն է հասարակության անփոփոխ սոցիալ-քաղաքական միջավայրի պայմաններում<sup>5</sup>: Իրավաբանական գրականության մեջ Հիմնական օրենքի հիշյալ հատկանիշը բնորոշվում է նաև որպես Սահմանադրության սկզբնական տեքստի՝ իրավա-

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 19:

<sup>3</sup> Տե՛ս Михалева Н. Конституционное право зарубежных стран СНГ. М. 1999, [http://pravo.xpcc.ru/book\\_z1019\\_page\\_23.html](http://pravo.xpcc.ru/book_z1019_page_23.html):

<sup>4</sup> Տե՛ս Балагурова Н. Стабильность конституционных норм и обеспечение их соответствия складывающимся общественно-политическим отношениям // Вестник Челябинского государственного университета, 2009, № 15 (153), էջ 16, [www.lib.csu.ru/vch/153/003.pdf](http://www.lib.csu.ru/vch/153/003.pdf):

<sup>5</sup> Տե՛ս Червонюк В. Конституционное право России. М., 2004, <http://pravoznavc.com.ua/books/97/5891/24/>:

կան առումով երկարակեցություն<sup>6</sup>, ժամանակի ընթացքում սահմանադրական կարգավորումների կենսունակություն<sup>7</sup>: Որոշ հեղինակներ էլ կարծում են, որ կայունությունը Սահմանադրության երկարատև գործողությունն է՝ առանց վերջինիս շրջանակներում էական փոփոխություններ կատարելու<sup>8</sup>: Հետաքրքիր է Հիմնական օրենքի կայունության առնչությամբ ներկայացված և այն տեսակետը, համաձայն որի՝ վերջինս երկրի հիմնական համակարգերի կայունությունն է, ինչը հանդիսանում է քաղաքական տևական կայունության նախապայմանը<sup>9</sup>: Հետևաբար, քննարկվող հատկանիշն իր արտահայտությունն է գտնում սահմանադրական կարգավորումների անփոփոխելիության, կայունության բարձր մակարդակի պահպանման և իշխանության եկող փոփոխվող քաղաքական ուժերի ազդեցությանը ենթակա չլինելու մեջ<sup>10</sup>: Իսկ Ռ-Գ Պետական դումայի նախկին նախագահ Բորիս Գրիգորովի խոսքերով՝ «Սահմանադրության կայունությունը սոցիալական կյանքի կայունությունն է, այն ներդրումային գրավչությունն է, իրավական համակարգի թափանցիկությունը»<sup>11</sup>:

Վերը շարադրված բնորոշումների բազմազանությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի Սահմանադրության քննարկվող հատկանիշի բովանդակության առնչությամբ, որպիսի

<sup>6</sup> Տե՛ս Negretto G. L. The Durability of Constitutions in Changing Environments: A Study on Constitutional Stability in Latin America, <http://verfassungswandel.files.wordpress.com/2008/10/14-negretto-paper.pdf>:

<sup>7</sup> Տե՛ս L. Van den Hauwe Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics. Brussels, Belgium, Copyright 1999 Ludwig Van den Hauwe, էջ 632, [encyclo.findlaw.com/0610book.pdf](http://encyclo.findlaw.com/0610book.pdf):

<sup>8</sup> Տե՛ս Авакьян С. Конституционное право России. Том 1. М., 2010, էջ 189:

<sup>9</sup> Տե՛ս Advance with the Times // 10<sup>th</sup> National People's Congress and Chinese People's Political Consultative Conference, <http://www.china.org.cn/english/10th/88511.htm>:

<sup>10</sup> Տե՛ս Правоведение: Учебник / под ред. Мальцева Г., 2003, [http://lawtoday.ru/razdel/biblio/pravoved/DOC\\_064.php](http://lawtoday.ru/razdel/biblio/pravoved/DOC_064.php):

<sup>11</sup> Տե՛ս Грызлов Б. Конституция останется неизменной, <http://gryzlov.ru/index.php?page=smi&id=223>:

հանգամանքի վերլուծությանը հարկ ենք համարում անդրադառնալ աշխատանքի հիշյալ հատվածում<sup>12</sup>:

Առաջին հերթին նշենք, որ սոցիոլոգիայում հասարակության կայունության առնչությամբ ընկալումների զարգացումը պայմանականորեն բաժանվում է երեք փուլերի: Առաջին փուլին բնորոշ է կայունության և փոփոխելիության փոխբացառումը: Այս փուլում համակարգի հիշյալ երկու չափանիշների հարաբերակցությունը դիտարկվում է որպես խիստ սիմետրիկ, իսկ առավելությունը տրվում է **ստատիկ կայունությանը**: Երկրորդ փուլում սկսում է քննարկվել **դինամիկ կայունության** գաղափարը: Չնայած «կայունություն» և «հավասարակշռություն» հասկացությունների առնչությամբ առկա խառնաշփոթին՝ առաջինն արդեն չի բացառում փոփոխությունների հնարավորությունը, և առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում դինամիկ, այլ ոչ ստատիկ կայունության գաղափարը: Երրորդ փուլում արդեն կայունությունը սկսում է ընկալվել որպես համակարգի պահպանման և նրա փոփոխելիության միասնություն: Կայունությունը և շարժունակությունը այլևս չեն դիտարկվում որպես անհաշտելի հակադրություններ, անհամատեղելի երևույթներ<sup>13</sup>:

Ժամանակակից գիտության մեջ կայունությունը դիտարկվում է որպես համակարգի պարամետրերի պահպանում և վերադարձ դեպի այդ պարամետրերը հարկադրված շեղումների դեպքում, ինչպես նաև՝ միաժամանակյա փոփոխության, «կանոնակարգված ու կազմակերպված փոփոխության» գործընթաց<sup>14</sup>: Այն արտահայտում է համակարգի հնարավորությունը՝ երկարատև ժամանակահատվածում պահպանելու **դինամիկ հավասարակշռու-**

<sup>12</sup> Հարկ է նկատել, որ աշխատանքի շրջանակներում հիշյալ հատկանիշն ուսումնասիրվում է, այսպես կոչված, «գրված Սահմանադրությունների» տեսանկյունից:

<sup>13</sup> Տե՛ս Գուց Ա. Глобальная этносоциология: Учебное пособие. Омск, 1997, <http://www.univer.omsk.su/MEP/ch7st.win.htm>:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

յուն<sup>15</sup> և ժամանակի մեջ մնալու անփոփոխ **սահմանված կամ ողջամտորեն ակնկալվող պայմաններում**<sup>16</sup>:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ Սահմանադրության տեսանկյունից նույնպես «կայունությունն» ու «փոփոխելիությունը» կամ «զարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն: Կայունության էության հիմքում ընկած է ոչ թե համակարգը այլ համակարգերից մեկուսացնելու ու տեղի ունեցող փոփոխություններից պաշտպանելու, այլ այդ փոփոխությունները կանոնակարգված ձևով հաշվի առնելու համար հնարավորություններ ստեղծելու կարողությունը<sup>17</sup>: Իսկ դա նշանակում է, որ եթե նույնիսկ կայունությունը ենթադրում է անփոփոխելիություն, ապա միայն չփոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Մինչդեռ նույնը չի կարելի ասել հակառակ իրավիճակի մասին, որպիսի պայմաններում համակարգը, տվյալ պարագայում Սահմանադրությունը, պետք է ունենա տեղի ունեցող փոփոխություններին արձագանքելու ու դրանք հաշվի առնելու ունակություն, ինչն իր հերթին պահանջում է, որպեսզի քննարկվող հատկանիշը ենթադրի նաև փոփոխությունների հնա-

<sup>15</sup> Տե՛ս Политология: энциклопедический словарь / общ. ред. и сост. Аверьянов Ю.И. М., 1993, էջ 281:

<sup>16</sup> Տե՛ս <http://www.businessdictionary.com/definition/stability.html>:

<sup>17</sup> Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ մարդկային հասարակությանը հատուկ է ինքնապահպանման ձգտումը, որն իրացվում է ոչ թե գոյություն ունեցող հարաբերություններն անփոփոխ վիճակում պահպանելու, այլ դրանց զարգացման, հասարակական հարաբերությունների և ինստիտուտների փոփոխման միջոցով (տե՛ս Пряхина Т. Конституционная доктрина РФ. М., 2006, էջ 302): Հետևաբար, Սահմանադրությունը նույնպես չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին՝ դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Սահմանադրությունը չի կարող սահմանադրական փակուղիների հանգեցնել, այն քաղաքացիական հասարակության զարգացման ամենագործուն խթանը պետք է լինի: Չնախելված քաղաքացիական հասարակության առկայությունը պայմանավորվում է նաև նրանով, որ սահմանադրական ոչ լիարժեք լուծումները դրա համար պարարտ հող են ստեղծում (տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էջ 67, 96):

րավորություն<sup>18</sup>: Հակառակ պարագայում Հիմնական օրենքը կվերաճի «մեռած իրավական ակտի», փաստացի հարաբերություններից անկախ գործող սոսկ փաստաթղթային մի լուծումի, որն իրականում ի վիճակի չէ իրականացնելու իր գործառույթները և կարգավորելու հասարակական հարաբերությունները, ինչը, բնականաբար, կհանգեցնի համակարգի լճացման: Հետևաբար, Սահմանադրության կայունության առնչությամբ առաջին կարևոր եզրահանգումն այն է, որ վերջինս չպետք է դիտարկվի որպես Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների անփոփոխելիություն<sup>19</sup>:

Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել այն, որ քննարկվող հանգամանքը չի ենթադրում համակարգի «միջուկը», էությունը հիմնավորապես փոփոխելու հնարավորություն: Պատճառն այն է, որ ցանկացած ամբողջական համակարգ ունի մի ինտեգրատիվ որակ, որի հիմքի վրա էլ ձևավորվում է հիշյալ ամբողջ համակարգը և այն ելակետային վիճակը, որից կատարվում են անցումները նոր վիճակների: Հետևաբար, այդ որակական առանձնահատկության բացակայության պայմաններում օբյեկտը դադարում է քննարկ-

<sup>18</sup> Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ հաջողության են հասնում այն սահմանադրական համակարգերը, որոնցում համադրված են ընթացակարգային կայունությունն ու նյութական ճկունությունը, այսինքն՝ այն համակարգերը, որոնցում քաղաքական գործընթացների ընդհանուր կանոնները փոխանցվում են սերնդեսերունդ՝ միևնույն ժամանակ հարմարեցվելով ներքին ու արտաքին տնտեսական, սոցիալական, մշակութային և իշխանական հարաբերությունների փոփոխվող պայմաններին (տե՛ս Encyclopaedia Britannica, Vol. 5, 1977; pp.84-88, 93-98, Constitutional Law, [http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207\\_Public\\_Law\\_1/Readings/la207\\_encybrit\\_constitutional\\_law.html](http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207_Public_Law_1/Readings/la207_encybrit_constitutional_law.html)):

<sup>19</sup> Վերջին տարիներին իրավաբանական գրականության մեջ նույնպես գերակշռող է դառնում այն տեսակետը, որ կայունությունը չի նշանակում օրենսդրության (նաև Սահմանադրության) անփոփոխելիություն, ինչն այն կարող է դարձնել կարծրացած, իրականությանը չհամապատասխանող (տե՛ս Кашанина Т. Юридическая техника. М., 2011, էջ 156, Negretto G. L., նշված աշխատությունը): Ավելին, սահմանադրություններն ընկալվում ու գրվում են եթե ոչ ընդմիջտ, ապա առնվազն ապագայի անորոշ ժամանակահատվածի ընթացքում գոյատևելու նպատակով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C. Oxford and Portland, Oregon, 2011, էջ 172):

վող կոնկրետ համակարգը լինելուց, որպիսի պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ խոսել նաև վերջինիս կայունության ու զարգացման մասին: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Սահմանադրության կայունություն» հասկացությունը ենթադրում է փոփոխությունների հնարավորություն, սակայն այնպիսի փոփոխությունների, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»<sup>20</sup>:

Ամփոփելով ներկայացրած վերլուծությունը՝ նշենք, որ կայուն է ոչ թե այն Սահմանադրությունը, որը չի ենթարկվում փոփոխությունների, այլ այն, որում կատարվող փոփոխությունները չեն խաբխարում Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներն ու արժեքները: Հետևաբար, Սահմանադրության հիշյալ հատկանիշի հիմքում ընկած է դինամիկ, այլ ոչ ստատիկ կայունության գաղափարը, և կայունության հատկանիշը ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է Հիմնական օրենքի զարգացում, որպիսի պայմաններում միայն Սահմանադրությունը կարող է հանդես գալ որպես «կենդանի փաստաթուղթ»<sup>21</sup> և լինել հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ կայունությունը կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն հանդիսացող Սահմանադրության այն հատկանիշն է, որը ենթադրում է վերջինիս կենսունակություն և անփոփոխելիություն չփոփոխվող հասարակական հարաբերությունների

<sup>20</sup> Այդ առումով հիշատակման է արժանի ՀՀ Սահմանադրության 114 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Հետևաբար, սահմանադիրը հենց այդ դրույթներն է համարել հասարակական հարաբերությունների միջուկը՝ արգելելով դրանց փոփոխումը, որպիսի հանգամանքն առավել մանրամասն կվերլուծենք Սահմանադրության զարգացմանն առնչվող հիմնախնդիրներին անդրադառնալիս:

<sup>21</sup> Ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում լայնորեն տարածված է այն տեսակետը, որ հիշյալ հասկացությունը Սահմանադրությունը համեմատելի է դարձնում կենդանի օրգանիզմի հետ, որը զարգանում և փոփոխվում է իրականության պահանջներին զուգընթաց (տե՛ս Balkin J. Living Originalism. London, 2011, էջ 278):



պայմաններում՝ հաշվի առնելով այն, որ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Սահմանադրությունն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին՝ հանդիսանալով դրանց ելակետային կարգավորիչը:

Ակնհայտ է, որ հիշյալ նպատակի իրականացումն ու կայունության հատկանիշի ձևավորումը պահանջում են սահմանադրական նորմերի ամրագրման ու իրացման համար անհրաժեշտ որոշակի կառուցակարգերի առկայություն, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Նշենք, որ գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի այդ կառուցակարգերի առնչությամբ, և հեղինակների մեծ մասը քննարկվող հիմնախնդրին անդրադառնալիս շեշտադրում է Հիմնական օրենքի հիշյալ հատկանիշի առկայությունը պայմանավորող գործոններից ու չափանիշներից կոնկրետ մեկի կարևորությունը: Այսպես, գիտնականների մի մասի կարծիքով, Սահմանադրության կայունության հատկանիշն առաջին հերթին պայմանավորված է Սահմանադրության հիման վրա ձևավորվող առանձին ինստիտուտների առկայությամբ: Նրանք նշում են, որ իշխանությունների տարանջատման սկզբունքի արտահայտությունը հանդիսացող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ընտրությունները, խորհրդարանական երկպալատ համակարգը, գործադիր իշխանության ղեկավարի ունեցած վետոյի իրավունքը կամ ֆեդերալիզմը, կարող են դրական ազդեցություն ունենալ Սահմանադրության երկարակեցությունն ապահովելու տեսանկյունից, քանզի դրանց արդյունքում, որպես կանոն, քաղաքական գործիչների մոտ չեն ձևավորվում գոյություն ունեցող կարգավորումները փոխելու շարժառիթներ: Նշված հեղինակների կարծիքով, նույն դերակատարությունը կարող են ունենալ նաև Սահմանադրության՝ որպես բարձրագույն օրենքի պաշտպանության համար նախատեսված այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են փոփոխման բարդացված կարգը կամ սահմանադրական արդարա-

դատությունը՝ սահմանադրական փոփոխությունները վերածելով բարդ գործընթացի և ստեղծելով Սահմանադրությունը քաղաքական, սոցիալական կամ տնտեսական միջավայրի զարգացումներին հարմարեցնելու ոչ պաշտոնական կառուցակարգեր:

Ամփոփելով շարադրված տեսակետները՝ նշենք, որ դրանց էությունը կայանում է հետևյալում՝ սահմանադրական այն դրույթների առկայության պայմաններում, որոնք վերաբերում են իշխանությունների տարանջատմանը կամ նախատեսված են Սահմանադրության՝ որպես բարձրագույն օրենքի պաշտպանության համար, առավել փոքրաճանաչում է Սահմանադրությունը փոփոխելու (կամ ինչպես նրանք են նշում, փոխարինելու) վտանգը<sup>22</sup>:

Անկասկած, Սահմանադրությամբ տարատեսակ ժողովրդավարական ինստիտուտների ամրագրումը կարևոր նշանակություն ունի վերջինիս կայունությունն ապահովելու տեսանկյունից: Սակայն, մեր կարծիքով, այն Սահմանադրության հիշյալ հատկանիշի առկայությունը պայմանավորող ելակետային ու միանշանակ գործոնը չէ: Պատճառն այն է, որ երբեմն Հիմնական օրենքն ամրագրում է հիշատակված արժեքներն ու սկզբունքները, սակայն այդ կարգավորումը համարժեք չի լինում իրականում գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին, իսկ Սահմանադրության տեքստի՝ որոշակի ժամանակահատվածում անփոփոխելիությունը պայմանավորված է լինում ոչ թե վերը նշված ինստիտուտների ամրագրմամբ, այլ տարատեսակ քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ հանգամանքներով: Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ Հիմնական օրենքով սահմանված չլինեն հիշատակված ինստիտուտների առանձին տարրեր, սակայն դրանք արմատավորվեն Սահմանադրությամբ նախատեսված այլ եղանակներով, օրինակ՝ պաշտոնական մեկնաբանության միջոցով: Հետևաբար, մեր կարծիքով, թեև ներկայացված հանգամանքների սահմանադրական ամրագրումը կարևոր նշանակություն ունի Հիմնական օրենքի կայունությունն ապահովելու տե-

<sup>22</sup> St'u Negretto G. L., նշված աշխատությունը:

սանկյունից, սակայն բոլոր դեպքերում չէ, որ հենց վերջինս է միանշանակորեն վկայում Սահմանադրության քննարկվող հատկանիշի առկայության մասին:

Սահմանադրության փոփոխման բարդացված կարգի առնչությամբ վկայակոչված հեղինակները գտնում են, որ այն, ժամանակի և ռեսուրսների տեսանկյունից մեծացնելով փոփոխությունների համար անհրաժեշտ ծախսերի ծավալը, հանգեցնում է կայունության հատկանիշի ձևավորմանը: Մեր կարծիքով, սակայն, այդ հանգամանքը նույնպես չի հանդիսանում Սահմանադրության կայունության հատկանիշի առկայության միանշանակ վկայություն<sup>23</sup>: Պատճառն այն է, որ հնարավոր են իրավիճակներ, երբ Սահմանադրության տեքստն անփոփոխ մնա փոփոխված հասարակական հարաբերությունների պայմաններում՝ չզարգանալով մաս փոփոխություններից զատ նախատեսված այլ եղանակներով: Տվյալ պարագայում, սակայն, Սահմանադրությունը չի ունենա փոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններին հարմարվելու ունակություն, այդ հարաբերությունները կարտացոլի քարացած վիճակում, հանդես չի գա որպես դրանց ելակետային կարգավորիչ, հետևաբար, օժտված չի լինի կենսունակության հատկանիշով ու չի լինի կայուն<sup>24</sup>: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ Սահմանադրության փոփոխման բարդացված կարգը կարող է հանդես գալ որպես Սահմանադրության կայունության հատկանիշի առկայության համար կարևորություն ունեցող գործոն սուսկ այն դեպքում, երբ նախատեսված

<sup>23</sup> Այդ մասին է վկայում մաս այն երկրների փորձը, որոնք, չնայած փոփոխման բարդ ընթացակարգին, աչքի են ընկնում Սահմանադրության փոփոխությունների մեծաքանակությամբ, օրինակ՝ Գերմանիան (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 145-146):

<sup>24</sup> Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ կոշտ Սահմանադրության պարագայում բարդանում է ոչ միայն բացասական, այլ մաս **քարենպաստ** փոփոխություններ կատարելու հնարավորությունը (տե՛ս նույն տեղում, էջ 425):

լինեն զարգացող հասարակական հարաբերություններին հարմարվելու համար անհրաժեշտ այլ կարգավորումներ<sup>25</sup>:

Ինչ վերաբերում է սահմանադրական արդարադատությանը, նշենք, որ գրականության մեջ Հիմնական օրենքի կենսունակության էական պայմաններից է դիտարկվում Սահմանադրության հարմարվողականությունն<sup>26</sup> ու պաշտոնական մեկնաբանության ինստիտուտի առկայությունը, որոնց կանոնադառնանք աշխատանքի հետագա շարադրանքի ընթացքում<sup>27</sup>:

<sup>25</sup> Օրինակ՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության ինստիտուտը:

<sup>26</sup> St'e'u Ginsburg T., Melton J., Elkins Z. The Lifespan of Written Constitutions/ American Law & Economics Association Annual Meetings, <http://law.bepress.com/cgi/viewcontent.cgi?article=1934&context=alea>:

<sup>27</sup> Վերը շարադրված կառուցակարգերի առումով հարկ ենք համարում հիշատակել մաս այն հեղինակների տեսակետը, որոնք գտնում են, որ ծավալում սահմանադրություններն ավելի երկարակյաց են, քան համառոտ սահմանադրությունները, և սահմանադրական նորմերի ամրագրման հիշյալ տարբերակը ներկայացնում են որպես Սահմանադրության կենսունակության վրա ազդեցություն ունեցող գործոն (տե՛ս նույն տեղում): Մեր կարծիքով, սակայն, **այլ անհրաժեշտ հանգամանքների առկայության պայմաններում** առավել կայուն կարող են լինել համառոտ սահմանադրությունները: Այդ առումով առաջին հերթին նշենք, որ ծավալում սահմանադրությունների առնչությամբ հիշատակված եզրահանգումը ներկայացվում է այն հեղինակների կողմից, որոնք Սահմանադրության կայունության գաղափարը հանգեցնում են վերջինիս երկարակյացությանը՝ դրա ուժի մեջ մտնելու և այլ Սահմանադրությամբ ձևական առումով փոխարինելու միջև ընկած ժամանակահատվածի առումով: Մինչդեռ Սահմանադրության կայունության առնչությամբ մեր կողմից ներկայացված տեսակետը որպես ելակետ ընդունելու դեպքում կարելի է հանգել այնպիսի եզրակացության, որ ծավալում սահմանադրություններով ամրագրված կարգավորումների ծավալը ենթադրում է դրանք զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխանեցնելու համար Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության առավել մեծ հավանականություն (այդ մասին տե՛ս մաս CDL-AD(2010)001, Report on Constitutional Amendment, Adopted by the Venice Commission at its 81st Plenary Session (Venice, 11-12 December 2009), § 185, <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29001-e.pdf>), ինչի պատճառով նվազում է վերջինիս կենսունակության մակարդակը: Տվյալ պարագայում հնարավոր է մաս հակառակ իրավիճակը, երբ սահմանադրական կարգավորումները մնան անփոփոխ՝ հետ մնալով զարգացող հասարակական հարաբերություններից, ինչը նույնպես վկայում է կայունության հատկանիշի բացակայության մասին: Հետևաբար, կարծում ենք, որ **այլ անհրաժեշտ հանգամանքների առկայության պայմաններում** առավել կայուն կարող են լինել համառոտ սահմանադրությունները:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ներկայացված հանգամանքներից որևէ մեկն ինքնին հանդես չի գալիս որպես Սահմանադրության կայունության առկայությունը պայմանավորող միանշանակ գործոն: Հետևաբար, հիշյալ համատեքստում անհրաժեշտություն է առաջանում բացահայտել սահմանադրական նորմերի ամրագրման ու իրացման այն հիմնական կառուցակարգերը, որոնց ամբողջությունն անհրաժեշտ ու բավարար է Հիմնական օրենքի քննարկվող հատկանիշի առկայության համար:

Ամերիկացի հայտնի սոցիոլոգ Պարսոնսը, անդրադառնալով այն հիմնախնդրին, թե ինչպես է համակարգը պահպանում իր կառուցվածքի կայունությունը, հանգում է այն եզրակացության, որ դա իրականացվում է «այն մեխանիզմների շնորհիվ, որոնք ապահովում են համակարգի միտումը դեպի կարգավորվածություն»: Սոցիոլոգը դրանք անվանում է կառուցվածքի պահպանման հիմնական գործառնություններ, որոնք պետք է իրականացվեն կայուն մնացող յուրաքանչյուր սոցիալական համակարգում: Դրանք են 1. ադապտացիան (սոցիալական համակարգերը պետք է հարմարեցվեն շրջակա միջավայրին, այդ թվում՝ դրա ակտիվ փոփոխություններին), 2. նպատակաուղղվածությունը (սոցիալական համակարգերը պետք է ունակ լինեն առաջ քաշելու կոնկրետ նպատակներ), 3. ինտեգրացիան (սոցիալական համակարգերը պետք է ապահովեն իրենց տարրերի համախմբվածությունը (ինտեգրացիան), ինչը ենթադրում է սոլիդարության որոշակի նվազագույն չափ), 4. լատենտ կառուցվածքի պահպանումը (սոցիալական համակարգերը պետք է ունենան ամրության ներքին պահուստներ և դիմակայեն նույնիսկ մասնակիցների միջև լարված հարաբերություններին, ինչն ապահովվում է սոցիալական ինստիտուտների միջոցով, որոնք պահպանում են հասարակական հարաբերությունների կայուն լատենտ կառուցվածքը)<sup>28</sup>:

<sup>28</sup> St'eu Абельс Х. Проблема социального порядка в социологии Талкотта Парсонса, 2002, Перевод Минакова А. / под ред. Головина Н., [http://sbiblio.com/biblio/archive/abels\\_social\\_order\\_problem/](http://sbiblio.com/biblio/archive/abels_social_order_problem/):

Կարծում ենք, որ ներկայացված կառուցակարգերի վերլուծությունն արդյունավետ է նաև Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող չափանիշների տեսանկյունից, հետևաբար, այդ չափանիշներին հարկ ենք համարում անդրադառնալ դրանց համատեքստում:

Աշխատանքի շրջանակներում արդեն ներկայացրել ենք մեր այն տեսակետը, որ Սահմանադրության «կայունությունն» ու «զարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն, և Հիմնական օրենքի կայունությունը պետք է ենթադրի զարգացող հասարակական հարաբերություններին արձագանքելու ու դրանց պայմաններին հարմարվելու ունակություն: Հետևաբար, Սահմանադրության կայունության տեսանկյունից նույնպես կարևորվում է համակարգի պահպանման՝ վերը նշված առաջին գործառնության անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է համակարգի կայունությունն ապահովող այլ կառուցակարգերին, արդեն նշեցինք, որ հիշյալ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի համակարգն ունենա ամրության ներքին պահուստներ և կարողանա դիմակայել իր տարրերի միջև առաջացող հակասություններին ու դրանց հետևանքներին: Սահմանադրության պարագայում նույնպես կարևոր է, որպեսզի վերջինս օժտված լինի հիշյալ առանձնահատկությամբ, ինչը, մեր կարծիքով, ենթադրում է, որ կայուն լինելու համար Սահմանադրությունը պետք է ինքնաբավ լինի: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ ինքնաբավ սահմանադրությունները կայունություն են պահպանում երկար ժամանակահատվածի ընթացքում՝ ստեղծելով, այսպես կոչված, «հարմարվողական արդյունավետություն», այսինքն՝ առաջացող ցնցումային իրավիճակներում սահմանադրական կարգի ընձեռած հնարավորություններին համապատասխան հարմարվելու և փոփոխված իրականության

պայմաններում արդյունավետորեն գործելու համար կառուցակարգեր ձևավորելու ունակություն<sup>29</sup>:

Քննարկվող հատկանիշի տեսանկյունից կարևոր է, որ Սահմանադրության իրացման ու պահպանության, ինչպես նաև հասարակական հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ կառուցակարգերը ընդգրկված լինեն հենց Սահմանադրության շրջանակներում՝ հնարավորություն ստեղծելով սահմանադրական նորմերի հիման վրա լուծելու առաջացող տարատեսակ հիմնախնդիրները: Հակառակ պարագայում առաջացող յուրաքանչյուր հիմնախնդրի պայմաններում Սահմանադրությունը ենթակա կլինի անընդհատ փոփոխությունների կամ թղթի վրա կմնա անփոփոխ՝ վերածվելով ձևական փաստաթղթի ու հետմնալով զարգացող հասարակական հարաբերություններից<sup>30</sup>: Իսկ նմանատիպ իրավիճակներում կրացակայեն Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող վերը նշված կարևորագույն հանգամանքները, այն է՝ Սահմանադրությունը չի լինի կենսունակ կամ ի վիճակի չի լինի հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին ու հանդես գալու որպես դրանց ելակետային կարգավորիչ: Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել և այն, որ հիշատակված հատկանիշի էությունը կայանում է ոչ թե նրանում, որ Սահմանադրությամբ ամրագրված լի-

<sup>29</sup> St'u Mittal S. Constitutional Stability in a Changing World, էջ 1, [http://politicalscience.stanford.edu/cooperationcolloqpapers/Mittal\\_cooperationmemo.pdf](http://politicalscience.stanford.edu/cooperationcolloqpapers/Mittal_cooperationmemo.pdf):

<sup>30</sup> Այդ է պատճառը, որ հեղինակների մեծ մասի կարծիքով, ինքնաբավ Սահմանադրությունը կայունություն է ապահովում այն հանգամանքի շնորհիվ, որ ամրագրում է իր նորացման համար անհրաժեշտ կառուցակարգեր հասարակական զարգացման խոչընդոտ չդառնալու նպատակով (տե՛ս Пряхина Т., նշված աշխատությունը, էջ 320): Միևնույն ժամանակ, փոփոխություններն անխուսափելի են անգամ այն պայմաններում, երբ Սահմանադրությունը չի նախատեսում նմանատիպ կառուցակարգեր: Սակայն այդ իրավիճակում դրանք ընթանում են անկանխատեսելի և սահմանադրական համաձայնության հիմքում ընկած հիմնարար արժեքներին հակասող եղանակով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 432-433):

նեն հասարակական հարաբերությունների կարգավորման բոլոր մանրամասնությունները, այլ նրանում, որպեսզի Հիմնական օրենքն ընձեռի քննարկվող բնագավառում առաջացող տարատեսակ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ կարգավորումներ գտնելու հնարավորություն<sup>31</sup>, այլ կերպ ասած՝ ունենա ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու քավարար համակարգ<sup>32</sup>:

Ինքնաբավությունը ենթադրում է նաև, որ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները կարգավորելուց բացի Սահմանադրությունը պետք է առաջ քաշի դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը<sup>33</sup>: Հիշյալ նորմ-նպատակներն ապահովում են կոնկրետ սոցիալական հանրության շրջանակներում ձևավորվող հարաբերությունների զարգացումը, ինչի բացակայության պայմաններում կայուն չի կարող լինել հասարակությունը, հետևաբար՝ նաև **համակարգային կայունության** երաշխավորի դերը ստանձնած Սահմանադրությունը, քանզի այն չի կարողանա ապահովել **դինամիկ** հավասարակշռություն և հասարակական հարաբերությունները կարտացոլի քարացած վիճակում:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է և այն, որ կայուն լինելու համար սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն: Այն դեպ-

<sup>31</sup> Օրինակ՝ սահմանադրությունները, որպես կանոն, ուղղակիորեն չեն սահմանում, թե ինչպես ընկալել սահմանադրական այս կամ այն նորմը: Սակայն նրանք նախատեսում են Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն իրականացնող մարմնի ձևավորման պահանջ կամ ամրագրում են դրույթներ, որոնք պետք է որպես ելակետ ընդունել հիշյալ նորմերի մեկնաբանության ընթացքում՝ հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում լուծելու առաջացող կոնկրետ հիմնախնդիրները:

<sup>32</sup> Այդ մասին տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էջ 96:

<sup>33</sup> Հարկ է նկատել, որ դրանք կարող են պայմանավորված լինել նաև հասարակական հարաբերությունների զարգացման համաշխարհային միտումներով:

քում, երբ Սահմանադրությունն ամրագրի նորմեր, որոնք, թեկուզ առանձին վերցրած նախատեսեն արդյունավետ կարգավորում, սակայն, միասին վերցրած, որպես ամբողջություն չկարողանան պատշաճ մակարդակով կարգավորել հասարակական հարաբերությունները, Հիմնական օրենքն ի վիճակի չի լինի իրականացնելու իր գործառույթները, հետևաբար նաև՝ լինելու կայուն: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 2 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրության մեջ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ակնհայտ է, որ հիշյալ նորմը հանդիսանում է ժողովրդավարական պետության ձևավորման ու կայացման հիմնաքարային արժեքը և այդ առումով ունի բացառիկ կարևորություն: Սակայն, եթե սահմանադրական մյուս նորմերը չերաշխավորեն, օրինակ, ազատ ընտրությունների, հանրաքվեների հնարավորություն, կիմաստագրվի նաև այդ դրույթի առկայությունը՝ փոխելով համապատասխան հասարակական հարաբերությունների էությունն ու դրանց զարգացման միտումները<sup>34</sup>: Միևնույն ժամանակ, անկախ սահմանադրական նորմերի ամրագրմանն առնչվող վերը շարադրված տեխնիկայի կարևորությունից, դրանց **իրացման** ընթացքում որպես ելակետ պետք է ընդունել այն տրամաբանությունը, որ սահմանադրական կարգավորումների միջև չկան և չեն կարող լինել հակասություններ: Այլ կերպ ասած՝ վերջիններս անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե միմյանցից մեկուսացված ու միմյանց հակասող եղա-

<sup>34</sup> Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ աշխատանքի շրջանակներում «Սահմանադրության կայունություն» հասկացությունը դիտարկում ենք մակրոմակարդակում, այսինքն՝ ամբողջ Սահմանադրության տեսանկյունից՝ չնայած այն հանգամանքին, որ գրականության մեջ վերջինս դիտարկվում է նաև միկրոմակարդակում՝ ելակետ ընդունելով սահմանադրական առանձին դրույթները (տե՛ս Vermeule A. Selection Effects in Constitutional Law. VERMUELEBOOK, <http://www.virginialawreview.org/content/pdfs/91/953.pdf>):

նակով, այլ դրանց միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա՝ Սահմանադրությունը դիտարկելով որպես միասնական, ամբողջական փաստաթուղթ<sup>35</sup>, որպիսի հանգամանքին կանոնադառնանք աշխատանքի հետագա շարադրանքի ընթացքում:

Ամփոփելով վերը գրվածը՝ նշենք, որ հիշատակված առանձնահատկությունների առկայությունը հանգեցնում է հասարակական հարաբերությունների կարգավորման կանխատեսելիության, ինչն իր հերթին հանդիսանում է վերջիններիս կարգավորմանը նպատակաուղղված նորմերի կենսունակության, հետևաբար՝ նաև կայունության գրավականը<sup>36</sup>:

Միևնույն ժամանակ, չնայած Սահմանադրության կայունության տեսանկյունից հիշյալ ներսահմանադրական լուծումներն ունեն բացառիկ կարևորություն, սակայն միայն դրանք չեն, որ պայ-

<sup>35</sup> Այդ առումով հետաքրքիր է Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Սահմանադրությունը չի կարող ունենալ և չունի բացեր (տե՛ս Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>): Հունգարիայի սահմանադրական դոկտրինի շրջանակներում մույնպես տարածված է այն տեսակետը, որ Սահմանադրության միասնականությունն ու ամբողջականությունը ենթադրում են, որ Սահմանադրության շրջանակներում չկան իրավական բացեր, իսկ Սահմանադրության հոդվածների միջև չեն կարող լինել հակասություններ (տե՛ս The Basic Law of Hungary (A First Commentary) / edited by Csink L., Schanda B., Varga ZS. A. Dublin: Clarus Press, 2012, էջ 160):

<sup>36</sup> Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ կանխատեսելիությունը ներկայացվում է որպես Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող կարևորագույն պահանջներից մեկը: Այդ առումով նշվում է, որ, քանզի գրեթե բոլոր գործողությունները կախված են քաղաքական գործընթացների արդյունքներից, վերջիններս պետք է օժտված լինեն կանխատեսելիության միմիմալ աստիճանով: Սահմանադրական կարգը պետք է սպառնալի կառավարական, ինչպես նաև ոչ կառավարական գործողությունների առնչությամբ կայուն սպասումների հնարավորություն: Միևնույն ժամանակ ընդգծվում է, որ, քանզի բոլորը շահագրգռված են ունենալու գործընթացների և արդյունքների առնչությամբ միմիմալ որոշակիություն, Սահմանադրությունը, որը չի սպառնալի կայուն և ինքնաիրացվող սպասումների հնարավորություն, չի կարող գոյատևել երկար (տե՛ս Ordeshook P. C. Constitutional Stability. Pasadena, California, October, 1991, <http://www.hss.caltech.edu/SSPapers/sswp779.pdf>, էջ 9, 11):

մանավորում են Հիմնական օրենքի քննարկվող հատկանիշի առկայությունը: Պատճառն այն է, որ սահմանադրական կարգավորումներն իմաստագուրկ կլինեն, ուստի Սահմանադրությունը կենսունակ ու կայուն չի լինի այն բոլոր դեպքերում, երբ ի վիճակի չլինի իրականացնելու իր գործառույթները, քանզի տվյալ պարագայում վերջինս հանդես չի գա **համակարգային կայունության** երաշխավորի դերում՝ վերածվելով սոսկ ձևական փաստաթղթի ու չհանդիսանալով զարգացող հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ<sup>37</sup>: Ուստի, կայուն լինելու համար Սահմանադրությունը, այլ հանգամանքների թվում, պետք է ի վիճակի լինի իրականացնելու իր գործառույթները, ինչը պայմանավորված է ոչ միայն վերը նշված ներսահմանադրական անհրաժեշտ լուծումների առկայությամբ, այլ նաև մի շարք արտաքին գործոններով:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն հեղինակների տեսակետին, որոնք Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորում են քաղաքական համակարգի առանձնահատկություններով:

Քաղաքագիտության բնագավառում ավանդաբար ընդունված է այն տեսակետը, որ պաշտոնական ինստիտուտները ձևավորվում և զարգանում են որպես քաղաքական ու սոցիալական փոփոխությունների կողմնակի արդյունք: Այդ տեսանկյունից քաղաքական գործիչները պահպանում են Սահմանադրության հավասարակշռությունը միայն այնքան ժամանակ, քանի դեռ դրա հիմ-

<sup>37</sup> Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ կայուն Սահմանադրությունը պետք է հանգեցնի արդյունավետ սոցիալական հետևանքների, հակառակ պարագայում՝ հասարակությունը կնախընտրի այլ կարգավորում (տե՛ս նույն տեղում, էջ 11): Պատճառն այն է, որ օրենքի կենսունակությունը ոչ այնքան տրամաբանության մեջ է, որքան պրակտիկայի (տե՛ս Gillman H. Political Development and the Origins of the “Living Constitution”, 2007, <http://www.acslaw.org/files/Gillman-Vanderbilt%20Paper%209-2007.pdf>, էջ 5):

քում ընկած և հավասարակշռությունն ապահովող շահերի ու լիազորությունների պատկերը կայուն է: Երբ փոխվում են հիշյալ գործիչների շահերն ու նրանց ունեցած ռեսուրսները, փոխվում է նաև գոյություն ունեցող սահմանադրական կարգը<sup>38</sup>: Ավելին, լայն տարածում է ստացել այն տեսակետը, որ սահմանադրությունները ենթակա են քաղաքական գործիչներին ու իրադարձություններին և գոյատևում են այնքան ժամանակ, քանի դեռ քաղաքական առումով նպատակահարմար են, և ոչ ավելի<sup>39</sup>: Հետևաբար, քաղաքական ու սոցիալական կյանքում տեղի ունեցող կարևոր փոփոխությունները մեծացնում են նաև Սահմանադրության փոփոխության վտանգը<sup>40</sup>:

Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ ժամանակակից սահմանադրությունների կայունությունը մեծապես պայմանավորված է հենց քաղաքական կայունությամբ<sup>41</sup>, և որ զինված հեղաշրջումների, քաղաքացիական խռովությունների կամ հեղափոխությունների արդյունքում պետական իշխանության հավասարակշռության ընդհատումը ամենամեծ ազդեցությունն է ունենում Սահմանադրության կենսունակությունը կրճատելու վրա: Հիշյալ իրադարձությունների տարիներին է փոփոխվել, օրինակ, 1946-2000թթ. ընթացքում Լատինական Ամերիկայի երկրներում գործողությունը դադարեցրած սահմանադրությունների 66%-ը<sup>42</sup>: Մեր կարծիքով նույնպես, ուսումնասիրվող հիմնախնդրի տեսանկ-

<sup>38</sup> St'u Negretto G. L., նշված աշխատությունը:

<sup>39</sup> St'u How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 115:

<sup>40</sup> Պատահական չէ գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության նշանակությունը կայանում է նրանում, որ ... վերջինս հանդիսանում է քաղաքական պայքարի իրական մրցանակը (տե՛ս Calvert R. Coordination and Constitutional Change. Washington University in St. Louis, էջ 11, <http://calvert.wustl.edu/downloads/CoordConstChg.MPSA.pdf>):

<sup>41</sup> Պատահական չէ, որ ԱՄՆ Սահմանադրության երկարակեցության պատճառներից մեկն այն է, որ ամերիկյան քաղաքական կյանքը զարգանում է վերջինիս շուրջ և հարմարվում է Սահմանադրության ծայրահեղ առանձնահատուկ կարգավորումներին (տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

<sup>42</sup> St'u Negretto G. L., նշված աշխատությունը:

յունից քաղաքականությունը հանդիսանում է կարևորագույն գործոն, քանզի քաղաքական միջավայրն անհերքելի ազդեցություն է ունենում, իսկ ավելի կոնկրետ ասած՝ հենց այն է մեծապես պայմանավորում սահմանադրական լուծումների ընտրությունն ու դրանց փաստացի իրացումը<sup>43</sup>: Սակայն քննարկվող համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հիշյալ ազդեցությունը միակողմանի չէ, քանզի Սահմանադրությունն իր հերթին սահմանում է այն կանոնները, որոնց շրջանակներում պետք է գործի պետական, հետևաբար՝ նաև քաղաքական իշխանությունը: Այդ առումով հետաքրքիր են ֆրանսիացի հայտնի իրավագետ Պիեռ Սանդեվուարի խոսքերն այն մասին, որ «Հենց քաղաքականությունն է ձևավորում իրավունքը, սակայն միևնույն ժամանակ, իրավունքն իր հերթին արձագանքում է քաղաքականությանը՝ նրա մեջ ներդնելով կարգավորող տարր և քաղաքական գործիչներին ստիպելով գործել բաց, արդար և պատասխանատու եղանակով»<sup>44</sup>: Հետևաբար, Սահմանադրության կայունությունը պայմանավորված է ոչ թե սոսկ քաղաքական ուժերի հարաբերակցության այս կամ այն փոփոխություններով, այլ ընդհանրապես հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի հա-

<sup>43</sup> Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրությունն ունի խառը՝ քաղաքական-իրավական բնույթ, և քաղաքականն ու իրավականը Սահմանադրությունում սերտորեն փոխկապված են (տե՛ս Кравец И. А. Российский конституционализм: проблемы становления, развития и осуществления. СПб., 2005, էջ 148, How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 242): Ավելին, առանձին հեղինակների կարծիքով, սահմանադրականությունը Սահմանադրության բովանդակության մեջ արտահայտված **քաղաքականությունը** փաստացի կյանքի կոչելն է (տե՛ս Витрук Н. Конституционное правосудие. М., 2005, էջ 144): Պատահական չէ, որ գրականության մեջ Սահմանադրության էության առանցքային տարրերը ձևակերպվում են հետևյալ հարցադրումների տեսքով՝ 1. ո՞ր քաղաքական ուժերի կամքն է ամրագրվել սահմանադրական նորմերում, 2. հասարակական ո՞ր շերտերի շահերն են արտահայտվում սահմանադրական դրույթներում և պաշտպանվում նրանց կողմից ... (տե՛ս Кравец И. А., նշված աշխատությունը, էջ 154-155):

<sup>44</sup> St'у Сандевуар П. Введение в право / Пер. с франц. М., 1994, էջ 61–64:

մապատասխան մակարդակով<sup>45</sup>: Վերջինս է կանխորոշում ինչպես սահմանադրական ներքին լուծումների բնույթը, այնպես էլ դրանց ամրագրման ու կենսունակության վրա ազդեցություն ունեցող արտաքին գործոններն ու վերջիններիս արձագանքելու մեթոդները: Պատահական չէ, որ գրականության մեջ հենց մշակույթի ու քաղաքականության ազդեցությամբ է պայմանավորվում այն հանգամանքը, որ երկրների մի մասում նույնիսկ կոշտ սահմանադրությունների պայմաններում տեղի են ունենում Հիմնական օրենքի բազմաթիվ տեքստային փոփոխություններ, ինչպես, օրինակ, Գերմանիայում, Չեխիայում, Հնդկաստանում, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում: Մինչդեռ այլ երկրների մշակույթն ու քաղաքականությունը Սահմանադրության տեքստային փոփոխությունները դարձնում են չափազանց բարդ կամ նույնիսկ անհնար, օրինակ՝ Իտալիայում և Իսպանիայում<sup>46</sup>: Հետևաբար, կարծում ենք, որ Սահմանադրության կայունության հատկանիշի առկայության համար հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթն ունի առանցքային նշանակություն: Միևնույն ժամանակ, հիշյալ համատեքստում անհրաժեշտ է առաջնորդվել այն տրամաբանությամբ, որ Սահմանադրությունը քաղաքականության համար պետք է ոչ թե գործիք, այլ սահման լինի, իսկ սահմանադրական զարգացումները պետք է արտահայտեն ոչ թե ընթացիկ քաղաքական մախապատվություններն ու շահերը, այլ

<sup>45</sup> Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության իրացումն ու կայունությունը կախված են այն հանգամանքից, թե որքանով է այն ընդունվում ու պահպանվում պետական իշխանության և, որ ամենակարևորն է, հասարակության տարբեր խմբերի կողմից (տե՛ս Inquiry to Review New Zealand's Existing Constitutional Arrangements // Report of the Constitutional Arrangements Committee, Presented to the House of Representatives, Forty-seventh Parliament (Hon Peter Dunne, Chairperson), August 2005, [http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH\\_SCR\\_3229\\_2302.pdf](http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH_SCR_3229_2302.pdf), էջ 7):

<sup>46</sup> St'у How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 396-397:

վեր կանգնած լինեն դրանցից և հիմնարար իրավական շրջանակներ սահմանեն քաղաքական գործիչների ու իրադարձությունների համար<sup>47</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորող գործոնները կարելի է դասակարգել երկու խմբի՝ 1. էնդոգեն, 2. էկզոգեն: Առաջին խումբը վերաբերում է Սահմանադրության բովանդակությանն ու սահմանադրական ներքին լուծումների բնույթին, օրինակ՝ Սահմանադրության ինքնաբավությունը: Իսկ երկրորդ խումբն ընդգրկում է այն բոլոր արտաքին գործոնները, որոնք ազդեցություն են ունենում Սահմանադրությանը նախատեսվող լուծումների ամրագրման ու դրանց կենսունակության համար, օրինակ՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունները:

Չնայած Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորվում է վերը նշված չափանիշներին բավարարելու հանգամանքով՝ իրավաբանական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել այն մասին, որ բոլոր դեպքերում հարկ է խուսափել Հիմնական օրենքի «արհեստական կայունությունից»<sup>48</sup>: Մեր կարծիքով, սակայն, երբ իրականում բացակայում է Սահմանադրության հիշյալ հատկանիշը, և, միևնույն ժամանակ, առանձին չափանիշների ձևախեղման միջոցով արհեստական-

<sup>47</sup> Այդ մասին տե՛ս նաև CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը, Papuashvili G. Problems of the Constitutional Stability in Georgia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии), Ереван, 2009, էջ 48: Պատահական չէ, որ «Սահմանադրություն» հասկացությունն ինքնին ստուգաբանվում է նաև «սահման ղնելու» առումով, իշխանության սահմանները հստակեցնելու և «անճողայրելի որոգայթ» ստեղծելու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն դուրս գալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներից (տե՛ս Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, էջ 13):

<sup>48</sup> Տե՛ս Сорокин В.В. Конституция Российской Федерации 1993 года: критерии стабильности, <http://tigp.wordpress.com/2010/02/01/сорокин-в-в-конституция-российской-фе/>:

րեն փորձ է արվում տպավորություն ստեղծել վերջինիս առկայության մասին, առավել նպատակահարմար է խոսել ոչ թե «արհեստական կայունության», այլ ընդհանրապես քննարկվող հատկանիշի բացակայության մասին: Սահմանադրության պարագայում նմանատիպ իրավիճակներ հնարավոր են, օրինակ, այն դեպքերում, երբ այն ուժի մեջ է մնում և փոփոխությունների չի ենթարկվում երկար ժամանակահատվածի ընթացքում, սակայն ամրագրում է հասարակական հարաբերությունների կարգավորման այնպիսի կանոններ, որոնք բնորոշ չեն սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, իրականում չի ամրագրում այն արժեքներն ու սկզբունքները, որոնք հիմնարար են կոնկրետ հասարակության համար, չի ամրագրում այնպիսի կառուցակարգային լուծումներ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան վերակազմակերպելու համար, չի նախատեսում որոշակի արժեքների համակարգ արտացոլող այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-սկզբունքներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը, չի հանդիսանում այն իրավական հիմքը, որի վրա զարգանում է տվյալ պետության օրենսդրությունը: Մինչդեռ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը սոսկ այդ առանձնահատկությունների առկայության պայմաններում կարող է լինել կայուն: Հետևաբար, կարծում ենք, որ տվյալ պարագայում ելակետային պետք է լինի այն, որ «Սահմանադրություն» հասկացությունը հանգում է ոչ միայն գոյություն ունեցող տեքստին կամ առանձին փաստաթղթային լուծումներին, այլև դրանց հիմքում ընկած արժեքներին ու սկզբունքներին, ուստի, այլ հանգամանքների թվում նաև դրանցով պետք է պայմանավորված լինի Հիմնական օրենքի կայունության հատկանիշի առկայությունը: Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ «Սահմանադրություն» հասկացությունը հանգում է ռացիոնալ սկզբունքների ամբողջության: Այս տեքստերում ամրագրված իրավունքների իրականացման վերա-



բերյալ նորմերը իրենց ուժը ձեռք են բերում ոչ այնքան «ժողովրդի» կողմից հաստատվելու հանգամանքից, որքան ողջամտության սկզբունքներից: Այս նորմերի ուժն է պահպանվում, և այս նորմերն են ձեռք բերում հիմնական օրենքի կարգավիճակ, ոչ թե որովհետև իրենց ուժը ստացել են ժողովրդից, այլ դրանց պահանջների ռացիոնալության ակնհայտության պատճառով»<sup>49</sup>: Հետևաբար, թեև Սահմանադրության կարևորագույն հատկանիշներից մեկը վերջինիս ժողովրդականությունն է, սակայն միայն ժողովրդի կողմից ընդունված լինելու հանգամանքը բավարար չէ երևույթը որպես Սահմանադրություն բնորոշելու և վերջինիս գործառույթների իրականացումն արդյունավետ բնութագրելու համար: Դրա համար անհրաժեշտ է ոչ թե սուսկ անհրաժեշտ այս կամ այն հատկանիշի, այլ անհրաժեշտ ու բավարար հատկանիշների ամբողջության առկայությունը, և որ ամենակարևորն է՝ համարժեք սահմանադրական ու քաղաքական մշակույթ<sup>50</sup>: Պատահական չէ, որ իրենց գործառույթներն արդյունավետորեն իրականացնում են մի շարք այնպիսի սահմանադրություններ, որոնք ընդունվել են խորհրդարանի կամ այդ նպատակով ընտրված կամ հրավիրված հատուկ մարմնի կողմից<sup>51</sup>, ինչի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Նմանատիպ հիմնախնդիր-

ների տեսանկյունից ներկայացուցչական ժողովրդավարությունն անկասկած նույնքան լեգիտիմ է, որքան անմիջականը...»<sup>52</sup>:

Վերը շարադրված հանգամանքների համատեքստում առաջանում է ևս մի կարևոր հիմնախնդրի, այն է՝ Սահմանադրության կայունության և ժամանակի միջև կապի վերլուծության անհրաժեշտություն: Հատկանշական է, որ որոշ տեսաբանների կարծիքով, հենց վերջինս է հանդիսանում Սահմանադրության քննարկվող հատկանիշի առկայությունը պայմանավորող ելակետային չափանիշը: Նրանք գտնում են, որ Հիմնական օրենքի կայունությունը պայմանավորված է ժամանակի մեջ նրա գործողության երկարատևությամբ, այսինքն՝ այն հանգամանքով, թե որքան երկար է այն մնում ուժի մեջ: Հիշյալ հեղինակների կարծիքով, երբ քաղաքական գործիչները նախատեսում են որոշակի սահմանադրական կարգավորում, նրանց շահերից չի բխում դրանից հրաժարվելը՝ նորից համաձայնության գալու համար անհրաժեշտ հավաքական գործողությունների ու դրա համար պահանջվող ներքին ծախսերի պատճառով: Քննարկվող տեսությունը ենթադրում է Հիմնական օրենքի կենսունակության դրական կախվածություն ժամանակից, ինչը նշանակում է, որ երբ Սահմանադրության հեղինակները համաձայնության են գալիս որոշակի կարգավորման առնչությամբ, դրա փոփոխման հավանականությունը ժամանակի մեջ փոքրանում է<sup>53</sup>: Հետևաբար, հիշյալ տեսակետի կողմնակիցները, այլ հանգամանքների թվում, Սահմանադրության կայունությունը պայմանավորում են ժամանակային գործոնով կամ վերջինիս գործողության ժամանակահատվածով:

Անդրադառնալով ներկայացված մոտեցմանը՝ նշենք, որ, մեր կարծիքով, Սահմանադրության՝ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործողությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն այն հանգամանքով, որ վերջինս հանդիսանում է կենսագո-

<sup>49</sup> St'u The Twilight of Constitutionalism / edited by Dobner P. and Loughlin M. Oxford, 2010, էջ 61:

<sup>50</sup> Նշենք, որ թեև գրականության մեջ նշվում է, որ Սահմանադրության կենսունակությունը մեծանում է՝ պայմանավորված ինչպես մշակման, այնպես էլ հաստատման փուլերում հասարակության ներգրավման մակարդակով, սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հասարակության կողմից հաստատման հանգամանքը մեծացնում է Սահմանադրության կենսունակությունը ժողովրդավարական, բայց ոչ բռնապետական համակարգերում: Պատճառն այն է, որ բռնապետության պայմաններում հանրաքվեն իրականում չի հանգեցնում լեգիտիմության և չի նպաստում սահմանադրական դրույթների կոլեկտիվ իրացմանը (այդ մասին տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

<sup>51</sup> Օրինակ՝ ԱՄՆ Սահմանադրությունը, Գերմանիայի Հիմնական օրենքը:

<sup>52</sup> St'u CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը:

<sup>53</sup> St'u Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 6-7:

յի հիմնարար կանոնների շուրջ հասարակական համաձայնություն և ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, այլ մի շարք քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործոններով: Օրինակ՝ Կոլումբիայի 1886թ. Սահմանադրությունը փոփոխվեց միայն 1991թ.՝ ուժի մեջ մնալով 105 տարի, սակայն դրա հիմնական պատճառը ոչ թե Սահմանադրության հեղինակությունն էր, այլ սահմանադիր ժողով հրավիրելու անհաջող փորձերը, որոնք միևնույն ժամանակ ուղեկցվում էին Սահմանադրության հիմնական գաղափարների առնչությամբ գոյություն ունեցող սուր քննադատությամբ: Իսպանիայի Սահմանադրությունը նույնպես իր գործողության 30 տարիների ընթացքում կրել է ընդամենը մեկ տեքստային փոփոխություն: Դրա պատճառը, սակայն, քաղաքական համաձայնության բացակայությունն է, և ոչ այն, որ Սահմանադրությունը չունի զարգացման անհրաժեշտություն<sup>54</sup>: Հետևաբար, մեր կարծիքով, ժամանակային գործոնը ոչ թե վկայում է այն մասին, որ Սահմանադրությունը կայուն է, այլ այլ անհրաժեշտ հանգամանքների պայմաններում պարզապես հանդես է գալիս որպես հիշյալ հատկանիշի առկայության արտահայտություն: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությունը կայուն է ոչ թե այն պատճառով, որ այն չի փոփոխվում երկար ժամանակահատվածի ընթացքում, այլ վերջինս չի ենթարկվում հաճախակի փոփոխությունների, քանի որ ամրագրում է սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ իրավական հիմնարար արժեքներն ու սկզբունքները, այնպիսի կառուցակարգային լուծումներ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատաս-

<sup>54</sup> Քանզի այն զարգանում է տեքստային փոփոխություններից տարբերվող այլ եղանակներով, օրինակ՝ մեկնաբանության միջոցով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 282-283):

խան վերակազմակերպելու, ինչպես նաև սահմանադրական նորմերն ու սկզբունքները զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխանեցնելու համար, ինչն էլ հանգեցնում է վերջինիս կենսունակության<sup>55</sup>: Հետևաբար, կարծում ենք, որ ոչ թե գործողության երկարատև ժամանակահատվածն է վկայում Սահմանադրության կայունության մասին, այլ հիշյալ հատկանիշի ու դրան բնորոշ առանձնահատկությունների առկայությունն է նպաստում Սահմանադրության երկարակեցությանն ու կենսունակությանը:

Քննարկվող համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, թե կա արդյոք որոշակի ժամանակահատված, որի ընթացքում Սահմանադրությունը պետք է մնա ուժի մեջ, որպեսզի համարվի կայուն: Գրականության մեջ այդ առնչությամբ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Թ. Ջեֆերսոնը, օրինակ, հակված էր օրենքների, այդ թվում՝ Սահմանադրության ուժը մեխանիկորեն կորցնելու գաղափարին՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ այսօրվա մեծամասնությունը կարող է սահմանափակել իրեն և այսօրվա փոքրամասնությանը, բայց այն չի կարող սահմանափակել ապագա մեծամասնությանը կամ փոքրամասնությանը: Նրա կարծիքով, սահմանադրությունների համար գործողության օպտիմալ ժամանակահատվածը տասնինը տարի է՝ հիմք ընդունելով այդ տարիներին Եվրոպայում կյանքի միջին տևողությունն ու մեծահասակների ակտիվ կյանքի միջին ժամկետը<sup>56</sup>:

<sup>55</sup> Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ժամանակը կարող է մեծացնել Սահմանադրության կենսունակությունը միայն այն դեպքում, երբ վերջինս ընկալվում է որպես հասարակական բարեկեցության վրա դրական ազդեցություն ունեցող պարտադիր փաստաթուղթ (տե՛ս Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 27):

<sup>56</sup> St' u Thomas Jefferson to James Madison, September 6, 1789; Letter to Samuel Kercheval, July 12, 1816, <http://etext.virginia.edu/etccbr-new2?id=JefLett.sgm&images=images/modeng&data=/texts/english/modeng/parsed&tag=public&part=244&division=div1>, Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը:

Հաշվի առնելով Սահմանադրության կայունության ու ժամանակի հարաբերակցության առնչությամբ ներկայացված մեր մտեցումը՝ կարծում ենք, որ նպատակահարմար չէ մատնանշել կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում ուժի մեջ մնալու պարագայում Սահմանադրությունը կարող է համարվել կայուն: Բնականաբար, երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության գործողությունը, երբ այն միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման միտումներին, վկայում է Սահմանադրության կենսունակության, հետևաբար՝ նաև կայունության մասին: Սակայն այդ հանգամանքը տեսականորեն չի բացառում այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ, գործելով նույնիսկ չափազանց կարճ ժամանակահատվածի ընթացքում, Հիմնական օրենքին բնորոշ լինի քննարկվող հատկանիշը: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այն դեպքում, երբ վերը նշված առանձնահատկություններով օժտված Սահմանադրության փոփոխության հիմնական պատճառը լինի պետական իշխանության ներկայացուցիչների փոփոխությունը, ինչն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ հիշյալ հիմնախնդրի տեսանկյունից նույնպես առանցքային նշանակություն ունի հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթը: Ուստի կարծում ենք, որ քննարկվող համատեքստում ելակետային պետք է լինի այն, որ նպատակահարմար չէ խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը, սակայն, բնականաբար, առավել ընդունելի են այն իրավիճակները, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման ընթացքին, որ-

պիսի պայմաններում Սահմանադրությունը դառնում է կենսունակ, հետևաբար նաև՝ կայուն<sup>57</sup>:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակների մեծ մասը Սահմանադրության կայունության հատկանիշի առկայության մասին խոսելիս շեշտադրում է այս կամ այն գործոնի կամ չափանիշի կարևորությունը: Մեր կարծիքով, սակայն, Սահմանադրությունը կարող է կայուն լինել ոչ թե դրանցից մեկի, այլ անհրաժեշտ ու բավարար այնպիսի հանգամանքների առկայության պայմաններում, որոնք մատնանշեցինք հիշյալ պարագրաֆի շրջանակներում:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ *կայունությունը Սահմանադրության այն հատկանիշն է, որը ենթադրում է վերջինիս կենսունակություն վերափոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Ընդ որում՝ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն հանդիսացող Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Հիմնական օրենքն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հա-*

<sup>57</sup> Վերը շարադրվածի առումով հարկ է նկատել, որ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ընդհանուր առմամբ սահմանադրությունները երկար չեն գործում: Աշխարհում դրանց գործողության միջին տևողությունը, սկսած 1789 թվականից, 17 տարի է: Սահմանադրությունների կեսը սովորաբար գործում է 18 տարի, և միայն 19%-ն է գործում մինչև 50 տարի: Բավական շատ են գործողության կարճատև ժամանակահատված ունեցող սահմանադրությունները. մոտավորապես 7%-ը նույնիսկ չի գործում մինչև երկրորդ տարին: Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրներում գործողության միջին տևողությունը համապատասխանաբար 12.4 և 10.2 տարի է, և դա այն պայմաններում, երբ հիշյալ տարածաշրջանների սահմանադրությունների մոտավորապես 15%-ը ուժը կորցնում է գործողության առաջին տարվա ընթացքում: Արևմտյան Եվրոպայի և Ասիայի սահմանադրությունները գործում են համապատասխանաբար 32 և 19 տարի: Հարկ է նկատել նաև, որ սահմանադրությունների գործողության միջին տևողությունը վերջին 200 տարվա ընթացքում չի մեծացել, ընդհակառակը՝ կրճատվել է: Մինչև առաջին համաշխարհային պատերազմն այն 21 տարի էր, մինչդեռ այդ ժամանակահատվածից հետո դարձել է 12 տարի (տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

*սարակական հարաբերություններին, դառնալու դրանց զարգացման խթանը, ինչը ենթադրում է, որ վերջինս պետք է լինի ինքնաբավ, սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն, կարգավորեն ոչ միայն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, այլև առաջ քաշեն դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը, իսկ Սահմանադրությունն արդյունքում պետք է ի վիճակի լինի իրականացնելու իր գործառնությունները:*

## **§ 2. Սահմանադրության զարգացումն ու դրա նշանակությունը սահմանադրականության ամրապնդման գործում**

Այն հանգամանքը, որ իրականությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, կասկածից վեր է: Իրականությունը դրա համար էլ իրականություն է, որպեսզի փոփոխվի<sup>58</sup>: Հետևաբար, հասարակական հարաբերությունների կարգավորման համար նախատեսված մեխանիզմները, առաջին հերթին Սահմանադրությունը, պետք է ի վիճակի լինեն համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առաջընթացին: Հենց այդ է պատճառը, որ Սահմանադրության կայունության հատկանիշի էության հիմքում ընկած է ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության գաղափարը, ինչը ենթադրում է զարգացող հասարակական հարաբերություններին արձագանքելու ու դրանց պայմաններին հարմարվելու ունակություն: Հետևաբար, կայուն լինելու համար Սահմանադրությունը, այլ հանգամանքների թվում, պետք է ունենա զարգանալու ունակություն, որպիսի պայմաններում միայն այն կարող է հանդես գալ որպես «կենդանի փաստաթուղթ» և լինել հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ<sup>59</sup>: Հակառակ պարագայում այն կվերածվի «մեռած իրավական ակտի», փաստացի հարաբերություններից անկախ գործող սուկ փաստաթղթային մի լուծումի, որն իրականում

<sup>58</sup> St'u Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В. Д., Лазарева Л. В. М., 2009, էջ 24:

<sup>59</sup> Այդ առումով հիշատակման են արժանի Ջեյմս Մեդիսոնի խոսքերն այն մասին, որ «Եթե ցանկանում ենք ձևավորել այնպիսի համակարգ, որը կգոյատևի դարերի ընթացքում, ամիրաժեշտ է հաշվի առնել այն փոփոխությունները, որոնք այդ դարերը կարող են առաջացնել» (տե'ս Peltason J.W. The Development of the Constitution, <http://www.america.gov/st/usg-english/2008/April/20080416002922caifas0.5097315.html>): Պատահական չէ, որ Հնդկաստանի Սահմանադրության (որը երկարատևության առումով Ասիայում երկրորդն է Դապոնիայի Սահմանադրությունից հետո) երկարատևության պատճառներից մեկն է դիտարկվում փոփոխվող պայմաններին ու իրավիճակներին վերջինիս հարմարվողականությունը (տե'ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 169):

ի վիճակի չէ իրականացնելու իր գործառույթները և կարգավորելու հասարակական հարաբերությունները:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում կանդրադառնանք Սահմանադրության զարգացմանն առնչվող հիմնախնդիրներին՝ առաջին հերթին բացահայտելով քննարկվող հասկացության բովանդակությունը:

Փիլիսոփայության մեջ «զարգացում» հասկացությունը բնորոշում են համակարգի ուղղորդված, անդառնալի որակական փոփոխությունները<sup>60</sup>: Հետևաբար, ցանկացած բնույթի փոփոխություն չէ, որ կարող է կոչվել զարգացում, և այդպիսին հանդիսանալու համար այն պետք է օժտված լինի վերը նշված անհրաժեշտ և բավարար հատկանիշների ամբողջությամբ, որոնք հնարավորություն են տալիս քննարկվող փոփոխությունները տարանջատելու քառասյին, մեխանիկական շարժումներից և այլ բնույթի փոփոխություններից:

Սահմանադրության տեսանկյունից նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հիմնական օրենքի շրջանակներում կատարվող ցանկացած փոփոխություն չէ, որ նույնանում է «Սահմանադրության զարգացում» հասկացությանը: Հետևաբար, վերջինիս բովանդակությունը բացահայտելու համար հարկ ենք համարում անդրադառնալ այն չափանիշներին և վեր հանել այն հատկանիշները, որոնք բնորոշում են քննարկվող հասկացությունը:

Առաջին հերթին նշենք, որ «Սահմանադրության զարգացում» հասկացությունը վերլուծելիս որպես ելակետ ենք ընդունում Հիմնական օրենքի զարգացումը **մակրոմակարդակում**: Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ եթե միկրոմակարդակում, առանձին նորմերի փոփոխությունների տեսանկյունից դրանք կարող են ամբողջական լինել, ապա ամբողջ համակարգի, տվյալ պարագայում՝ Սահմանադրության համատեքս-

<sup>60</sup> St'u Алексеев П.В., Панин А.В. Философия: Классический университетский учебник. М., 2005, էջ 526:

տում, փոփոխությունները կարող են օժտված չլինել ներքին փոխկապվածությամբ ու համակարգվածությամբ և ունենալ անկանոն բնույթ, որպիսի հանգամանքը թույլ չի տա դրանք բնորոշել որպես Սահմանադրության զարգացում<sup>61</sup>: Հետևաբար, կարծում ենք, որ զարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխություններին պետք է բնորոշ լինի ամբողջականությունն ու ներքին փոխկապվածությունը<sup>62</sup>:

<sup>61</sup> Հարկ է նկատել, որ փիլիսոփայության մեջ նույնպես անկանոն փոփոխությունները չեն ընդգրկվում «զարգացում» հասկացության ընկալման շրջանակներում (տե՛ս նույն տեղում, էջ 525):

<sup>62</sup> Այդ առումով հարկ ենք համարում անդրադառնալ, օրինակ, ՀՀ Սահմանադրության 55 և 95 հոդվածների առանձին դրույթներում 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում կատարված փոփոխություններին: ՀՀ Սահմանադրության 55 հոդվածը 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ նախատեսում էր, որ Հանրապետության նախագահը՝ ... 11) Սահմանադրության 95 հոդվածով նախատեսված կարգով նշանակում է վճարեկ դատարանի և նրա պալատների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահներին ու դատավորներին, գլխավոր դատախազի տեղակալներին և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազներին, **կարող է դադարեցնել դատավորի լիազորությունները, համաձայնություն տալ կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել դատավորին** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), ազատում է իր կողմից նշանակված դատախազներին..., իսկ 95 հոդվածը սահմանում էր, որ Արդարադատության խորհուրդը՝ 6) առաջարկ է ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին: 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 55 հոդվածն ամրագրեց, որ 11) Հանրապետության Նախագահը՝ ... արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճարեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին, իսկ 95 հոդվածը նախատեսեց, որ Արդարադատության խորհուրդը՝ ... 5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, **առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխա-**

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է և այն, որ զարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխությունները պետք է կրեն որակական բնույթ, այսինքն՝ տեղի ունենա անցում համակարգի մի որակից մեկ այլ որակի<sup>63</sup>, և առա-

**նատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.): Հետևաբար, թեև ՀՀ Սահմանադրության 95 հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհրդի կողմից հիշյալ առաջարկը պետք է ներկայացվի Հանրապետության Նախագահին, սակայն 55 հոդվածին համապատասխան՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու բնագավառում Հանրապետության Նախագահի լիազորությունները վերաբերում են սոսկ վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին և ո՛չ վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին: Ուստի, Հանրապետության Նախագահի՝ կոնկրետ բնագավառին առնչվող լիազորության բացակայության պայմաններում ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է հիշյալ բնագավառին վերաբերող առաջարկը Արդարադատության խորհրդի կողմից վերջինիս ներկայացնելու պահանջ, ինչը հանգեցնում է սահմանադրական նորմերի, իսկ տվյալ պարագայում՝ նաև դրանց փոփոխությունների ներքին փոխկապվածության և ամբողջականության բացակայության: Ընդ որում՝ հիշյալ դրույթներն ամրագրվել են ՀՀ Սահմանադրության՝ 1995թ. խմբագրությամբ տեքստի վերը նշված կարգավորումների շրջանակներում փոփոխություններ կատարելու արդյունքում, որոնք, ինչպես արդեն նշեցինք, նախատեսում էին Հանրապետության Նախագահի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու առնչությամբ կոնկրետ լիազորություն:

<sup>63</sup> Փիլիսոփայության մեջ նաև փոփոխությունների անդառնալիության հատկանիշն է ներկայացվում որպես նախկինում գոյություն չունեցած որակական նոր հնարավորությունների ձևավորում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ չկա բացարձակ դառնալիություն, ինչպես չկա բացարձակ անդառնալիություն, ընդգծվում է, որ զարգացումը **հիմնականում** անդառնալի գործընթաց է (տե՛ս Алексеев П.В., Панин А.В., նշված աշխատությունը, էջ 524-525): Կարծում ենք, որ Սահմանադրության պարագայում նույնպես կարող է ընդունվել լինել հիշյալ տեսակետը, և զարգացում հանդիսանալու համար փոփոխությունները, որպես կանոն, պետք է կրեն անդառնալի բնույթ: Այսինքն՝ որպես կանոն, Սահմանադրության զարգացումը ենթադրում է նախկինում գոյություն չունեցած որակական նոր սահմանադրական լուծումների ձևավորում: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հնարավոր են իրավիճակներ, երբ պրակտիկայում հիմնավորվի նախկին կարգավորման նպատակահարմարությունը, և սահմանադրական հետագա զարգացումը ընթանա հենց վերջինիս ուղղությամբ:

ջանա համակարգի, տվյալ պարագայում՝ Սահմանադրության որակապես նոր վիճակ<sup>64</sup>: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ «Սահմանադրության զարգացում» հասկացությունը ենթադրում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»: Պատճառն այն է, որ ցանկացած ամբողջական համակարգ ունի մի ինտեգրատիվ որակ, որը ձևավորում է այն ելակետային վիճակը, որից էլ կատարվում են անցումները նոր վիճակների: Հետևաբար, այդ որակական առանձնահատկության բացակայության պայմաններում օբյեկտը դադարում է քննարկվող կոնկրետ համակարգը լինելուց, որպիսի պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ խոսել նաև վերջինիս զարգացման մասին:

Սահմանադրության կայունության հատկանիշը ենթադրում է, որ կենսագոյի «միջուկը» հանդիսացող հիմնական կանոնները չպետք է ենթարկվեն **հիմնարար** փոփոխությունների: Այդ առումով հիշատակման է արժանի ՀՀ Սահմանադրության 114 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Հետևաբար, սահմանադիրը հենց այդ դրույթներն է համարել հասարակական հարաբերությունների «միջուկը»՝ արգելելով դրանց փոփոխումը: Մինչդեռ, կարծում ենք, որ նմանատիպ նորմեր է պարունակում նաև, օրինակ, ՀՀ Սահմանադրության 3 հոդվածը, համաձայն որի՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահո-

<sup>64</sup> Փիլիսոփայության մեջ հիշյալ փոփոխությունները ենթադրում են անցում որակական մի կառուցվածքից մեկ այլ կառուցվածքի, երբ դրանց արդյունքում փոփոխվում է համակարգի սկզբնական որակը, առաջանում է որակապես նոր վիճակ (այդ առումով տե՛ս, օրինակ, Алексеев П.В., Панин А.В., նշված աշխատությունը, էջ 526, Бучило Н. Ф., Чумаков А. Н. Философия: Учебное пособие. М., 2001, էջ 94, Новая философская энциклопедия / Под ред. В. С. Стёпина. М., 2001 ([http://dic.academic.ru/dic.nsf/enc\\_philosophy/1013/%D0%A0%D0%90%D0%97%D0%92%D0%98%D0%A2%D0%98%D0%95](http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/1013/%D0%A0%D0%90%D0%97%D0%92%D0%98%D0%A2%D0%98%D0%95)):

վում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հետևաբար ենթադրվում է, որ անփոփոխ պետք է լիներ նաև ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածը: Ու թեև որոշ իրավագետներ գտնում են, որ իրավական պետությունն ինքնին ենթադրում է վերը նշված դրույթների ու դրանցով պայմանավորված հարաբերությունների առկայություն, ուստի, 1 հոդվածի անփոփոխելիությունը նշանակում է նաև վերջիններիս անփոփոխելիություն, սակայն, մեր կարծիքով, հիշյալ տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում նույնը կարելի է ասել նաև 2 հոդվածի մասին, քանզի այդ հոդվածում ամրագրված են ժողովրդավարական պետության կարևորագույն հատկանիշները, և, ըստ էության, 1 հոդվածի անփոփոխելիությունը ենթադրում է նաև վերը նշված դրույթների ելակետային տարրերի անփոփոխելիություն: Հետևաբար, կարծում ենք, որ իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից ճիշտ է, որպեսզի սահմանադրական նորմերի ամրագրման հիմքում ընկած լինի միևնույն տրամաբանությունը:

Վերը շարադրվածի առումով հարկ ենք համարում նկատել նաև, որ քիչ թվով սահմանադրություններ են պարունակում նորմեր՝ որոշակի դրույթների անփոփոխելիության մասին: Առավել տարածված է այն տեխնիկան, երբ Սահմանադրության որոշակի սկզբունքներ են հռչակվում անփոփոխելի<sup>65</sup>: Կարծում ենք, որ վերջինն առավել նպատակահարմար մոտեցում է, քանզի թույլ է տալիս պահպանել հիշյալ սկզբունքների հիմքում ընկած ելակետային տարրերը՝ միաժամանակ թողնելով հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց դրանց ընկալմանն առնչվող առանձին փոփոխությունների հնարավորություն: Գաղտնիք

<sup>65</sup> Տե՛ս CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը:

չէ, որ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, «ժողովրդավարությունը», «ինքնիշխանությունը», «մարդու հիմնական իրավունքները և ազատությունները» և այլն, տարիների ընթացքում ապրել են և կշարունակեն ապրել անընդհատ զարգացում: 21-րդ դարում դրանց ընկալումը նույնը չէ, ինչ, օրինակ, 19-րդ կամ 20-րդ դարերում: Մի շարք հասկացությունների ընկալումն էապես փոխվել է նույնիսկ մի քանի տասնամյակների ընթացքում: Հետևաբար, մեր կարծիքով, հիշյալ տեսանկյունից ելակետային պետք է լինի այն, որ վերը նշված սկզբունքները ենթակա են **դինամիկ մեկնաբանության**, որպիսի պայմաններում հնարավոր են վերջիններիս առանձին տարրերի ընկալման փոփոխություններ, սակայն միևնույն ժամանակ անփոփոխ պետք է մնան այդ սկզբունքների «միջուկը» կազմող տարրերը<sup>66</sup>:

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրությանը՝ նշենք, որ վերջինիս 1 հոդվածը սահմանում է ՀՀ սահմանադրաիրավական բնութագրիչները, որոնք ելակետային են ինչպես սահմանադրական նորմերի ամրագրման, այնպես էլ հասարակական հարաբերությունների կարգավորման համար: Հետևաբար, հենց դրանք են ընկած սահմանադրական մյուս բոլոր նորմերի հիմքում, և, որպես այդպիսին, ենթադրում են այդ բնութագրիչների հատկանիշներն արտացոլող ու տարրերն ամրագրող այլ դրույթների առկայություն: Իսկ դա նշանակում է, որ սահմանադրաիրավական բնութագրիչներին վերաբերող նորմերի անփոփոխ լինելու դեպքում անփոփոխ կմնան նաև հիշյալ այն դրույթները, որոնք ձևավորում են այդ բնութագրիչների «միջուկն» ու էությունը: Միևնույն ժամա-

<sup>66</sup> Վերը շարադրված հիմնախնդրի առումով հետաքրքիր է Հնդկաստանի պրակտիկան: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությունը նախատեսում է սահմանադրական բոլոր դրույթները փոփոխելու հնարավորություն, Հնդկաստանի Գերագույն դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ հիշյալ փոփոխությունները չպետք է կատարվեն այնպես, որ փոփոխվեն Սահմանադրության «հիմնական կառուցվածքն ու համակարգը» (տե՛ս Twomey A. The Involvement of Sub-national Entities in Direct and Indirect Constitutional Amendment within Federations, [http://camlaw.rutgers.edu/statecon/workshop11/Twomey.pdf](http://camlaw.rutgers.edu/statecon/workshop11greece07/workshop11/Twomey.pdf), էջ 14):

նակ, կարծում ենք, որ հնարավոր են փոփոխություններ դրանց այլ տարրերի ընկալման շրջանակներում: Օրինակ՝ եթե ՀՀ Սահմանադրության 2 հոդվածով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը ժողովրդին պատկանելու վերաբերյալ դրույթը, որը ժողովրդավարական պետության կարևորագույն հատկանիշներից է, ըստ էության, չի կարող փոփոխվել, ապա, մեր կարծիքով, նույն հոդվածով նախատեսված այն նորմի ընկալումը, թե ինչպես ու ինչ մարմինների միջոցով է ժողովուրդն իրականացնում իր իշխանությունը, քարացած չէ, և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների: Դա հնարավոր է մասնավորապես այն դեպքերում, երբ, օրինակ, որպես անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևեր ամրագրվեն նաև հանրահավաքները, երթերը և այլն, ինչն այլ անհրաժեշտ հանգամանքները հաշվի առնելու պարագայում չի խաթարի հիշյալ բնութագրիչի էությունը, սակայն միևնույն ժամանակ կհանդիսանա վերը նշված դրույթի փոփոխման արտահայտություն:

Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ առավել նպատակահարմար է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել վերջինիս 1 և 114 հոդվածների անփոփոխելիությունը՝ միևնույն ժամանակ ելակետային համարելով այն հանգամանքը, որ 1 հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական բնութագրիչները ենթակա են դինամիկ մեկնաբանության:

Անդրադառնալով «Սահմանադրության զարգացում» հասկացությունը բնորոշող այլ չափանիշներին՝ նշենք, որ զարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխությունները պետք է նպատակաուղղված լինեն<sup>67</sup>: Այդ առումով կարևոր է այն

<sup>67</sup> Նպատակաուղղվածության առումով գրականության մեջ նշվում է, որ զարգացումը կարող է լինել ինչպես պրոգրեսիվ, այնպես էլ ռեգրեսիվ: Ընդ որում՝ պրոգրեսիվ զարգացումը ենթադրում է անցում ավելի կատարյալ որակների՝ ի տարբերություն ռեգրեսիվ զարգացման, որին բնորոշ է հակառակ միտումը: Հետևաբար ակնհայտ է, որ Սահմանադրության զարգացման պարագայում հենց վերջինս պետք է ընկած լինի քննարկվող հատկանիշի ընկալման հիմքում:

հանգամանքը, որպեսզի որակական փոփոխություններին բնորոշ լինի իրավահաջորդությունը, նախկինի և ապագայի միջև ակունույատիվ (կուտակային) կապի առկայությունը<sup>68</sup> և հենց դրա հիման վրա համակարգի նոր հնարավորությունների ու սահմանադրական նոր լուծումների ձևավորումը<sup>69</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ***Սահմանադրության զարգացումը Սահմանադրության՝ ներքին փոխկապվածության ու ամբողջականության հատկանիշով օժտված այն որակական, նպատակաուղղված ու, որպես կանոն, անդառնալի փոփոխություններն են, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»:***

<sup>68</sup> Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ Ֆրանսիայի սահմանադրական կարգի տևական անկենսունակության պատճառ է դիտարկվում հենց այն հանգամանքը, որ սահմանադրական կարգի շարունակականությանը գրեթե նշանակություն չի տրվում և որպես նոր սահմանադրությունների իրավականության չափանիշ է ընկալվում անցյալից հետո մաքուր էջի վրա ձևավորվելու հանգամանքը (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 118):

<sup>69</sup> Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում ամրագրված մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող դրույթները: ՀՀ Սահմանադրության 4 հոդվածի՝ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ տեքստը նախատեսում էր, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելուց հետո վերջինս (3 հոդվածը) ամրագրեց, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հետևաբար, վերը նշված փոփոխությունները նպատակաուղղված էին որակապես նոր մակարդակի բարձրացմանը՝ հիշյալ արժեքների դերն ու նշանակությունը՝ պահպանելով կարևորություն ունեցող ու նախկին տեքստում ամրագրված դրույթները և դրանով ապահովելով իրավահաջորդությունը սահմանադրական նախկին ու նոր կարգավորումների միջև:



Հարկ է նկատել, որ Սահմանադրության զարգացման հիմնախնդիրները վերլուծելիս իրավաբանական գրականության մեջ առավել հաճախ խոսվում է Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու մասին: Մինչդեռ վերը շարադրված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ զարգացում հանդիսանալու համար պարտադիր չէ, որպեսզի փոփոխությունը կատարվի իրավական ակտի տեքստի շրջանակներում, և այն կարող է վերաբերել նաև նորմի ընկալմանը<sup>70</sup>: Հետևաբար, Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելը Սահմանադրության զարգացման միակ եղանակը չէ, որպիսի հանգամանքի հիմքում ընկած պատճառները բազմաթիվ են: Առաջին հերթին հարկ է նշել, որ փոփոխման կոշտ կարգի դեպքում Սահմանադրությունը սոսկ վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու միջոցով զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններին համապատասխանեցնելը օժտված չէ բավարար արդյունավետությամբ, քանզի այն չի հանդիսանում գործուն միջոց: Հիմնախնդրի լուծում չէ նաև ճկուն սահմանադրությունների առկայությունը, քանզի վերջինս, որպես կանոն, հնարավորություն է տալիս հեշտությամբ փոփոխելու սահմանադրական կարգավորումները: Մինչդեռ, ինչպես նշեցինք, Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն և, որպես այդպիսին, ամրագրում է կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայ-

<sup>70</sup> Հարկ է նկատել, որ քննարկվող հիմնախնդրին առնչվող վերլուծությունները վկայում են, որ պետությունների ճնշող մեծամասնությունում Սահմանադրության տեքստային փոփոխությունները Հիմնական օրենքի զարգացման միակ եղանակը չեն: Ավելին, զարգացման այլ ուղիներն այդ առումով ունեն առավել մեծ ու առանցքային նշանակություն (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 9-378):

նությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար: Ուստի, ճկուն սահմանադրությունների պայմաններում առավել մեծանում է կենսագոյի վերը նշված հիմնական կանոններն առանց հասարակական համաձայնության փոփոխելու, իսկ մի շարք դեպքերում նաև հիշյալ հասարակական համաձայնությունը ձևախեղելու հավանականությունը, ինչն իր հերթին հանգեցնում է «Սահմանադրություն» հասկացության հիմքում ընկած հատկանիշային արժեքների ձևախեղմանը<sup>71</sup>:

Կարևոր է և այն, որ հաճախ Սահմանադրության զարգացումը պայմանավորված է լինում ոչ թե այս կամ այն նորմի շրջանակներում տեքստային փոփոխություններ կատարելու, այլ նրա բովանդակության բացահայտման անհրաժեշտությամբ: Այդ առումով ակնհայտ է, որ Սահմանադրության տեքստը չի կարող գոյություն ունենալ «ինքն իրեն»՝ վերացարկված շրջապատող իրականությունից: Գաղտնիք չէ և այն, որ վերջինս իրացվում է առօրյա կյանքում, պրակտիկայում<sup>72</sup>: Հետևաբար, եթե ստատիկ առու-

<sup>71</sup> Այդ առումով Վենետիկի հանձնաժողովը բազմիցս արձանագրել է, որ Սահմանադրության չափազանց հաճախակի փոփոխությունները բացասական ազդեցություն են ունենում սահմանադրական ու քաղաքական կայունության տեսանկյունից (տե՛ս CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը), և նշել է, որ Սահմանադրությունը չի կարող փոփոխվել երկրի քաղաքական իրավիճակի յուրաքանչյուր փոփոխության կամ նոր պառլամենտական մեծամասնության ձևավորման հետ միաժամանակ (տե՛ս CDL-INF(2001)3, Report on Co-operation between the Venice Commission and the Republic of Moldova on Constitutional Reform, §26, <http://www.venice.coe.int/docs/2001/CDL-INF%282001%29003-c.asp>):

<sup>72</sup> Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության առկայությունն ինքնին որևէ խնդիր չի լուծում: Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն է: Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը միայն հնարավորություն կտա երաշխավորել իրավունքի գերակայությունն ու համակարգային կայունությունը: Գերխնդիր եղել ու շարունակում է մնալ համրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը (տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում, <http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan2011.pdf>):

մով տեքստի բովանդակությունը կարող է բացահայտման կարիք չունենալ, ապա նույնը դժվար է ասել հիշյալ տեքստային լուծումների ու իրականության փոխառնչության դեպքերի մասին, երբ, որպես կանոն, սահմանադրական նորմերի իրացման համար պահանջվում է վերջիններիս բովանդակության վերհանում: Իսկ դա նպատակահարմար է իրականացնել ոչ թե նորմի շրջանակներում փոփոխություններ կատարելու, այլ նրա մեկնաբանության միջոցով: Հակառակ տարբերակը կարող է հանգեցնել չափազանց ծավալուն սահմանադրական տեքստի առկայության, որի համապատասխանեցումը զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններին կպահանջի վերջինիս շրջանակներում անընդհատ փոփոխությունների իրականացում, ինչը հնարավոր չի լինի արդյունավետորեն ապահովել կոշտ սահմանադրությունների պարագայում, իսկ ճկուն սահմանադրությունների դեպքում կմեծանա սահմանադրությունների հիշյալ տեսակի առնչությամբ ներկայացված վերը նշված իրավիճակի առաջացման, այն է՝ «Սահմանադրություն» հասկացության հիմքում ընկած հատկանիշային արժեքների ձևախեղման հավանականությունը:

Սահմանադրության զարգացման այլընտրանքային եղանակների, մասնավորապես, Սահմանադրության մեկնաբանության ինստիտուտի արմատավորումը պայմանավորող հանգամանքների առումով հարկ ենք համարում ընդգծել նաև, որ ներկայումս սահմանադրությունները, որպես կանոն, սահմանադրական արդարադատության միջոցով ուղղակիորեն ենթակա են դատական պաշտպանության, ինչի արդյունավետ իրականացումը դժվար է պատկերացնել առանց վերջինիս դրույթների մեկնաբանության: Ակնհայտ է, որ անհնար է կիրառել սահմանադրական նորմը կամ իրականացնել դրա դատական պաշտպանությունը առանց վերջինիս բովանդակության բացահայտման:

Վերը շարադրված հանգամանքներն արդեն իսկ բավարար են փաստելու, որ Սահմանադրության զարգացումը հնարավոր չէ արդյունավետ իրականացնել սուսկ վերջինիս տեքստում փոփո-

խություններ կատարելու միջոցով<sup>73</sup>, և որ Սահմանադրության մեկնաբանությունը Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից մեկն է: Ընդ որում՝ հիշյալ համատեքստում խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է, քանզի այն, ի տարբերություն ոչ պաշտոնական մեկնաբանության, **ունի համապարտադիր բնույթ** և տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից:

Տվյալ պարագայում կարող է հարց առաջանալ այն մասին, թե արդյոք հստակորեն սահմանազատված են այն դեպքերը, երբ ՀՀ Սահմանադրության զարգացումը անհրաժեշտ է իրականացնել վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու եղանակով, իրավիճակներից, երբ քննարկվող նպատակին կարելի է հասնել մեկնաբանության միջոցով:

Հաշվի առնելով այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ **հասարակական համաձայնություն** և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին ու կազմում են դրա շրջանակներում առաջացող հարաբերությունների «միջուկը», էությունը, սահմանադիրը նախատեսել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման բավականին բարդացված կարգ՝ հստակորեն սահմանելով հիշյալ գործընթացի շրջանակներում ընդգրկված սուր-

<sup>73</sup> Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ժամանակակից արևմտյան քաղաքակրթությունը տառապում է մի հիվանդությամբ, որը կոչվում է «նորմատիվ ֆետիշիզմ»: Նրա գլխավոր ախտանիշը կայուն պատկերացումն է այն մասին, որ հասարակական առաջընթացը ձեռք է բերվում սուսկ գոյություն ունեցող ձևական նորմերը կատարելագործելով ու նորերը ստեղծելով: Պարադոքսն այն է, որ թեև նորմատիվ ֆետիշիզմի անկենսունակությունն անընդհատ հաստատվում է տարբեր մասշտաբի բազմաթիվ կոնկրետ օրինակներով, սակայն այդ հիվանդությունը շարունակում է գոյություն ունենալ (տե՛ս Право и правоприменение в России: междисциплинарные исследования / под ред. Волкова В. М., 2011, էջ 139):

յեկտներին<sup>74</sup>: Այդ հանգամանքը կարող է հանգեցնել այնպիսի եզրակացության, որ ՀՀ Սահմանադրության զարգացումն անհնար է վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու ներկայացված եղանակից տարբերվող այլ եղանակով: Սակայն, հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը, կարծում ենք, որ վերը նշված կարգավորումն ամրագրելով՝ սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելել Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղանակներով, այլ բացառել է այլ սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը՝ **գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու** միջոցով: Իսկ դա հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ Սահմանադրության զարգացումը կարելի է իրականացնել նաև, այսպես կոչված, այլընտրանքային եղանակների, մասնավորապես, վերջինիս մեկնաբանության միջոցով: Սիևնույն ժամանակ, կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի առումով հիմնական չափանիշը պետք է լինի այն, որ Սահմանադրության կայունությունն ապահովելու տեսանկյունից նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել առանց հիշատակված տեքստային փոփոխությունների, **գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում** մեկնաբանություն իրականացնելու միջոցով: Հայաստանի Հանրապետության պարագայում դրանք, մասնավորապես, այն դեպքերն են, երբ առաջանում է ոչ թե այս կամ այն նորմի վերափոխման, այլ վերջինիս բովանդակության բացահայտման անհրաժեշտություն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից մեկն է, և որ նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարա-

<sup>74</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության 8-րդ գլուխը, որը վերնագրված է «Սահմանադրության ընդունումը, փոփոխումը և հանրաքվեն»:

վոր է վերջինիս զարգացումն ապահովել հիշատակված եղանակի միջոցով<sup>75</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, չնայած «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում **Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), սակայն, կարծում ենք, որ վերջիններս Սահմանադրության միակ հատկանիշները չեն, որոնց ապահովմանը նպատակաուղղված է ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությունը: Սահմանադրության կայունության ու զարգացման առնչությամբ ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության էությունն ընդգծվում է հատկապես վերջիններիս ապահովման բնագավառում: Սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սուկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Հետևաբար, Սահմանադրության կայունության ու զարգացման ապահովումը սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի կարևորագույն խնդիրներից մեկն է, որպիսի հանգամանքը, մեր

<sup>75</sup> Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել ԱՄՆ Սենատի անդամ Ջորջ Նորիսի հետևյալ խոսքերը՝ «Մենք ունենք օրենսդիր մարմին, որը կոչվում է Ներկայացուցիչների պալատ՝ կազմված 400 հոգուց: Մենք ունենք մեկ այլ օրենսդիր մարմին, որը կոչվում է Սենատ՝ կազմված մոտ 100 հոգուց: Մենք իրականում ունենք ևս մեկ այլ օրենսդիր մարմին, որը կոչվում է Գերագույն դատարան՝ կազմված 9 հոգուց, և նրանք ավելի զորեղ են, քան մենք բոլորս միասին վերցրած» (տե՛ս Նազարյան Հ. ԱՄՆ դատական համակարգը, Երևան, 1997, էջ 25-26):

կարծիքով, քննարկվող մարմնի գործունեության նպատակաուղղվածությունը մատնանշելու նպատակով պետք է նույնպես իր արտահայտությունը գտնի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթի շրջանակներում: Միևնույն ժամանակ, առավել կարևոր ենք համարում հիշյալ նպատակի իրականացման համար համապատասխան մշակույթի ձևավորումը, երբ սահմանադրական դատարանի որոշումներն ընկալվեն ոչ թե սոսկ որպես իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրելու, այլ նաև որպես Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց:

## **ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

### **§ 1. Սահմանադրական դատարանի որոշումները՝ որպես ՀՀ իրավունքի առանձնահատուկ աղբյուր**

Պոզիտիվ իրավունքի կարևորագույն հատկանիշներից մեկը ձևական որոշակիությունն է: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ իրավական նորմերը պետք է օբյեկտիվացված, արտահայտված լինեն, ընդգրկված լինեն այս կամ այն ձևերում, որոնք հանդիսանում են վերջիններիս գոյության հիմնական գրավականն ու միջոցը: Առանց դրա իրավունքի նորմերը կդառնան վերացական, իրականության մեջ գոյություն չունեցող և չեն կարողանա կատարել մարդկանց վարքագիծը կարգավորելու առաքելությունը:

Իրավաբանական գրականության մեջ ձևական (իրավաբանական) իմաստով իրավունքի աղբյուրը ներկայացվում է որպես իրավունքի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնների արտաքին արտահայտման այնպիսի պաշտոնական ձև, որն առավելապես նպաստում է իրավական կարգավորման նպատակների կենսագործմանը և իրավունքի լիարժեք իրականացմանը<sup>76</sup>: Այլ կերպ ասած՝ իրավունքի ձևը հանդես է գալիս որպես իրավունքի ներքին կազմակերպման և արտաքին արտահայտման միջոց<sup>77</sup>:

Հարկ է նկատել, որ թեև իրավունքի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնների արտաքին արտահայտման պաշտոնական ձև են հանդիսանում նաև սահմանադրական դատարանի

<sup>76</sup> Տե՛ս Օհանյան Վ. Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը ՀՀ-ում (տեսագործական վերլուծություն), Ատենախոսություն, Երևան, 2009, էջ 47:

<sup>77</sup> Տե՛ս Մարչենկո Մ. Н. Источники права. М., 2008, էջ 40:

որոշումները, սակայն իրավաբանական գրականության մեջ միանշանակ չէ տեսակետն այն հարցերի առնչությամբ, թե արդյոք քննարկվող որոշումները հանդիսանում են իրավունքի աղբյուր ձևական իմաստով, կամ իրավունքի կոնկրետ որ աղբյուրի տեսքով են հանդես գալիս դրանք: Հետևաբար, այդ հիմնախնդիրների վերլուծությանը հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ պարագրաֆի շրջանակներում<sup>78</sup>:

Հեղինակների մի մասի կարծիքով, սահմանադրական դատարանի որոշումները չեն հանդիսանում իրավունքի աղբյուր և օժտված չեն նորմատիվությամբ: Որպես այդ տեսակետի հիմնավորում է ներկայացվում այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանը, օրենքի վիճարկվող դրույթները ճանաչելով Սահմանադրությանը հակասող և անվավեր, հանդես է գալիս նեգատիվ օրենսդրի դերում՝ բոլոր դեպքերում չստեղծելով դրական նորմեր: Այդ իսկ պատճառով հասարակական հարաբերությունները թե՛ փաստացիորեն, թե՛ իրավաբանորեն կարգավորվում են Սահմանադրությամբ, նորմատիվ ակտերով<sup>79</sup>: Այլ հեղինակների կարծիքով, սահմանադրական դատարանի որոշումներն ունեն մեկնաբանողական բնույթ, և որպես իրավունքի մեկնաբանման դատական ակտեր են հանդես գալիս ոչ միայն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության գործերով կայացված որոշումները, այլ սահմանադրական դատարանի բոլոր որոշումները<sup>80</sup>: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է ար-

<sup>78</sup> Հարկ է նկատել, որ աշխատության շրջանակներում «սահմանադրական դատարանի որոշումներ» հասկացությունն օգտագործում ենք ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով ամրագրված լիազորության իրականացման արդյունքում ընդունվող որոշումների տեսանկյունից:

<sup>79</sup> Տե՛ս, օրինակ, Федеральный конституционный закон "О Конституционном суде РФ": Комментарий. М., 1996, էջ 246, Arlovic' M. Legal Consequences of Constitutional Court Decisions on the Legal Order of the Republic of Croatia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии), Ереван, 2011, էջ 176:

<sup>80</sup> Տե՛ս Кошелева В. В. Акты судебного толкования правовых норм. Вопросы теории и практики (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Саратов, 1999, էջ 6, 10-12:

տահայտվել այն մասին, որ իրավունքի մեկնաբանման ընթացքում դատական մարմինները կարող են միայն բացատրել իրավունքի մեկնաբանվող նորմի բովանդակությունը: Իրավունքի նոր նորմի ստեղծման իրավունք նրանք չունեն: Դատարանի ներխուժումը նորմաստեղծ գործունեության ոլորտ անխուսափելիորեն կհանգեցնի իշխանության տարբեր ճյուղերի միջև ներդաշնակության խախտմանը, օրենսդրական իշխանության վերափոխմանը դատականի: Ասվածը վերաբերում է նաև սահմանադրական դատարանին: Իրականացնելով Սահմանադրության մեկնաբանություն, ընդունելով այլ որոշումներ՝ նա չի կարող դրա հետ մեկտեղ ստեղծել իրավունքի նորմեր<sup>81</sup>:

Իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել նաև այն տեսակետին, որ սահմանադրական դատարանի որոշումները, չհանդիսանալով նորմատիվ ակտեր, ունեն որոշակի նորմատիվ բնույթ: Մասնավորապես, որոշ հեղինակների կարծիքով, սահմանադրական վերահսկողության դատական մարմնի մոտ նորմաստեղծ իրավունքի բացակայությունը նրա կարգավիճակի վրա այնքան էական է և իմպերատիվ, որ թույլ է տալիս նրա որոշումները բնութագրել որպես **քվազինորմատիվ**<sup>82</sup>: Որոշ հեղինակների կարծիքով էլ, չնայած սահմանադրական դատարանի որոշումները բառիս բուն իմաստով չեն հանդիսանում նորմատիվ ակտեր, սակայն դրանք գործող իրավական նորմերի համակարգում փոփոխություններ են մտցնում՝ վերացնում են Սահմանադրությանը չհամապատասխանող նորմերը, համապարտադիր են և այդ իմաստով իրենց իրավաբանական ուժով համահավասար են օրենքներին<sup>83</sup>:

<sup>81</sup> Տե՛ս Петрушев В. А. Юридическая природа актов судебного толкования права // Академический юридический журнал, 2000, N 1, էջ 54:

<sup>82</sup> Տե՛ս Богданова Н. А. Конституционный суд РФ в системе конституционного права // Вестник Конституционного суда РФ, 1997, N 3, էջ 64:

<sup>83</sup> Տե՛ս Анишина В. И. Правовые позиции Конституционного суда РФ // Российская юстиция, 2000, N 7, էջ 11:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումներն ունեն նախադեպի բնույթ<sup>84</sup>: Իրավաբանական գրականության մեջ առկա է սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ նաև այն մոտեցումը, համաձայն որի՝ դրանք պրեյուդիցիալի, այլ ոչ նախադեպի հատուկ տեսակ են: «Պրեյուդիցիալ» տերմինը նշանակում է, որ որևէ դատարանի կողմից հաստատված փաստը չի կարող մեկ անգամ ևս հաստատվել այլ դատարանի կողմից: Սահմանադրական դատարանի կողմից հաստատված փաստը, որի էությունը կայանում է նրանում, որ այս կամ այն իրավական նորմը չի համապատասխանում Սահմանադրությանը, այլևս ոչ մեկի կողմից չի կարող հաստատվել: Այս հանգամանքը պետք է համընդհանուր ճանաչում ստանա: Դա ոչ այնքան որոշման նախադեպային նշանակությունն է, որքան Սահմանադրության դրույթներին նորմատիվ ակտի անհա-

<sup>84</sup> Օրինակ՝ Էբգենն այդ առումով նշում է, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն օժտված են նախադեպի բնույթով, որը միմյանց է շաղկապում սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցներին (տե՛ս Ալավերդյան Լ., «Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը» // «Սահմանադրական արդարադատության հիմնախնդիրները և զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում», հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 163): Մեկ այլ հեղինակի կարծիքով էլ, սահմանադրական դատարանի որոշումների՝ փաստացիորեն նախադեպի բնույթ ունենալու հանգամանքը պայմանավորված է նրանով, որ դրանք գործողությունը չի տարածվում միայն դատարանի կողմից ուսումնասիրված կոնկրետ գործի վրա: Իշխանության այդ մարմինն ապագայում համանման հարցեր լուծելու համար ձևավորում է «մոտեցման մոդելներ» (տե՛ս Студенкина М. С. Вступление федерального закона в силу: правовое регулирование и практика // Журнал российского права, 2000, N 7, էջ 20): Իրավաբանական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել նաև այն մասին, որ սահմանադրական արդարադատության մարմինների կողմից ընդունվող ակտերը դատական նախադեպի նոր տարատեսակի՝ «սահմանադրական նախադեպի» դրսևորում են (տե՛ս Вересова Н. Нормотворческая функция Федерального Конституционного Суда Федеративной Республики Германии и Конституционного Суда Российской Федерации: сравнительно-правовой анализ (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). СПб., 2008, [http://elibrary.finec.ru/\\_materials\\_files/refer/A6904\\_b.pdf](http://elibrary.finec.ru/_materials_files/refer/A6904_b.pdf), Иванова Т. Роль органов конституционного контроля в процессе правообразования (на примере Республики Беларусь и Украины), [www.law.bsu.by/pub/31/Ivanova1.doc](http://www.law.bsu.by/pub/31/Ivanova1.doc)):

մապատասխանության հաստատված փաստի պրեյուդիցիոնալ նշանակությունը<sup>85</sup>:

Տվյալ պարագայում հարկ է հիշատակել նաև իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանի որոշումն իր մեջ բովանդակվող իրավական դիրքորոշումներով մաքուր տեսքով ո՛չ նախադեպ է, ո՛չ էլ օրենսդրական ակտ՝ ո՛չ իր՝ սահմանադրական դատարանի և ո՛չ էլ այլ մարմինների համար: Դրանք հատուկ բնույթի նորմատիվ ակտեր են, որոնք ունեն որոշակի և՛ նախադեպային, և՛ օրենսդրական հատկանիշներ: Որոշումներում պարունակվող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն արտացոլում են նրա՝ հատուկ բնույթի իրավաստեղծու-  
մը<sup>86</sup>:

Հիշյալ համատեքստում առաջին հերթին կանդրադառնանք այն հանգամանքին, թե արդյոք ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հանդիսանում են իրավաստեղծ գործունեության արդյունք ու իրավունքի աղբյուր, և արդյոք հիշյալ մարմինը, որոշում ընդունելով, ստեղծում է իրավունքի նորմեր:

Իրավաբանական գրականության մեջ իրավաստեղծ գործունեությունը բնորոշվում է որպես իրավասու մարմինների և կազմակերպությունների՝ օրենքի հիման վրա իրականացվող գործունեություն, որն ուղղված է նորմատիվ իրավական ակտերի ստեղծմանը<sup>87</sup>: Հետևաբար, միայն օրինաստեղծման գործառույթը չէ, որ ընդգրկվում է հիշյալ հասկացության շրջանակներում, և ներկայացված պահանջներին համապատասխանող ցանկացած գործունեություն հանդիսանում է իրավաստեղծագործություն: Ավելին, թեև իշխանությունների տարանջատման սկզբունքի համաձայն՝

<sup>85</sup> Տե՛ս Конституционный суд РФ: Постановления. Определения. 1997-1998 / Отв. ред. Морщакова Т. Г. М., 2000, էջ 5:

<sup>86</sup> Տե՛ս Зорькин В. Д. Прецедентный характер решений Конституционного суда РФ // Журнал российского права, 2004, N 12, էջ 5:

<sup>87</sup> Տե՛ս Общая теория государства и права / Под ред. Лазарева В. М., 2007, էջ 200:

օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմինն է կոչված ընդունելու օրենքներ<sup>88</sup>, սակայն նույն այդ սկզբունքը չի արգելում նորմաստեղծ գործառույթների իրականացումը իշխանության այլ ճյուղերի, մասնավորապես, օրինակ, գործադիր իշխանության կողմից՝ այդպիսի լիազորություններով օժտելով վերջինիս՝ իր գործառույթներն իրականացնելու նպատակով<sup>89</sup>: Հետևաբար, թեև օրինաստեղծման գործառույթը վերապահված է օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմնին, սակայն օրինաստեղծագործությունն ու իրավաստեղծագործությունը նույնական հասկացություններ չեն, և առաջինը հանդիսանում է իրավաստեղծ գործունեության տեսակներից սուկ մեկը<sup>90</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությանը, ապա այն, ըստ էության, հանդիսանում է իրավաստեղծագործություն, քանզի հանդես է գալիս որպես իրավական

<sup>88</sup> Այդ առումով հարկ է նկատի ունենալ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ իշխանությունների տարանջատման սկզբունքը բացարձակացվում է այն դեպքում, երբ, մասնավորապես, օրենսդիր իշխանության գործունեության շրջանակները սահմանափակվում են սուկ իրավաստեղծ, իսկ դատական իշխանությանը՝ միայն դատական գործառույթներով: Իրական կյանքում, ինչպես ցույց է տալիս հիշյալ սկզբունքը վաղուց և արդյունավետ կիրառող երկրների փորձը, չկա իշխանության տարբեր ճյուղերի գործունեության բնագավառների ու գործառույթների նախապես կատարված խիստ բաժանում: Այն գոյություն ունի սուկ տեսությունում, քայց ոչ իրական կյանքում, պրակտիկայում (տե՛ս Марченко М. Н. Источники права. М., 2008, էջ 387, այդ մասին տե՛ս նաև Даниелян Г. Современные проблемы комментария принципа разделения властей // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(38)2007, էջ 50-61):

<sup>89</sup> Տե՛ս Арутюнян Г., Баглай М. Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, էջ 184-185:

<sup>90</sup> Իրավաստեղծ գործունեության տեսակներ են նաև ենթաօրենսդրական իրավաստեղծ գործունեությունը, տեղական ինքնակառավարման մարմինների, դատական մարմինների իրավաստեղծ գործունեությունը և այլն (տե՛ս, օրինակ, Общая теория государства и права / Под ред. Лазарева В. М., 2007, էջ 200-201, Головистикова А. Н., Дмитриев Ю. А. Проблемы теории государства и права. М., 2005, էջ 458-461, Венгеров А. Теория государства и права. М., 2008, էջ 480, Марченко М. Н. Судебное правотворчество и судебское право. М., 2008, էջ 17, 253):

ակտերի ստեղծմանն ուղղված իրավասու մարմնի՝ օրենքի հիման վրա իրականացվող գործունեություն<sup>91</sup>: Իսկ դա իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հանդիսանում են իրավաստեղծ գործունեության արդյունք:

Անդրադառնալով այն հանգամանքին, թե արդյոք ՀՀ սահմանադրական դատարանը, որոշում ընդունելով, ստեղծում է իրավունքի նորմեր, նշենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանն ընդունում է միայն **նորմատիվ**, անհատական կամ աշխատակարգային որոշումներ, իսկ 2 հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ նորմատիվ իրավական ակտն... պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ: Միևնույն ժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ սահմանադրական դատա-

<sup>91</sup> Սահմանադրական դատարանի գործունեությունը որպես իրավաստեղծ գործունեություն է դիտարկվում նաև մի շարք հեղինակների կողմից (տե՛ս, օրինակ, Ku'ris E. Constitutional Law as Jurisprudential Law – the Lithuanian Experience, with Special Reference to Human Rights // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 106, Зорькин В. Прецедентный характер решений Конституционного суда РФ // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 3(33)2006, էջ 8, Марченко М. Н. Является ли судебная практика источником российского права? // Журнал российского права, 2000, N 12, էջ 18): Նրանք նշում են, որ այժմ դատարանները, ըստ էության, ստիպված են ստեղծելու իրավունք, քանզի հակառակ պարագայում վերջիններիս գործունեությունը ոչ միայն կդառնա անարդյունավետ, այլև կհանգեցնի այնպիսի արդյունքների, որոնք հակասում են նրանց, որոնք դատարաններից սպասում է հասարակությունը, այլ իրավիճակում դատարանները ոչ թե կպաշտպանեն իրավունքները, այլ կնպաստեն դրանց խախտումներին (տե՛ս Жуйков В. М. К вопросу о судебной практике как источнике права // Судебная практика как источник права / Отв. ред. Топорнин Б. М., 1997, էջ 20):

րանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանն այլ բնույթի ակտերի թվում ընդունում է նաև նորմատիվ որոշումներ՝ այդպիսով ստեղծելով իրավունքի նորմեր, և որ սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումներն ունեն նորմատիվ բնույթ<sup>92</sup>: Ավելին, ակնհայտ է, որ սահմանադրական դատարանի գործունեության արդյունքում ընդունվող հիշյալ որոշումները հանդես են գալիս որպես իրավունքի արտահայտման պաշտոնական ձև:

Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ **ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հանդիսանում են իրավունքի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնների արտաքին արտահայտման այնպիսի պաշտոնական ձև, որն առավելապես նպաստում է իրավական կարգավորման նպատակների կենսագործմանը և իրավունքի լիարժեք իրականացմանը: Այլ կերպ ասած՝ դրանք հանդես են գալիս որպես իրավունքի**

<sup>92</sup> «Բելառուսի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2 հոդվածի համաձայն նույնպես՝ Սահմանադրական դատարանի ակտերը հանդիսանում են նորմատիվ իրավական ակտեր (տե՛ս Կիգրինով Ս. Решения Конституционного суда в правовой системе Республики Беларусь // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии), Ереван, 2011, էջ 149): Այլ տեսակետը հանդիպում է նաև իրավաբանական գրականության շրջանակներում, և առանձին հեղինակների կարծիքով, քանի որ կոնկրետ գործերի քննության ժամանակ, ի տարբերություն այլ դատարանների, սահմանադրական դատարանը հետազոտում է գործի ոչ թե փաստական հանգամանքները, այլ նորմատիվ ակտերը, այդ որոշումը չի կարող նորմատիվ ակտ չլինել (տե՛ս Օվսեպյան Ջ. Конституционное судебно-процессуальное право: у истоков отрасли права, науки и учебной дисциплины // Правоведение, 1999, N 2, էջ 208):

**մերքին կազմակերպման և արտաքին արտահայտման միջոց, հետևաբար, հանդիսանում են ՀՀ իրավունքի աղբյուր**<sup>93</sup>:

Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ սահմանադրական դատարանը հանդիսանում է նեգատիվ օրենսդիր<sup>94</sup>: Այդ կարծիքը հիմնավորվում է նրանով, որ վերջինիս որոշումների արդյունքում օրենսդրի կողմից ընդունված իրավական ակտերը կորցնում են իրավաբանական ուժը: Կարծում ենք, որ այդ բնորոշումը սահմանադրական դատարանների գործունեության ու դրա արդյունքում ընդունվող որոշումների բնույթի տեսանկյունից ճիշտ չէ, քանզի իրավական ակտը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելը սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների միակ տարատեսակը չէ, և բավական տարածված է այն պրակտիկան, երբ վերջիններս ճանաչվում են Սահմանադրությանը համապատասխանող (այդ թվում՝ սահ-

<sup>93</sup> Հարկ է նկատել, որ սահմանադրագիտության զարգացման արդի փուլում հիշյալ տեսակետը ստացել է լայն տարածում (տե՛ս Арутюнян Г. Особенности функционирования Конституционных Судов в условиях общественной трансформации // Доклад на международной научной конференции в Душанбе 4 ноября 2010г., <http://concourt.am/armenian/speeches/index.htm>, Бондарь Н. Конституционное правосудие – универсальный институт разрешения социальных противоречий современного общества // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(35)2007, էջ 13-14, Страшун Б. Решения Конституционного Суда Российской Федерации как источник права // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(14)2001-1(15)2002, էջ 154): Ավելին, Լիտվայի Սահմանադրական դատարանն ուղղակիորեն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Սահմանադրական դատարանի ակտերը հանդիսանում են իրավունքի աղբյուր (տե՛ս Ruling No. 21/2003 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>):

<sup>94</sup> Տե՛ս, օրինակ, Arlovic' M., նշված աշխատությունը, էջ 175, Governmental Systems of Central and Eastern European States / Editors: Chronowski N., Drinóczi T., Takács T. Warszawa, 2011, էջ 801, Macejkova' I. Influence of the Constitutional Court of the Slovak Republic on the monism of the Slovak Legal System // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(43)2009, էջ 77:



մանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում) ու շարունակում են իրականացնել հասարակական հարաբերությունների կարգավորման իրենց գործառույթը:

Ուստի վերը նշված տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում նույնը հնարավոր կլինի ասել նաև օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմնի մասին, քանզի վերջինս ոչ միայն ընդունում է իրավական ակտեր՝ «հանդես գալով որպես պոզիտիվ օրենսդիր», այլ հաճախ փոփոխում կամ ուժը կորցրած է ճանաչում դրանք՝ «հանդիսանալով, այսպես կոչված, «նեգատիվ օրենսդիր»:

Ավելին, սահմանադրական արդարադատության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ սահմանադրական դատարանը հաճախ իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող՝ բացահայտելով վերջինիս սահմանադրաիրավական բովանդակությունը, որի շրջանակներում է միայն դրույթը համապատասխանում Սահմանադրությանը, և չի կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի որոշման մեջ արտահայտված հիշյալ իրավական դիրքորոշումներին<sup>95</sup>, կամ իրավական ակտը ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող՝ միևնույն ժամանակ իրավական դիրքորոշում է արտահայտում սահմանադրականության տեսանկյուն

<sup>95</sup> Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՄԳՈ-984 որոշումը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9 հոդվածի 1-ին մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38 հոդվածը ճանաչվեցին ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, **սակայն սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որը բացառում է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը:** Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը որոշման եզրափակիչ մասում արձանագրեց, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9 հոդվածի 1-ին մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38 հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ հիշյալ որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>):

նից առանձին իրավակարգավորումների նպատակահարմարության առնչությամբ<sup>96</sup>: Ինչպես արդեն նշեցինք, հենց նմանատիպ իրավիճակներում է ընդգծվում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի գործունեության էությունը, և արդի փուլում քննարկվող որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սուսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ հանդիսանում են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց: Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ ընդունելի չէ սահմանադրական դատարանի՝ նեգատիվ օրենսդիր լինելու հանգամանքի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ արտահայտված հիշյալ միանշանակ տեսակետը<sup>97</sup>:

<sup>96</sup> Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՄԳՈ-984 որոշումը, որով սահմանադրական դատարանն արձանագրեց, որ «Նշված հանգամանքը նկատի ունենալով՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում ընդգծել նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ողջ մեթոդաբանության հիմնավոր վերաբժնորման անհրաժեշտությունը՝ գտնելով, որ այդ ինստիտուտի իրավակարգավորման մեթոդաբանությունը պետք է խարսխվի պետության՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան պաշտպանելու պարտավորության հենքի վրա: ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը ևս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան նշված մեթոդաբանությունը հաշվի առնելու ուղղությամբ» (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>):

<sup>97</sup> Ժամանակակից իրավական միտքը նույնպես զարգանում է այն տեսակետը հիմնավորելու ուղղությամբ, որ իր գործունեությունն իրականացնելիս սահմանադրական դատարանը հանդես է գալիս ոչ միայն որպես «նեգատիվ», այլ նաև որպես «պոզիտիվ օրենսդիր»՝ մատնանշելով ոչ միայն այն, թե իրավակիրառողն

Հաջորդ կարևորագույն հիմնախնդիրը, որին անհրաժեշտ է անդրադառնալ հիշյալ համատեքստում, այն է, թե իրավունքի կոնկրետ որ աղբյուրի տեսքով են հանդես գալիս սահմանադրական դատարանի որոշումները, ինչն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ իրավական համակարգում նշված մարմնի ունեցած կարգավիճակով ու զբաղեցրած տեղով: Այդ առումով հատկանշական է, որ սահմանադրական դատարանի վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 6-րդ գլխում, որի 91 հոդվածը նախատեսում է, որ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 93 հոդվածը սահմանում է, որ ՀՀ-ում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է միայն սահմանադրական դատարանը: Հետևաբար, վերջինս ընդգրկվում է դատական իշխանության մարմինների համակարգում<sup>98</sup>, ինչի արդյունքում հեղինակների մի մասը հանգում է այն եզրակացության, որ սահ-

---

ինչպես չպետք է գործի, այլ նաև այն, թե ինչպես պետք է գործի այս կամ այն իրավիճակում, այլ կերպ ասած՝ սահմանելով պոզիտիվ կարգավորումներ (տե՛ս, օրինակ, Марченко М. Н. Источники права. М., 2008, էջ 401, The Basic Law of Hungary (A First Commentary) / edited by Lo'ra'nt Csink, Bala'zs Schanda, Andra's ZS. Varga. Clarus Press, Dublin, 2012, էջ 160, 163, Головин А. Правовая природа и юридическая сила актов Конституционного суда Украины // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии), Ереван, 2011, էջ 60, Ku'ris E., նշված աշխատությունը, էջ 105, Каримов К. Конституционный суд Республики Таджикистан в условиях глобализации и интеграции правовых систем // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 163-164):

<sup>98</sup> Այդ առումով նշենք, որ ՌԳ Սահմանադրական դատարանին վերաբերող դրույթները նույնպես ընդգրկված են ՌԳ Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 7-րդ գլխում, իսկ «ՌԳ դատական համակարգի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 4 հոդվածի համաձայն՝ ՌԳ Դաշնային Սահմանադրական դատարանը ընդգրկված է այլ դաշնային դատարանների շարքում: Վերը շարադրվածի առումով կարելի է հիշատակել նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի 92 հոդվածը, համաձայն որի՝ դատական իշխանությունն իրականացնում են Դաշնային Սահմանադրական դատարանը, Հիմնական օրենքով նախատեսված դաշնային դատարանները և հոդերի դատարանները:

մանադրական դատարանի որոշումները, լինելով դատական ակտի տարատեսակ, որպես իրավունքի աղբյուր հանդես են գալիս նախադեպի տեսքով: Մեր կարծիքով, սակայն, հիշյալ որոշումների՝ նախադեպի հանդիսանալու հարցի կապակցությամբ մոտեցումը չի կարող լինել միանշանակ, քանզի այդպիսին հանդիսանալու համար վերջիններս պետք է համապատասխանեն իրավունքի քննարկվող աղբյուրին ներկայացվող պահանջներին ու դրան բնորոշ առանձնահատկություններին:

Հատկանշական է, որ թեև իրավաբանական գրականության մեջ նախադեպին առնչվող հիմնախնդիրները քննարկելիս, որպես կանոն, հիշատակվում է իրավունքի նշված աղբյուրի անգլոամերիկյան դոկտրինը, սակայն ռոմանագերմանական իրավական ընտանիքի որոշ երկրներում նույնպես դատական պրակտիկան հանդիսանում է իրավունքի աղբյուր, և գործում է *jurisprudence constante* դոկտրինը: Հետևաբար, աշխատանքի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների առանձնահատկությունները կվերլուծենք ինչպես անգլոամերիկյան *stare decisis*, այնպես էլ ռոմանագերմանական իրավական համակարգերում գործող *jurisprudence constante* դոկտրինների համատեքստում:

Անդրադառնալով նախադեպի անգլոամերիկյան դոկտրինին՝ նշենք, որ վերջինիս համաձայն՝ միայն դատարանի որոշման հիմքում դրված սկզբունքն է պարտադիր (արտահայտված *ratio decidendi*-ում կամ *holding*-ում), որը տեղ է գտնում դատական ակտի պատճառաբանական մասում<sup>99</sup>: Մինչդեռ հիշյալ հանգամանքը բնութագրական չէ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, քանզի պարտադիր են վերջիններիս թե՛ պատճառաբանական և թե՛ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումները, որոնք կարող են վերաբերել ինչպես ակտի սահմանադրականության առնչությամբ վերջնական եզրահանգմանը,

---

<sup>99</sup> Տե՛ս Марченко М. Н., նշված աշխատությունը, էջ 628, Օհանյան Վ., նշված աշխատությունը, էջ 77:

այնպես էլ դրա համար հիմք հանդիսացած հիմնավորումներին: Այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս արձանագրել է, որ Գատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ապահովել, որպեսզի պետական մարմինները և պաշտոնատար անձինք դրանց կատարումը երաշխավորեն ամբողջության մեջ՝ հատկապես հաշվի առնելով դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտված են սահմանադրական դատարանի որոշումների ոչ միայն եզրափակիչ, այլ նաև պատճառաբանական մասերում, և որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն<sup>100</sup>:

Նախադեպի անգլոամերիկյան դոկտրինի հաջորդ առանձնահատկությունը պարտադիր և համոզիչ նախադեպերի առկայությունն է<sup>101</sup>: Ի տարբերություն վերը շարադրվածի՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության ընդունված բոլոր որոշումներն են պարտադիր: Այդ առումով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ 66 հոդվածը սահմանում է, որ սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

<sup>100</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2011 թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները, <http://concourt.am/armenian/report/index.htm>:

<sup>101</sup> Տե՛ս Մարչենկո Մ. Կ., նշված աշխատությունը, էջ 625:

Հավելենք նաև, որ նախադեպի հիշյալ դոկտրինի համաձայն՝ բոլոր դատական որոշումները իրավակիրառ պրակտիկայում պետք է մեկնաբանվեն՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որոնց առնչությամբ ընդունվել են<sup>102</sup>: Հիշյալ առանձնահատկությունը նույնպես բնութագրական չէ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, քանզի վերջիններիս պարտադիրությունն ու կատարումը պայմանավորված չեն փաստական հանգամանքների մասնությամբ կամ նույնականությամբ, և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ քննարկվող որոշումները պարտադիր են բոլոր դեպքերում:

Ինչ վերաբերում է նախադեպի ռոմանագերմանական *jurisprudence constante* դոկտրինին, նշենք, որ դրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ երբ դատարանների կողմից տրված որևէ մեկնաբանություն պահպանվում է երկար ժամանակահատվածի ընթացքում, վերջինիս վրա հիմնված մոտեցման արդյունքում ձևավորվում է որոշակի հարցի առնչությամբ միասնական դատական պրակտիկա և այն, ըստ էության, դառնում է իրավունքի աղբյուր: Հետևաբար, որպես այդպիսին հանդես է գալիս ոչ թե նախկինում ընդունված մեկ որոշումը, ինչպես նախադեպի անգլոամերիկյան դոկտրինի դեպքում, այլ կայուն դատական պրակտիկան, այլ կերպ ասած՝ որոշումների հավաքական ամբողջությունը<sup>103</sup>: Մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների պարագայում անհրաժեշտ չէ ակտերի նման հավաքական ամբողջություն, և իրավունքի աղբյուր հանդիսանալու համար բավարար է Գատարանի սուսկ մեկ որոշումը:

Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի իրավաբանական գրականության մեջ լայնորեն քննարկվող և այն տեսակետը, որ ժամանակակից մայրցամաքային իրավական համակար-

<sup>102</sup> Տե՛ս Մարչենկո Մ. Կ., նշված աշխատությունը, էջ 628:

<sup>103</sup> Տե՛ս Օհանյան Վ., նշված աշխատությունը, էջ 67, 134:

գերի մեծամասնությունը այլևս չի բավարարվում *jurisprudence constante*-ով և դե ֆակտո նշված իրավական համակարգերում ձևավորվել է դատական նախադեպի նոր, հիբրիդային մոդել, որը պարունակում է ինչպես *stare decisis*-ի, այնպես էլ *jurisprudence constante*-ի բնորոշ գծեր: Այդ մոդելը կարելի է անվանել մեկնաբանության նախադեպ<sup>104</sup>: Հիշատակված հեղինակները հանգում են այն եզրակացության, որ դատարանների իրավաստեղծ դերի հարթությունում մայրցամաքային և ընդհանուր իրավունքի երկրները մերձենում են՝ ձգտելով դեպի հատում այն կետում, որտեղ գոյություն ունի օրենքի վրա հիմնված կայուն դատական պրակտիկա՝ մեկնաբանության նախադեպ<sup>105</sup>, և այդ համատեքստում սահմանադրական դատարանի որոշումները դիտարկում են որպես նախադեպի հիշյալ տարատեսակի դրսևորում<sup>106</sup>: Մեր կարծիքով, սակայն, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները բացարձակ առումով չեն համապատասխանում նախադեպի նաև այդ մոդելի առանձնահատկություններին, քանզի վերջինիս էությունը ստորադաս դատարանների համար օրինակ ծառայող կազուալ մեկնաբանություն (օրենքի մեկնաբանության օրինակելի նմուշներ) տալն է, ընդ որում՝ այդպիսի մեկնաբանության հետագա կիրառումը նմանատիպ կազուսների դեպքում հետապնդում է ոչ այնքան նորմատեղծագործության նպատակ, որքան ուղղված է մարդկանց՝ օրենքի առաջ հավասարության սկզբունքի իրականացմանը<sup>107</sup>: Մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, թեև հանդիսանում են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց և բացառիկ կարևորու-

<sup>104</sup> St'u Богдановская И. Судебный прецедент и его эволюция // Законность. 2007, N 3, էջ 46, Օհանյան Վ., նշված աշխատությունը, էջ 66:

<sup>105</sup> St'u Օհանյան Վ., նշված աշխատությունը, էջ 74-75:

<sup>106</sup> St'u, օրինակ, Eroshkin N. Понятие и юридическая природа правовых актов Конституционного Суда Российской Федерации, [www.law-n-life.ru/arch/159/159-7.doc](http://www.law-n-life.ru/arch/159/159-7.doc), Ершова Е.А. Правовая природа постановлений и определений Конституционного Суда Российской Федерации, <http://www.top-personal.ru/lawissue.html?1679>, Головин А., նշված աշխատությունը, էջ 61:

<sup>107</sup> St'u Օհանյան Վ., նշված աշխատությունը, էջ 72:

յուն ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության ու օրենքների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման գործում, սակայն միևնույն ժամանակ ընկալվում են իրենց կատարած գործառույթների միասնության մեջ: Այդ տեսանկյունից ընդգծվում է քննարկվող որոշումների դերն ինչպես Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու, այնպես էլ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը կամ հակասությունն արձանագրելու գործում, ինչը համապատասխան սուբյեկտների համար առաջացնում է հիշյալ բոլոր իրավական դիրքորոշումներին հետևելու պարտականություն: Հետևաբար, այդ որոշումների համապարտադիր բնույթն առնչվում է ոչ միայն վերը նշված մեկնաբանություններին, այլ նաև իրավական ակտերի սահմանադրականության կամ հակասահմանադրականության առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի այլ եզրահանգումներին:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն իրենց առանձնահատկությունների տեսանկյունից էականորեն տարբերվում են ներկայացված բոլոր դոկտրինների շրջանակներում առկա նախադեպի տարատեսակներից: Ու թեև նախադեպի մոդելը չի կարող նույնը լինել բոլոր պետություններում՝ կախված այդ առնչությամբ վերջիններիս օրենսդրական կարգավորման առանձնահատկություններից, ու ընդհանուր և մայրցամաքային իրավունքի երկրներում տեղի ունեցող զարգացումների լույսի ներքո երբեմն հանդիպում ենք իրավունքի հիշյալ աղբյուրի այնպիսի դրսևորումներին, որոնք չեն կարող բնութագրվել վերը ներկայացված հատկանիշներից որևէ մեկով կամ մի քանիսով<sup>108</sup>, սակայն կան առանձին հատկանիշներ, որոնց պետք է համապատասխանի կոնկրետ իրավունքի աղբյուրը նախադեպ հանդիսանալու համար: Դրանցից կարևորագույնը նախադեպի՝ օրենքների համեմատությամբ երկրորդական բնույթ ու-

<sup>108</sup> St'u Օհանյան Վ., նշված աշխատությունը, էջ 65:

նենալն է<sup>109</sup>: Մինչդեռ նշվածը բնորոշ չէ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, և քննարկվող հիմնախնդրին առնչվող ՀՀ օրենսդրության դրույթների վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն իրավական ակտերի ստորադասության տեսանկյունից ունեն նույնիսկ օրենքներից բարձր իրավաբանական ուժ<sup>110</sup>: Կարևոր է և այն, որ եթե նախադեպի դոկտրինի հիմքում, ըստ էության, ընկած է կոնկրետ դատական ակտի պարտադիր լինելու հանգամանքը այլ **դատական մարմինների** համար, ապա ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների պարագայում դրանց պարտադիրությունը վերաբերում է ոչ միայն դատարաններին, այլ նաև օրենքի 61 հոդվածի 5-րդ մասում հիշատակված բոլոր սուբյեկտներին<sup>111</sup>: Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, իրենց առանձնահատկությունների տեսանկյունից էականորեն տարբերվելով ներկայացված բոլոր դոկտրինների շրջանակներում առկա նախադեպի տարատեսակներից, հանդես չեն գալիս իրավունքի քննարկվող աղբյուրի տեսքով:

<sup>109</sup> Այդ առումով իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված է այն տեսակետը, որ երբ հակասություն է առաջանում ստատուտային իրավունքի (ստատուտի) և դատական իրավունքի (նախադեպի) միջև, առաջինն առավելություն ունի երկրորդի նկատմամբ, և վերջինս կարող է հաղթահարվել Պառլամենտի կողմից (տե՛ս Марченко М. Н. Судебное правосотворчество и судебское право. М., 2008, էջ 339, 346):

<sup>110</sup> Այդ առումով հիշատակման է արժանի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավական ակտերի տեսակներին և ստորադասությանն առնչվող 2 գլուխը, որը կառուցված է այն ընդհանուր տրամաբանության հիման վրա, որ վերջինիս շրջանակներում ընդգրկված իրավական ակտերը, այդ թվում՝ օրենքները, չպետք է հակասեն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին:

<sup>111</sup> Տե՛ս, օրինակ, Актуальные проблемы теории государства и права / Отв. ред. Шагиева Р. В. М., 2011, էջ 282, Витрук Н. Конституционное правосудие. М., 2005, էջ 128:

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ, ունենալով նորմատիվ բնույթ և այդ առումով հանդես գալով որպես նորմատիվ իրավական ակտ, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները չեն ընդգրկվում նաև իրավունքի աղբյուրների ավանդական դասակարգման համաձայն նորմատիվ ակտերի առնչությամբ ձևավորված ընկալման շրջանակներում՝ հաշվի առնելով այն, որ դատական ակտերն ավանդաբար չեն դիտարկվել իրավունքի աղբյուրների հիշյալ տարատեսակի համատեքստում<sup>112</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ինչպես սահմանադրական դատարանի առանձնահատուկ կարգավիճակը, լիազորությունների և այդ մարմնի կողմից լուծվող հարցերի առանձնահատկությունները, այնպես էլ վերջինիս որոշումներն ու դրանց բնորոշ հատկանիշները հիմք են տալիս եզրակացնելու, որ, ընդգրկվելով դատական իշխանության մարմինների համակարգում, սահմանադրական դատարանը հանդիսանում է առանձնահատուկ մարմին, որի գործունեությունը, ինչպես նաև դրա արդյունքում ընդունվող որոշումներն իրենց էությանը մեծապես տարբերվում են այլ պետական մարմինների, այդ թվում՝ դատարանների գործունեությունից ու նրանց կողմից ընդունվող ակտերից: Հետևաբար, քննարկվող որոշումների պարագայում գործ ունենք մի նոր իրավական երևույթի հետ, որը, հանդիսանալով իրավունքի աղբյուր, բացարձակ առումով չի համապատասխանում դասական մոտեցման շրջանակներում առկա իրավունքի աղբյուրների տեսակներից և ոչ մեկին<sup>113</sup>: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավունքը դիմամիկ երևույթ է, և դրա արտաքին

<sup>112</sup> Տե՛ս, օրինակ, Актуальные проблемы теории государства и права / Отв. ред. Шагиева Р. В. М., 2011, էջ 267-280, Дробышевский С., Данцева Т. Формальные источники права. М. 2011, էջ 81:

<sup>113</sup> Որպես կանոն, ավանդական մոտեցման շրջանակներում առանձնացնում են իրավունքի աղբյուրների հետևյալ տեսակները՝ նորմատիվ ակտ, դատական նախադեպ, սանկցիավորված սովորույթ, պայմանագիր, իրավական դոկտրինա, իրավունքի ընդհանուր սկզբունքներ (տե՛ս Теория государства и права / Под ред. Корельского В., Первалова В. М., 1998, էջ 287, Общая теория государства и права / Под ред. Лазарева В. М., 2007, էջ 173):

արտահայտման, օբյեկտիվացման ձևերը չեն կարող ստատիկ լինել: Այդ առումով առանձին հեղինակներ արդարացիորեն նշում են, որ տեսական ուսումնական գրականության մեջ իրավական կարգավորման աղբյուրների հարցը ներկայացվում է շատ պարզ սխեմայով՝ աղբյուրների ավանդական տեսակների և դրանց աստիճանակարգության թվարկմամբ, ինչը բավարար չէ իրավական կարգավորման մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: Աղբյուրների սոսկ թվարկումն արտացոլում է իրավական կարգավորման ստատիկ վիճակը, այլ ոչ թե դինամիկական և գործողությունը<sup>114</sup>: Հետևաբար, կարծում ենք, որ իրավունքի աղբյուրների դասակարգումը պետք է կրի ոչ թե սոսկ տեսական ու վերացական բնույթ, այլ ծառայի իրավական կարգավորման շրջանակներում վերջիններիս գործնական դերի ու նշանակության ընդգծմանը: Այդ հանգամանքը վերաբերում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, որոնց՝ իրավունքի աղբյուրների համակարգում զբաղեցրած տեղի հստակեցումը ինքնանպատակ չէ և անհրաժեշտ է դրանց առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կատարման լիարժեք համակարգի ձևավորման նպատակով<sup>115</sup>:

Տվյալ պարագայում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ժամանակակից աշխարհում ընթացող իրավական զարգացումները հանգեցրել են իրավական կարգավորման մեխանիզմի շրջանակներում այնպիսի իրավական ակտերի առաջացման, որոնք բացարձակ առումով չեն համապատասխանում դասական մոտեցման համատեքստում առկա իրավունքի աղբյուրների տե-

<sup>114</sup> Տե՛ս Վաղարշյան Ա. Իրավունքի աղբյուրների ու իրավական կարգավորման միջոցների հարաբերակցությունը և հասարակական հարաբերությունների կարգավորման ստորակարգությունը // Պետություն և իրավունք, N 2-3 (32-33), 2006, էջ 5:

<sup>115</sup> Հիշյալ աշխատանքի շրջանակներում նպատակ չենք հետապնդում վերլուծել տեսության մեջ առկա իրավունքի աղբյուրների դասակարգման բոլոր հիմնախնդիրները՝ դրանք դիտարկելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների՝ իրավունքի աղբյուրների համակարգում զբաղեցրած տեղի հստակեցման համատեքստում:

սակներից և ոչ մեկին: Նմանատիպ իրավական ակտերից են նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, որոնք, հետևաբար, վերը նշված մոտեցման տեսանկյունից հանդես են գալիս որպես իրավունքի առանձնահատուկ աղբյուր: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ քննարկվող զարգացումներն առաջ են բերել նաև իրավական ակտերի տարբերակման համար ընդհանուր չափանիշի ձևավորման ու դրա հիման վրա վերջիններիս դասակարգման անհրաժեշտություն: Այդ տեսանկյունից նպատակահարմար ենք համարում որպես իրավական ակտերի տարանջատման ընդհանուր չափանիշ դիտարկել նորմատիվությունը՝ դրանք դասակարգելով 2 հիմնական խմբի՝ նորմատիվ իրավական ակտեր և իրավունքի՝ նորմատիվ բնույթ չունեցող այլ աղբյուրներ<sup>116</sup>: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները դիտարկելով առաջին խումբ աղբյուրների համակարգում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, բացարձակ առումով չհամապատասխանելով դասական մոտեցման շրջանակներում առկա իրավունքի աղբյուրների տեսակներից և ոչ մեկին, ունենալով իրավունքի այդ աղբյուրներին բնորոշ առանձին հատկանիշներ, սակայն միևնույն ժամանակ աչքի ընկնելով առավել մեծ թիվ կազմող առանձնահատկություններով, ավանդական մոտեցման շրջանակներում ձևավորել են իրավունքի աղբյուրների առանձնահատուկ տարատեսակ, որը, մեր կողմից առաջարկված դասակարգման համաձայն, ընդգրկվում է նորմատիվ իրավական ակտերի համակարգում:

<sup>116</sup> Որոշ հեղինակներ նույնպես ներկայացնում են իրավունքի աղբյուրների նման դասակարգում (տե՛ս, օրինակ, Теория государства и права / Под ред. Корельского В., Первалова В. М., 1998, էջ 288):

## § 2. Իրավական դիրքորոշումները՝ որպես ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների անքակտելի բաղկացուցիչ տարր

Վերլուծելով Սահմանադրության կայունությանն ու զարգացմանն առնչվող հիմնախնդիրները և բացահայտելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների տեղը իրավունքի աղբյուրների համակարգում՝ հանգեցինք այն եզրակացության, որ սահմանադրագիտության զարգացման արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սուսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորմանն ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Հետևաբար, հայ սահմանադրականության զարգացման գործում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների դերի ամբողջական բացահայտումը պահանջում է դրանցում ամրագրվող իրավական դիրքորոշումների առանձնահատկությունների վերլուծություն, ինչին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հիշյալ պարագրաֆի շրջանակներում:

Հարկ է նկատել, որ քննարկվող իրավական կատեգորիայի բնույթի, հատկանիշների ու առանձնահատկությունների վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ չկա միանշանակ տեսակետ:

Որոշ հեղինակների կարծիքով, սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն արտահայտում են դատարանի վերաբերմունքը սահմանադրական նորմի նկատմամբ դրա մեկնաբանման արդյունքում<sup>117</sup>: Մյուսները նշված հասկացությունը դիտարկում են որպես այդ մարմնի որոշման՝ պարտադիր կատարման ենթակա մաս, որն արտահայտում է դատավորների դիրք-

<sup>117</sup> Տե՛ս Витрук Н. Конституционное правосудие в России (1991-2000гг.): Очерки теории и практики. М., 2001, էջ 104-124:

քորոշումը Սահմանադրության այս կամ այն նորմի կիրառման առնչությամբ<sup>118</sup>: Առանձին հեղինակներ էլ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները ներկայացնում են որպես հիշյալ մարմնի վերաբերմունքը նշանակալի սահմանադրական երևույթների նկատմամբ, որով վերջինս ղեկավարվում է համապատասխան գործերի քննության ընթացքում<sup>119</sup>: Իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է և այն տեսակետը, որ իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանի ընդհանուր բնույթի իրավական եզրահանգումների ամբողջությունն են, որոնք հանդես են գալիս որպես դատարանի կողմից իր լիազորությունների շրջանակներում Սահմանադրության մեկնաբանման և օրենքների ու այլ նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրական իմաստի վերհանման արդյունք, վերացնում են սահմանադրաիրավական անորոշությունը և հանդիսանում են սահմանադրական դատարանի վերջնական որոշումների իրավական հիմք<sup>120</sup>:

«Իրավական դիրքորոշումներ» եզրույթի բովանդակությունը հստակեցված չէ նաև ՀՀ օրենսդրությամբ: Միևնույն ժամանակ, սահմանադրական արդարադատության պրակտիկայի շրջանակներում իրականացվել է քննարկվող իրավական կատեգորիայի առանձնահատկությունների իրավավերլուծությունը, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18 հոկտեմբերի 2006թ. ՄԴ-Ո-652 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում

<sup>118</sup> Տե՛ս Бастен И. Правовые позиции Конституционного Суда РФ. Понятие, виды, юридическая сила // Вестник Челябинского университета. Серия 9. Право. 2003. №2, էջ 15:

<sup>119</sup> Տե՛ս Кряжков В. А., Лазарев Л. В. Конституционная юстиция в РФ. М., 1998, էջ 246:

<sup>120</sup> Տե՛ս Витрук Н., նշված աշխատությունը, էջ 111:

ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: **Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է»**<sup>121</sup> (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.): Ակնհայտ է, որ ներկայացված որոշմամբ սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանափակել է սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանության շրջանակներով, որպիսի եզրահանգումը տեղ է գտել նաև սահմանադրական դատարանի՝ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում: Սակայն դրանց շրջանակներում արձանագրվել է նաև, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ **Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձևակերպում է իր իրավական դիրքորոշումը**, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար<sup>122</sup>: Հետևաբար, ընդգծելով, որ իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով հանդիսանում են **սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն**, սահմանադրական դատարանը միևնույն ժամանակ արձանագրել է, որ դրանք ձևակերպվում են ոչ միայն Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման, այլ նաև **օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով**:

Անվիճելի է, որ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունն է ընկած ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության էության հիմքում: Սակայն ակնհայտ է նաև, որ սահմանադրական արդարադատությունը ենթադրում է վիճարկվող իրա-

<sup>121</sup> Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-652.htm>:

<sup>122</sup> Վերը նշված հանգամանքն արձանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2010թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ բոլոր հաղորդումներում (տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>):

վական ակտի սահմանադրականության առնչությամբ գնահատականի ձևավորում, ինչը պահանջում է սահմանադրական ու վիճարկվող իրավական ակտի դրույթների բովանդակությունների համադրում: Իսկ դա իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների բովանդակությունը չի կարող սահմանափակվել սուսկ սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանության շրջանակներով:

Քննարկվող հիմնախնդրի վերլուծության տեսանկյունից հետաքրքիր է նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՍԳ-Ո-943 որոշումը, որը բեկումնային նշանակություն ունեցավ «իրավական դիրքորոշումներ» հասկացության բովանդակության, բնույթի ու առանձնահատկությունների իրավավերլուծության, ինչպես նաև դրանց իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած դերի և նորմաստեղծ նշանակության խնդիրների լիարժեք կարգավորմանն ուղղված լուծումներ ամրագրելու տեսանկյունից: Հիշյալ որոշումը նույնպես քննարկվող հասկացության առանձնահատկություններից մեկը դիտարկեց այն, որ դրանք ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են, սակայն միևնույն ժամանակ իրավական դիրքորոշումների բովանդակության առնչությամբ արձանագրեց, որ «Դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որպես կանոն, բովանդակվում են տվյալ գործի լուծման հիմքում դրված իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք վերաբերում են.

- ՀՀ Սահմանադրության նորմերի, միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների, օրենքների, ինչպես նաև օրենսդրության այլ ակտերի (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, դրանց սահմանադրական արժեքանությունից բխող ընկալմանն ու կիրառմանը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը, այդ ա-



մենի արդյունքում՝ վիճարկվող նորմի (իրավական ակտի) սահմանադրականությունը գնահատելուն,

- իրավակիրառական (այդ թվում՝ արդարադատական) պրակտիկան գնահատելուն և այդ պրակտիկայում ՀՀ Սահմանադրության նորմերը, օրենքները և իրավական այլ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությանը,

- սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ու փաստերին գնահատական տալուն»:

Ակնհայտ է, որ, ի տարբերություն մինչ այդ ընդունված ու մեր կողմից հիշատակված ակտերի, նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն առավել տարածական ներկայացրեց «իրավական դիրքորոշում» հասկացության բովանդակությունը՝ վերջինիս շրջանակներում բացի սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանությունից ընդգրկելով նաև հիշյալ իրավական չափորոշիչները:

Անփոփելով վերը շարադրվածը՝ հարկ ենք համարում նկատել, որ, մեր կարծիքով, անհնար է սպառնիչ կերպով թվարկել այն բոլոր իրավական չափորոշիչները, որոնք տեղ են գտնում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ դրանք չեն սահմանափակվում Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանության շրջանակներով: Հետևաբար, սահմանադրական դատարանի «իրավական դիրքորոշումներ» հասկացությունը սահմանելիս կխուսափենք վերջինիս բովանդակության տարրերի սպառնիչ թվարկումից՝ հիշյալ համատեքստում ներկայացնելով քննարկվող հասկացության ընդհանուր բնորոշումը:

Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը և այն, որ մտավոր գործունեության մեջ «դիրքորոշում»-ը հանդես է գալիս որպես որևէ հարցի կամ որևէ մեկի նկատմամբ վերաբերմունքի

կապակցությամբ դատողությունների համակարգ<sup>123</sup>, կարծում ենք, որ սահմանադրական դատարանի «իրավական դիրքորոշումներ» հասկացությունը բնորոշում է վերջինիս վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հարցերի, հիմնախնդիրների առնչությամբ, որն իր արտահայտությունն է գտնում հիշյալ մարմնի ակտերում:

Հաջորդ հիմնախնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ սույն պարագրաֆի շրջանակներում, այն է, թե սահմանադրական դատարանի որոշման որ մասում են ընդգրկվում վերջինիս իրավական դիրքորոշումները, ինչի առնչությամբ տեսության մեջ և պրակտիկայում չկա միանշանակ տեսակետ: Հեղինակների մի մասը գտնում է, որ իրավական դիրքորոշումներն արտահայտվում են որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում<sup>124</sup>: Մյուսների կարծիքով, իրավական դիրքորոշումը օրենքի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ եզրահանգումը չէ, որն ամրագրվում է եզրափակիչ մասում, այլ պատճառաբանական մասում սահմանադրական նորմի մեկնաբանությունը, հիշյալ եզրահանգմանը նախորդող տրամաբանական գործողություն<sup>125</sup>: Կարծում ենք, որ «իրավա-

<sup>123</sup> St'u Гринева А. Понятие и виды судебных правовых позиций: Вопросы теории (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2008, <http://law.edu.ru/book/book.asp?bookID=1294170>:

<sup>124</sup> St'u, օրինակ, Хабриева Т. Я., Волкова Н. С. Особенности казуального толкования Конституции Российской Федерации // Теоретические проблемы Российского конституционализма. М., 2000, էջ 42-43, Головин А., նշված աշխատությունը, էջ 67, Кампо В. Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(47)2010, էջ 27:

<sup>125</sup> Այդ մասին տե՛ս Լазарев Л. В. Правовые позиции Конституционного суда России. М. 2003, էջ 72, Чернышев И. Правовые позиции Конституционного Суда России и Европейского суда по правам человека: генезис и взаимовлияние (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). СПб., 2010, [http://elibrary.finec.ru/materials\\_files/349371422.pdf](http://elibrary.finec.ru/materials_files/349371422.pdf): Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է նաև ՌԴ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝

կան դիրքորոշում» հասկացության առնչությամբ մեր կողմից ներկայացված բնորոշումը հիմք է տալիս եզրակացնելու, որ վերջիններս կարող են ընդգրկված լինել սահմանադրական դատարանի որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում: Այդ հանգամանքը համահունչ է սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումներին, որոնց պայմաններում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական նորմի մեկնաբանության ու իրավական ակտերի դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առաքելությունը պարզապես ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության առնչությամբ եզրահանգում ձևավորելու հանգամանքը չէ: Դրանք ինքնին հանդիսանում են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց և այդ առումով պակաս կարևոր չեն վերը նշված եզրահանգումներից, իսկ իրավական հետևանքների տեսանկյունից համարժեք են վերջիններին: Ավելին, սահմանադրական արդարադատության ժամանակակից պրակտիկան վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասում հաճախ արձանագրվում է ոչ միայն իրավական ակտի՝ Սահմանադրությանը

---

Սահմանադրական դատարանի որոշման **պատճառաբանական մասի դրույթները**, որոնք ընդգրկում են սահմանադրական նորմերի մեկնաբանություն կամ վեր են հանում օրենքի սահմանադրական իմաստը, և որի վրա հիմնված են այդ որոշման եզրափակիչ մասում ամրագրված ՌԳ Սահմանադրական դատարանի եզրահանգումները, **արտահայտում են ՌԳ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), ինչպես նաև կրում են պարտադիր բնույթ (տե՛ս Определение Конституционного суда РФ от 8 октября 1998г. N 118-О, <http://www.ksrf.ru>):

համապատասխանելու կամ չհամապատասխանելու հանգամանքը, այլև ամրագրվում են դատարանի այլ եզրահանգումներ: Այնհայտ է, որ դրանք ինքնին ներկայացնում են հիշյալ մարմնի վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդիրների առնչությամբ՝ այդպիսով հանդես գալով որպես իրավական դիրքորոշումներ<sup>126</sup>: Քննարկվող հանգամանքն առավել ընդգծվում է ՀՀ սահմանադրական դատարանի այն որոշումների պայմաններում, որոնց շրջանակներում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, վիճարկվող ակտը ճանաչե-

---

<sup>126</sup> Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՄԳՌ-984 որոշումը, որի եզրափակիչ մասում արձանագրվեց ոչ միայն համապատասխան դրույթների սահմանադրականության վերաբերյալ եզրահանգումը, այլև ամրագրվեց այն սահմանադրաիրավական բովանդակությունը, որի շրջանակներում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը, նշվեց իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244.33-րդ հոդվածի 1-ին մասին տրված այն բովանդակությունը, որի մասով է այդ դրույթը ճանաչվում ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 13րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր, ինչպես նաև մատնանշվեց, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ հիշյալ որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>): Կարելի է հիշատակել նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 14 հունիսի 2011թ. ՄԳՌ-975 որոշումը, որի եզրափակիչ մասում Դատարանն արձանագրեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով **«պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ**: Միևնույն ժամանակ ընդգծվեց, որ իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ հիշյալ որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-975.pdf>):

լով Սահմանադրությանը հակասող, հետաձգում է այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը<sup>127</sup>: Տվյալ պարագայում դատարանն արտահայտում է իր վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդրի առնչությամբ, ընդ որում՝ այդ հանգամանքն իր արտահայտությունն է գտնում որոշման սուկ եզրափակիչ մասում<sup>128</sup>: Զննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հատկանշական է և այն, որ 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64 հոդվածի 1-ին մասը լրացվեց 9.2 կետով, համաձայն որի՝ հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի 1.1-ին կետով սահմանված որոշումն ընդունելու դեպքում որոշման եզրափակիչ մասում պետք է ներկայացվի վիճարկվող ակտի կամ դրա վիճարկվող դրույթի համառոտ **սահմանադրաիրավական բովանդակությունը**:

Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի և այն հան-

<sup>127</sup> Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՍԳ-Ռ-984 որոշումը, որի եզրափակիչ մասում արձանագրվեց. «Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011թ. նոյեմբերի 1-ը» (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>):

<sup>128</sup> Զննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է ՌԳ Սահմանադրական դատարանի պրակտիկան: Վերջինս որոշման եզրափակիչ մասում ամրագրում է ոչ միայն վիճարկվող դրույթի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ եզրահանգումը, այլ նաև բացահայտում է նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը: Ավելին, որոշման հիշյալ մասում նշվում են այն կոնկրետ իրավակիրառական որոշումները, որոնք ենթակա են վերանայման՝ դրա համար այլ խոչընդոտների բացակայության պայմաններում, և ներկայացվում են հարցին առնչվող որոշակի իրավակարգավորում ամրագրելու ուղղություններն ու այդ բնագավառում համապատասխան իրավաստեղծ մարմնի պարտավորությունները (տե՛ս, օրինակ, ՌԳ Սահմանադրական դատարանի՝ 27 հունվարի 2011թ., 31 հունվարի 2011թ., 31 մարտի 2011թ. որոշումները, [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)):

գամանքը, որ թեև ՀՀ սահմանադրական դատարանի՝ ներկայացված որոշումների ու տարեկան հաղորդումների ձևակերպումները<sup>129</sup> կարող են տպավորություն ստեղծել, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը որպես իրավական դիրքորոշումներ է դիտարկում սուկ որոշման պատճառաբանական մասում շարադրված եզրահանգումները, սակայն, մեր կարծիքով, հիշյալ ձևակերպումների նպատակն է ոչ թե ընդգծել այն հանգամանքը, որ իրավական դիրքորոշումներն ընդգրկվում են որոշման միայն պատճառաբանական մասում, այլ վերացնել այն արատավոր պրակտիկան, երբ կատարվում են սահմանադրական դատարանի որոշումների միայն եզրափակիչ մասում ամրագրված եզրահանգումները՝ պատշաճ ուշադրություն չցուցաբերելով պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումներին: Հիշյալ տեսակետը հիմնավորվում է նաև նրանով, որ 2011թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով քննարկվող հիմնախնդրին, արձանագրեց, որ անհրաժեշտ է, որպեսզի պետական մարմինները և պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն՝ հատկապես հաշվի առնելով դատարանի **իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտված են սահմանադրական դատարանի որոշումների ոչ միայն եզրափակիչ, այլ նաև պատճառաբանական մասերում**<sup>130</sup>:

<sup>129</sup> Օրինակ՝ 2006թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ «... պետական մարմինները և պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները», իսկ 2008թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ նշվեց, որ «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք դեռևս բավարար չափով հաշվի չեն առնում սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները...» (տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>):

<sup>130</sup> Տե՛ս Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2012, էջ 46:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն ընդգրկվում են որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում: Հետևաբար, հիշյալ եզրահանգման պայմաններում նպատակահարմար ենք համարում վերջիններիս դասակարգումը որոշման 1) պատճառաբանական և 2) եզրափակիչ մասերում ամրագրված դիրքորոշումների, ինչը, մեր կարծիքով, արդյունավետ է ինչպես քննարկվող ինստիտուտին առնչվող տեսական հետազոտություններ իրականացնելու, այնպես էլ պրակտիկ հիմնախնդիրներին լուծումներ գտնելու տեսանկյունից<sup>131</sup>:

<sup>131</sup> Ինչ վերաբերում է իրավական դիրքորոշումների դասակարգման ու դրա չափանիշների ընտրության այլ տարբերակներին, նշենք, որ իրավաբանական գրականության մեջ այդ առնչությամբ առկա են բազմապիսի տեսակետներ: Որոշ հեղինակների կարծիքով, անհրաժեշտ է առանձնացնել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հետևյալ տարատեսակները՝ 1) իրավական դիրքորոշումներ, որոնք ձևավորվել են սահմանադրական նորմերի մեկնաբանման ու լիազորությունների վերաբերյալ օրենքով սահմանված վեճերի՝ համապատասխան սահմանադրական դրույթների հիման վրա լուծման արդյունքում, 2) իրավական դիրքորոշումներ, որոնք ձևավորվել են ընթացիկ օրենսդրության, ինչպես նաև ներպետական և միջազգային պայմանագրերի սահմանադրական իմաստի վերհանման արդյունքում: Մի շարք հեղինակներ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների դասակարգման համար հիմք են ընդունում այլ չափանիշներ: Մասնավորապես, պայմանավորված իրավական կարգավորման բնույթով ու առարկայի այլ առանձնահատկություններով, տարբերում են սահմանադրական դատարանի նյութական և դատավարական իրավական դիրքորոշումները: Հիմք ընդունելով հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառներն ու առանձնահատկությունները՝ առանձնացնում են, օրինակ, մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին կամ տեղական ինքնակառավարման բնագավառին վերաբերող իրավական դիրքորոշումները: Որոշ հեղինակներ տարբերակում են սահմանադրական դատարանի՝ 1) ըստ էության մեկնաբանողական բնույթ ունեցող իրավական դիրքորոշումները և 2) դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտների սահմանադրականության կամ հակասահմանադրականության առնչությամբ եզրահանգումներ հանդիսացող իրավական դիրքորոշումները: Իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել նաև այն մասին, որ իրավական դիրքորոշումներն անհրաժեշտ է դասակարգել սահմանադրական նորմերի մեկնաբանության դիրքորոշումների և նորմատիվ ակտերի սահմանադրական մեկնաբանության դիրքորոշումների (տե՛ս Марченко М. Н. Источники права. М., 2008, էջ 411, Марченко М. Н. Судебное правотворчество и судебское право. М., 2008, էջ 137, Кряжкова О. Н. Правовые позиции Конституционного суда РФ: теоретические основы и практика реализации судами России. М., 2006, էջ 48-59):

Հիշյալ համատեքստում առաջանում է ևս մի կարևոր հանգամանքի, այն է՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիրությանն առնչվող հիմնախնդիրների վերլուծության անհրաժեշտություն: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական հիշյալ դրույթն ինքնին ենթադրում է, որ այն վերաբերում է սահմանադրական դատարանի ամբողջ որոշմանը, հետևաբար ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում արտահայտված իրավական դիրքորոշումներին, սակայն քննարկվող բնագավառին առնչվող հիմնական խնդիրն է տեսության մեջ և պրակտիկայում այն մտայնության ու արատավոր պրակտիկայի հաղթահարումը, երբ պարտադիր է դիտարկվում սահմանադրական դատարանի որոշման սուսկ եզրափակիչ մասը, և որոշումների կատարումը չի երաշխավորվում դրանց ամբողջության մեջ՝ հաշվի առնելով նաև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները: Այդ է պատճառը, որ ՀՀ սահմանադրական դատարանը որոշումների կատարման վիճակի վերաբերյալ իր բոլոր հաղորդումներում անդրադարձել է հիշյալ հիմնախնդրին՝ նշելով, որ սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ապահովել, որպեսզի պետական մարմինները և պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավուն-

**քի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն**<sup>132</sup>:

Աշխատանքի շրջանակներում արդեն խոսեցինք այն մասին, որ սահմանադրագիտության զարգացման ժամանակակից փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Հետևաբար, հիշյալ առաքելության իրականացումը պահանջում է պատշաճ ուշադրություն ոչ միայն իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ եզրահանգման, այլ նաև սահմանադրական դատարանի մյուս իրավական դիրքորոշումների նկատմամբ: Վերջիններս հանդիսանում են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց և այդ առումով պակաս կարևոր չեն վերը նշված եզրահանգումներից, իսկ իրավական հետևանքների տեսանկյունից համարժեք են դրանց<sup>133</sup>:

Քննարկվող համատեքստում հարկ ենք համարում հիշատակել նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՄԴՈ-943 որոշումը, որով արձանագրվեց, որ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կոչված են

<sup>132</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2011թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները (տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>):

<sup>133</sup> Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ որոշման եզրափակիչ մասում ընդգրկված վերջնական եզրահանգումն առանց բովանդակային հիմնավորման, այն սահմանող իրավական նորմերի և սկզբունքների բացահայտման, սպառիչ տրամաբանական փաստարկման երբեմն անհնար է համարժեքորեն ընկալել ու, հետևաբար, գիտակցաբար իրացնել: Այսպիսով, վերջնական եզրահանգումը և որոշման պատճառաբանական մասում ընդգրկված փաստարկման համակարգը գտնվում են անբաժանելի միասնության մեջ (տե՛ս Чигринов С., նշված աշխատությունը, էջ 149):

իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ ընդգծվեց, որ վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս սահմանադրական դատարանը հաճախ մեկնաբանելով վիճարկվող իրավանորմերը՝ տալիս է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը՝ որոշման եզրափակիչ մասում ճանաչելով այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը Սահմանադրությանը՝ իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում, կամ մասամբ՝ որոշակի իրավակարգավորման շրջանակում, դրանցով իսկ մատնանշելով.

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ:

Հետևաբար, սահմանադրական դատարանի որոշումն անհնար է լիարժեք կատարել առանց վերը նշված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու<sup>134</sup>, ինչն իր հերթին ենթադրում է, որ

<sup>134</sup> Այդ առումով հիշատակենք Լիտվայի Սահմանադրական դատարանի պրակտիկան, որն արձանագրել է, որ իր որոշումները կազմում են ընդհանուր ամբողջություն: Եզրափակիչ մասը հիմնված է պատճառաբանական մասի փաստարկների վրա: Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ներկայացված Սահմանադրության դրույթների ընկալումը և այլ իրավական փաստարկները պարտադիր են համապատասխան ակտեր ընդունող մարմիններ:

պարտադիր կատարման են ենթակա սահմանադրական դատարանի որոշման ոչ միայն եզրափակիչ, այլ նաև պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները<sup>135</sup>:

Այդ է պատճառը, որ ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳ-Ռ-943 որոշման՝ 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասում կատարվեց լրացում, որը նախատեսեց, որ սահմանադրական դատարանը կարող է ընդունել ոչ միայն վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու և վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ

---

քի՝ Սեյմի, Հանրապետության Նախագահի, Կառավարության համար նոր օրենքներ ու այլ իրավական ակտեր ընդունելու կամ դրանք փոփոխելու ընթացքում: Այսպիսով, Սահմանադրական դատարանի որոշման ոչ թե եզրափակիչ մասն է լեզիտիմացում և օրինականացում պատճառաբանական մասը, այլ հակառակը՝ եզրափակիչ մասում ներկայացված որոշումը հանդիսանում է սահմանադրական փաստարկման տրամաբանական ու, հետևաբար, իրավական առումով անխուսափելի շարունակությունը և ավարտը (տե՛ս Decision of 12 January 2000, <http://www.lrkt.lt/dokumentai/2000/d000112.htm>, Ruling of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>, Constitutional justice in Lithuania. Vilnius, 2003, էջ 222-225): ՌԳ՝ Սահմանադրական դատարանը նույնպես բազմիցս անդրադարձել է իրավական դիրքորոշումների պարտադիր լինելու հանգամանքին՝ ամրագրելով, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են և գործում են անմիջականորեն: Դրանք պարտադիր են պետական իշխանության բոլոր ներկայացուցչական, գործադիր ու դատական մարմինների, ինչպես նաև իրավակիրառողների համար: Ավելին, Գատարանն արձանագրել է, որ անթույլատրելի է օրենսդրի կողմից ոչ միայն Սահմանադրական դատարանի որոշումների, այլ նաև վերջինիս իրավական դիրքորոշումների հաղթահարումը: ՌԳ՝ Սահմանադրական դատարանում վիճարկված նորմատիվ ակտերի դրույթները վերարտադրող նորմերը կարող են մեկնաբանվել միայն Գատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա (տե՛ս Кряжков В. А., Кряжкова О. Н. Правовые позиции Конституционного суда РФ в его интерпретации // Государство и право, 2005, N 11, էջ 13):

<sup>135</sup> Ներկայացված վերլուծության համատեքստում բացառիկ կարևորություն է ձեռք բերում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 2.1-րդ մասով ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Կարծում ենք, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման պատշաճ համակարգի ձևավորման համար հիշյալ դրույթը պետք է արժանանա անհրաժեշտ ուշադրության:

մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումներ, այլ նաև վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ **սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրական իրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում:** Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը սահմանեց, որ հիշյալ հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ **սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրական իրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:**

Օրենքի՝ քննարկվող հիմնախնդրին առնչվող կարգավորումների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ դրանք նպատակաուղղված են սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման լիարժեք համակարգի ձևավորմանը և վկայում են վերջիններիս՝ պարտադիր լինելու հանգամանքի մասին<sup>136</sup>:

---

<sup>136</sup> Պետությունների մեծամասնությունում նույնպես, ինչպես վկայում են աշխատանքի շրջանակներում ներկայացված օրինակները, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն ունեն պարտադիր բնույթ: Ավելին, տարածում է գտնում այն պրակտիկան, երբ այդ հանգամանքին տրվում է օրենսդրական կարգավորում (տե՛ս, օրինակ, «ՌԳ՝ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 79 հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» Լատվիայի Հանրապետության օրենքի 32 հոդվածը, «Սահմանադրական դատարանի կազմավորման, դատավորների կարգավիճակի և սահմանադրական դատավարության մասին» Սլովակիայի Հանրապետության օրենքի 41ա հոդվածը, Լիտվայի Հանրապետության Սեյմի կանոնակարգի 182<sup>2</sup> հոդվածը):

Նշենք, որ վիճարկվող նորմը սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու պրակտիկան տարածված է մի շարք այլ պետությունների, այդ թվում, օրինակ, Գերմանիայի<sup>137</sup>, Լիտվայի<sup>138</sup>, ՌԳ, Սլովե-

<sup>137</sup> Գերմանական իրավաբանական գրականության մեջ գերակշռող տեսակետի համաձայն՝ Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանություն տալու կանոնը պահանջում է, որպեսզի օրենքի մի քանի հնարավոր մեկնաբանություններից, որոնցից մի մասի դեպքում օրենքը հակասահմանադրական է, իսկ մյուսների դեպքում՝ սահմանադրական, առավելությունը տրվի այն մեկնաբանությանը, որը համապատասխանում է Հիմնական օրենքին: Նմանատիպ իրավիճակներում Գերմանիայի սահմանադրական դատարանը վիճարկվող օրենքը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն այն վերապահումով, որ այն կիրառվելու է որոշման մեջ ներկայացված մեկնաբանության շրջանակներում: Վերջինս պարտադիր է բոլոր սահմանադրական մարմինների, դատարանների և պետական մարմինների համար (տե՛ս Guhling H. Problems of Enforcing Constitutional Court Decisions, [http://www.tribunalconstitucional.ad/docs/coloqui\\_justicia/05-HARTMUT%20GUHLING.pdf](http://www.tribunalconstitucional.ad/docs/coloqui_justicia/05-HARTMUT%20GUHLING.pdf), Rainer A. The decisions of the German Federal Constitutional Court and their binding force for ordinary courts, [www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer\\_Arnold\\_\(eng\).doc](http://www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer_Arnold_(eng).doc), The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Federal Republic of Germany prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Duitsland-EN.pdf>, CDL-JU (2003) 18, The Binding Effect of Federal Constitutional Court Decisions upon Political Institutions // Report by Ms Anke Eilers (Federal Constitutional Court, Karlsruhe), Strasbourg, 22 May 2003, <http://www.venice.coe.int/docs/2003/CDL-JU%282003%29018-e.pdf>):

<sup>138</sup> Օրենքի մի քանի մեկնաբանությունների հնարավորության պարագայում կարելի է հանդիպել Գատարանի կողմից կիրառվող այն պրակտիկային, երբ որոշման եզրափակիչ մասում նորմը ճանաչվում է ինչպես սահմանադրական, այնպես էլ հակասահմանադրական: Եզրահանգումներից յուրաքանչյուրը ներկայացվում է եզրափակիչ մասի առանձին կետում՝ համապատասխանաբար նշելով այն մեկնաբանությունը, որը հիմք է հանդիսացել այդ եզրակացությանը հանգեցնելու համար: Այսպես, «Լիտվայի միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 7 հոդվածի 4-րդ մասի և 12 հոդվածի՝ Լիտվայի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու գործով Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը հետևյալն էր՝ 1. «Լիտվայի միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 12 հոդվածի այն դրույթը, որ Լիտվայի Հանրապետության միջազգային պայմանագրերն «ունեն օրենքի ուժ», չի հակասում Լիտվայի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով վերաբերում է Սեյմի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին:

նիայի<sup>139</sup>, Իսպանիայի<sup>140</sup>, Հունգարիայի<sup>141</sup>, Բոսնիայի և Հերցեգով-

2. «Լիտվայի միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 12 հոդվածի այն դրույթը, որ Լիտվայի Հանրապետության միջազգային պայմանագրերն «ունեն օրենքի ուժ», հակասում է Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 138 հոդվածի 3-րդ մասին այնքանով, որքանով վերաբերում է Սեյմի կողմից չվավերացված միջազգային պայմանագրերին;...» (տե՛ս Ruling On the compliance of Part 4, Article 7 and Article 12 of the Law of the Republic of Lithuania "On International Treaties of the Republic of Lithuania" with the Constitution of the Republic of Lithuania of 17 October 1995, <http://www.lrk.lt/dokumentai/1995/n5a1017a.htm>):

<sup>139</sup> Վերջինս հաճախ ընդունում է, այսպես կոչված, «մեկնաբանողական որոշումներ» (“interpretative decisions”), որոնց էությունը կայանում է նրանում, որ Գատարանը օրենքի վիճարկվող նորմը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող՝ ներկայացնելով վերջինիս այն մեկնաբանությունը, որի շրջանակներում է նորմը համապատասխանում Սահմանադրությանը, և բացառելով իրավական համակարգում Հիմնական օրենքին չհամապատասխանող մեկնաբանության կիրառումը: Հիշյալ որոշումների եզրափակիչ մասում Սահմանադրական դատարանը, որպես կանոն, մատնանշում է, որ նորմը ճանաչվում է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ մեկնաբանողական որոշման մեջ ներկայացված մեկնաբանության շրջանակներում, և որ հիշյալ նորմի որևէ այլ մեկնաբանություն կամ կիրառում հակասում է սահմանադրական կարգին (տե՛ս, օրինակ, Սլովենիայի Սահմանադրական դատարանի U-I-108/91 որոշումը, [http://odlocitve.us-rs.si/ustr/us-odl.nsf/o/299A185ABEFC89FC12571\\_7200280761](http://odlocitve.us-rs.si/ustr/us-odl.nsf/o/299A185ABEFC89FC12571_7200280761), The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Republic of Slovenia prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Slovenia-EN.pdf>):

<sup>140</sup> Այսպես կոչված, «մեկնաբանողական որոշումների» պրակտիկան կիրառում է նաև Իսպանիայի Սահմանադրական դատարանը, որն օրենքը ճանաչում է սահմանադրական՝ կոնկրետ մեկնաբանության շրջանակներում, որպիսի հանգամանքն արձանագրվում է նաև որոշման եզրափակիչ մասում: Ավելին, «Գատարանի իշխանության մասին» օրգանական օրենքի 5 հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանների դատավորները պետք է մեկնաբանեն ու կիրառեն օրենքները և այլ իրավական ակտերը՝ սահմանադրական սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև բոլոր գործերով Սահմանադրական դատարանի կայացրած որոշումներում ներկայացված օրենքների և այլ իրավական ակտերի մեկնաբանությանը համապատասխան (տե՛ս CDL-JU(99)28, Effects, Enforceability and the Execution of the Decisions of the Spanish Constitutional Court / Report by Javier García Roca (Professor of Constitutional Law, University of Valladolid, Former Staff Attorney at the Constitutional Court of Spain (Madrid)), <http://www.venice.coe.int/docs/1999/CDL-JU%281999%29028-e.pdf>, տե՛ս նաև Իսպանիայի Սահմանադրական դատարանի՝ 7 նոյեմբերի 2007թ. որոշումը, <http://www.tribunalconstitucional.es/en/jurisprudencia/restrad/Pages/JCC2362007en.aspx>):

վինայի<sup>142</sup> սահմանադրական դատարանների գործունեության շրջանակներում: Չնայած դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները՝ հիշյալ բոլոր դատարանների համար ընդհանուր է այն, որ որոշման մեջ ներկայացված մեկնաբանությունը պարտադիր է դառնում բոլոր այլ պետական մարմինների համար: Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել «Մոնթրալ-դավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վեներտիկի հանձնաժողով)՝ հիմնախնդրին առնչվող դիրքորոշումը, համաձայն որի՝ «Հստակ օրենսդրական, իսկ լավագույն դեպքում սահմանադրական կարգավորումը, որը կպարտավորեցնի այլ պետական մարմիններին, այդ թվում՝ դատարաններին, հետևելու Սահմանադրական դատարանի կողմից տրված սահմա-

<sup>141</sup> Հունգարիայի Սահմանադրական դատարանը նույնպես կիրառում է կոնկրետ մեկնաբանության շրջանակներում նորմը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու պրակտիկան: Դա կատարվում է իրավական նորմին, այսպես կոչված, որոշակի «սահմանադրական պահանջ» կցելու միջոցով: Նմանատիպ որոշումների պարագայում Սահմանադրական դատարանը դուրսը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող՝ որոշման եզրափակիչ մասում մատնանշելով այն մեկնաբանությունը (այսպես կոչված, «սահմանադրական պահանջը»), որի համատեքստում վերջինս պետք է ընկալվի կիրառման ընթացքում (տե՛ս The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of Republic of Hungary prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/General%20report-EN.pdf>, CDL-JU (99) 26, Effects, Enforceability and the Execution of the Decisions of the Constitutional Court – the Hungarian Experience // Report by Mr Peter Paczolay (Secretary General of the Constitutional Court), Budapest, <http://www.venice.coe.int/docs/1999/CDL-JU%281999%29026-e.asp>, տե՛ս նաև Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 1/2007 (I. 18.) AB որոշումը, [http://www.mkab.hu/letoltese/ en\\_0001\\_2007.pdf](http://www.mkab.hu/letoltese/ en_0001_2007.pdf)):

<sup>142</sup> Բոսնիայի և Հերցեգովինայի Սահմանադրական դատարանն օրենքը ճանաչում է հակասահմանադրական միայն այն դեպքում, երբ վերջինս չի կարող մեկնաբանվել Սահմանադրությանը համապատասխանող եղանակով: Իսկ նմանատիպ մեկնաբանության առկայության պարագայում այն դառնում է պարտադիր (տե՛ս The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of Bosnia and Herzegovina prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Bosnie-Herzegovina-EN.pdf>):

նադրական մեկնաբանությանը, հստակություն կմտցնի սահմանադրական և ընդհանուր դատարանների հարաբերություններում և կարող է հիմք հանդիսանալ անհատների համար՝ պահանջելու իրենց իրավունքների դատական պաշտպանություն»<sup>143</sup>:

Չնայած վերը շարադրվածին՝ սահմանադրական դատարանի և այլ դատական ատյանների փոխհարաբերությունների բնագավառում առկա կարևորագույն հիմնախնդիրներից մեկը շարունակում է մնալ սահմանադրական արդարադատության օբյեկտ հանդիսացող օրենքների մեկնաբանության իրավասությանը օժտված դատական մարմինների վերաբերյալ միասնական տեսակետի բացակայությունն ու հիշյալ բնագավառում իրավասությունների սահմանագատման հարցը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ վերը նշված հիմնախնդրի լուծումը միանշանակ է, այն է՝ օրենքների մեկնաբանությունն իրականացնում են միայն ընդհանուր իրավասության դատարանները, իսկ Սահմանադրության մեկնաբանությունը՝ սահմանադրական դատարանը: Մինչդեռ տեսական առումով անվիճելի թվացող հիշյալ լուծումը դժվար կիրառելի է դառնում պրակտիկայում՝ հաշվի առնելով առաջին հերթին սահմանադրական դատարանի կարգավիճակի, նպատակների ու խնդիրների առանձնահատկությունները:

Այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանը սահմանափակված չէ այլ դատարանների կողմից տրված օրենքի նորմի մեկնաբանությամբ, երկրների մեծամասնության արդարադատական պրակտիկայում կայացած իրողություն է<sup>144</sup>: Հայաստանի Հանրապետությունում այդ հանգամանքի մասին են վկայում նաև գործող օրենսդրական կարգավորումները: Մասնավորա-

<sup>143</sup> Տե՛ս CDL-AD(2010)039rev, Study on Individual Access to Constitutional Justice, Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010), § 165, <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29039rev-e.pdf>:

<sup>144</sup> Տե՛ս Եվրոպական երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանսի 12-րդ կոնգրեսի շրջանակներում ներկայացված զեկույցները, <http://www.confcoconstco.org/reports/>:



պես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների տեսակներից է վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ **սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրափրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումը**: Իսկ Օրենքի 69 հոդվածի 12-րդ մասին համապատասխան՝ հիշյալ հոդվածում նշված գործերով՝ ... այն դեպքում, երբ **սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրափրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով**: 26 հոկտեմբերի 2011թ. կատարված փոփոխությունների արդյունքում նմանատիպ դրույթներ են ամրագրվել նաև ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով, համաձայն որոնց՝ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք են այն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական կամ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրափրավական բովանդակությունը՝ **գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ**<sup>145</sup>: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իր լիազորությունների իրականացման ընթացքում սահմանադրական դատարանը կարող է բացահայտել վիճարկվող օրենքի դրույթի սահմա-

<sup>145</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33 հոդվածի 1-ին կետ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

նադրափրավական բովանդակությունը: Ընդ որում՝ եթե ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են **դատարանի համար** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.) նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ ..., ապա նույնը չի կարելի ասել սահմանադրական դատարանի մասին, քանզի վերջինիս՝ գործով ըստ էության ընդունված որոշումները, հետևաբար՝ նաև դրանցում բացահայտված օրենքի դրույթի սահմանադրափրավական բովանդակությունը, ինչպես արդեն նշեցինք, պարտադիր են **բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար**՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ իր լիազորությունների իրականացման ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը կարող է բացահայտել վիճարկվող օրենքի դրույթի սահմանադրափրավական բովանդակությունը, ընդ որում՝ հիշյալ իրավական դիրքորոշումը կրում է պարտադիր բնույթ:

Հետևաբար, հիմնական խնդիրը տվյալ պարագայում այն է, թե ինչպես պետք է սահմանազատվեն քննարկվող բնագավառում վերը նշված դատարանների իրավասությունները, և ինչպիսի տեխնիկա է անհրաժեշտ կիրառել այդ նպատակին հասնելու համար: Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել ՀՀ Սահմանադրության 92 հոդվածը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, **որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), իսկ 93 հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահ-

մանադրությունը հստակեցրել է դատական մարմիններից յուրաքանչյուրի առաքելությունը՝ վճռաբեկ դատարանին (որպես արդարադատություն իրականացնող մարմին) վերապահելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու, իսկ սահմանադրական դատարանին՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավասությունը:

Հետևաբար, կարծում ենք, որ հիշյալ սահմանադրական կարգավորումների շրջանակներում առաջադրված խնդրի լուծումը պետք է լինի այնպիսին, որ յուրաքանչյուր դատական մարմին օրենքի մեկնաբանության գործառույթն իրականացնի իր իրավասությանը վերապահված ոլորտների շրջանակներում՝ սույն իր առաքելության իրականացումն ապահովելու նպատակով: Այլ կերպ ասած՝ հիշյալ դատական ատյանների կողմից օրենքների մեկնաբանության ոլորտային եզրագիծը պայմանավորող ելակետային չափանիշը նրանց գործունեության հիմքում ընկած նպատակն է: Այսինքն՝ մի դեպքում, ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով օրենքի դրույթը, նպատակ է հետապնդում ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, իսկ մյուս դեպքում, ՀՀ սահմանադրական դատարանը հիշյալ գործառույթն իրականացնում է սահմանադրական արդարադատության իրականացումն ապահովելու նպատակով, որպիսի հանգամանքը պետք է ընկած լինի հիշյալ դատական ատյանների գործունեության **ինքնասահմանափակման** հիմքում<sup>146</sup>: Այդ տեսանկյունից մոտենալով սահմանադրա-

<sup>146</sup> Տվյալ պարագայում հարկ ենք համարում հիշատակել քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հունգարիայի վերաբերյալ ներկայացված տեսակետը, համաձայն որի՝ հիշյալ երկու մեկնաբանություններն իրականացնում են հիմնավորապես տարբեր գործառույթներ: Այսպես կոչված, «սահմանադրական պահանջները» սահմանվում են իրավական նորմերի վերահսկողության շրջանակներում, մինչդեռ օրենքների միատեսակ կիրառման նպատակով ընդունվող որոշումները նպատակաուղղված են հակասական դատական պրակտիկայի վերացմանը (տե՛ս The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of Republic of Hungary prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/General%20report-EN.pdf>):

կան դատարանի կողմից օրենքի մեկնաբանության հիմնախնդրին՝ հանգում ենք այն եզրակացության, որ վերջինս նշված գործառույթը կարող է իրականացնել սույն օրենքի կամ վերջինիս համապատասխան դրույթների **սահմանադրաիրավական իմաստը** բացահայտելու, այլ ոչ ընդհանուր առմամբ օրենքի մեկնաբանություն տալու նպատակով<sup>147</sup>:

Հաջորդ կարևորագույն հանգամանքը, որն անհրաժեշտ է նկատի ունենալ հիշյալ համատեքստում, այն է, որ թեև վճռաբեկ դատարանի խնդիրներից է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելը, սակայն ներկայացված սահմանադրական կարգավորման շրջանակներում խոսքը ոչ թե սույն «օրենք» անվանումն ունեցող կամայական փաստաթղթի մասին է, այլ **սահմանադրական օրենքի**: Իսկ մեկնաբանության մի քանի տարբերակների հնարավորություն տվող օրենքը սահմանադրական կարող է համարվել սույն այն դեպքում, երբ ընկալվում է համապատասխան սահմանադրական պահանջների համատեքստում: Դա իր հերթին ենթադրում է, որ վերոնշյալ դեպքերում պետք է կիրառման ենթակա լինի օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված, մասնավորապես տվյալ պարագայում սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունը, քանզի հենց սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի խնդիրն է մատնանշել իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը, ու որոնցից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների: Հետևաբար, սահմանադրա-

<sup>147</sup> Հարկ է նկատել, որ վերը շարադրվածն ընդունված ու մշտապես իրականացվող պրակտիկա է նաև Գերմանիայի Գաշնային Սահմանադրական դատարանում, որն օրենսդրության բովանդակությունը բացահայտում է **սույն Սահմանադրության տեսանկյունից**: Ընդ որում՝ այդ մեկնաբանությունը նույնպես պարտադիր է այլ մարմինների համար և ունի օրենքի ուժ (տե՛ս Rainer A. The decisions of the German Federal Constitutional Court and their binding force for ordinary courts, [www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer\\_Arnold\\_\(eng\).doc](http://www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer_Arnold_(eng).doc)): Նույնը կարելի է ասել նաև ՌԴ Սահմանադրական դատարանի և մի շարք այլ երկրների սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների մասին:

կան դատարանի կողմից օրենքի մեկնաբանության իրավասությունը սահմանափակվում է վերը նշված շրջանակներով և դրանցից դուրս իրականացվել չի կարող<sup>148</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերը շարադրվածն առնչվում է այնպիսի մեկնաբանությունների առկայության դեպքերին, երբ դրանցից մեկը հակասում է սահմանադրական պահանջներին: Մինչդեռ այն դեպքում, երբ դատարանները կիրառում են օրենքի նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանություն, իրավասությունների սահմանազատման տեսանկյունից արդյունավետ չէ սահմանադրական դատարանի կողմից նորմն այլ կերպ մեկնաբանելը: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ այն դեպքերում, երբ այլ դատական ատյանների կողմից տրված օրենքի նորմի մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը, նպատակահարմար է, որ սահմանադրական դատարանը կիրառի այդ մեկնաբանությունը, և վերջինիս սահմանադրաիրավական իմաստն այլ կերպ բացահայտի սոսկ այն դեպքերում, երբ նորմի ընդունված ընկալման ու սահմանադրական պահանջների միջև առկա է հակասություն<sup>149</sup>:

<sup>148</sup> Տվյալ պարագայում հիշատակման են արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներից մեկի խոսքերը. «Սահմանադրական դատարանի կարևորագույն գործառնություններից մեկը սահմանադրական հասկացությունների մեկնաբանությունն է, ինչի միջոցով Սահմանադրական դատարանն ուղղորդող նշանակություն ունեցող չափանիշներ է ներկայացնում ոչ միայն սահմանադրական տեքստի, այլ նաև օրենքների սահմանադրական մեկնաբանության վերաբերյալ» (տե՛ս Guerra L. Latent and Manifest Functions of Constitutional Courts // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 54):

<sup>149</sup> Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել Սլովենիայի Հանրապետությունում ընդունված պրակտիկան, որտեղ Սահմանադրական դատարանը մեկնաբանում է Սահմանադրությունը, իսկ ընդհանուր իրավասության դատարանները՝ օրենքները, բացի Սահմանադրության խախտման դեպքերից: Սահմանադրական դատարանը կարող է մեկնաբանել օրենքներն այն իրավիճակներում, երբ հնարավոր են դրանց երկու տարբեր մեկնաբանություններ, որոնցից մեկը հակասում է Սահմանադրությանը, իսկ մյուսը, որը ներկայացվում է Սահմանադրական

Հետևաբար, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հիմնական չափանիշները, որոնք, մեր կարծիքով, հնարավորություն կտան նաև արդյունավետորեն ապահովելու տարբեր դատական ատյանների իրավասությունների սահմանազատումը, կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ.

- սահմանադրական դատարանի և այլ դատական ատյանների կողմից օրենքների մեկնաբանության ոլորտային եզրագիծը պայմանավորող ելակետային չափանիշը նրանց գործունեության հիմքում ընկած նպատակն է, որպիսի հանգամանքը պետք է ընկած լինի քննարկվող մարմինների գործունեության **ինքնասահմանափակման** հիմքում,

- վճռաբեկ դատարանի խնդիրը **սահմանադրական օրենքի միատեսակ** կիրառությունն ապահովելն է, և ոչ թե սոսկ «օրենք» անվանումն ունեցող կամայական փաստաթղթի, ինչը ենթադրում է նաև օրենքի՝ սահմանադրական պահանջներին համապատասխանող մեկնաբանությամբ կիրառում,

- սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի խնդիրն է մատնանշել այն հանգամանքը, թե օրենքի ինչպիսի մեկնաբանությամբ կիրառումն է համապատասխանում Սահմանադրությանը, այլ կերպ ասած՝ ներկայացնելու իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը, ու որոնցից դուրս կիրառվող նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

դատարանի, այսպես կոչված, «մեկնաբանողական որոշման» մեջ, համապատասխանում է վերջինիս: Այդ մեկնաբանությունն անկասկած դատարանների համար դառնում է պարտադիր: Սակայն եթե հնարավոր են օրենքի դրույթների մի քանի մեկնաբանություններ, որոնցից ոչ մեկը հակասահմանադրական չէ, ապա ընդհանուր իրավասության դատարաններն իրենք են որոշում, թե ինչպես կիրառել հիշյալ նորմը (տե՛ս The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Republic of Slovenia prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Slovenia-EN.pdf>):

- սահմանադրական դատարանը հիշյալ գործառույթը կարող է իրականացնել սուկ օրենքի կամ վերջինիս համապատասխան դրույթների **սահմանադրաիրավական իմաստը** բացահայտելու, այլ ոչ ընդհանուր առմամբ օրենքի մեկնաբանություն տալու նպատակով,

- այն դեպքերում, երբ օրենքի նորմը հնարավոր է մեկնաբանել տարբեր եղանակներով, և դատարանների կողմից տրված մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը, իրավասությունների սահմանազատման տեսանկյունից նպատակահարմար է, որպեսզի սահմանադրական դատարանը կիրառի այդ մեկնաբանությունը,

- այն դեպքերում, երբ օրենքի նորմը հնարավոր է մեկնաբանել տարբեր եղանակներով, և նորմի ընդունված ընկալման ու սահմանադրական պահանջների միջև առկա է հակասություն, նպատակահարմար է, որպեսզի սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, բացահայտելով վերջինիս սահմանադրաիրավական իմաստը, ներկայացնի նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանությունը,

- հաշվի առնելով սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների տեսակների ու նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերի առնչությամբ ՀՀ օրենսդրության բնագավառում կատարված վերոնշյալ փոփոխությունները և նկատի ունենալով իրավական կանխատեսելիության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը՝ կարծում ենք, որ նպատակահարմար է ձևավորել օրենքի նորմի տարբեր մեկնաբանությունների հնարավորության պարագայում սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների միասնական պրակտիկա՝ կիրառելով «օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանության սկզբունքը» և օրենքի նորմը Սահմանադրությանը հակասող ճանաչելով սուկ այն դեպքերում, երբ

հնարավոր չէ այն մեկնաբանել սահմանադրական պահանջների համատեքստում<sup>150</sup>:

Վերադառնալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիրությանն առնչվող հիմնախնդիրներին՝ հարկ է անդրադառնալ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, որ անհրաժեշտ է տարբերակել 1) համապարտադիր և 2) իրավաբանորեն ուղղորդող ու կորդինացնող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումները<sup>151</sup>: Չնայած այդ կարծիքին ու այն հանգամանքին, որ նախադեպի անգլոամերիկյան դոկտրինի համաձայն նույնպես՝ միայն դատարանի որոշման հիմքում դրված սկզբունքն է պարտադիր (ratio decidendi), իսկ ներկայացված այլ դիրքորոշումները (obiter

<sup>150</sup> Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասում ամրագրված այն կարգավորումը, որ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ **ձևավորված իրավակիրառական պրակտիկան**, ենթադրում է ոչ թե վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու հնարավորություն այն իրավիճակներում, երբ ակտը կիրառվել է Սահմանադրությանը չհամապատասխանող մեկնաբանությամբ, սակայն կարող է մեկնաբանվել սահմանադրական պահանջների համատեքստում, այլ ընդամենը թույլ է տալիս հաշվի առնել իրավական ակտի կիրառման առնչությամբ ձևավորված պրակտիկան՝ մեկնաբանության սահմանադրականությունը գնահատելու նպատակով: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ կան երկրներ, օրինակ՝ Հունգարիան, Իտալիան, որոնք կիրառում են, այսպես կոչված, «կենդանի իրավունքի» տեսությունը, երբ նորմը Սահմանադրությանը հակասող է ճանաչվում ընդհանուր դատարանների կողմից վերջինս պարբերաբար հակասահմանադրական եղանակով մեկնաբանելու արդյունքում, նույնիսկ եթե հնարավոր է տալ այդ դրույթի սահմանադրական մեկնաբանություն (տե՛ս The Relations between the Constitutional Courts and the Other National Courts, including the Interference in this Area of the Action of the European courts // Report of the Constitutional Court of Republic of Hungary prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/General%20report-EN.pdf>, CDL-JU (99) 26, նշված փաստաթուղթը, CDL-AD(2010)039rev, նշված փաստաթուղթը):

<sup>151</sup> Տե՛ս Кряжков В. А., Лазарев Л. В. Конституционная юстиция в РФ. М., 1998, էջ 248:

dictum) պարտադիր բնույթ չեն կրում<sup>152</sup>, տեսության մեջ և պրակտիկայում առավել տարածված է այն մոտեցումը, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով ամենաշատը մոտ են ratio decidendi-ին, համադրելի են անգլիական իրավունքին հայտնի հիշյալ ինստիտուտի հետ<sup>153</sup>, ուստի, առանց տարբերակման կրում են պարտադիր բնույթ<sup>154</sup>: Նմանատիպ դասակարգում չի ներկայացնում նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ արդյունքում իր բոլոր իրավական դիրքորոշումները դիտարկելով որպես պարտադիր<sup>155</sup>: Մեր կարծիքով, սակայն, ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ իրավական հետևանքների տեսանկյունից վերջինիս իրավական դիրքորոշումների նշանակությունը նույնաբնույթ չէ: Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, 9 սեպտեմբերի 2008թ. ՍԴ-Ո-758 որոշմամբ

<sup>152</sup> St'u, օրինակ, [http://www.oup.com/uk/orc/bin/9780199557745/hw7e\\_ch06.pdf](http://www.oup.com/uk/orc/bin/9780199557745/hw7e_ch06.pdf), Kalis R. Is the English Doctrine of Judicial Precedent Becoming Only an Illusion?, <http://www.law.muni.cz/sborniky/dp08/files/pdf/mezinaro/kalis.pdf>:

<sup>153</sup> St'u, օրինակ, Кажлаев С.А. Судебное усмотрение в деятельности Конституционного суда РФ // Журнал российского права, N 11, 2003, էջ 156-157, Зорькин В.Д. Прецедентный характер решений конституционного суда Российской Федерации // Журнал российского права, N 12, 2004, էջ 4, Иванова Т. В. Роль Конституционного Суда Республики Беларусь в процессе правообразования: теоретический аспект, [www.law.bsu.by/pub/31/Ivanova4.doc](http://www.law.bsu.by/pub/31/Ivanova4.doc), Красикова А. В. Конституционная юстиция России и Монголии: сравнительно-правовой анализ (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Омск, 2009, [omsu.ru/file.php?id=4400](http://omsu.ru/file.php?id=4400): Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ նույնիսկ նախադեպի անգլոամերիկյան դոկտրինի շրջանակներում հաճախ առաջ է քաշվում այն տեսակետը, որ ratio decidendi-ն և obiter dictum-ը տարբերակելու բոլոր փորձերն անարդյունավետ են ու կանխավ դատապարտված են ձախողման (տե՛ս Марченко М. Н. Источники права. М., 2008, էջ 632):

<sup>154</sup> Այդ առումով հետաքրքիր է Լիտվայի սահմանադրական դոկտրինը, որի շրջանակներում ուղղակիորեն մատնանշվում է, որ պարտադիր են սահմանադրական դատարանի որոշման ինչպես ratio decidendi-ն, այնպես էլ obiter dicta-ն (տե՛ս Constitutional justice in Lithuania. Vilnius, 2003, էջ 212-215):

<sup>155</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2010թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՍԴ-Ո-943 որոշումը:

արտահայտված դիրքորոշումն առ այն, որ «հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասի պահանջները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից ... հարցի հետագա կանոնակարգումը, կարող է գործել նշված ինստիտուտի այն իրավակարգավորումը, որը սահմանվել էր 18.02.2004թ. ՀՕ-39-Ն օրենքով»: Ակնհայտ է, որ տվյալ պարագայում Գատարանը ներկայացրել է ոչ թե պարտադիր կատարման ենթակա իրավական դիրքորոշում, այլ մատնանշել է այն իրավակարգավորումը, որը կարող է, սակայն պարտադիր չէ, որպեսզի գործի, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից հարցի հետագա կանոնակարգումը: Հետևաբար, այդ տեսանկյունից հիշյալ դիրքորոշումն ունի ոչ թե պարտադիր, այլ ուղղորդող նշանակություն:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ տվյալ պարագայում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ քննարկվող իրավական դիրքորոշումների տարբերակմանը վերաբերող հարցերին: Այդ առումով կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությունն ինքնին լուծել է նշված հիմնախնդիրն այն տեսանկյունից, որ ամրագրել է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի ինքնասահմանափակման համար անհրաժեշտ կարգավորումներ<sup>156</sup>: ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս իր գործունեության ընթացքում, որպես կանոն, առաջնորդվում է դրանցով: Մասնավորապես, անդրադառնալով այնպիսի հիմնախնդիրների, որոնք ընդգրկված չեն դիմումում նշված առար-

<sup>156</sup> Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն **դիմումում նշված առարկայի վերաբերյալ**, կամ նույն օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ **համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների** սահմանադրականությունը, և այլն:

կայի համատեքստում կամ ենթակա չեն քննության տվյալ գործի շրջանակներում, Գատարանն արձանագրում է այդ հանգամանքը: Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, 25 նոյեմբերի 2008թ. ՄԳՈ-780 որոշումը, որի շրջանակներում թեև իրավական դիրքորոշումներ արտահայտվեցին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի 1-ին կետի առնչությամբ, սակայն միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ այս պարագայում կիրառելի չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը, Գատարանը պարզապես կարևոր համարեց, որպեսզի ՀՀ Ազգային ժողովն ուշադրություն դարձնի ներկայացված հիմնախնդրին:

Վերը շարադրվածի հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ, մեր կարծիքով, սկզբունքային տարբերություն է առկա ՀՀ սահմանադրական դատարանի՝ քննարկվող համատեքստում ներկայացված երկու իրավական դիրքորոշումների միջև: Եթե առաջին դեպքում Գատարանը մատնանշել է կոնկրետ հիմնախնդրի կարգավորման համար սուկ ուղենիշային բնույթ ունեցող լուծում, որը պրակտիկայում կարող է և չիրացվել, ապա իրավիճակն այլ է ՄԳՈ-780 որոշման պարագայում: Չունենալով քննարկվող դրույթի սահմանադրականության առնչությամբ որոշման եզրափակիչ մասում եզրահանգում կատարելու հնարավորություն՝ սահմանադրական դատարանն այդ հարցին վերաբերող իրավական դիրքորոշումներ է արտահայտել պատճառաբանական մասում: Բնականաբար, դրանց արդյունքում օրենքի դրույթները չեն ճանաչվել Սահմանադրությանը հակասող և անվավեր, հետևաբար, վերջիններին նկատմամբ չեն տարածվել այդ առումով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևանքները<sup>157</sup>:

<sup>157</sup> Հարկ է նկատել, որ կան սահմանադրական դատարաններ, որոնք տարբերակում են որոշման ratio decidendi-ն և obiter dicta-ն: Չեխիայի սահմանադրական դատարանը, օրինակ, որոշման շրջանակներում ուղղակիորեն արձանագրում է, թե որ իրավական դիրքորոշումներն են հանդես գալիս որպես ratio decidendi, իսկ որոնք՝ որպես obiter dicta (տե՛ս, օրինակ, Չեխիայի սահմանադրական դատարանի՝ 2008/01/31 -

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ, անկախ վերը նշված հանգամանքից, սահմանադրականության առնչությամբ լուրջ հիմնախնդիրների առկայության պարագայում արտահայտվող նմանատիպ իրավական դիրքորոշումներին դրանց հասցեատերերը պետք է ցուցաբերեն անհրաժեշտ ուշադրություն: Հակառակ պարագայում սահմանադրական արդարադատության ինստիտուտի էության նկատմամբ կորստիվի ձևական մոտեցում: Ավելին, պետաիշխանական լիազորություններով օժտված համապատասխան մարմինների կողմից վերը նշված իրավական դիրքորոշումների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը պայմանավորված է պետական իշխանության անընդհատության, սահմանադրական կարգի հիմունքների անխախտելիության և այլ անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման բնագավառում ունեցած գործառույթներով: Հետևաբար, այդ դիրքորոշումների նկատմամբ անհրաժեշտ ուշադրության բացակայությունը վկայում է նաև հիշյալ գործառույթների անտեսման ու նշված մարմինների գործունեության նպատակների ձևախեղման մասին<sup>158</sup>:

Pl. 3S 24/07, 2009/11/22 - IV. 3S 956/09, 2011/03/22 - Pl. 3S 24/10 որոշումները, <http://www.concourt.cz/view/726>): Գերմանիայի Գաշնային Սահմանադրական դատարանն իր պրակտիկան զարգացրել է այն ուղղությամբ, որ պարտադիր է որոշման էական պատճառաբանությունը, այսինքն՝ այն իրավական դիրքորոշումները, առանց որոնց անհնար կլինի հանգել որոշման կոնկրետ եզրահանգմանը (տե՛ս CDL-JU (2003) 18, նշված փաստաթուղթը):

<sup>158</sup> Այդ առումով հիշատակման է արժանի սահմանադրական դատարանի՝ 2008թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումը, որով Գատարանն արձանագրեց, որ «Սահմանադրական դատարանի որոշումներն առաջին հերթին վերաբերում են իրավաստեղծ և իրավակիրառական պրակտիկային և որոշակի գործողություններ ձեռնարկելու պարտավորություն են պարունակում: Հատկապես սահմանադրական դատարանի կողմից օրենսդրական բացերի արձանագրումը չի կարող մնալ անհետևանք: Սահմանադրական դատարանի որոշումից պարտավորություն է ծագում՝ պատշաճ իրավական կարգավորմամբ լրացնել օրենսդրական բացը և վերացնել ոչ որակյալ իրավական կարգավորումը: Օրենսդրի կողմից որոշումն անարձագանք թողնելը կամ նման բացի մասնակի լրացումը դիտվում է որպես իրավակարգի ամոմախա»:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրի լուծումը չպետք է մեխանիկական լինի, և դրա հիմքում չի կարող ընկած լինել սահմանադրական դատարանի՝ պարտադիր բնույթ ունեցող իրավական դիրքորոշումներն ուղղորդող նշանակություն ունեցող դատողություններից տարբերակելու պարզ տեխնիկան: Ինչպես արդեն նշեցինք, այդ հանգամանքը կարևոր է կոնկրետ իրավական դիրքորոշումների կատարման առանձնահատկությունները հաշվի առնելու համար: Սակայն այն որևէ կերպ չի անդադառնում ՀՀ իրավական համակարգի զարգացման բնագավառում վերջիններիս ունեցած նշանակությանը: Այնուհայտ է, որ սահմանադրական դատարանն է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, և սահմանադրաիրավական հարցերի լուծումը վերապահված է հենց հիշյալ դատական ատյանին: Հետևաբար, այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտում վերը նշված հիմնախնդիրների առնչությամբ, այն մատնանշում է սահմանադրականության տեսանկյունից դրանց ճիշտ լուծումները, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ դիրքորոշումները չեն կարող մնալ անհետևանք: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ նշված լուծումները կարող են արդյունավետ լինել սուսկ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն իր հերթին պահպանի «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը<sup>159</sup>, հաշվի առ-

<sup>159</sup> Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ եթե սահմանադրական դատարանը կամ որևէ այլ մարմին, որը վերջնականորեն մեկնաբանում է Սահմանադրությունը, պատրաստ չէ ինքնասահմանափակվելու, վտանգվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը (տե՛ս Pavenik M. Constitutional Interpretation (in Continental Europe) ([http://ivrenc.info/index.php?title=Constitutional\\_Interpretation\\_%28in\\_Continental\\_Europe%29](http://ivrenc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29))): Տվյալ պարագայում հիշատակման է արժանի նաև ՌԴ Սահմանադրության 103 հոդվածի (3-րդ մաս), 105 հոդվածի (2-րդ և 5-րդ մասեր), 107 հոդվածի (3-րդ մաս), 108 հոդվածի (2-րդ մաս), 117 հոդվածի (3-րդ մաս), 135 հոդվածի (2-րդ մաս) մեկնաբանության գործով ՌԴ Սահմանադրական դատարանի անդամ Հաջիևի կողմից ներկայացված հատուկ կարծիքում արտահայտ-

նելով հիշատակված հանգամանքներն ու իր գործունեության առնչությամբ գոյություն ունեցող սահմանադրաիրավական սահմանափակումները<sup>160</sup>:

Հաջորդ հիմնախնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում, այն է, թե արդյոք սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են նաև հենց իր՝ սահմանադրական դատարանի համար: Անկասկած, ներկայացված վերլուծության հիմնական եզրահանգումներից մեկն այն էր, որ հիշյալ իրավական դիրքորոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Այդ հանգամանքը հեղինակների մեծ

---

ված տեսակետն այն մասին, որ Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ դիմումների ընդունելիության վերաբերյալ հարցը լուծելիս անհրաժեշտ է դատական իշխանության ողջամիտ ինքնասահմանափակում, որպեսզի Սահմանադրական դատարանը ներգրավված չլինի օրինաստեղծագործության քաղաքական գործընթացում: Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ դիմումների ընդունելիության կանոնները հիմնված են իշխանությունների տարանջատման (Սահմանադրության 10 հոդված) և այլ մարմինների իրավասությամբ Սահմանադրական դատարանի սահմանափակվածության («ՌԴ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 3 հոդվածի 3-րդ մաս) սկզբունքների վրա (տե՛ս <http://www.constitution.ru/decisions/10004579/10004579.htm>):

<sup>160</sup> Քննարկվող հիմնախնդրի առումով հետաքրքիր է, օրինակ, «Ղազախստանի Սահմանադրական խորհրդի մասին» օրենքի 40 հոդվածով ամրագրված կարգավորումը, համաձայն որի՝ օրենսդրության կատարելագործման առնչությամբ Սահմանադրական խորհրդի որոշումներում պարունակվող առաջարկությունները ենթակա են պարտադիր քննարկման լիազորված պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից, իսկ ընդունված որոշման մասին պետք է պարտադիր տեղեկացվի Սահմանադրական խորհրդին: Հիշատակման է արժանի նաև «Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 47 հոդվածը, որին համապատասխան՝ Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների կոնկրետ խախտումներ հայտնաբերելու դեպքում դատարանն արձանագրում է այդ հանգամանքը՝ այն թույլ տված իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց ուղղորդությունը իրավիճակով բացահայտված խախտմանն ու դրա վերացման անհրաժեշտությանը, որի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պետք է սահմանված ժամկետում տեղեկացվի Սահմանադրական դատարանին:

մասին հիմք է տվել եզրակացնելու, որ դրանց պարտադիրությունը վերաբերում է նաև հենց իրեն՝ սահմանադրական դատարանին<sup>161</sup>: Սակայն իրավաբանական գրականության մեջ հանդիպում է և այն տեսակետը, որ պարտադիրության հիշյալ կանոնն իր տարածման շրջանակների տեսանկյունից ունի մեկ բացառություն, այն է՝ Սահմանադրական դատարանը, քանզի վերջինս օժտված է իր նախադեպային իրավունքում ամրագրված սկզբունքները փոփոխելու հնարավորությամբ<sup>162</sup>:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի առնչությամբ ՀՀ օրինակին՝ նշենք, որ, մեր կարծիքով նույնպես, սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը սահմանափակված է իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներով: Հակառակ իրավիճակը կարող է հանգեցնել իրավական պետության հիմքում ընկած այնպիսի արժեքների ձևախեղման, ինչպիսիք են սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիությունը, պրակտիկայի շարունակականությունը, իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը և այլն: Այդ է պատճառը, որ իր գործունեության ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը հավատարիմ է մնում նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումներին՝ որոշումների շրջանակներում պարբերաբար վկայակոչելով դրանք<sup>163</sup>: Սակայն ասվածը չի ենթադրում, որ հիշյալ իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով բացարձակ անփոփոխելի են: Ակնհայտ է, որ սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական դրկտրինի ձևավորումը ոչ թե մե-

<sup>161</sup> St'u Marченко М. Н. Источники права. М., 2008, էջ 414, Кряжков В. А., Лазарев Л. В., նշված աշխատությունը, էջ 239, Кампо В. Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(47)2010, էջ 27, Ku'ris E., նշված աշխատությունը, էջ 111:

<sup>162</sup> St'u Kommers D. P. The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany. Duke University Press, Durham and London, 1997, էջ 54:

<sup>163</sup> St'u, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 27 մայիսի 2008թ. ՍԳՈ-754, 19 հունվարի 2010թ. ՍԳՈ-852, 25 փետրվարի 2011թ. ՍԳՈ-943, 5 մայիսի 2012թ. ՍԳՈ-1027 և մի շարք այլ որոշումներ:

կանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է<sup>164</sup>: Հետևաբար, վերջինս կարծրացած երևույթ չէ և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է փոփոխվել: Պատահական չէ, որ մի շարք պետություններում, ինչպիսիք են, օրինակ, ՌԴ, Գերմանիան, Լիտվան, Հունգարիան և այլն, սահմանադրական դատարանին տրված է նման հնարավորություն<sup>165</sup>: Պարզապես կարևոր է, որպեսզի սահմանադրական դատարանի կողմից հիշյալ հնարավորությունն օգտագործվի՝ հիմքում ունենալով ոչ թե քննարկվող մարմնի անսահմանափակ հայեցողությունը, այլ կոնկրետ սահմանադրական անհրաժեշտություն, այն է՝ սահմանադրական համապատասխան նորմի կամ դրա ընկալման փոփոխությունը: Այլ կերպ ասած՝ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բա-

<sup>164</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդրի առնչությամբ պաշտոնական սահմանադրական դրկտրինը ձևավորվում է ոչ թե «անմիջապես», այլ «գործ առ գործ» սկզբունքով (տե՛ս Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>): Այդ է պատճառը, որ իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված է այն տեսակետը, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կայունությունը չի նշանակում, որ դրանք չեն կարող կոնկրետացվել, հստակեցվել կամ փոփոխվել Սահմանադրության և օրենքների շրջանակներում, ինչպես նաև հասարակական ու պետական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների զուգընթաց (տե՛ս, օրինակ, Витрук Н. Конституционное правосудие. М., 2005, էջ 119, Бондарь Н. Судебный конституционализм в России. М. 2011, էջ 130, Зорькин В. Современный мир, право и Конституция. М., 2010, էջ 167):

<sup>165</sup> St'u Зорькин В. Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, Ереван, 2(40)-3(41) 2008, էջ 34-35, Kommers D. P., նշված աշխատությունը, էջ 54, Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>: Լիտվայի Սահմանադրական դատարանը քննարկվող հիմնախնդրի առնչությամբ նույնիսկ արտահայտել է իրավական դիրքորոշում՝ ամրագրելով, որ հակառակ մեկնաբանությունը կնշանակեր, որ Սահմանադրական դատարանը չի իրականացնում սահմանադրական արդարադատություն և չի ապահովում Սահմանադրության գերակայությունը (տե՛ս Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>):



նալին սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դոկտրինի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելն է՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ<sup>166</sup>: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 14-րդ մասով ամրագրված այն կարգավորումը, որը նախատեսում է սահմանադրական դատարանի կողմից այդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ գործով ընդունված ըստ էության որոշումից առնվազն 7 տարի հետո իր հիշյալ որոշումը վերանայելու հնարավորություն, եթե 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Որոշ հեղինակների կարծիքով, տվյալ պարագայում պետք է խոսել ոչ թե սահմանադրական դատարանի որոշումների, այլ վերջինիս իրավական դիրքորոշումների վերանայման մասին, քանզի սահմանադրական դատարանի որոշման վերանայումը առաջ է բերում նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ քաղաքականության փոփոխություն, մինչդեռ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման վերանայումը նշանակում է, որ սահմանադրական դատարանը փոխում է նախկինում ձևավորված իր դիրքորոշումը և,

<sup>166</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Դատարանի կողմից իր նախադեպերից շեղումը հնարավոր է միայն, երբ դա անհրաժեշտ է Սահմանադրությամբ ամրագրված արժեքների, մասնավորապես, մարդու իրավունքների առավել լայն պաշտպանության համար, և այդ հանգամանքը պետք է հստակ պատճառաբանվի յուրաքանչյուր գործի շրջանակներում (տե՛ս Ku'ris E., նշված աշխատությունը, էջ 111):

պայմանավորված հասարակական կյանքի էական փոփոխություններով, նոր գործով վերանայում է սահմանադրական նորմի ընկալումը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող ունենալ հետադարձ նշանակություն և առաջ բերել նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի փոփոխություն<sup>167</sup>:

Ալնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով ամրագրված «որոշման վերանայում» ձևակերպումը վերաբերում է նաև իրավական դիրքորոշումներին: Սակայն, մեր կարծիքով, քննարկվող դրույթի նպատակը ոչ թե սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, այլ ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ վերջնական եզրահանգման վերանայման առնչությամբ կարգավորումներ ամրագրելն է, և իրավական դիրքորոշումներին վերջինս վերաբերում է այնքանով, որքանով դրանց փոփոխությունն անհրաժեշտ է քննարկվող եզրահանգումը վերանայելու համար: Այդ է վկայում նաև սահմանադրական դատարանի որոշումները վերջինիս կողմից վերանայելու հնարավորություն նախատեսող պետությունների՝ հիշյալ հիմնախնդրին առնչվող արդարադատական պրակտիկան, երբ նմանատիպ դրույթների հիման վրա վերանայվում է Դատարանի վերջնական եզրահանգումը՝ հիմքում ունենալով նախկին իրավական դիրքորոշման փոփոխությունը<sup>168</sup>:

<sup>167</sup> Տե՛ս Ղամբարյան Ա. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման թույլատրելիությունը // Իրավագիտության հարցեր, N 1-2, Երևան, 2009, էջ 50:

<sup>168</sup> Տե՛ս, օրինակ, Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 1997թ. N 3-56/97 եզրակացությունը Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 4 նոյեմբերի 1996թ. եզրակացությունը վերանայելու վերաբերյալ, <http://www.lawbelarus.com/repub2008/sub39/text39295.htm>, Գազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի՝ 24 սեպտեմբերի 2008թ. №7 որոշումը Սահմանադրական խորհրդի՝ 26 դեկտեմբերի 2000թ. № 22/2, 13 դեկտեմբերի 2001թ. № 16-17/3, 18 մայիսի 2006թ. № 2 որոշումները վերանայելու վերաբերյալ, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=11&rid=448>:

Մինչդեռ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան այնպիսին է, որ բացի վերը շարադրվածից, հնարավոր են իրավիճակներ, երբ իրավական դիրքորոշման փոփոխության անհրաժեշտությունն առաջանա ոչ թե նախկինում կայացված որևէ որոշում վերանայելու ու վերջնական եզրահանգումը փոփոխելու, այլ նոր գործով որոշում ընդունելու համար: Ակնհայտ է, որ վերջինս, ի տարբերություն նախկինում կայացված վերջնական եզրահանգման վերանայման, վերաբերում է ոչ թե արդեն լուծված գործի ճակատագրին, այլ անհրաժեշտ է սահմանադրական դրկտրինի զարգացման և նոր գործերով որոշումներ ընդունելու համար, ուստի բոլոր դեպքերում ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն<sup>169</sup>: Հետևաբար, նմանատիպ իրավիճակներում իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող կախվածության մեջ դրվել այնպիսի նախապայմաններից, ինչպիսիք են նախկին որոշման կոնկրետ տեսակը կամ դրա ընդունման ժամանակահատվածը: Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 14-րդ մասով ամրագրված կարգավորումն առնչվում է սուսկ այն դեպքերին, երբ գործով ըստ էության որոշման ընդունումից անցել է առնվազն 7 տարի, և դիմումը չի վերաբերում այն իրավական ակտերին (դրանց առանձին դրույթներին), որոնք սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր: Հետևաբար, կարծում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիշյալ դրույթի հիմնական նպատակը ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերա-

<sup>169</sup> Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ սահմանադրական դատարանի որոշման եզրավակիչ մասն ուղղված է անցյալին: Վերջինիս գործառույթն է իրավական շրջանառությունից հանել Սահմանադրությանը հակասող իրավական ակտը, մինչդեռ որոշման պատճառաբանական մասն ուղղված է ապագային և իրականացնում է ոչ միայն ընդունված որոշումը հիմնավորելու, այլ նաև կանխարգելիչ, օրենսդրին որոշակի սահմանադրական չափանիշների ուղղորդող գործառույթ, որոնցից վերջինս չի կարող հետ կանգնել (տե՛ս Курис Э. Конституционное правосудие. Вопросы теории и практики. Ереван, 2004, էջ 37):

բերյալ վերջնական եզրահանգումը վերանայելու առնչությամբ կարգավորումներ ամրագրելն է, և այն չի վերաբերում հիշյալ նպատակային ուղղվածությունը չունեցող վերը նշված այլ իրավիճակներում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխությանը: Հակառակ մտտեցման պարագայում կձևավորվի սահմանադրական դատարանի պրակտիկայի ու սահմանադրական դրկտրինի կարծրացած համակարգ՝ վտանգի տակ դնելով պետության ողջ իրավական անվտանգությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ *սահմանադրական դատարանի «իրավական դիրքորոշումներ» հասկացությունը բնորոշում է վերջինիս վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հարցերի, հիմնախնդիրների առնչությամբ, որն իր արտահայտությունն է գտնում հիշյալ մարմնի ակտերում: Իրավական դիրքորոշումները կարող են ընդգրկված լինել սահմանադրական դատարանի որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրավակիչ մասերում, պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ավելի, դրանք սահմանափակում են ոչ միայն հիշյալ սուբյեկտներին, այլ նաև հենց իրեն՝ սահմանադրական դատարանին, թեև համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող են փոփոխվել: Ընդ որում՝ այդ փոփոխությունն իրականացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բանալին, այն է՝ սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դրկտրինի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:*

### ԳԼՈՒԽ 3.

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

### § 1. ՀՀ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը՝ որպես Հիմնական օրենքի զարգացման կարևորագույն գրավական

Հայ իրավական մտքի զարգացման արդի փուլում սահմանադրականության և պետության սահմանադրական կարգի ամրապնդումը մեծապես պայմանավորվում է սահմանադրական դատարանի որոշումների ընդունման ու կատարման արդյունավետ համակարգի առկայությամբ: Վերջիններս բացառիկ կարևորություն ունեն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ու չնայած այն հանգամանքին, որ քննարկվող որոշումների ուսումնասիրության ընթացքում առավելապես շեշտադրվում է դրանց դերը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը կամ անհամապատասխանությունն արձանագրելու գործում, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների նշանակությունը, ինչպես արդեն նշեցինք, չի սահմանափակվում դրանով: Վերջիններիս կարևորագույն առաքելություններից մեկը Սահմանադրության մեկնաբանությունն է, որի միջոցով երաշխավորվում է Հիմնական օրենքի կայունությունն ու զարգացումը: Ընդ որում՝ հիշյալ համատեքստում խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է, քանզի այն, ի տարբերություն ոչ պաշտոնականի, ունի համապարտադիր բնույթ և տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից:

Հատկանշական է, որ քննարկվող ինստիտուտի ներկայացված տարբերակիչ հատկանիշները հիմք ընդունելով՝ հեղինակներ

րի մի մասը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ սահմանադրական դատարանը (ինչպես նաև սահմանադրական արդարադատության համանման մարմինները) օժտված չէ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության իրավասությամբ, քանզի ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանման ինստիտուտ, իսկ ՀՀ սահմանադրական դատարանը չունի վերջինիս վերացական մեկնաբանության լիազորություն: Մեր կարծիքով, սակայն, այդ հանգամանքը չի ենթադրում, որ համապատասխան պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, բացակայում է հիշյալ ինստիտուտը: Իրավունքի իրացումը, ինչպես ցանկացած նպատակաուղղված գործունեություն, օբյեկտիվորեն պահանջում է վերջինիս բովանդակության ըմբռնում, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան իրավական, այդ թվում՝ նաև սահմանադրական նորմերի մեկնաբանություն: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ տեքստը կարող է ընդգրկել բազմաթիվ իմաստային կառուցվածքներ, և, հետևաբար, բազմաթիվ իրավական նորմեր, որոնցից իրավակիրառ մարմինը պետք է ընտրի այն, որն ինքը կիրառելու է: Մինչ այդ ընտրությունը կիրառվող նորմը գոյություն չունի, գոյություն ունի միայն տեքստը: Որոշ առումով հենց մեկնաբանությունն է տեքստը հարստացնում կոնկրետ նորմով<sup>170</sup>: Այսպիսով, Սահմանադրությունը հանդես է

<sup>170</sup> Տե՛ս Тропеп М. Проблема толкования и теория верховенства Конституции // Сравнительное конституционное обозрение, N 4(53)2005, էջ 175: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված և այն տեսակետը, որ սահմանադրությունները կարելի է համարել «անավարտ պայմանագրեր»: Նրանք նախատեսում են կանոնների, իրավունքների և սկզբունքների ընդհանուր համակարգը, որոնց կոնկրետ բովանդակությունը, սակայն, կախված է քաղաքական գործիչների համաձայնությունից կամ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների մեկնաբանությունից (տե՛ս Raadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009, <http://dare.uvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>, էջ 91):

գալիս ոչ թե որպես իրավական նորմերի ամբողջություն, այլ որպես կարգավորումների հանրագումար, որոնք պարունակում են նորմերի սուբյեկտիվ իմաստ: Սահմանադիրը չի ընդունում «իրական» նորմեր, նա իր կամքն է արտահայտում անհատական և կոլեգիալ մարմինների կազմավորման կարգի, նրանց համատեղ կամ անհատական ակտերի, նրանց միջև փոխհարաբերությունների հնարավոր տարբերակների առնչությամբ: Ինչպես Խոդդին է այդ առումով նշում, գրված կամ չգրված իրավունքի իրական ստեղծողը նա է, ով օժտված է վերջինիս մեկնաբանության բացարձակ լիազորությամբ, ի տարբերություն նրա, ով սահմանել է համապատասխան նորմերը: Հետևաբար, Սահմանադրությունը մեկնաբանող դատարանը իրականացնում է սահմանադիր իշխանություն<sup>171</sup>, ինչի արդյունքում որոշ հեղինակներ հանգում են այն եզրակացության, որ սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանցում ընդգրկված պաշտոնական սահմանադրական դոկտրինն է այն նյութը, որը ձևավորում է ամբողջ սահմանադրական իրավունքը, պատկերավոր ասած՝ սահմանադրական իրավունքը գոյություն ունի այնքանով, թե որքան սահմանադրական դրույթներ են մեկնաբանվել սահմանադրական դատարանի կողմից<sup>172</sup>:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում կանդիդատուրանք այն հիմնախնդիրն է, թե որ մարմինն է Հայաստանի Հանրապետությունում լիազորված տալու Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն: Առաջին հերթին նշենք, որ ինչպես տեսության մեջ, այնպես էլ երկրների մեծամասնության արդարադատական պրակտիկայում գերակշռում է այն տեսակետը, որ Սահմանադրությունը մեկնաբանելու իրավասությամբ օժտված է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, և դժվար թե կարելի է հանդիպել հիշյալ մոտեցումը

<sup>171</sup> St'u Тропер М., նշված աշխատությունը, էջ 175-179:

<sup>172</sup> St'u Курис Э. О стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов // Сравнительное конституционное обозрение, 2004, N 3(48), էջ 94:

ժխտող տեսակետի<sup>173</sup>: Ընդ որում՝ կարևոր է այն, որ վերը շարադրված եզրահանգումը կախված չէ կոնկրետ պետության օրենսդրությամբ, մասնավորապես, Սահմանադրությամբ, հիշյալ իրավասության ուղղակի ամրագրման առկայությունից:

ՀՀ Սահմանադրության 93 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածին համապատասխան՝ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Այնուհաստի, որ հիշատակված խնդիրների իրականացումը հնարավոր է սոսկ սահմանադրական նորմերի ընկալման ու կիրառման շրջանակներում միասնականության, այլ կերպ ասած՝ որոշակի միասնական սահմանադրական դոկտրինի առկայության պայմաններում, որպիսի հանգամանքն ապահովվում է սահմանադրական նորմերի մեկնաբանության միջոցով: Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ինչպես վերը նշված խնդիրներն ու նպատակները, այնպես էլ Սահմանադրության մեկ-

<sup>173</sup> Այդ առումով իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ պետությունների մեծամասնությունում սահմանադրություններն ու օրենքները ոչինչ չեն նախատեսում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից Սահմանադրությունը մեկնաբանելու առնչությամբ, բայց փաստացիորեն հիշյալ մարմիններից բոլորն էլ իրականացնում են վերջինիս կազույցով մեկնաբանություն կոնկրետ գործերի քննության ընթացքում: Ընդ որում՝ այդպիսի մեկնաբանությունը, հատկապես ընդհանուր իրավունքի երկրներում, կարող է եական ազդեցություն ունենալ երկրի իրավական զարգացման վրա, ինչպես դա տեղի է ունենում ԱՄՆ-ում: Բերվում է նաև Իսպանիայի օրինակը, որի «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում (1 հոդված) Սահմանադրական դատարանը բնութագրվում է որպես «Սահմանադրության գերագույն մեկնաբանող», բայց դա ավելի շուտ ոչ թե հատուկ լիազորության ամրագրում է, ինչը Սահմանադրության առաքելությունն է (վերջինս «լռում է» այդ առնչությամբ), այլ Սահմանադրական դատարանի գործունեության էության մատնանշումն է, որն իր բոլոր կոնկրետ դրսևորումներում կապված է Սահմանադրության մեկնաբանության հետ (տե՛ս Кряжков В. А., Лазарев Л. В., նշված աշխատությունը, էջ 37-38):

նաբանությունը, իրենց բնույթով սահմանադրաիրավական հարցեր են, որոնց լուծման բնագավառում մասնագիտացված է **սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը**<sup>174</sup>: Հետևաբար, Հիմնական օրենքի մեկնաբանությունը ՀՀ սահմանադրական դատարանի այն կարևորագույն գործառույթն է, առանց որի վերջինիս առաքելության իրականացումը դժվար է պատկերացնել, ինչն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանը մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը: Ընդ որում, հաշվի առնելով հիշատակված հանգամանքներն ու ՀՀ Սահմանադրության 93 հոդվածով ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը, հետևաբար, որևէ այլ դատական մարմին իրավասու չէ լուծելու սահմանադրաիրավական հարցեր<sup>175</sup>, կարծում ենք, որ հենց սահմանադրական դատարանն է այն հատուկ մարմինը, որը լիազորված է մեկնաբանելու ՀՀ Սահմանադրությունը: Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանի քննարկվող իրավական դիրքորոշումները, հանդիսանալով նրա որոշումների կարևորագույն բաղկացուցիչ մաս, պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ուստի, դրանք օժտված են համապարտադիրության հատկանիշով: Հետևաբար, հաշվի առնելով վերը շա-

<sup>174</sup> Իրավաբանական գրականության մեջ նույնպես տարածված է այն տեսակետը, որ սահմանադրական դատարանը արդարադատության այն մարմինն է, որը մասնագիտացված է սահմանադրաիրավական հարցերի լուծման բնագավառում (տե՛ս Արտյոնյան Գ. Конституционный суд в системе государственной власти /сравнительный анализ/. Ереван, 1999, էջ 66):

<sup>175</sup> Սահմանադրական արդարադատությունը ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունը հանդիսանալու առնչությամբ տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 918:

րադրվածը և այն հանգամանքը, որ պաշտոնական մեկնաբանության հիմնական տարբերակիչ հատկանիշներն են պարտադիր բնույթն այն սուբյեկտների համար, ում հասցեագրված է<sup>176</sup>, ու այն, որ վերջինս տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնին կողմից<sup>177</sup>, կարծում ենք, որ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունն ունի պաշտոնական բնույթ: Ավելին, վերը շարադրված վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ այդ մեկնաբանության պաշտոնական բնույթը պայմանավորված չէ նրանով, թե արդյոք սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինն ունի Սահմանադրության վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն, թե սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտում ու պարզաբանում է այլ լիազորությունների իրականացման շրջանակներում: Հետևաբար, թեև ՀՀ սահմանադրական դատարանին վերապահված չէ Հիմնական օրենքի պաշտոնական վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն, սակայն իր լիազորությունների իրականացման ընթացքում նա մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը, ընդ որում՝ այդ մեկնաբանությունն օժտված է պաշտոնական բնույթով:

<sup>176</sup> Տե՛ս, օրինակ, Теория государства и права: Академический курс в 2-х томах. Том 2 / Отв. ред. Марченко М. Н. М., 1998, էջ 338-339:

<sup>177</sup> Տե՛ս, օրինակ, Марченко М. Н. Теория государства и права. М., 2008, էջ 619, Арутюнян Г., Баглай М. Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, էջ 485, Румянцева Ю. Е. Официальное толкование норм уголовно-процессуального права (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2008, էջ 9, <http://www.usla.ru/structure/dissovet/Rumyanceva-aref.pdf>, Теория государства и права. курс лекций. Изд. второе, переработанное и дополненное / Под ред. Матузова Н. И., Малько А.В., <http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-1/87.htm>): Ընդ որում՝ հիշյալ սուբյեկտները կարող են մեկնաբանություն իրականացնել միայն իրենց իրավասության շրջանակներում ընդգրկված հարցերով (տե՛ս Новиков Н. И. Нормативное толкование в механизме правового регулирования (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Ростов-на-Дону, 2009, [http://www.disscat.com/content/normativnoe-tolkovanie-v-mekhanizme-pravovogo-regulirovaniya?\\_openstat=cmVmZXJ1bi5jb207bm9kZTthZDE7](http://www.disscat.com/content/normativnoe-tolkovanie-v-mekhanizme-pravovogo-regulirovaniya?_openstat=cmVmZXJ1bi5jb207bm9kZTthZDE7)):

Տվյալ պարագայում հարց է առաջանում այն մասին, թե կա արդյոք որևէ այլ դատական մարմին, որը կարող է տալ Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանություն: Հիշյալ հիմնախնդիրն առավել խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի այն դրույթի գործողության պայմաններում, համաձայն որի՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Վերջինս հաճախ հանգեցնում է այնպիսի եզրահանգումների, որ դատարանների կողմից ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջական կիրառումը պահանջում է դրանց մեկնաբանում, հետևաբար, Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանություն իրականացնելու իրավասությամբ օժտված են բոլոր դատական ատյանները: Այդ առումով առաջին հերթին նշենք, որ, հաշվի առնելով այն, որ Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրվել է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնող դատական մարմինը, այն է՝ ՀՀ սահմանադրական դատարանը, կարծում ենք, որ սահմանադրական արդարադատության իրականացումը հստակորեն առանձնացվել է արդարադատության մյուս տեսակների իրականացումից՝ այդպիսով բացառելով վերջինիս բովանդակության շրջանակներում ընդգրկված գործառնությունների իրականացումը և սահմանադրաիրավական հարցերի լուծումը դատական այլ մարմինների կողմից: Իսկ այդ հանգամանքն ու պաշտոնական մեկնաբանության տարբերակիչ հատկանիշները հիմք են տալիս եզրակացնելու, որ հիշյալ դատական մարմինները չեն հանդիսանում ՀՀ Սահմանադրության մեկնաբանություն իրականացնելու համար հատուկ լիազորված մարմիններ և չեն կարող տալ Հիմնական օրենքի **պաշտոնական մեկնաբանություն**<sup>178</sup>: Դա իր հերթին ենթադրում է, որ բոլոր այլ պե-

<sup>178</sup> Հարկ է նկատել, որ Լիտվայի Սահմանադրական դատարանը, նույնպես չունենալով Հիմնական օրենքի վերացական մեկնաբանության լիազորություն, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ միայն Սահմանադրական դատարանն է իրավասու պաշտոնապես մեկնաբանելու Սահմանադրությունը (տե՛ս Ruling No. 21/2003 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>):

տական մարմինները, այդ թվում՝ դատարանները, պետք է սահմանադրական նորմերը կիրառեն սահմանադրական դատարանի կողմից տրված պաշտոնական մեկնաբանության համատեքստում, այլ ոչ մեկնաբանեն Սահմանադրությունն իրենց հայեցողությամբ, քննարկվող մեկնաբանության շրջանակներից դուրս<sup>179</sup>: Այդ առումով հարկ է հիշատակել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ անհրաժեշտ է Սահմանադրությունը կիրառել Սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի համատեքստում: Սահմանադրությունը ժամանակի ընթացքում լրացվում ու մեկնաբանվում է Սահմանադրական դատարանի որոշումներում, որոնք շատ ավելի հեշտ են կիրառվում ընդհանուր դատարանների կողմից, քան Սահմանադրության անհատակ և արժեքային ուղղվածություն ունեցող դրույթները<sup>180</sup>: Հենց այդ է պատճառը, որ երբ խոսվում է իշխանության մարմինների կողմից իրենց լիազորությունները սահմանադրական կարգավորումներին համապատասխան իրականացնելու մասին, հստակեցվում է, որ դրանք պետք է իրականացվեն «վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից մեկնաբանված սահմանադրական կարգավորումներին համապատասխան»<sup>181</sup>:

Հաջորդ հիմնախնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում, սահմանադրական դատարանի կողմից կիրառվող մեկնաբանության մեթոդների ճիշտ ընտրությունն է ու սահմանների հստակեցումը, քանզի դրանով է մեծապես պայմանավորված մեկնաբանության արդյունավետությունն ու

<sup>179</sup> Հարկ է նկատել, որ քննարկվող հիմնախնդրի լուծումը կարող է արդյունավետ լինել տակ այն դեպքում, եթե ընդհանուր դատարանները պահպանեն «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հենց սահմանադրական դատարանն է հանդիսանում այն դատական ատյանը, որը հատուկ լիազորված է տալու սահմանադրական նորմերի պաշտոնական մեկնաբանություն:

<sup>180</sup> St'e'u Papuashvili G. Problematic Aspects of Interrelationship between the Constitutional and Ordinary Courts, [http://www.venice.coe.int/WCCJ/Papers/GEO\\_Papuashvili\\_E.pdf](http://www.venice.coe.int/WCCJ/Papers/GEO_Papuashvili_E.pdf):

<sup>181</sup> St'e'u Tponep M., նշված աշխատությունը, էջ 177:

դրա նշանակությունը սահմանադրականության զարգացման գործում:

Հարկ է նկատել, որ, չնայած Սահմանադրության մեկնաբանության նպատակով օգտագործվող մեթոդների բազմազանությանը, վերջինիս սահմանների առնչությամբ գոյություն ունեցող տեսակետները կարելի է ամփոփ ներկայացնել երկու հիմնական մոտեցումների համատեքստում՝ սուբյեկտիվ (ստատիկ) և օբյեկտիվ (դինամիկ): Առաջինը նպատակաուղղված է Սահմանադրության «տառին» համապատասխան նորմերի մեկնաբանությանը, որի հիմնական խնդիրը օրիգինալիզմի կողմնակիցների համար դառնում է նորմի այն բովանդակությունն ու նպատակները բացահայտելը, որոնք ներկայացվում էին դրա ընդունման ընթացքում, այսինքն՝ սահմանադրի անփոփոխ կամքը վերհանելը: Ի տարբերություն հիշյալ տեսակետի՝ օբյեկտիվ տեսությունը հանգում է սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտմանը վերջինիս գործողության ընթացքում գոյություն ունեցող իրականության համատեքստում: Այնուհայտ է, որ հասարակական կյանքը փոփոխվում է սահմանադրի կամքից շատ ավելի արագ, ինչի արդյունքում անհամապատասխանություն է առաջանում սահմանադրական նորմի և իրականության միջև: Վերջինս կարող է վերացվել նոր նորմի ընդունմամբ կամ գործող նորմի բովանդակությունն այնպես բացահայտելով, որպեսզի վերացվի հիշատակված անհամապատասխանությունը: Վերջին դեպքում սահմանադրական նորմը որոշակիորեն կտրվում է սահմանադրի կամքից և սկսում է «սեփական կյանքը»:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, ըստ էության, տեսության մեջ և պրակտիկայում Սահմանադրության մեկնաբանության սահմանների տեսակյունից առանձնացվում է երկու հիմնական մոտեցում: Առաջինը, այսպես կոչված, «մեխանիկական» է, որը Հիմնական օրենքը դիտարկում է որպես «հաստատուն փաստաթուղթ» և որպես ելակետ է ընդունում «հիմնադիր-հայրերի» նպատակների բացահայտումը՝ մեկնաբանության հիմնաքար

համարելով Սահմանադրության «տառը», իսկ երկրորդ՝ «կառուցակարգային» մոտեցումը<sup>182</sup> Հիմնական օրենքը դիտարկում է որպես «կենդանի փաստաթուղթ»<sup>183</sup> և Սահմանադրության «տառը» սոսկ որպես ելակետ է դիտարկում հետագա տրամաբանական եզրահանգումների համար<sup>184</sup>:

Հետևաբար, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակը վերլուծելիս հարկ ենք համարում անդրադառնալ այն հիմնախնդրին, թե ինչ շրջանակներով պետք է սահմանափակված լինի և այդ առումով ինչ չափանիշներ պետք է հաշվի առնի ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելիս: Մասնավորապես, արդյո՞ք մեկնաբանության նպատակը պետք է լինի սոսկ նորմի ընդունման առն-

<sup>182</sup> Վերը նշված մոտեցումները մատնանշելու նպատակով իրավաբանական գրականության մեջ օգտագործվում են նաև «ակտիվիզմ» և «օրիգինալիզմ» տեսություններ հասկացությունները (տե՛ս Goldobina Z. G. Активизм и оригинализм в деятельности Верховного суда США и в американской политико-правовой доктрине (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2007 (<http://www.usla.ru/structure/dissovet/Goldobina-aref.pdf>)):

<sup>183</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Ավստրալիայի Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Հիմնադիր-հայրերից շատերն իրենք էին Սահմանադրությունն ընկալում որպես զարգացող փաստաթուղթ, որն ապագայում կարող է կիրառվել այնպիսի իրավիճակների առնչությամբ, որոնց վերաբերյալ նրանք չէին կարող պատկերացում ունենալ: Հետևաբար, Գատարանը պետք է ապահովի, որպեսզի Սահմանադրությունը «սերնդեսերունդ հարմարեցվի փոփոխվող հանգամանքներին», այլ կերպ ասած՝ «մեկնաբանվի ժամանակի պահանջներին համապատասխան» (տե՛ս Zines L. Dead Hands or Living Tree? Stability and Change in Constitutional Law // [2004] AdelLawRw 2; (2004) 25(1) Adelaide Law Review 3 (<http://www.austlii.edu.au/au/journals/AdelLawRw/2004/2.html>)):

<sup>184</sup> Տե՛ս Гаджиев Х. Толкование норм Конституции и закона конституционными судами. Баку, 2002, էջ 128-129, Wolcher L. E. Constitutional Interpretation in the United States and the United Kingdom ([http://ivr-enc.info/index.php?title=Constitutional\\_Interpretation\\_in\\_the\\_United\\_States\\_and\\_the\\_United\\_Kingdom](http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_in_the_United_States_and_the_United_Kingdom)), Pavcnik M. Constitutional Interpretation (in Continental Europe) ([http://ivr-enc.info/index.php?title=Constitutional\\_Interpretation\\_%28in\\_Continental\\_Europe%29](http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29)), Остапович И. Толкование Конституции: опыт зарубежных стран (<http://e-lib.gasu.ru/vmu/archive/2007/01/28.pdf>):

չությամբ սահմանադրի նպատակների վերհանումը, թե՞ անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերջինիս գործողության պայմանները, կամ կարելի՞ է արդյոք մեկնաբանության արդյունքում նորմի բովանդակությունը բացահայտել դրա տառացի նշանակությունը սահմանափակող կամ ընդլայնող շրջանակներում:

Չենք կարծում, որ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելու հիմնական չափանիշը պետք է լինի լեզվական առումով վերջիններիս տառացի նշանակությունը: Անկասկած, լեզվական մեկնաբանությունից է սկսվում սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտումը, և վերջինս, որպես կանոն, նախորդում է մեկնաբանության այլ միջոցներին<sup>185</sup>: Ինչպես նշում էր Կորկուսովը. «Յուրաքանչյուր գրված աղբյուր ներառում է խոսքի միջոցով արտահայտված մարդկային միտք»<sup>186</sup>: Հետևաբար, Սահմանադրությունը հանդես է գալիս որպես խոսքերով արտահայտված մարդկային մտքի արտահայտություն: Այդ միտքը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել վերջինս արտահայտող բառերի, խոսքերի նշանակությունը, որոնց բացահայտմանը նպատակաուղղված է լեզվական մեկնաբանությունը<sup>187</sup>: Սակայն զուտ լեզվական տեսանկյունից հիշյալ բառերի իմաստի վերհանումը եր-

<sup>185</sup> Որպես լեզվական ու տառացի մեկնաբանության օրինակ կարելի է ներկայացնել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23 նոյեմբերի 2010թ. ՍԳ-Ո-926 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը ՀՀ Սահմանադրության 23 հոդվածի 5-րդ մասի առնչությամբ, համաձայն որի՝ այդ դրույթը սահմանում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման երեք համաժամանակյա նախապայման. ա/ օրենքով սահմանված դեպքերում, բ/ օրենքով սահմանված կարգով, գ/ դատարանի որոշմամբ (տե՛ս [www.concourt.am](http://www.concourt.am)):

<sup>186</sup> Տե՛ս Կորկուսովի Մ. Մ. Лекции по общей теории права. СПб., 1909, էջ 343:

<sup>187</sup> Այդ առումով հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են նաև տարբեր գիտությունների, մասնավորապես տվյալ պարագայում իրավագիտության կողմից մշակված գիտական հասկացություններ, որոնք մեկնաբանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ թե դրանց բառացի, այլ համապատասխան գիտության կողմից տրված նշանակությունը:

բեմն բավարար չի լինում միտքը ճիշտ ընկալելու համար, քանզի, թեև վերջինս արտահայտող բառերից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն, սակայն միևնույն ժամանակ այլ բառերի հետ գտնվում է տրամաբանական փոխկապվածության մեջ, ինչի արդյունքում ձեռք է բերում որոշակի և կոնկրետ համատեքստի տրամաբանությանը ենթակա իմաստ<sup>188</sup>: Ուստի, տվյալ պարագայում առաջանում է մեկնաբանության այլ եղանակների կիրառման անհրաժեշտություն<sup>189</sup>:

Տեսության մեջ հիշատակվող և պրակտիկայում կիրառվող իրավունքի մեկնաբանության կարևորագույն եղանակներից մեկը պատմական մեկնաբանությունն է, որի էությունը կայանում է նրանում, որ նորմերի իմաստը վերհանելիս հաշվի են առնվում այն կոնկրետ պատմական հանգամանքները, որոնց պայմաններում ընդունվել է համապատասխան նորմը: Իսկ դա կարևոր նշանակություն ունի նորմի ընդունման նպատակներն ու խնդիրները բացահայտելու, հետևաբար նաև՝ վերջինիս իմաստը վերհանելու համար<sup>190</sup>: Սակայն հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ իրա-

<sup>188</sup> Տվյալ պարագայում հարկ ենք համարում հիշատակել իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետն այն մասին, որ «չպետք է անտառը կորցնել ծառերի մեջ», այլ կերպ ասած՝ Սահմանադրության ոգին չպետք է կորցնել տառերի ու բառերի հետևում (տե՛ս CDL-JU(2004)024, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development // Report by Mr Aivars ENDZIŠS (Chairman of the Constitutional Court, Member, Latvia), Strasbourg, 20 February 2004 (<http://www.venice.coe.int/docs/2004/CDL-JU%282004%29024-e.pdf>):

<sup>189</sup> Այդ մասին տե՛ս նաև Ruling No. 24/04 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>:

<sup>190</sup> Որոշ հեղինակներ որպես մեկնաբանության ինքնուրույն մեթոդ առանձնացնում են տեղեղովիական (նպատակային) մեկնաբանությունը: Հաշվի առնելով այն, որ նորմի ընդունման նպատակը բացահայտվում է պատմական մեթոդի կիրառման միջոցով, բացի այդ, իրավակարգավորման առջև դրված նպատակների վերհանմանը կարող են ուղղված լինել մեկնաբանության այլ եղանակները, հիշյալ մեթոդի առանձնացումն ու դրա ինքնուրույն վերլուծությունը նպատակահարմար չենք համարում: Հակառակ պարագայում որպես մեկնաբանության ինքնուրույն մեթոդներ հնարավոր կլինի առանձնացնել, օրինակ, նորմի խնդիրների, գործառնությունների բացահայտմանն ուղղված եղանակները:



կանությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, և Հիմնական օրենքը պետք է ի վիճակի լինի համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առաջընթացին: Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են այնպիսի հասկացություններ, որոնք տարիների ընթացքում ապրել են և կշարունակեն ապրել անընդհատ զարգացում<sup>191</sup>: 21-րդ դարում դրանց ընկալումը նույնը չէ, ինչ, օրինակ, 19-րդ կամ 20-րդ դարերում: Մի շարք հասկացությունների ընկալումն էապես փոխվել է նույնիսկ մի քանի տասնամյակների ընթացքում: Հետևաբար, մեր կարծիքով, դրանք պետք է մեկնաբանվեն այն հանգամանքների համատեքստում, որոնց պայմաններում գործում են: Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են նաև, այսպես կոչված, «զնահատողական» նորմեր և հասկացություններ, որոնց իմաստի բացահայտման համար նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել հիշատակված հանգամանքները: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 32 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Ակնհայտ է, որ անվտանգության ու հիգիենայի պահանջները ժամանակի ընթացքում կարող են էականորեն փոփոխվել, ու քանզի դրանց բավարարող աշխատանքային պայմանների բովանդակության բացահայտումը պայմանավորված է հենց վերը նշված հանգամանքների իմացությամբ, և կարող է իրականացվել սոսկ դրանց համատեքստում, հիշյալ սահմանադրական նորմի մեկնաբանությունը պահանջում է մեր կողմից հիշատակված այն հանգամանքների ուսումնասիրություն, որոնց շրջանակներում գործում է սահմանադրական նորմը:

<sup>191</sup> Օրինակ՝ «ժողովրդավարություն», «սուվերենություն», «մարդու հիմնական իրավունքներ և ազատություններ» և այլ հասկացությունները:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ եթե հիշատակված պայմաններում կոնկրետ իրավակարգավորման առնչությամբ որպես ելակետ ընդունվի սոսկ սահմանադրի կամքը, ապա հնարավոր չի լինի ապահովել Սահմանադրության կայունությունն ու զարգացումը<sup>192</sup>: Հետևաբար, Սահմանադրության մեկնաբանության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի այն պայմանների բացահայտումը, որոնց շրջանակներում գործում է մեկնաբանվող նորմը<sup>193</sup>, և նպատակահարմար չէ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես հիմք ընդունել սոսկ վերջիններիս ընդունման առնչությամբ սահմանադրի նպատակները, այլ առավել ընդունելի է Սահմանադրության **դի-**

<sup>192</sup> Տվյալ պարագայում չենք էլ խոսում այն մասին, որ սահմանադրի կամքի բացահայտումը կարող է չափազանց դժվար ու նույնիսկ անհնար լինել, քանզի վերջինս հանդիսանում է հավաքական կամքի արտահայտություն: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ դիպուկ կարծիք է արտահայտվել այն մասին, որ որքան մեկնաբանող գոյություն ունի, գոյություն ունի այնքան էլ անցյալի մեկնաբանություն: Հետևաբար, հղումներն անցյալին ու պատմությանը կախված են ոչ թե օբյեկտիվ հանգամանքներից, այլ մեկնաբանության սուբյեկտի կամայական հայեցողությունից (տե՛ս Уитц Р. Об отсутствии определенности в толковании Конституции // Конституционное право: Восточноевропейское обозрение, N1(38)2002, էջ 32-33): Հենց այդ է պատճառը, որ նույնիսկ ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում օրիգինալիզմը հաճախ ներկայացվում է որպես ռոմանտիկ հեքիաթ և դիտարկվում է որպես դատարաններին առավել մեծ հայեցողություն տվող տեսություն, քանզի վերջինիս պարագայում դատարաններն օժտված են սահմանադրի նպատակները բացահայտելիս հնարավոր տարբերակների միջև ընտրություն կատարելու չափազանց մեծ հայեցողությամբ (այդ մասին տե՛ս նաև Burgess S. The Founding Fathers, Pop Culture, and Constitutional Law. Ohio University, USA, Ashgate, reprinted 2009, էջ 13, 38):

<sup>193</sup> Այդ առումով հարկ է հիշատակել Գերմանիայի Գաշնային Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ գրված նորմի մեկնաբանությունը չի կարող միշտ կամ որոշակի անսահմանափակ ժամանակահատվածի համար փոխկապված մնալ նորմի այն նշանակությանը, որը վերջինս ուներ ընդունման պահին: Նորմը միշտ գտնվում է այն սոցիալական հանգամանքների և սոցիալ-քաղաքական տեսակետների համատեքստում, որոնց վրա տարածվում է վերջինիս ազդեցությունը: Երբ հիշյալ հանգամանքներն ու տեսակետները փոփոխվում են, նորմը կարող է, իսկ որոշակի հանգամանքների դեպքում պետք է համապատասխանեցվի այդ փոփոխություններին (տե՛ս Kommers D. P., նշված աշխատությունը, էջ 126):

**նամիկ մեկնաբանության** տեսակետը<sup>194</sup>: Վերը շարադրվածն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևորվում են նաև Սահմանադրության մեկնաբանության այլ եղանակները:

Անդրադառնալով մեկնաբանության համակարգային եղանակին՝ նշենք, որ կասկածից վեր է այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է որոշակի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս և գործում է ոչ թե այդ համակարգի այլ տարրերից մեկուսացված կերպով, այլ սերտորեն փոխկապված լինելով վերջիններիս հետ, ինչը ենթադրում է նաև դրանց ընկալումների միջև փոխկապվածության առկայություն<sup>195</sup>: Սահմանադրության՝ որպես ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս հանդես գալու հանգամանքը

<sup>194</sup> Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ օրենքը (այդ թվում՝ Սահմանադրությունը) պետք է հաշվի առնի անցյալը, գործի ներկայում և ուղղված լինի դեպի ապագան (տե՛ս Maruste R. The Role of the Constitutional Court in Democratic Society (<http://www.juridicainternational.eu/the-role-of-the-constitutional-court-in-democratic-society>)):

<sup>195</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 6 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրությունն **ամբողջական** և անմիջական գործողություն ունեցող ակտ է: Անդրադառնալով սահմանադրական հիշյալ դրույթին՝ Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սահմանադրական նորմերի «ամբողջականությունն» առաջին հերթին արտահայտվում է նրանում, որ այդ նորմերը փոխկապակցված են ոչ միայն ձևական առումով, ամրագրման կառուցվածքի տեսանկյունից, այլ նաև բովանդակությամբ: Այդ ամբողջականությունը կայանում է նրանում, որ ինչպես Սահմանադրության նախաբանը, այնպես էլ վերջինիս բաժիններն ու հոդվածները կազմում են բովանդակային ամբողջություն: Հետևաբար ակնհայտ է, որ կոնկրետ սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտելիս այն չի կարելի մեկնաբանել սահմանադրական այլ դրույթներից մեկուսացված կերպով (տե՛ս Гаджиев X., նշված աշխատությունը, էջ 117): 1993թ. մարտի 5-ին ՌԳ Սահմանադրական դատարանի կողմից Գերագույն խորհրդին ներկայացված «Ռուսաստանի Դաշնությունում սահմանադրական օրինականության վիճակի մասին» հաղորդման մեջ նույնպես ընդգծվել է, որ «չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ Սահմանադրությունը միասնական փաստաթուղթ է, և նրա բոլոր դրույթները պետք է դիտարկվեն փոխկապվածության, համակարգվածության համատեքստում» (տե՛ս Теория государства и права. курс лекций / Под ред. Матузова Н. И., Малько А.В. (<http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-1/91.htm>)):

դրսերվում է մի քանի մակարդակներում, հետևաբար, համակարգային եղանակի կիրառման դեպքում վերջինիս մեկնաբանությունը կարելի է իրականացնել մի քանի հարթությունների տեսանկյունից: Առաջին մակարդակը ՀՀ իրավական համակարգն է: Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածը, որին համապատասխան՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և **ենթարկվում է միայն Սահմանադրությանը**, կարծում ենք, որ Սահմանադրության համակարգային մեկնաբանության տեսանկյունից առաջնային ու կարևորագույն հանգամանքը սահմանադրական նորմերի միջև գոյություն ունեցող կապերն են: Ակնհայտ է, որ սահմանադրական ցանկացած նորմ հանդիսանում է Սահմանադրության միասնական ու ամբողջական համակարգի բաղկացուցիչ մասը՝ սերտորեն փոխկապված լինելով սահմանադրական այլ դրույթների հետ: Հետևաբար, սահմանադրական յուրաքանչյուր նորմի բովանդակության բացահայտումն իրականացվում է ոչ միայն վերջինիս բառացի ընկալման, այլ հիշատակված նորմերի միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա: Այլ կերպ ասած՝ նորմի բովանդակությունը ճիշտ ընկալելու համար վերջինիս, այսպես կոչված, «սեփական» իմաստը համադրվում է այլ նորմերի բովանդակության հետ<sup>196</sup>:

<sup>196</sup> Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ մեկնաբանության նպատակը ոչ թե Սահմանադրության առանձին սկզբունքների ընկալումն է, այլ դրանց փոխկապվածության կամ առնվազն համակեցության բացահայտումը: Սահմանադրությունն ամրագրում է տարրեր, որոնք պետք է համադրվեն ամբողջության մեջ, բայց այն չի ներկայացնում ամբողջի կազմակերպված պատկերը: Պատկերավոր ասած՝ Սահմանադրությունը՝ որպես ամբողջություն, նախասահմանված երևույթ չէ, այլ հանդիսանում է սահմանադրական քաղաքականության արդյունք (տե՛ս Загребельский Г. Толкование законов: стабильность или трансформация? //

Հիշյալ հիմնախնդիրը ՀՀ իրավական համակարգի հարթությունում վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել և այն հանգամանքը, որ մի շարք հարաբերությունների կարգավորման առնչությամբ Սահմանադրությունը հղում է կատարում տարատեսակ օրենքների<sup>197</sup>: Կարծում ենք, որ մեկնաբանության քննարկվող եղանակը ենթադրում է համապատասխան սահմանադրական նորմերի իմաստի վերհանումը վերջիններիս համատեքստում<sup>198</sup>: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ հիշատակված օրենքները կարող են նախատեսել ցանկացած կարգավորում: Բոլոր դեպքերում ելակետային պետք է լինի այն, որ վերջիններս իրենց հերթին համա-

---

Сравнительное конституционное обозрение. N 3(48)2004, էջ 81): Հիշյալ հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է նաև Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Սահմանադրությունը միասնական ակտ է՝ բաղկացած տարատեսակ դրույթներից՝ սահմանադրական նորմերից և սկզբունքներից, որոնց միջև չի կարող լինել ու չկա որևէ հակասություն, և որոնք կազմում են ներդաշնակ համակարգ, սահմանադրական սկզբունքները բխում են Սահմանադրության ոգին արտահայտող սահմանադրաիրավական կարգավորումների ամբողջականությունից, Սահմանադրության տառը չի կարող մեկնաբանվել կամ կիրառվել Սահմանադրության ոգուն հակասող եղանակով (տե՛ս Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>):

<sup>197</sup> Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ՝ Սահմանադրությանը և **սահմանադրական դատարանի մասին օրենքով** սահմանված ժամկետներում և կարգով:

<sup>198</sup> Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 4 փետրվարի 2011թ. ՄԳ-Ո-934 որոշմամբ արձանագրեց, որ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի պահանջն առ այն, որ համապատասխան սուբյեկտները կարող են ՀՀ սահմանադրական դատարան դիմել «Սահմանադրությանը և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով», ինչպես նաև 100-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն իրավական ակտերի դրույթների սահմանադրականությունը որոշում է «օրենքով սահմանված կարգով», ներկա իրավակարգավորման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի և 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տվյալ գործի վարույթը ենթակա է կարճման՝ նույն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

պատասխանեն սահմանադրական պահանջներին ու կոնկրետ իրավակարգավորումն ամրագրեն դրանց շրջանակներում<sup>199</sup>:

Քննարկվող համատեքստում հիշատակման են արժանի նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը հանդիսացող միջազգային-իրավական փաստաթղթերը, մասնավորապես, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը՝ հաշվի առնելով վերջիններիս տրված առանձնահատուկ կարգավիճակը, երբ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող **վավերացվել**, ու եթե **վավերացված միջազգային պայմանագրում** սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը<sup>200</sup>: Նշենք, որ հիշյալ հանգամանքն առնչվում է նաև սահմանադրական նորմերի մեկնաբա-

---

<sup>199</sup> Հենց այդ է պատճառը, որ Սահմանադրությանը ամրագրված հիշյալ իրավական ակտերը նույնպես կարող են դառնալ սահմանադրական արդարադատության օբյեկտ: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15 ապրիլի 2008թ. ՄԳ-Ո-751 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող և անվավեր ճանաչեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթներն այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

<sup>200</sup> Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19 հունվարի 2010թ. ՄԳ-Ո-852 որոշման շրջանակներում անհրաժեշտ համարեց ՀՀ Սահմանադրության 20-րդ մասում ամրագրված՝ անձի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել «... ինչպես նաև նշված իրավունքի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում»՝ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրված դրույթների վերլուծության և Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա կատարելով այն եզրահանգումը, որ քրեական գործերով բողոքարկման իրավունքի բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական գործով անձի դատապարտման կամ նշանակված պատժի վերանայման հնարավորությունը պետք է ապահովվի առնվազն մեկ վերադասատյանում (տե՛ս [www.concourt.am](http://www.concourt.am)):

նության համար նշանակություն ունեցող հաջորդ հարթությանը, այն է՝ միջազգային իրավունքին: Այդ առումով, բացի հիշատակված միջազգային պայմանագրերից, ՀՀ սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտմանը կարող են նպաստել նաև միջազգային-իրավական այլ փաստաթղթեր, ինչը, սակայն, ներկայացված հանգամանքների համեմատությամբ ունի օժանդակ նշանակություն:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևորություն ներկայացնող հաջորդ հարթությանը՝ նշենք, որ քանզի ՀՀ իրավական համակարգն ընդգրկված է աշխարհի իրավական քարտեզի շրջանակներում, ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունը կարող է իրականացվել նաև վերջինիս համատեքստում, և սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես օժանդակ միջոցներ կարող են օգտագործվել տարբեր իրավական համակարգերում գտնված լուծումները կոնկրետ հիմնախնդիրներին<sup>201</sup>:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ ընդգծենք, որ Սահմանադրության համակարգային մեկնաբանության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի **սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտումը դրանց միջև եղած տրամաբանական կապերի համատեքստում**: Հիշատակված այլ հան-

<sup>201</sup> Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30 հունիսի 2009թ. ՄԳՌ-810 որոշմամբ անդրադարձավ, այսպես կոչված, «կուսակցությունների դասալքության» կանխման տարբեր կառուցակարգային լուծումների առնչությամբ գոյություն ունեցող միջազգային պրակտիկային, մասնավորապես, Պորտուգալիայում, Իսպանիայում, ՌԳ-ում, Ռուսիայում, Նորվեգիայում, Հնդկաստանում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում գտնված իրավական լուծումներին (տե՛ս [www.concourt.am](http://www.concourt.am)): Հարկ է նկատել, որ հիշյալ տեխնիկան կիրառում են նաև սահմանադրական արդարադատություն իրականացնող այլ մարմիններ, օրինակ՝ Լատվիայի սահմանադրական դատարանը (տե՛ս CDL-JU(2004)024, նշված փաստաթուղթը), Էստոնիայի Գերագույն դատարանը (տե՛ս CDL-JU(2004)031, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development Thereof // Report by Mr Uno LÕHMUS (Chief Justice of the Supreme Court, Estonia), Strasbourg, 25 February 2004 (<http://www.venice.coe.int/docs/2004/CDL-JU%282004%29031-e.pdf>)) և այլն:

գամանքները վերջինիս համեմատությամբ ունեն ամանցյալ, օժանդակ նշանակություն և կարող են սույն նպաստել քննարկվող նորմերի իմաստը վերհանելուն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ համակարգային մեկնաբանությունը հանդիսանում է մեկնաբանության կարևորագույն եղանակներից մեկը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտել համակարգի այլ տարրերի հետ փոխկապվածության համատեքստում, այլև մեկնաբանության ընթացքում հաշվի առնել այն պայմանները, որոնց շրջանակներում գործում է կոնկրետ նորմը, և իրականացնել Սահմանադրության **դիմամիկ մեկնաբանություն**<sup>202</sup>:

Թեև արդեն ներկայացրեցինք մեր այն տեսակետը, որ սահմանադրի կամքը և սահմանադրական նորմերի տառացի նշանակությունը չպետք է լինեն վերջիններիս բովանդակության բացահայտման միակ ելակետը, և վերլուծեցինք Սահմանադրության դիմամիկ մեկնաբանության շրջանակներում կիրառվող մեկնաբանության եղանակները, սակայն այդ համատեքստում շարունակում է վիճահարույց մնալ այն հարցը, թե ինչ սահմաններում պետք է գործի ՀՀ սահմանադրական դատարանը սահմանադրա-

<sup>202</sup> Որոշ հեղինակներ մեկնաբանվող նորմի գործողության պայմանների առնչությամբ որպես մեկնաբանության ինքնուրույն եղանակ առանձնացնում են ֆունկցիոնալ մեկնաբանությունը: Սակայն, հաշվի առնելով համակարգային մեկնաբանության առնչությամբ ներկայացված վերը նշված վերլուծությունը և այն հանգամանքը, որ ֆունկցիոնալ մեկնաբանության շրջանակներում բացահայտվող հանգամանքները, ըստ էության, վեր են հանվում մեկնաբանության համակարգային եղանակի կիրառման դեպքում, վերջինս չենք դիտարկի որպես մեկնաբանության ինքնուրույն մեթոդ: Տեսության մեջ կարևորվում է նաև մեկնաբանության տրամաբանական եղանակի կիրառումը, որի առանձնահատկությունը կայանում է նրանում, որպեսզի լեզվական տեսանկյունից բառերի բովանդակությունը բացահայտելուց հետո մտքի, հետևաբար՝ նաև մեկնաբանման ենթակա նորմի առնչությամբ ձևական տրամաբանության կանոնների օգտագործման արդյունքում կատարվեն ճիշտ եզրահանգումներ: Կարծում ենք, որ Սահմանադրության մեկնաբանության առումով վերջինս նույնպես ունի կարևոր նշանակություն:

կան նորմերի բովանդակությունը բացահայտելիս, մասնավորապես, կարող է արդյոք վերջինս փոփոխություններ մտցնել հիշյալ նորմերի բովանդակության շրջանակներում: Արդեն անդրադարձել ենք այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեությունն իրականացնելիս, մասնավորապես, Սահմանադրությունը մեկնաբանելիս, ստեղծում է իրավական նորմեր: Սակայն նոր նորմեր ստեղծելու հանգամանքը պարտադիր չէ, որպեսզի ենթադրի գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու միջոցով դրանց իմաստի փոփոխություն: Մեր կարծիքով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության արդյունքում ստեղծվող նորմերի նպատակը պետք է լինի գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում վերջինիս բովանդակությունը բացահայտելը, սակայն ոչ հիշատակված շրջանակներից դուրս դրանում փոփոխություններ մտցնելը: Դա բխում է ՀՀ սահմանադրական կարգավորումների տրամաբանությունից: Աշխատանքի շրջանակներում խոսել ենք այն մասին, որ, հաշվի առնելով այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ **հասարակական համաձայնություն** և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, նախատեսվել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման բավականին բարդացված կարգ, և հստակորեն սահմանվել են այդ գործընթացի շրջանակներում ընդգրկված սուբյեկտները: Նշել ենք նաև, որ հիշատակված կարգավորմամբ սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելել Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղանակներով, այլ բացառել է **այլ սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը՝ գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու** միջոցով: Իսկ դա հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրությունը մեկնաբանելիս ՀՀ

սահմանադրական դատարանը չի կարող ստեղծել գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ պետք է սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտի և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր հանի դրանց համատեքստում՝ պահպանելով «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը: Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել նաև ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրությունն ինքը պետք է լինի այն սահմանը, որի շրջանակներում մեկնաբանողը կարող է բացահայտել վերջինիս նորմերը<sup>203</sup>: Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է նաև Հունգարիայի սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ ձևավորված պրակտիկան, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանը գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա. այն իր վրա չի վերցնում օրենսդրական գործունեության գործառույթները, այլ կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի պատասխանը փնտրում է Սահմանադրության շրջանակներում<sup>204</sup>: Լիտվայի Սահմանադրական դոկտրինի համաձայն նույնպես Սահմանադրական դատարանը Սահմանադրության շրջանակներում է փնտրում այն հարցերի պատասխանները, որոնք իրենց ուղղակի արտահայտությունը չեն գտել Հիմնական օրենքի տեքստում<sup>205</sup>:

<sup>203</sup> Տե՛ս Barber S. A., Fleming J. E. Constitutional Interpretation. Oxford University Press, 2007, էջ 172:

<sup>204</sup> Տե՛ս Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 45/2005 (XII. 14.) AB որոշումը, [http://www.mkab.hu/letoltesek/en\\_0045\\_2005.pdf](http://www.mkab.hu/letoltesek/en_0045_2005.pdf): «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենքի 38 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը նույնիսկ Հիմնական օրենքի վերացական մեկնաբանությունը տալիս է սուկ այն դեպքերում, երբ այդ մեկնաբանությունը կարող է ուղղակիորեն բխեցվել Հիմնական օրենքից (տե՛ս <http://www.mkab.hu/jog/ab-torveny>):

<sup>205</sup> Տե՛ս Birmontiene T. The Significance of Constitutional Review for the Development of Law // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 85:

Հետևաբար, մեկնաբանության սահմանների առնչությամբ քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ հիմնական եզրահանգումն այն է, որ *«Հ սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելիս հիմք է ընդունում ոչ միայն սահմանադրական նորմերի տառացի նշանակությունը կամ սահմանադրի կամքը, այլ վերջիններիս բովանդակությունը բացահայտում է մեկնաբանության հիշատակված բոլոր եղանակները կիրառելու միջոցով՝ մեկնաբանությունն իրականացնելով գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում, հաշվի առնելով, այսպես կոչված, «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը և իր գործունեությունն իրականացնելով դրա համատեքստում: Այլ կերպ ասած՝ սահմանադրական դատարանը չի ստեղծում գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, չի վերացնում դրանք, այլ մեկնաբանության հիշատակված եղանակների միջոցով սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտում և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր է հանում սահմանադրական գործող կարգավորումներից:*

Այդ հանգամանքի և սահմանադրական կարգավորումները փոփոխող նոր կարգավորում ստեղծելու տարբերություններն առավել հստակ մատնանշելու համար հարկ ենք համարում դրանք վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի պրակտիկայի համատեքստում: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 փետրվարի 2011թ. ՍԴՈ-934 որոշմամբ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» արտահայտության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ արձանագրեց, որ քրեադատավարական առումով ՀՀ օրենսդրությունը չի հստակեցրել «ՀՀ գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» հասկացությունը: Հետևաբար, վերջինս չի կարող մեկնա-

բանվել ճյուղային-իրավական մեթոդաբանության կիրառման հիման վրա, և անհրաժեշտ է այն մեկնաբանել դրա սահմանադրական նշանակությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների շրջանակներում: Դատարանն ընդգծեց, որ կոնկրետ դատական սահմանադրական վերահսկողության ձևի կիրառման շրջանակներում ՀՀ Սահմանադրությունը ՀՀ սահմանադրական դատարանն ղեկավարելու ճանաչելով ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին հերթին հաշվի է առել Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը»: Ուստի սահմանադրաիրավական առումով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը համարժեք է «ՀՀ դատախազության վարույթ» հասկացությանը: «Իր վարույթ» հասկացության առնչությամբ սահմանադրական դատարանը նշեց, որ գործող օրենսդրության համաձայն մինչդատական վարույթն իրականացնում են հետաքննության և նախաքննության մարմինները, իսկ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Դատական քննության փուլում վարույթն իրականացնում է դատարանը, իսկ դատախազությունը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքի հիման վրա դատախազն այլևս նախաքննություն իրականացնելու իրավասություն չունի, ուստի այս իմաստով չի կարող որևէ գործ իր վարույթ ընդունել կամ իրականացնել: Եթե ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունն ընկալվի զուտ դրա քրեադատավարական իմաստով, ապա կստացվի, որ ՀՀ գլխավոր դատախազի այս լիազո-

րության իրականացումը դառնում է անհնարին, քանի որ այդ լիազորության իրականացման համար ՀՀ գլխավոր դատախազը տվյալ գործը պետք է ընդունի իր վարույթ և հանդես գա որպես վարույթն իրականացնող մարմին, որի իրավասությունը չունի: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել այդ հասկացության սահմանադրաիրավական նշանակությունը՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում նախատեսված ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունից: Դատարանն ընդգծեց, որ «իր վարույթ» հասկացության առավել լայն մեկնաբանությունը ենթադրում է, որ վերջինս վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տվյալ փուլում այդ գործով վերջնական իրավական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված է հենց այդ մարմինը: ՀՀ Սահմանադրությունը ՀՀ գլխավոր դատախազին ճանաչելով որպես կոնկրետ վերահսկողության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարան ղեկավարող սուբյեկտ՝ սահմանադրաիրավական իմաստով «կոնկրետ գործը» դիտարկում է դատախազության լիազորությունների իրականացում բոլոր այն դեպքերում, երբ այդ մարմինն իր սահմանադրական գործառույթների շրջանակներում իրավասու է կայացնելու վերջնական որոշում:

Հետևաբար, վերը նշված գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը, կիրառելով մեկնաբանության հիշատակված եղանակները, կոնկրետ սահմանադրական նորմին տվեց դրա տառացի նշանակությունից տարբերվող մեկնաբանություն: Սակայն դրանով դատարանը ոչ թե ստեղծեց գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ նորմի բովանդակությունը բացահայտեց և առաջացավ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վերհանեց դրանց շրջանակներում: Այլ կլինեիր իրավիճակն այն դեպքում, երբ սահ-

մանադրական դատարանն ամրագրեր հիշատակված դիրքորոշումը, սակայն այդ եզրահանգումը չբխեր սահմանադրական այլ նորմերի համադրված վերլուծությունից և հիմնախնդրին առնչվող կարգավորումների տրամաբանությունից: Տվյալ պարագայում խոսք կգնար ոչ թե սահմանադրական նորմի մեկնաբանության, այլ գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու մասին: Ուստի, հենց վերը նշված հանգամանքն է անհրաժեշտ հաշվի առնել քննարկվող հասկացությունների իմաստն ու դրանց գործողության շրջանակները վերլուծելու ու տարբերակելու ընթացքում<sup>206</sup>:

<sup>206</sup> Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ կան որոշ սահմանադրական դատարաններ, որոնք սահմանադրական նորմերը մեկնաբանելիս առանձին դեպքերում ստեղծում են գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում: Օրինակ՝ ՌԴ Սահմանադրական դատարանը ՌԴ Սահմանադրության 137 հոդվածի 2-րդ մասի մեկնաբանության գործով նշեց, որ հանրապետության, մարզի, երկրամասի, ֆեդերալ նշանակության քաղաքի, ինքնավար մարզի, ինքնավար շրջանի անվանումների փոփոխությունները ՌԴ Սահմանադրության 137 հոդվածի 2-րդ մասին համապատասխան ընդգրկվում են ՌԴ Սահմանադրության 65 հոդվածում **ՌԴ Նախագահի կարգադրությամբ**՝ սահմանված կարգով ընդունված ՌԴ սուբյեկտի որոշման հիման վրա (տե՛ս ՌԴ Սահմանադրական դատարանի 28 նոյեմբերի 1995թ. որոշումը ՌԴ Սահմանադրության 137 հոդվածի 2-րդ մասի մեկնաբանության գործով (<http://www.constitution.ru/decisions/10005627/10005627.htm>): Մինչդեռ հարկ է նկատել, որ թեև հիշյալ սահմանադրական դրույթը չի նախատեսում, թե որ սուբյեկտը և ինչպես է ընդգրկում քննարկվող փոփոխությունը ՌԴ Սահմանադրության 65 հոդվածում, սակայն Սահմանադրության 136 հոդվածը սահմանում է, որ ՌԴ Սահմանադրության 3-8-րդ գլխիների (որոնց շրջանակներում ընդգրկված է նաև 65 հոդվածը) փոփոխություններն ընդունվում են ֆեդերալ սահմանադրական օրենքի ընդունման համար նախատեսված կարգով և ուժի մեջ են մտնում ՌԴ սուբյեկտների ոչ պակաս, քան երկու երրորդի օրենսդիր մարմինների կողմից հաստատվելուց հետո, այսինքն՝ բոլորովին այլ կարգ է ամրագրում հիշյալ սահմանադրական նորմերում փոփոխություններ կատարելու համար: Ավելին, ՌԴ Սահմանադրությունը, ամրագրելով ՌԴ Նախագահի լիազորությունները համապատասխան բնագավառներում, չի նախատեսում մանատիպ լիազորություն: Հետևաբար, կարծում ենք, որ վերը նշված սահմանադրական նորմը մեկնաբանելիս ՌԴ Սահմանադրական դատարանը, ըստ էության, ստեղծել է գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Տահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանությունն ու վերջինիս շրջանակներում «տղջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանումը ենթադրում են սահմանադրական նորմի բովանդակության բացահայտումն ու առաջացած սահմանադրական հիմնախնդրի լուծման վերհանումը գոյություն ունեցող սահմանադրական կարգավորումներից»<sup>207</sup>, և այդ ընթացքում մեկնաբանության եղանակների ոչ թե մեկուսացած, այլ փոխհամաձայնեցված օգտագործում»<sup>208</sup>: Ընդ որում՝ պարտադիր չէ, որ Սահմանադրության մեկնաբանությունը լինի տառացի: Այն կարող է լինել նաև տարածական<sup>209</sup> կամ սահմանափակ<sup>210</sup>: Սակայն բոլոր դեպքերում այդ մեկնաբանությամբ

<sup>207</sup> Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ մեկնաբանությունը ավարտվում է այնտեղ, որտեղ այն դուրս է գալիս Սահմանադրության բովանդակության հնարավոր նշանակության շրջանակներից (տե՛ս M. Constitutional Interpretation (in Continental Europe) ([http://ivr-enc.info/index.php?title=Constitutional\\_Interpretation\\_%28in\\_Continental\\_Europe%29%29](http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29%29)):

<sup>208</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Ըվեյցարիայի Գաշնային Գերագույն դատարանի պրակտիկան, որը կիրառում է «մեկնաբանության մեթոդների պլյուրալիզմ» և «դրանք չի դասակարգում որոշակի հիերարխիկ համակարգում՝ ըստ կարևորության աստիճանի» (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 313):

<sup>209</sup> Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «գլխավոր դատախազի վարությամբ գտնվող կոնկրետ գործ» արտահայտության հիշատակված մեկնաբանությունը:

<sup>210</sup> Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 մայիսի 2010թ. ՍԳՌ-881 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով ամրագրված օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքին տվեց սահմանափակ մեկնաբանություն՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ վերջինս ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.) (տե՛ս [www.concourt.am](http://www.concourt.am)):

յունը պետք է լինի այնպիսին, որ վերջինիս շրջանակներում ապահովվի ՀՀ Սահմանադրության կայունությունը, զարգացումը, գերակայությունն ու անմիջական գործողությունը՝ որպես ելակետ ունենալով այն հանգամանքը, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, և հիմք ընդունելով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը»<sup>211</sup>:

<sup>211</sup> Տվյալ պարագայում հարկ ենք համարում անդրադառնալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ «Իրավական ակտերի մեկնաբանումը և պարզաբանումը» վերտառությամբ 11 գլխին: Թեև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի համաձայն՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրությունը նույնպես ընդգրկվում է հիշյալ օրենքով սահմանված իրավական ակտերի համակարգում, և օրենքի համապատասխան կարգավորումները կարող են օգտակար լինել նաև Սահմանադրության մեկնաբանության համար, տվյալ պարագայում կանոնադաշտնանք նաև հիշատակված օրենքով ամրագրված կարգավորումներին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: Հետևաբար, օրենքը որպես մեկնաբանության հիմնական ու միակ եղանակ ամրագրել է լեզվական մեկնաբանությունը: Մինչդեռ, ինչպես արդեն վերլուծեցինք հիշյալ պարագրաֆի շրջանակներում, վերջինս իրավական ակտերի, մասնավորապես տվյալ պարագայում Սահմանադրության մեկնաբանության միակ եղանակը չէ: Ավելին, սոսկ լեզվական ու տառացի մեկնաբանության կիրառումը կարող է անարդյունավետ դարձնել մեկնաբանման ամբողջ գործընթացն ու դրա միջոցով Սահմանադրության գերակայության, անմիջական գործողության, կայունության ու զարգացման ապահովումը: Հետևաբար, կարծում ենք, որ օրենքը հիշյալ կարգավորումն ամրագրելիս հաշվի չի առել տեսության և պրակտիկայի կողմից մշակված մեկնաբանման բազմապիսի կանոնները՝ արդյունքում անարդյունավետ կարգավորում նախատեսելով իրավական ակտերի, մասնավորապես տվյալ պարագայում Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ:



**§ 2. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը՝ որպես հայ սահմանադրականության ամրապնդման երաշխիք**

Հայտնի է, որ իրավունքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ երևույթ է, և իրական է համարվում սուկ այն դեպքում, երբ փաստացիորեն իրականացնում է հասարակական միջավայրի ձևավորման ու զարգացման իր առաքելությունը, այլ կերպ ասած՝ իրացվում է հասարակական կյանքում: Այդ առումով բացառություն չէ նաև սահմանադրական դատարանի գործունեության արդյունքում ձևավորվող իրավունքը, որը կյանքի կոչելու հանգամանքը բացառիկ կարևորություն ունի ՀՀ Սահմանադրության կայունության ու զարգացման ապահովման, այդպիսով նաև՝ հայ սահմանադրականության ամրապնդման գործում:

Հատկանշական է, որ սահմանադրական դատարանի որոշումներին առնչվող հիշյալ հիմնախնդիրների մատնանշման նպատակով իրավաբանական գրականության և օրենսդրության մեջ ավանդաբար օգտագործվում է «կատարում» հասկացությունը<sup>212</sup>, չնայած վերջինս հանդիսանում է «իրավունքի իրացում» ընդհանրական ինստիտուտի սուկ մեկ տարատեսակը<sup>213</sup>: Հետևաբար, քննարկվող համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ

<sup>212</sup> Տե՛ս, օրինակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66 հոդվածը, «ՌԴ՝ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 81 հոդվածը, «Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 10 հոդվածը, Մակեդոնիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կանոնակարգի 86 հոդվածը, «Ուկրաինայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 70 հոդվածը, Walter S. The Execution of the Decisions of the Federal Constitutional Court of Germany // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(10)2000, էջ 24:

<sup>213</sup> Իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված է իրավունքի իրացման դասակարգումը հետևյալ տարատեսակների՝ պահպանում, օգտագործում, կատարում, կիրառում (տե՛ս Մարչենկո Մ. Ն. Теория государства и права. М., 2008, էջ 605, Актуальные проблемы теории государства и права / Отв. ред. Шагиева Р. В. М., 2011, էջ 419):

ենք համարում հստակեցնել այն, թե արդյոք «սահմանադրական դատարանի որոշումների կատարում» ձևակերպումն օգտագործվում է իրավունքի իրացման սուկ հիշյալ տարատեսակի առումով, թե վերջինիս շրջանակներում ընդգրկվում են նաև նշված ինստիտուտի դրսևորման այլ ձևերին առնչվող հիմնախնդիրները:

Տեսության մեջ իրավունքի կատարումը դիտարկվում է որպես պարտավորեցնող նորմերի իրացում, իրավունքի սուբյեկտի կողմից իր վրա դրված պարտականությունների իրականացում, և ընդգրկում է սուբյեկտի սուկ ակտիվ գործողությունները<sup>214</sup>: Այնհայտ է, որ սահմանադրական արդարադատության զարգացման արդի փուլում ՄԳ՝ որոշումների կյանքի կոչմանն առնչվող հիմնախնդիրները չեն սահմանափակվում հիշյալ շրջանակներով և ընդգրկում են իրավունքի իրացման նաև այլ տարատեսակներին առնչվող հարցադրումներ, որոնք Սահմանադրության կայունությունն ապահովելու տեսանկյունից ունեն բացառիկ կարևորություն: Օրինակ՝ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշման պարագայում վերջինիս կատարումը ենթադրում է ոչ միայն ակտիվ գործողություններ, այլ նաև հիշյալ դրույթներն իրավակիրառական պրակտիկայում այլ մեկնաբանությամբ իրացնելուց ձեռնպահ մնալու անհրաժեշտություն, որը տեսության մեջ ընդգրկվում է իրավունքի իրացման՝ «պահպանում» անվանումն ունեցող տարատեսակի շրջանակներում<sup>215</sup>: Այդ է պատճառը, որ քննարկվող հիմնախնդիրներին անդրադառնալիս որոշ հեղինակներ օգտագործում են սահմանադրական դատարանի որոշումների ոչ թե «կատարում»,

<sup>214</sup> Տե՛ս Մարչենկո Մ. Ն., նշված աշխատությունը, էջ 606, Актуальные проблемы теории государства и права / Отв. ред. Шагиева Р. В. М., 2011, էջ 419, <http://dic.academic.ru/dic.nsf/lower/17858>:

<sup>215</sup> Տե՛ս Теория государства и права: Академический курс в 2-х томах, Том 2 / Отв. ред. Марченко М. Н. М., 1998, էջ 314:

այլ «իրացում» հասկացությունը<sup>216</sup>: Առանձին պետություններում նույնիսկ օրենսդրական մակարդակով են տարբերակվում հիշյալ որոշումների կատարումն ու իրացման այլ տարատեսակները<sup>217</sup>:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ աշխատանքի շրջանակներում «սահմանադրական դատարանի որոշումների կատարում» ձևակերպումն օգտագործում ենք որպես պայմանական, ընդհանրական հասկացություն, որը համարժեք չէ տեսության մեջ առկա իրավունքի կատարման ինստիտուտին և ընդգրկում է նաև իրավունքի իրացման այլ տարատեսակներին առնչվող հարցադրումներ<sup>218</sup>: Հենց վերջիններիս համար համապատասխան լուծումներ

<sup>216</sup> St'u Лазарев Л. В. Правовые позиции Конституционного суда России. М. 2003, էջ 86, Климович Е. Механизм реализации решений Конституционного Суда Российской Федерации (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Челябинск, 2004, <http://www.dissertat.com/content/mekhanizm-realizatsii-reshenii-konstitutsionnogo-suda-rossiiskoi-federatsii>: Ռ-Չ Սահմանադրական դատարանի դատավոր Հաջինս այդ առումով նույնիսկ ընդգծել է, որ օրենքում օգտագործվող «դատարանի որոշման կատարում» հասկացությունը սխալ է, և առավել հստակ է «որոշման իրացում» ձևակերպումը (տե՛ս [council.gov.ru/kom\\_home/c\\_lawmonitoring/ files/.../file\\_338.doc](http://www.council.gov.ru/kom_home/c_lawmonitoring/files/.../file_338.doc)):

<sup>217</sup> Օրինակ՝ Խորվաթիայի Հանրապետությունում, Բոսնիայում և Հերցեգովինայում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար օրենսդրությունը նախատեսում է սահմանադրական դատարանի որոշումները պահպանելու, մինչդեռ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ կատարելու պարտականություն (տե՛ս «Խորվաթիայի Հանրապետության սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 31 հոդվածը ([http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni\\_zakon\\_o\\_ustavnom\\_sudu&m1=27&m2=49&Lang=cn](http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni_zakon_o_ustavnom_sudu&m1=27&m2=49&Lang=cn)), Բոսնիայի և Հերցեգովինայի սահմանադրական դատարանի կանոնակարգի 74 հոդվածը (<http://www.ccbh.ba/public/down/rules.pdf>):

<sup>218</sup> Գերմանական սահմանադրական դոկտրինի շրջանակներում նույնպես ընդունված է այն տեսակետը, որ «Դ-աշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 35 հոդվածի տեսանկյունից կատարման են ենթակա ոչ միայն այն որոշումները, որոնք կողմերին պարտավորեցնում են կատարել կամ ձեռնպահ մնալ որևէ գործողության կատարումից, այլ նաև, այսպես կոչված, «դեկլարատորային որոշումները»: Տվյալ պարագայում «կատարում» հասկացությունը «մարմնավորում է Դ-աշնային Սահմանադրական դատարանի կողմից սահմանվող իրավունքի իրացման համար անհրաժեշտ բոլոր եղանակները» (տե՛ս CDL-JU(2009)001, Reflections on the Execution of Constitutional Court Decisions in a Democratic State under the Rule of Law on the Basis of the Constitutional Law Situation in the Federal Republic of Germany // Report by Siegfried Bross, Strasbourg, 27 January 2009, <http://www.venice.coe.int/docs/2009/CDL-JU%282009%29001-c.pdf>):

գտնելու հանգամանքով է պայմանավորված Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու պատշաճ համակարգի ձևավորումը, ինչը ենթադրում է քննարկվող հիմնախնդիրների՝ մատնանշված համատեքստում ուսումնասիրության անհրաժեշտություն:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ աշխատանքի հիմքում դրված այդ տրամաբանության շրջանակներում ընդունելի չէ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ կատարման ենթակա են սահմանադրական դատարանի սուկ այն որոշումները, որոնցով նախատեսվում է որոշակի ակտիվ գործողություններ իրացնելու պարտավորություն<sup>219</sup>, և սահմանադրական դատարանի որոշումների կատարման ինստիտուտը վեր ենք լուծում վերջինիս նաև այլ բնույթ ունեցող որոշումների համատեքստում:

Այդ առումով հատկանշական է, որ թեև տեսության մեջ առավել հաճախ շեշտադրվում են իրավական ակտը Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ որոշումների կատարման հիմնախնդիրները, սակայն խնդրահարույց հարցեր են առկա սահմանադրական դատարանի նաև այլ որոշումների կատարման բնագավառում: Պատճառն այն է, որ սահմանադրագիտության զարգացման արդի փուլում պարտադիր են դիտարկվում սահմանադրական դատարանի որոշումների ոչ միայն եզրափակիչ, այլ

<sup>219</sup> Օրինակ՝ Ավստրիայում «կատարում» հասկացությունն ունի հարկադիր կիրառման նշանակություն և վերաբերում է սուկ այն դեպքերին, երբ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ նախատեսում է որոշակի գործողություն կատարելու պարտականություն: Կատարումը բացառվում է, այսպես կոչված, «դեկլարատորային» կամ պարզապես «իրավասահմանող» որոշումների դեպքում (տե՛ս CDL-JU(2009)013, Effects and Execution of Constitutional Court Judgements // Report by Britta Wagner, Strasbourg, 6 July 2009, <http://www.venice.coe.int/docs/2009/CDL-JU%282009%29013-c.asp>): Նմանատիպ տեսակետ է արտահայտվել նաև Լատվիայի Սահմանադրական դատարանի որոշումների առնչությամբ (տե՛ս Կուտրիս Գ., Տալե Ա. Правовые последствия решений Конституционного суда в укреплении конституционного порядка: практика Конституционного суда Латвийской Республики // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 98):

նաև պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչը ենթադրում է վերջիններիս իրացման պատշաճ ու արդյունավետ կառուցակարգերի առկայություն: Հետևաբար, նշված հիմնախնդիրներին նույնպես հարկ ենք համարում անդրադառնալ աշխատանքի շրջանակներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավական ակտերի կատարումն ապահովելու տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեն ժամանակի մեջ վերջիններիս գործողության հիմնախնդիրները, և կատարվել կարող են սուսկ այն ակտերը, որոնք մտել են ուժի մեջ, ու որոնց գործողությունը սահմանված կարգով չի դադարել, սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքների վերլուծությունն իրականացնելիս առաջին հերթին կբացահայտենք դրանց ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերը:

ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այդ պահից սկսած՝ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են դառնում բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Հետևաբար, հիշյալ որոշումների կատարման արդյունավետ համակարգի ձևավորման տեսանկյունից բացառիկ կարևորություն է ձեռք բերում այն հիմնախնդրի բացահայտումը, թե որն է սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահը, և որ հանգամանքին է վերաբերում ՀՀ օրենսդրության վերը նշված ձևակերպումը՝ հիշյալ ակտը նիստում հրապարակելու<sup>20</sup> ն, թե<sup>21</sup> ՀՀ պաշտոնական տեղեկագրում և սահմանադրական դատարանի տեղեկագրում հրատարակելուն:

Հարկ է նկատել, որ թեև ՀՀ Սահմանադրության շրջանակներում ընդհանրապես չի հանդիպում «հրատարակում» ձևակերպումը, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում քննարկվող որոշումների առնչությամբ օգտագործվում են ինչպես «հրապարակում», այնպես էլ «հրատարակում» հասկացությունները: Ընդ որում՝ վերջինը հանդիպում է օրենքի սուսկ մեկ՝ 65 հոդվածում, որը սահմանում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները **հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սահմանադրական դատարանի տեղեկագրում**<sup>220</sup>: Օրենքի մյուս բոլոր դրույթներում, այդ թվում՝ 62 հոդվածի 7-րդ մասում, որը վերաբերում է սահմանադրական դատարանի անդամի կողմից ներկայացված **հատուկ կարծիքը դատարանի որոշման հետ սահմանադրական դատարանի տեղեկագրում հրապարակելուն**, ամրագրվել է «հրապարակում» հասկացությունը: Ընդգծենք նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում վերջինս օգտագործվում է գլխավորապես **դատարանի նիստում** որոշումը հրապարակելու հանգամանքը մատնանշելու համար<sup>221</sup>:

Զննարկվող հիմնախնդրի առնչությամբ դրույթներ է պարունակում նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6 գլուխը, որը թեև վերնագրված է «Իրավական ակտերը հրապարակելը և

<sup>220</sup> Նշենք, որ միջազգային սահմանադրական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում **հրատարակման** պահից: Օրինակ՝ Ավստրիայում, Խորվաթիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Լատվիայում, Սերբիայում, Թուրքիայում, Ալբանիայում, Ռումինիայում, Չեխիայում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities // General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, էջ 71 (<http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>)), Լիտվայում («Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 84 հոդված):

<sup>221</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 22, 59, 63, 72 հոդվածները:

դրանց ուժի մեջ մտնելը», սակայն հիշյալ հարաբերություններին վերաբերող նորմերի շրջանակներում օգտագործվում են ինչպես «հրապարակում», այնպես էլ «հրատարակում» հասկացությունները, ընդ որում՝ համանման հարաբերությունների կարգավորման նպատակով: Մասնավորապես, «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հրապարակելը և դրանց ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 50 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են պարտադիր պաշտոնական **հրապարակման**, հոդվածի հետագա շարադրանքում նույնպես օգտագործվում է «հրապարակում» հասկացությունը, մինչդեռ 4-րդ մասը նախատեսում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները **հրատարակման է** ուղարկում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը՝ դրանց ընդունման օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ, այլ իրավական ակտերին առնչվող համանման հարաբերությունները կարգավորելու նպատակով օրենքը չի դրսևորում միատեսակ մոտեցում և ամրագրում է ինչպես «հրապարակում», այնպես էլ «հրատարակում» հասկացությունները<sup>222</sup>: Տվյալ պարագայում հարկ ենք համարում հիշատակել նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ հիշյալ հոդվածով նախատեսված օրենքների և իրավական այլ ակտերի **պաշտոնական հրապարակման** օրը համարվում է դրանց ամբողջական տեքստը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» կամ «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում» առաջին անգամ **հրատարակման (լույսընծայման)** օրը: Հետևաբար, հիշյալ համատեքստում

<sup>222</sup> Օրինակ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 51 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ Նախագահի՝ հրապարակման ենթակա հրամանագրերը և կարգադրությունները **հրապարակման է** ուղարկում ՀՀ Նախագահը՝ դրանց ընդունման օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում, իսկ 52 հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ ՀՀ կառավարության՝ **հրապարակման** չուղարկված անհատական որոշումները կարող է **հրատարակել** իրավական ակտերը հրատարակող մարմինը:

«պաշտոնական հրապարակում» և «հրատարակում» ձևակերպումները իմաստային առումով համընկնում են:

Միևնույն ժամանակ, օրենսդրական կարգավորումների տրամաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ վերջիններիս շրջանակներում օգտագործվող «պաշտոնական հրապարակում», «հրապարակում» ու «հրատարակում» ձևակերպումները միշտ չէ, որ բովանդակային տեսանկյունից նույնական են, և ՀՀ օրենսդրության բնագավառում հետևողականություն չի դրսևորվել քննարկվող հասկացությունների ամրագրման առնչությամբ: Ակնհայտ է, որ, օրինակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերի հրապարակմանն առնչվող 57 հոդվածի 1-ին և 3-րդ մասերում օգտագործվող «հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները նույն իմաստն ունեն և վերաբերում են հիշյալ ակտերի լույսընծայմանը<sup>223</sup>: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ քննարկվող հիմնախնդրին առնչվող 140 հոդվածում ամրագրված «հրապարակում» հասկացությունը վերաբերում է **դատարանի նիստում դատական ակտի հրապարակմանը**, իսկ վերջինս, ինչպես ցույց է տալիս հիշյալ նորմերի վերլուծությունը, ուժի մեջ է մտնում մինչ **հրատարակումը՝ հրապարակման** պահից կամ դրանից մեկ ամիս հետո<sup>224</sup>: Տվյալ պարագայում հիշատակման է արժանի նաև քաղաքացիական դատավարության օրենսգր-

<sup>223</sup> «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ օրենքին կամ այլ իրավական ակտերին հակասող, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը պետք է **հրապարակվի** նույն կարգով, որով հրապարակվել է անվավեր ճանաչված իրավական ակտը, իսկ 3-րդ մասը սահմանում է, որ հիշյալ հոդվածով նախատեսված՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը **հրատարակման է** ուղարկում ակտերն ընդունած դատարանը՝ **դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում**:

<sup>224</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140 հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասեր:

քի 241<sup>2</sup> հոդվածը, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում **դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից**, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Հետևաբար, նշված ակտերի տեսանկյունից ակնհայտ է քննարկվող հասկացությունների իմաստային տարբերությունը:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդիրներին առնչվող օրենսդրական կարգավորումների հիմքում ընկած է «պաշտոնական հրապարակում» և «դատարանի նիստում հրապարակում» հասկացությունների բովանդակության տարբերական տրամաբանությունը, ընդ որում՝ այդ համատեքստում իրավական ակտերի պաշտոնական հրապարակումը նույնանում է վերջիններիս հրատարակմանը (լույսընծայմանը): Այլ հարց է, որ ՀՀ օրենսդրության բնագավառում միասնական մոտեցում չի դրսևորվել վերջիններիս ամրագրման առնչությամբ, և այդ ձևակերպումներն օգտագործվել են ոչ հետևողական եղանակով<sup>225</sup>: Հետևաբար, մեր կարծիքով, քննարկվող հասկացությունները մեկնաբանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել վերը նշված հանգամանքը և յուրաքանչյուր դեպքում վերջիններիս բովանդակությունը բացահայտել կոնկրետ օրենսդրական կարգավորումների տրամաբանության համատեքստում:

Այդ հանգամանքը վերաբերում է նաև սահմանադրական դատարանի որոշման հրապարակմանն առնչվող հիշատակված հիմնախնդրին: Ակնհայտ է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հրապարակելը և դրանց ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 50 հոդվածի 1-

<sup>225</sup> Քննարկվող հիմնախնդիրն առավել ակնհայտ է դառնում այն պատճառով, որ, ինչպես նշեցինք, ՀՀ Սահմանադրության շրջանակներում ընդհանրապես չի հանդիպում «հրատարակում» ձևակերպումը, և բոլոր համապատասխան կարգավորումները ներկայացվում են «հրապարակում» հասկացության միջոցով (տե՛ս ՀՀ Սահմանադրության 6, 55, 56, 62, 102, 107 հոդվածները):

ին, 3-րդ<sup>226</sup> և 4-րդ մասերում օգտագործվող համապատասխանաբար «պաշտոնական հրապարակում», «հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները նույն իմաստն ունեն և վերաբերում են քննարկվող որոշումների լույսընծայմանը: Մինչդեռ նույնը չի կարելի ասել հոդվածի 2-րդ մասի առնչությամբ, որը, ամրագրելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, հղում է կատարում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին, որի շրջանակներում նույնպես, ինչպես արդեն նշեցինք, հիշյալ հիմնախնդրի առնչությամբ չի դրսևորվել միասնական մոտեցում: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ չնայած վերը շարադրվածին, ակնհայտ է քննարկվող օրենսդրական կարգավորումների հիմքում դրված տրամաբանությունը, այն է՝ սահմանադրական դատարանի նիստում որոշման հրապարակումն ու պաշտոնական տեղեկագրում կամ սահմանադրական դատարանի տեղեկագրում վերջինիս լույսընծայումը հստակորեն տարբերակելու հանգամանքը<sup>227</sup>: Այդ մասին է վկայում նաև հիշյալ հիմնախնդրի առնչությամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում դրսևորված մոտեցումը, երբ «հրապարակում» հասկացությունն օգտագործվում է գլխավորապես **դատարանի նիստում** որոշումը հրապարակելու հանգամանքը մատնանշելու, իսկ «հրատարակում» ձևակերպումը՝ պաշտոնական տեղեկագրում կամ սահմա-

<sup>226</sup> «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ՀՀ օրենքները, ՀՀ Ազգային ժողովի որոշումները, ՀՀ Նախագահի հրամանագրերը, կարգադրությունները, ՀՀ կառավարության որոշումներն անվավեր ճանաչելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները պետք է հրապարակվեն այն կարգով, որով հրապարակվել են անվավեր ճանաչված ակտերը:

<sup>227</sup> Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել «Սահմանադրական դատարանի մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասը, որը հստակ տարբերակում է «դատարանի նիստում հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները՝ ամրագրելով, որ Վրաստանի սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում **դատարանի նիստում հրապարակման պահից** և պետք է **հրատարակվի** պաշտոնական տեղեկագրում տասնհինգ օրվա ընթացքում (տե՛ս [http://www.constcourt.ge/index.php?sec\\_id=101&lang\\_id=ENG](http://www.constcourt.ge/index.php?sec_id=101&lang_id=ENG)):

նադրական դատարանի տեղեկագրում վերջինիս լույսընծայման հանգամանքը ընդգծելու և այն այլ իրավիճակներից տարանջատելու համար: Ավելին, Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգում որպես հիշյալ որոշումների ուժի մեջ մտնելու ամսաթիվ է հիշատակվում դրանց ընդունման, հետևաբար՝ նաև դատարանի նիստում հրապարակման ամսաթիվը<sup>228</sup>: Ուստի, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ «սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահ» ձևակերպումը վերաբերում է վերջինս նիստում հրապարակելուն, և հենց այդ պահից էլ ուժի մեջ է մտնում Դատարանի որոշումը<sup>229</sup>: Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ իրավական որոշակիության սկզբունքի պահպանման տեսանկյունից նպատակահարմար կլիներ, որպեսզի ՀՀ օրենսդրության բնագավառում միասնական մոտեցում դրսևորվեր հիշյալ հասկացությունների սահմանման առնչությամբ, և դրանք ամրագրվեին հետևողական եղանակով<sup>230</sup>:

<sup>228</sup> Տե՛ս [www.arlis.am](http://www.arlis.am):

<sup>229</sup> Նշենք, որ մի շարք պետություններում նույնպես սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման կամ հրապարակման պահից, օրինակ՝ Բելառուսում, Էստոնիայում, Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania (<http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>)), Ռուսաստանի Դաշնությունում (բացառությամբ առանց դատական լուծման անցկացման գործերի քննության արդյունքում ընդունվող որոշումների) («ՌԴ՝ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 79 հոդված), Տաջիկստանում («Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 32 հոդված), Վազախստանում («Վազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի մասին» օրենքի 38 հոդված):

<sup>230</sup> Օրինակ՝ «ՌԴ՝ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքում հստակորեն տարբերակվում են «հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները համապատասխանաբար “публикация” և “опубликование” ձևակերպումների միջոցով, ընդ որում՝ առաջինը վերաբերում է դատարանի նիստում որոշումը հրապարակելուն, իսկ երկրորդը՝ պետական իշխանության մարմինների պաշտոնական տեղեկագրերում լույսընծայելուն (տե՛ս «ՌԴ՝ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային օրենքի 77 և 78 հոդվածներ (<http://www.ksrf.ru/Info/LegalBases/FCL/Documents/FCL.pdf>)):

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՄԳՌ-943 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում), ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև հակասահմանադրական ճանաչված ակտի իրավաբանական ուժը կորցնելը տարածամկետելու հնարավորություն<sup>231</sup>: ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը: Հարկ ենք համարում ընդգծել, որ վերը նշված դրույթի ամրագրումն ինքնանպատակ չէ և նպատակաուղղված է հիշյալ հետևանքները կանխելուն ուղղված միջոցառումների իրականացումն ապահովելուն: Այդ է պատճառը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասն ամրագրում է, որ հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի

<sup>231</sup> Հարկ է նկատել, որ հիշյալ պրակտիկան լայնորեն տարածված է միջազգային սահմանադրական արդարադատության շրջանակներում, այդ թվում՝ Ավստրիայում, Լեհաստանում, Լատվիայում, Թուրքիայում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Էստոնիայում, Սլովենիայում, Գերմանիայում, Խորվաթիայում, Չեխիայում, Վրաստանում, Ռուսաստանում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, <http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>):

այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի և ծանր հետևանքները հանրության և պետության համար, և ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին<sup>232</sup>: Այդ հանգամանքն ընդգծվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԳ-Ո-701 որոշմամբ, որի շրջանակներում Դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են հիշյալ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները<sup>233</sup>:

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանը հետաձգում է ոչ թե **որոշման ուժի մեջ մտնելը**, այլ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտի **իրավաբանական ուժը կորցնելը**: Հետևաբար, որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ուժի մեջ են մտնում որոշման հրապարակման պահից, որպիսի պայմաններում առավել ընդգծվում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության կայունության և զարգացման ապահովման բնագավառում ունեցած դերը: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ, անկախ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտի իրավաբանական ուժը կորցնելը տարածանկետելու հանգամանքից, սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պետք է պատշաճ ձևով իրացվեն որոշման հրապարակման պա-

<sup>232</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել այդ հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները կանխելու ուղղված միջոցառումները:

<sup>233</sup> Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2007/index.htm>:

հից: Ընդ որում՝ հիշատակված հանգամանքը վերաբերում է նաև հակասահմանադրական ճանաչված և տարածանկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը, որին, ինչպես արձանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշմամբ, չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարածանկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը<sup>234</sup>, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

Իսկ ինչ վերաբերում է քննարկվող պարագայում նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԳ-Ո-701 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, չի կարելի իրավաչափ համարել նմանատիպ իրավիճակներում համապատասխան դատական ակտի վերանայման պահանջի պարագայում վերանայման վարույթ հարուցելու պահանջը մերժելու և վերանայման վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու այն պատճառաբանությունը, որ սահմանադրական դատարանը, դատարանների կողմից կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով՝ տա-

<sup>234</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Լատվիայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ քանի դեռ վիճարկվող դրույթն ուժի մեջ է, այն պետք է կիրառվի՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի որոշմամբ ամրագրված սկզբունքները (տե՛ս CDL-JU(2008)028, Authority of the Constitutional Court as the Precondition of Execution of the Decisions // Report by Gunārs Kūtris, Strasbourg, 2 September 2008, <http://www.venice.coe.int/docs/2008/CDL-JU%282008%29028-e.pdf>, էջ 4):

րաժամկետել է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը, և բողոք բերող անձը նման պայմաններում չի ապացուցել և հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը:

Չնայած վերը շարադրվածին՝ ՀՀ դատական պրակտիկան զարգացել էր հակառակ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԳ-Ո-701 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների: Ավելին, երբ հիշատակված դեպքերում բողոքը ներկայացվում էր տարածամկետման ավարտից հետո, վերջինս այս պարագայում էլ վերադարձվում էր այն պատճառաբանությամբ, որ բաց է թողնված բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը: Այդ էր պատճառը, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15 հուլիսի 2011թ. ՍԳ-Ո-984 որոշմամբ կրկին անդրադարձավ քննարկվող հիմնախնդրին՝ արձանագրելով, որ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը տվյալ նորմը հակասահմանադրական ճանաչելով՝ տարածամկետել է այդ նորմի ուժը կորցնելը, սահմանադրական դատարանի 2007թ. մայիսի 11-ի ՍԳ-Ո-701 որոշմանը համապատասխան, տարածամկետման հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանք չդիտարկելու համար<sup>235</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ուժի մեջ մտնելու հետ կապված հիմնախնդիրները բացառիկ կարևորություն ունեն հիշյալ ակտերի պատշաճ կատարումն ապահովելու տեսանկյունից: Հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի դրանց համար ամրագրվող լուծումներն ու պրակտիկայում վերջիններիս իրացումը համապատասխան լինեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին:

Շարունակելով սահմանադրական դատարանի որոշումների կատարմանն առնչվող հիմնախնդիրների վերլուծությունը՝ նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվա-

<sup>235</sup> St'u <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>:

ծի 8-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը. 1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին. 1.1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին. 2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Ինչ վերաբերում է վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումներին, ապա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ վերջինս ընդունվելու դեպքում ակտն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ այդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով սահմանված դեպքերի: Այնչափ է, որ քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում որպես ընդհանուր կանոն է դիտարկվել այն, որ սահմանադրական դատարանի որոշումները չունեն հետադարձ ուժ և չեն տարածվում մինչ դրանց ընդունումը ծագած և դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Միևնույն ժամանակ, օրենքը նախատեսել է վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ տարբերակված մոտեցում դրսևորելով տարաբնույթ իրավական հարաբերություններին: Մասնավորապես, օրենքի 68 հոդվածի 12-րդ մասը, ամրագրելով, որ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության



կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ, սահմանադրական դատարանի հայեցողությանն է թողել իր որոշումներին հետադարձ ուժ տալու հարցը: Ինչ վերաբերում է հիշյալ որոշմամբ Մահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերին, ապա դրանք ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, օրենքի հիշյալ դրույթը որոշակի սահմաններ է նախատեսել սահմանադրական դատարանի այդ հայեցողության իրացման համար՝ դրանից օգտվելու հնարավորություն տալով սոսկ այն դեպքում, երբ իր որոշմանը հետադարձ ուժ չտալը հանրության կամ պետության համար կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Ավելին, սահմանադրական դատարանի նման որոշման հիման վրա վերանայման ենթակա են դրա ուժի մեջ մտնելուն նախորդող միայն երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը<sup>236</sup>:

Ինչ վերաբերում է քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի՝ Մահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթներին, ապա «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ դրանք իրավաբանական ուժը կորցնում են իրենց ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում՝ այդ դրույթների կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման: Այդ առումով ՀՀ սահմանադրական

<sup>236</sup> Այդ մասին տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 2008թ. ՄԳՈ-751 որոշումը:

դատարանն իր՝ 15 ապրիլի 2008թ. ՄԳՈ-751 որոշմամբ արձանագրել է, որ «Այս բացառությունը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետևանքների առկայությունը և դրանց վերացման իրական հնարավորությունը»<sup>237</sup>:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից ուշադրության է արժանի նաև «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասը, համաձայն որի՝ անհատական դիմումներին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերի, այդ թվում՝ դատական և վարչական ակտերի վերանայմանը վերաբերող վերը նշված կանոնները: Հարկ ենք համարում ընդգծել, որ հիշյալ կարգավորումը կարող է ծառայել իր նպատակին սոսկ այն դեպքում, երբ նախատեսված կանոնները կիրառվեն՝ հիմք ընդունելով վերացական և կոնկրետ վերահսկողության առանձնահատկությունները: Այդ առումով կարևոր է, որպեսզի անհատական դիմումների քննության արդյունքում դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Մահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում նրա

<sup>237</sup> Տվյալ պարագայում հիշատակման է արժանի ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 2008թ. ՄԳՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Ինչպես վիճարկվող դրույթում ամրագրված ընդհանուր կանոնի, այնպես էլ վերոհիշյալ բացառությունների հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը. սահմանադրական դատարանի որոշումներին հետադարձ ուժ կարող է տրվել այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է որոշակի կենսական շահերի պաշտպանության նպատակով, և երբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, քննության առնելով այդ կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, հիմնավորված և պատճառաբանված որոշում է կայացնում իր որոշմանը հետադարձ ուժ տալու մասին»:

նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վերանայման առնչությամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ, 12-րդ և 13-րդ մասերը իրացվեն օրենքի 69 հոդվածի 12-րդ<sup>238</sup> և 13-րդ<sup>239</sup> մասերի դրույթների համատեքստում: Մինչդեռ նշված նորմերի կիրառման առնչությամբ ձևավորվել էր այնպիսի իրավակիրառական պրակտիկա, որի պայմաններում օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի հիման վրա դատական ակտի վերանայումը, որպես կանոն, հնարավոր էր դիտվում միայն սահմանադրական դատարանի կողմից օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի ուժով իր որոշմանը հետադարձ ուժ տալու դեպքում, երբ այն տարածվում էր այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա: Անդրադառնալով հիշյալ հիմնախնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15 ապրիլի 2008թ. ՄԴՈ-751 որոշմամբ արձանագրեց, որ այս մեկնաբանությունը ոչ միայն անընդունելի է, այլ նաև անիմաստ է դարձնում սահմանադրական դատարանի միջոցով անձի խախտված իրավունքների պաշտպանության գաղափարը: Ընդգծվեց, որ սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ

<sup>238</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»:

<sup>239</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի 12-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարանի դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան»:

գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն և արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես ամփոփակողներն գործող իրավունքների, պաշտպանությանը: Մասնավորապես, օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը նախատեսում է դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով վերանայելու հնարավորությունը, ինչը թույլ է տալիս սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացրած անձին լիարժեքորեն իրացնելու իր իրավունքները և ապահովում է սահմանադրական դատարանում անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Արդյունքում Դատարանն արձանագրեց, որ եթե ձևավորված իրավակիրառական պրակտիկայի արդյունքում ընդհանուր իրավասության դատարանների կողմից շարունակվի նախապատվությունը տալ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին՝ անտեսելով 69 հոդվածի 12-րդ մասի պահանջը, ապա ընդհանրապես անիմաստ կդառնա սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ անհատական դիմումների քննության արդյունքում դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմա-

նադրությանը համապատասխանող ճանաչվելու դեպքերում նրա նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման առնչությամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ, 12-րդ և 13-րդ մասերը պետք է մեկնաբանվեն ու իրացվեն օրենքի 69 հոդվածի 12-րդ և 13-րդ մասերի դրույթների հետ համադրության մեջ:

Հարկ է նկատել, որ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ կիրառված դրույթների վրա հիմնված դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները բացառիկ կարևորություն ունեն հիշյալ մարմնի գործունեության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից: Ակնհայտ է, որ վերջինս կարող է երաշխավորված համարվել սոսկ այն դեպքում, երբ առկա է սահմանադրական արդարադատության միջոցով անձի խախտված իրավունքների պաշտպանության իրական հնարավորություն, և պատահական չէ, որ հենց այդ տրամաբանությունն է ընկած քննարկվող որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի հիմքում<sup>240</sup>: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15 ապրիլի 2008թ. ՄԳ-Ո-751 որոշմամբ կարևորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառությ-

<sup>240</sup> Այդ առումով հիշատակման է արժանի ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՄԳ-Ո-984 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ չնայած գործի նորոգման ինստիտուտը քրեական և քաղաքացիական վարույթներում ունի իր առանձնահատկությունները, այսուհանդերձ, դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը մեկ նպատակ է հետապնդում՝ **անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխավորում**: Իսկ խախտված իրավունքների վերականգնումը իր հերթին պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>):

յան կայունությունը, ինչպես նաև լիարժեք հնարավորություն կտանձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը: Ընդ որում՝ մեր կարծիքով, անձի իրավունքների խախտման առկայությունն ակնհայտ է ինչպես այն դեպքում, երբ դատական ակտի հիմքում դրվել է սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված ակտ, այնպես էլ այն իրավիճակում, երբ վերջինս նրա նկատմամբ կիրառվել է Սահմանադրությանը չհամապատասխանող մեկնաբանությամբ: Պատճառն այն է, որ վիճարկվող իրավանորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս սահմանադրական դատարանը մատնանշում է իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը: Ուստի, այդ շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող նորմը հանգեցնում է հակասահմանադրական հետևանքների և անձի իրավունքների խախտման: Իսկ դա իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ դատական ակտերի վերանայման հնարավորություն պետք է ապահովվի սահմանադրական դատարանի նաև այն որոշումների պարագայում, որոնցով վիճարկվող դրույթները ճանաչվում են Սահմանադրությանը համապատասխանող՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Այդ հանգամանքն արձանագրվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում<sup>241</sup>, որոնք հիմք ընդունելով՝ փոփոխություններ են կատարվել հիշյալ հիմնախնդրին առնչվող ՀՀ օրենսդրության բնագավառում: Մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ու լրացումների արդյունքում ամրագրվել է սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների ևս մեկ տարատեսակ, այն է՝ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկ-

<sup>241</sup> Օրինակ՝ ՄԳ-Ո-943, ՄԳ-Ո-984 և այլն:

վող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրափրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումը, որը դատավարական օրենսդրությամբ դիտարկվել է որպես նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման լիարժեք համակարգի ձևավորման տեսանկյունից ուշադրության է արժանի նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասով ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ: ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ վերը նշված օրենքի ընդունումից հետո սահմանադրական դատարանը սուկ սկզբնական ժամանակահատվածում ընդունած երկու որոշումների եզրափակիչ մասերում է արձանագրել այն հանգամանքը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից<sup>242</sup>: Տվյալ պարագայում հարց է առաջանում այն մասին, թե արդյոք սահմանադրական դատարանի այլ որոշումների պարագայում չկան անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտեր, կամ արդյոք վերջիններիս համապատասխան դրույթները չեն կորցնում իրենց իրավաբանական

<sup>242</sup> ՀՀ սահմանադրական դատարանի՝ 4 հոկտեմբերի 2006թ. ՍԳ-Ո-649 և 7 նոյեմբերի 2006թ. ՍԳ-Ո-664 որոշումներ:

ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից: Այլ կերպ ասած՝ կարելի<sup>օ</sup> է հիշյալ համատեքստում հանգել այն եզրակացության, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի նորմերը կիրառելի են սուկ վերը նշված որոշումների պարագայում: Այդ առումով հիշատակման է արժանի, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 10 փետրվարի 2010թ. ՍԳ-Ո-865 որոշումը, որով սահմանադրական դատարանը, Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 8 և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, արձանագրեց, որ ի կատարումն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 20 և 26-րդ հոդվածների, ՀՀ կառավարությունը 12.05.2005 թվականին ընդունել է «Կենսաթոշակ ստանալու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակ փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 930-Ն որոշումը, որը, ի թիվս այլոց, պետք է սահմաներ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը: Ակնհայտ է, որ կառավարության հիշյալ որոշումը նպատակաուղղված է եղել նաև օրենքի՝ անվավեր ճանաչված դրույթների կատարմանը: Հետևաբար, տվյալ պարագայում նույնպես առկա են անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի դրույթներ: Մինչդեռ, ի տարբերություն վերը նշված որոշումների, ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշման եզրափակիչ մասում չի արձանագրվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ

ակտերի կամ դրանց համապատասխան դրույթների՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքը:

Հաշվի առնելով այն, որ քննարկվող հիմնախնդիրն իր բնույթով բազմաբովանդակ է, վերջինիս ամբողջական վերլուծության նպատակով հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում ուշադրության արժանի մի քանի կարևոր հանգամանքների: Առաջին հերթին նշենք, որ անվավեր ճանաչված ակտերի կատարումն ապահովված նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կարող են նպատակաուղղված լինել ոչ միայն քննարկվող, այլ նաև այլ ակտերի կամ դրույթների կատարմանը: Հետևաբար, դրանց իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքի նկատմամբ մեխանիկական մոտեցումը կարող է հանգեցնել այլ իրավահարաբերությունների կարգավորման տեսանկյունից բացասական հետևանքների առաջացման: Ավելին, այն պայմաններում, երբ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման շրջանակներում չի մատնանշում անվավեր ճանաչված ակտի կատարումն ապահովված կոնկրետ իրավական ակտերը կամ դրանց առանձին դրույթները, որոնք ուժը կորցրած են ճանաչվում հիշյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից<sup>243</sup>, մեծանում է քննարկվող կարգավորումն իրացնելու առնչությամբ մեխանիկական մոտեցում դրսևորելու հավանականությունը, և լրջորեն վտանգվում է իրավական որոշակիության սկզբունքը: Բնականաբար, տվյալ պարագայում կասկածի տակ չենք դնում ՀՀ օրենսդրությամբ ամ-

<sup>243</sup> Այդ առումով հիշատակման է արժանի «Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի § 70 (3), համաձայն որի՝ եթե Սահմանադրական դատարանն անվավեր է ճանաչում օրենքը կամ դրա առանձին դրույթները, որոնց հիման վրա ընդունվել են դրանց կատարումն ապահովող ակտեր, Դատարանն իր որոշման մեջ նշում է, թե կատարումն ապահովված որ ակտերը կամ դրանց առանձին դրույթներն են ուժը կորցնում օրենքի հետ միաժամանակ:

րագրված հիշյալ տեխնիկայի<sup>244</sup> նպատակահարմարությունը՝ նկատի ունենալով, որ հակառակ իրավիճակը կարող է հանգեցնել սահմանադրական դատարանի անհարկի ծանրաբեռնվածության և սահմանադրական արդարադատության արդյունավետության նվազման: Առավել ևս այն պայմաններում, երբ անվավեր ճանաչված դրույթների կատարումը կարող է ապահովված լինել այնպիսի ակտերով, որոնք չեն հանդիսանում սահմանադրական արդարադատության օբյեկտ Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, կարծում ենք, որ անվավեր ճանաչված ակտերի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի դրույթների իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքի նկատմամբ չպետք է դրսևորվի մեխանիկական մոտեցում, և հիշյալ համատեքստում խոսք չի կարող լինել դրանց՝ իրավաբանական ուժը մեխանիկորեն կորցնելու մասին<sup>245</sup>:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ օրենքի հիշյալ նորմը նպատակաուղղված է քննարկվող դրույթների ուժը կորցնելու ժամանակային հիմնախնդիրների շեշտադրմանը և ոչ նշված իրավական ակտերի՝ իրավաբանական ուժը մեխանիկորեն կորցնելու հանգամանքին: Ավելին, հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը՝ կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջների վերարտադրման հիշատակված տեխնիկան նպատա-

<sup>244</sup> Երբ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման շրջանակներում չի մատնանշում անվավեր ճանաչված ակտի կատարումն ապահովված կոնկրետ իրավական ակտերը կամ դրանց առանձին դրույթները:

<sup>245</sup> Ընդ որում՝ այդ հանգամանքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի ինչպես այն որոշումներին, որոնց եզրափակիչ մասերում արձանագրվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի կամ դրանց համապատասխան դրույթների՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքը, այնպես էլ մյուս բոլոր որոշումներին:

կահարմար չէ, և քննարկվող օրենսդրական կարգավորման առկայությունն արդեն իսկ բավարար է այդ դրույթների գործողության համար: Հակառակ տրամաբանությունը կարող է հանգեցնել այն եզրակացության, որ սահմանադրական դատարանի որոշման շրջանակներում պետք է արձանագրվեն օրենքով նախատեսված՝ վերջինիս հետևանքներին առնչվող բոլոր կարգավորումները, ինչը, բնականաբար, իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից ողջամիտ լուծում չէ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը և քննարկվող հիմնախնդրի նկատմամբ մեխանիկական մոտեցումից զերծ մնալու կարևորությունը՝ կարծում ենք, որ հիշյալ համատեքստում առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի դրույթների գործողությունը դադարեցնելու բնագավառում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված դրա վերադաս մարմնի պարտականությունների առնչությամբ անհրաժեշտ կարգավորումների առկայությունը: Այդ առումով հիշատակման է արժանի «ՌԴ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 87 հոդվածը, համաձայն որի՝ դաշնային օրենքը, ՌԴ Նախագահի նորմատիվ հրամանագիրը, ՌԴ Կառավարության նորմատիվ ակտը, պայմանագիրը կամ դրանց առանձին դրույթները Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելը հիմք է հանդիսանում ամբողջությամբ կամ մասամբ հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտի կամ պայմանագրի կամ դրանք վերարտադրող կամ հակասահմանադրական ճանաչված դրույթներ պարունակող այլ նորմատիվ ակտերի կամ պայմանագրերի դրույթները սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչելու համար: Նմանատիպ դրույթներ է ամրագրում նաև «Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 9-րդ հոդվածը, համաձայն որի՝ նորմատիվ ակտը (կամ դրա առանձին դրույթները) Սահմանադրությանը կամ ավելի

բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին հակասող ճանաչելը հիմք է հանդիսանում այդ ակտի (կամ դրա առանձին դրույթների) վրա հիմնված կամ դրանք վերարտադրող կամ նմանատիպ դրույթներ պարունակող այլ նորմատիվ ակտերը սահմանված կարգով վերանայելու համար: Իսկ «Լիտվայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 72 հոդվածը նախատեսում է, որ բոլոր պետական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք պետք է անվավեր ճանաչեն հակասահմանադրական ճանաչված ակտի վրա հիմնված և իրենց կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերը կամ դրանց առանձին դրույթները: Կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի առնչությամբ արդյունավետ լուծումներ գտնելու ու դրանք պրակտիկայում իրացնելու տեսանկյունից հիշատակված կարգավորումները տալիս են ավելի գործնական ու իրատեսական հնարավորություն, ուստի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասում նպատակահարմար կլինեք ամրագրել նաև այն հանգամանքը, որ վիճարկվող ակտը կամ դրա առանձին դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելը հիմք է հանդիսանում դրանց կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները ներկայացված մարմինների կողմից ուժը կորցրած ճանաչելու համար:

Վերը շարադրվածի առումով կարևոր է և այն, որ հնարավոր են իրավիճակներ, երբ վիճարկվող ակտն ինքնին սահմանադրական լինի, սակայն վերջինիս կատարումն ապահովված նորմատիվ ակտն ընդունված լինի Սահմանադրությանը չհամապատասխանող մեկնաբանության արդյունքում: Հետևաբար, քննարկվող ակտերն ուժը կորցրած ճանաչելու հնարավորություն անհրաժեշտ է ամրագրել ոչ միայն վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքերում, այլ նաև այն իրավիճակներում, երբ դրանք Սահմանադրությանը համապատասխանող են ճանաչվում սահմանադ-

րական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ:

Ավելին, կարծում ենք, որ ՀՀ օրենսդրության մեջ այդ հանգամանքի կապակցությամբ ընդհանուր առմամբ չի դրսևորվել ամբողջական մոտեցում, ու թեև 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է որոշման հիշյալ տարատեսակը, որը դատավարական օրենսդրությամբ դիտարկվել է որպես նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք, սակայն դա անհրաժեշտ ուշադրության չի արժանացել քննարկվող կարգավորումներին առնչվող այլ դրույթների շրջանակներում: Մասնավորապես, չկատարված վարչական և դատական ակտերի կատարումը սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելուց հետո իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ անհապաղ դադարեցնելուն, սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը այն ընդունած մարմնի կողմից վերանայման ենթակա լինելուն կամ քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի դրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը վերանայման ենթակա լինելուն առնչվող նորմերը շարունակում են վերաբերել սուկ **վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված ակտերի** վրա հիմնված դատական և վարչական ակտերին: Մինչդեռ ակնհայտ է, որ գործող օրենսդրական կարգավորումների հիմքում ընկած է ՀՀ սահմանադրական դատարանի նաև հիշատակված որոշումների դեպքում քննարկվող ակտերի վերանայման հնարավորությունն ապահովելու տրամաբանությունը, քանզի միայն այդ պայմաններում կարող է երաշխավորվել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը: Հետևաբար, կարծում ենք, որ ՀՀ

օրենսդրության բնագավառում անհրաժեշտ է ամբողջական ու հետևողական մոտեցում դրսևորել նաև հիշյալ հիմնախնդրի կարգավորման առումով:

Անկասկած, վերոնշյալ բոլոր հանգամանքները բացառիկ կարևորություն ունեն սահմանադրական դատարանի որոշումների կատարման լիարժեք համակարգի ձևավորման համար: Միևնույն ժամանակ, տեսության մեջ և պրակտիկայում շարունակում է խնդրահարույց մնալ այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ է ունենալ որևէ կոնկրետ մարմին, որը կապահովի քննարկվող որոշումների կատարումը, և ինչպիսին պետք է լինի հիշյալ բնագավառում սահմանադրական դատարանի դերակատարությունը: Նշենք, որ բավական բազմազան է քննարկվող հիմնախնդրին առնչվող միջազգային սահմանադրական պրակտիկան: Երկրների մի մասում տարածում է գտել այն տեսակետը, որ սահմանադրական դատարանն օժտված չէ իր որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ և կոնկրետ դերակատարություն չունի հիշյալ բնագավառում<sup>246</sup>: Կան երկրներ, որտեղ Սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու իրավասությամբ են օժտված պետական, հիմնականում գործադիր իշխանության մարմինները: Օրինակ՝ «Ալբանիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության մասին» օրենքի 81 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովում է Նախարարների խորհուրդը՝ պետական կառավարման համապատասխան մարմինների միջոցով: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտության դեպքում իր որոշումների կատարումը կարող է հանձնարարել նաև այլ

<sup>246</sup> Օրինակ՝ Լատվիայում, Սլովակիայում, ինչը, սակայն, չի ենթադրում, որ Սահմանադրական դատարանը որևէ ազդեցություն չի կարող ունենալ իր որոշումների կատարման վրա (տե՛ս CDL-JU(2008)028, նշված փաստաթուղթը, Բրոստլ Ա., Կլուչկա Կ., Մազակ Կ. Конституционный Суд Словацкой Республики (Организация, процесс, доктрина). Кошице, 2001, էջ 101):

մարմինների<sup>247</sup>: Սլովակիայում, թեև որևէ դրույթ ամրագրված չէ քննարկվող ակտերի կատարման առնչությամբ, ընդունված է այն տեսակետը, որ վերջիններիս կատարումն ապահովում է դատախազությունը՝ իր իրավասություններին համապատասխան<sup>248</sup>: Իսկ Լատվիայի Հանրապետությունում Սահմանադրական դատարանի որոշումների կատարման համակարգումը արդարադատության նախարարության խնդիրներից է<sup>249</sup>: «Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 31 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումների և եզրակացությունների կատարումն ապահովում է Կառավարությունը՝ կառավարման կենտրոնական մարմինների միջոցով<sup>250</sup>:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ակնհայտ է, որ օրենսդրական հիշյալ կարգավորումը ենթադրում է ներկայացված բոլոր սուբյեկտների կողմից սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու պարտավորություն այնքանով, որքանով նրանց լիազորությունների շրջանակները կամ գործունեության կոնկրետ տեսակն առնչ-

<sup>247</sup> Տե՛ս <http://www.gjk.gov.al/>:

<sup>248</sup> Տե՛ս CDL-INF (2001) 9, Decisions of Constitutional Courts and Equivalent Bodies and Their Execution // Report adopted by the Venice Commission at its 46th plenary meeting (Venice, 9-10 March 2001), Strasbourg, 17 May 2001, <http://www.venice.coe.int/docs/2001/CDL-INF%282001%29009-e.pdf>:

<sup>249</sup> Տե՛ս CDL-JU(2008)028, նշված փաստաթուղթը:

<sup>250</sup> Տե՛ս [http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni\\_zakon\\_o\\_ustavnom\\_sudu&m1=27&m2=49&Lang=en](http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni_zakon_o_ustavnom_sudu&m1=27&m2=49&Lang=en):

վում են հիշյալ որոշումների կատարման որևէ ասպեկտին<sup>251</sup>: Այլ կերպ ասած՝ նրանք սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովում են իշխանությունների տարանջատման համատեքստում առկա «զսպումների ու հակակշիռների» համակարգի կողմից տրամադրվող փաստացի հնարավորությունների շնորհիվ: Ընդ որում՝ սահմանադրական դատարանի որոշումների բնույթն ու դրանց կատարման առանձնահատկություններն այնպիսին են, որ այդ շրջանակներից դուրս ներկայացված սուբյեկտները չեն կարող ունենալ որևէ լրացուցիչ իրավասություն, հետևաբար՝ նաև այլ մարմինների համեմատությամբ առավելություն<sup>252</sup>: Իսկ այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ հնարավոր չէ քննարկվող գործընթացն ապահովել որևէ հատուկ մարմնի, այդ թվում՝ գործադիր իշխանության մարմիններին մնանատիպ սուբյեկտ դիտարկելու միջոցով: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ***քննարկվող որոշումների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններով օժտված առանցքային մարմինը հենց սահմանադրական դատարանն է***<sup>253</sup>: Պատա-

<sup>251</sup> Օրինակ՝ պաշտպանության կողմից նոր օրենքի ընդունումը կամ դատարանների կողմից համապատասխան իրավական ակտի կիրառումը՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները հաշվի առնելով, կամ Հանրապետության Նախագահի կողմից այնպիսի օրենք չստորագրելը, որը նախկինում սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ ընդունվել է՝ առանց հաշվի առնելու սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

<sup>252</sup> Պատկերացնենք, օրինակ, որ արդարադատության նախարարությունն է սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովող հատուկ մարմինը: Հետաքրքիր է, թե վերջինս ինչպես պետք է իրականացնի հիշյալ գործառույթը, օրինակ, այն դեպքում, երբ պաշտպանությունը ընդունելիս կամ դատարանները գործի քննության ընթացքում հաշվի չառնեն սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Ավելին, այդ իրավիճակը ենթադրում է իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտման լուրջ վտանգ, քանզի տվյալ պարագայում անխուսափելի են միջամտությունները իշխանության այլ ճյուղերի, մասնավորապես, օրինակ, դատական իշխանության գործունեությանը:

<sup>253</sup> Իրավաբանական գրականության մեջ որպես դատական իշխանության անկախության սկզբունքի արտաքին դրսևորում է ներկայացվում այն հանգամանքը, որ վերջինս հնարավորություն ունի առանց որևէ արտաքին ճնշման կյանքի կոչել իր կողմից ընդունվող որոշումները (տե՛ս Марченко М. Н. Судебное правотворчество и судебское право. М., 2008, էջ 42):



հական չէ, որ միջազգային սահմանադրական արդարադատության շրջանակներում տարածում է գտնում այն պրակտիկան, երբ քննարկվող որոշումների կատարմանը հետևում ու կատարման ապահովման գործընթացը համակարգում է հենց սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը: Օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետությունում հիշյալ որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Սահմանադրական դատարանի ստորաբաժանումներից մեկը՝ Սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության բաժինը<sup>254</sup>: Բելառուսի Հանրապետությունում նույնպես վերահսկողական հիշյալ գործառույթը դրված է Սահմանադրական դատարանի քարտուղարության ստորաբաժանումներից մեկի վրա<sup>255</sup>: Մակեդոնիայի Հանրապետությունում, թեև որոշման կատարման պարտավորությունը կրում է անվավեր ճանաչված ակտն ընդունած մարմինը, իսկ սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ որոշումները՝ անվավեր ճանաչված անհատական ակտն ընդունած մարմինը կամ կազմակերպությունը, սակայն Սահմանադրական դատարանի կանոնակարգի 87 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը հետևում է իր որոշումների կատարմանը և անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել Կառավարությունից ապահովել դրանց կատարումը<sup>256</sup>: ՌԳ Սահմանադրական դատարանի աշխատակազմում նույնպես գործում է հիշյալ մարմնի պրակտիկայի վերլուծության ու ամփոփման բաժին, որն իրականացնում է Դատարանի որոշումների կատարման մոնիթորինգ

<sup>254</sup> St'e'u CDL-JU(2009)011, Practical Approaches to the Issue of Execution of the Decisions of the Constitutional Court of the Republic of Azerbaijan // Report by Raouf Guliyev, Strasbourg, 6 July 2009, էջ 3, <http://www.venice.coe.int/docs/2009/CDL-JU%282009%29011-e.pdf>:

<sup>255</sup> Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի կանոնակարգի 86 հոդված (տե՛ս <http://www.kc.gov.by/main.aspx?guid=9545>):

<sup>256</sup> St'e'u Naumovski B. Constitutional Judiciary in the Republic of Macedonia (Development, Competence, Experience, Challenges and Perspectives) // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, 3(53)2011, էջ 170:

և ապահովում է դրանց կատարման հարցերով իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց համագործակցությունը<sup>257</sup>: Իսկ մի շարք պետություններում համապատասխան մարմինները նույնիսկ պարտավոր են սահմանված ժամկետում սահմանադրական դատարանին տեղեկացնել նշված որոշումների կատարման նպատակով իրենց կողմից ձեռնարկված միջոցառումների մասին<sup>258</sup>: Զննարկվող համատեքստում հիշատակման է արժանի նաև Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը, որի իրավական դիրքորոշումներից մեկի համաձայն՝ «Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքը Սահմանադրական դատարանին օժտել է իր որոշումների կատարումն ապահովելու համար բոլոր անհրաժեշտ իրավասություններով<sup>259</sup>: Դա առաջին հերթին վերաբերում է այն հանգամանքին, որ հիշյալ օրենքի 35 հոդվածի համաձայն՝ վերջինս իր որոշմամբ կարող է սահմանել, թե ում կողմից այն պետք է կատարվի, իսկ առանձին դեպքերում կարող է սահմանել նաև որոշման կատարման եղանակը<sup>260</sup>: Նմանատիպ իրավասությամբ են օժտված նաև Ալբանիայի<sup>261</sup>, Խորվաթիայի<sup>262</sup>, Ուկրաինայի<sup>263</sup>, Իսպանիայի<sup>264</sup> սահմանադրական դատարանները:

<sup>257</sup> St'e'u <http://www.ksrf.ru/Info/Secretariat/Pages/default.aspx>:

<sup>258</sup> St'e'u, օրինակ, «Լազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի մասին» օրենքի 40 հոդվածը, «Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 47 հոդվածը, Բոսնիայի և Հերցեգովինայի Սահմանադրական դատարանի կանոնակարգի 74 հոդվածը:

<sup>259</sup> St'e'u CDL-JU(2009)001, նշված փաստաթուղթը:

<sup>260</sup> St'e'u <http://www.iuscomp.org/gla/statutes/BVerfGG.htm>:

<sup>261</sup> «Ալբանիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության մասին» օրենքի 81 հոդված (տե՛ս <http://www.gjk.gov.al/>):

<sup>262</sup> «Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 31 հոդված (տե՛ս [http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni\\_zakon\\_o\\_ustavnom\\_sudu&m1=27&m2=49&Lang=en](http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni_zakon_o_ustavnom_sudu&m1=27&m2=49&Lang=en)):

<sup>263</sup> «Ուկրաինայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 70 հոդված (տե՛ս <http://www.ccu.gov.ua/en/doccatalog/list?currDir=12118>):

<sup>264</sup> «Իսպանիայի Սահմանադրական դատարանի մասին» օրգանական օրենքի 92 հոդված (տե՛ս <http://www.tribunalconstitucional.es/en/tribunal/normasreguladoras/Lists/NormasRegPDF/LOTC-en.pdf>):

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չի ամրագրում նմանատիպ հնարավորություն: Սակայն ակնհայտ է, որ սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ նպատակաուղղված են որոշման կատարման եղանակը սահմանելուն: Այդպիսիք են, օրինակ, այն դիրքորոշումները, որոնք ամրագրում են, թե ինչպես պետք է մեկնաբանվի կամ կիրառվի կոնկրետ կարգավորումը<sup>265</sup> կամ ինչպիսի մեկնաբանությունից է անհրաժեշտ ձեռնպահ մնալ վերջինիս իրացման ընթացքում<sup>266</sup>, այն դիրքորոշումները, որոնցով Դատարանն իրավաստեղծ մարմնի ուշադրությունն է հրավիրում այս կամ այն կարգավորման՝ սահմա-

<sup>265</sup> Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14 հունիսի 2011թ. ՍԳՈ-975 որոշմամբ արձանագրեց, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամ քից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ:

<sup>266</sup> Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 8 փետրվարի 2011թ. ՍԳՈ-936 որոշմամբ արձանագրեց, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ վարույթի տեսակ (հատուկ վարույթ) չի կարող օրենքով մեկնաբանվել կամ կիրառվել այնպես, որ ամբողջովին իմաստագրվեն ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված անձի հիմնական իրավունքները կամ դրանց իրացման արգելք հանդիսանա: Իսկ 14 հունիսի 2011թ. ՍԳՈ-975 որոշմամբ Դատարանը նշեց. «Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը»:

նադրականության տեսանկյունից անհրաժեշտության կամ նպատակահարմարության վրա<sup>267</sup>:

<sup>267</sup> 25 նոյեմբերի 2008թ. ՍԳՈ-780 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում արձանագրեց, որ թեև օրենսդրի հայեցողությանն է թողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաբնիչ առյուծմասն հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդիրն իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության և այդ իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ: Քննարկվող համատեքստում հիշատակման է արժանի նաև 8 փետրվարի 2011թ. ՍԳՈ-936 որոշումը, որով Դատարանն իրավական դիրքորոշում արտահայտեց այն մասին, որ դատական ակտերի բողոքարկումը կարգավորելու ընթացակարգային վերոհիշյալ պայմանները նախատեսելու հիմքում պետք է ընդունվեն սկզբունքներ, որոնք կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ (1-ին մաս), 18-րդ և 19-րդ հոդվածների նորմատիվ պահանջները: Սահմանադրական դատարանը գտավ, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,
- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),
- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,
- դատական ակտերի վերանայումը (վերաբնիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է որոշումը կատարող սուբյեկտներին մատնանշելուն, նկատենք, որ իրավաբանական գրականության մեջ տարածված է այն տեսակետը, որ թեև Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի մասին ակտի 35 հոդվածի համաձայն՝ իր որոշմամբ Դատարանը կարող է սահմանել, թե ում կողմից այն պետք է կատարվի, սակայն այդ հանգամանքը հիշյալ մարմնի որոշումներում երբևէ կարևոր դերակատարություն չի ունեցել, քանզի Դատարանը գտնում է, որ նման դեպքում կխախտվի իշխանությունների տարանջատման սկզբունքը: Միայն Գերմանիայի կոմունիստական կուսակցության գործունեության արգելման հետ կապված գործով է Սահմանադրական դատարանը 1956թ. իր որոշման մեջ մատնանշել, թե ով պետք է կատարի որոշումը՝ դնելով այդ պարտավորությունը պետական նախարարների վրա<sup>268</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես հաճախ մատնանշում է այն սուբյեկտներին, որոնք կրում են վերջինիս իրավական դիրքորոշումները կատարելու այս կամ այն կոնկրետ պարտավորությունը<sup>269</sup>: Կարծում ենք, որ ինքնին այդ հանգամանքը ո-

<sup>268</sup> Տե՛ս Walter S., նշված աշխատությունը, էջ 33:

<sup>269</sup> Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 25 փետրվարի 2011թ. ՄԳ-Ո-943 որոշմամբ արձանագրել է, որ **ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները** պարտավոր են ըստ էության գործի քննության, ինչպես նաև դատական բողոքարկման շրջանակներում նորմատիվ իրավական ակտերը կիրառելիս հաշվի առնել դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները: 18 հոկտեմբերի 2006թ. ՄԳ-Ո-652 որոշմամբ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ քաղաքացու սահմանադրական իրավունքի չսպառնալիս պատճառով ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության խնդրով է պայմանավորված, այլ օրենսդրական նորմերի անհստակության և իրավակիրառական պրակտիկայի արդյունք է, նպատակահարմար է համարել տվյալ գործով իր որոշման պատճառաբանական մասի վրա հրավիրել **ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի ուշադրությունը՝ դիմող կողմի սահմանադրական իրավունքի օրենքով սահմանված կարգով իրացումն ապահովելու նպատակով**: 13 հոկտեմբերի 2009թ. ՄԳ-Ո-833 որոշմամբ սահմանադրական դատարանը, վերահաստատելով ՄԳ-Ո-758 որոշմամբ արտահայտած իր դիրքորոշումները, հաշվի առնելով Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների բովանդակությունը, դրանցով հետապնդվող հանրային-իրավական նպատակն ու կարևորությունը՝ կատարելագործելու մարդու իրավունքների պաշտպանության ներպետական իրավական համակարգը, նաև հաշ-

որոշումների կատարումն ապահովելու տեսանկյունից չունի վճռորոշ նշանակություն և ածանցյալ է դրանց կատարման եղանակի ու համապատասխան իրավական ակտերի առնչությամբ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների նշանակությունից, քանզի վերջիններս արդեն իսկ կանխորոշում են վերը նշված իրավասու մարմիններին, որոնց քննարկվող գործառույթներն ամրագրվում են ոչ թե սահմանադրական դատարանի որոշմամբ, այլ այլ իրավական ակտերով: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական դատարանի կողմից որոշումը կատարելու պարտավորություն կրող սուբյեկտին մատնանշելու հանգամանքը հանդիսանում է հիշյալ ակտերի ձևակերպման սուկ դատավարական առանձնահատկություն և քննարկվող մարմիններին ուղղորդելու տեսանկյունից կարող է ունենալ անհրաժեշտ դերակատարություն՝ **որոշման կատարման եղանակին առնչվող դիրքորոշումների համատեքստում**<sup>270</sup>:

վի առնելով Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական իրավահամակարգի կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004)3 հանձնարարականի դրույթները, նշել է, որ **ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է** նախատեսել օրենսդրական կարգավորման այնպիսի միջոցներ, որոնց առկայությամբ կերաշխավորվի ոչ միայն Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավահամակարգային բնույթի բարեփոխումների իրականացումը, այլև այն անձանց՝ Կոմիտեից հայտով երաշխավորված իրավունքների դատական կարգով արդյունավետ պաշտպանության ապահովումը, ովքեր Եվրոպական դատարանի կողմից համապատասխան վճռի կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդ իրավունքը Կոմիտեից հայտով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:

<sup>270</sup> Այդ է պատճառով, որ պետությունների մեծ մասում օրենսդրությամբ ամրագրված է որոշման կատարման սուկ եղանակը (որոշ դեպքերում նաև ժամկետները), և ոչ այն կատարող սուբյեկտներին Սահմանադրական դատարանի կողմից սահմանելու հնարավորություն (տե՛ս, օրինակ, «Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի մասին» օրենքի 40 հոդվածը, «Բոսնիայի և Հերցեգովինայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 74 հոդվածը, «Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 43 հոդվածը, «ՌԳ՝ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 75 հոդվածը, «Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 50 հոդվածը):

Սահմանադրական դատարանի որոշումների կատարման քննազավառում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի ունեցած առանցքային դերակատարության մասին են վկայում նաև քննարկվող ակտերի կատարման ու երկրում սահմանադրականության վիճակի ուսումնասիրության առնչությամբ Դատարանի կողմից հրապարակվող հաղորդումները<sup>271</sup>: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Այն ուղարկվում է պետական և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ: ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված տարեկան հաղորդումների<sup>272</sup> վերլուծությունը վկայում է, որ դրանք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն քննարկվող որոշումների ու դրանց կատարման վիճակի վերաբերյալ տեղեկատվական բնույթի փաստեր ներկայացնելու, այլ նաև այդ քննազավառում առկա հիմնախնդիրները բացահայտելու ու դրանց համապատասխան լուծումներ առաջարկելու առումով: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում հիշյալ հիմնահարցերին առնչվող նմանատիպ այլ ամբողջական

<sup>271</sup> Նմանատիպ ինստիտուտ գոյություն ունի, օրինակ, Բելառուսի Հանրապետությունում («Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի հոդված 44), Ղազախստանի Հանրապետությունում («Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի մասին» օրենքի հոդված 17), Սլովենիայի Հանրապետությունում (Սահմանադրական դատարանի Կանոնակարգի հոդված 23), Տաջիկստանի Հանրապետությունում («Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի հոդված 44), Խորվաթիայի Հանրապետությունում («Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի հոդված 104), Շվեյցարիայում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, էջ 44-45, <http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>):

<sup>272</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2011թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները, <http://concourt.am/armenian/report/index.htm>:

պաշտոնական ուսումնասիրություն: Հետևաբար հիշյալ հաղորդումները մեծապես կարևորվում են ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակը բարելավելու, այլ նաև ընդհանուր առմամբ պետության իրավական քաղաքականությունը կատարելագործելու ու սահմանադրականության զարգացմանը նպաստելու տեսանկյունից: Ակնհայտ է, որ սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումների ինստիտուտն ամրագրելու հիմքում ընկած է հիշյալ նպատակների իրականացման տրամաբանությունը, ինչը ենթադրում է, որ դրանցում արձանագրվող հանգամանքները պետք է արժանանան պատշաճ ուշադրության և չեն կարող մնալ անհետևանք<sup>273</sup>:

<sup>273</sup> Այդ հանգամանքի մասին է վկայում տարբեր պետություններում սահմանադրական դատարանների կողմից ներկայացվող առաջարկություններին առնչվող իրավակարգավորումների հիմքում ընկած տրամաբանությունը: Այդ առումով հիշատակման է արժանի Մոլդովայի օրինակը, որտեղ սահմանադրական արդարադատության իրականացմանն առնչվող հաղորդումները հաստատվում են **Սահմանադրական դատարանի որոշմամբ (համաձայն որի՝ դրանք հանդիսանում են վերջնական) և հրատարակվում են Մոլդովայի պաշտոնական տեղեկագրում** (տե՛ս Մոլդովայի Սահմանադրական դատարանի որոշումները՝ 1996-2004թթ. սահմանադրական դատավարություն իրականացնելու վերաբերյալ հաղորդումները հաստատելու մասին, <http://www.constcourt.md/ru/report/>): «Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 7 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանն իրավասու է առաջարկություններ ներկայացնելու Հանրապետության Նախագահին, Պառլամենտի պալատներին, Նախարարների խորհրդին, այլ պետական մարմիններին իրենց լիազորությունների շրջանակներում ընդգրկված գործող օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր նորմատիվ ակտեր ընդունելու անհրաժեշտության վերաբերյալ: Սահմանադրական դատարանը կարող է նաև պետական և այլ մարմիններին իր լիազորություններից բխող այլ առաջարկություններ ներկայացնել, որոնք քննարկվում են այդ մարմինների համար նախատեսված ժամկետներում և կարգով: «Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 47 հոդվածի համաձայն՝ Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների կոնկրետ խախտումներ հայտնաբերելու դեպքում դատարանն արձանագրում է այդ հանգամանքը՝ այն թույլ տված իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրելով բացահայտված խախտմանն ու դրա վերացման անհրաժեշտությանը, որի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պետք է սահմանված ժամկետում տեղեկացվի Սահմանադրական դատարանին: Շվեյցարիայում Դաշնային Գերագույն դատարանի՝ Պառլամենտին ներկայացվող տարեկան

Վերը շարադրվածն արդեն իսկ բավարար է փաստելու, որ սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններով օժտված առանցքային մարմինը հենց ինքը՝ սահմանադրական դատարանն է: Քննարկվող իրավահարաբերությունների այլ սուբյեկտները չեն կարող հանդես գալ նշված գործընթացն ապահովող հատուկ մարմնի դերում և սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու պարտավորություն ունեն այնքանով, որքանով նրանց լիազորությունների շրջանակները կամ գործունեության կոնկրետ տեսակն առնչվում են հիշյալ գործընթացի որևէ ասպեկտին: Հետևաբար, նպատակահարմար ենք համարում

---

հաղորդումն ընդգրկում է առանձին գլուխ, որի շրջանակներում արձանագրվում են օրենսդրությունում առկա հակասությունները կամ դաշնային նորմերի հակասահմանադրականության վերաբերյալ եզրահանգումները: Հաղորդումը քննարկվում է Պառլամենտի համապատասխան հանձնաժողովներում, որոնք կարող են ներկայացնել անհրաժեշտ օրենսդրական մախաձեռնություններ դաշնային նորմերը Սահմանադրությանը ներդաշնակեցնելու նպատակով (այդ մասին տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, էջ 44-45, <http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>): Քննարկվող հիմնախնդրի առումով հետաքրքիր է նաև Ղազախստանի Հանրապետության պրակտիկան: «Ղազախստանի Հանրապետությունում սահմանադրական օրինականության վիճակի վերաբերյալ» հաղորդումներում Սահմանադրական խորհուրդն ընդգծում է, որ սահմանադրական օրինականության հաստատման պայմաններից ու դրա վիճակի ցուցանիշներից մեկը Սահմանադրական խորհրդի որոշումների կատարումը և սահմանադրական վերահսկողության մարմնի՝ վերջնական որոշումներում ու տարեկան հաղորդումներում օրենսդրության ու իրավաստեղծ գործունեության կատարելագործման առնչությամբ ներկայացվող առաջարկությունների ժամանակին և ամբողջական իրացումն է: Միևնույն ժամանակ հաղորդումների եզրափակիչ հատվածում Խորհուրդը հանդգնում է արտահայտում, որ Ղազախստանի Հանրապետության պառլամենտը և սահմանադրական օրինականության պահպանման համար պատասխանատու այլ պետական մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում կձեռնարկեն հիշատակված թերությունների վերացման և սահմանադրականության սկզբունքների հաստատման համար բոլոր անհրաժեշտ միջոցառումները (տե՛ս, օրինակ, «Ղազախստանի Հանրապետությունում սահմանադրական օրինականության վիճակի վերաբերյալ» 2009, 2010, 2011թ. ընդունված հաղորդումները, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=5>):

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմում քննարկվող որոշումների կատարման վիճակի վերլուծության հարցերով զբաղվող առանձին կառուցվածքային ստորաբաժանման ձևավորումը, որը, մեր կարծիքով, կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում հիշյալ գործընթացի համակարգում իրականացնող հիմնական սուբյեկտը:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ, չնայած վերը շարադրված կազմակերպական կառուցակարգերի կարևորությանը, ***սահմանադրական դատարանի որոշումների կատարման պատշաճ համակարգի ձևավորումը առաջին հերթին պայմանավորված է հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի համապատասխան մակարդակով***, և հիշյալ բնագավառին առնչվող հիմնախնդիրների մեծամասնությունը պատճառ է այդ համատեքստում առկա թերությունների: Դա առավելապես վերաբերում է պետական մարմինների գործունեությանն ու փոխհարաբերություններին: Քննարկվող հիմնախնդիրներին առնչվող միջազգային պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու հիմնական բանալին ոչ թե հիշյալ նպատակի համար հատուկ մարմնի ստեղծումը կամ գործադիր իշխանության մարմիններին դրա համար անհրաժեշտ լիազորություններով օժտելն է, այլ պետական մարմինների համագործակցության, սահմանադրական դատարանի որոշումների կատարման պատրաստակամության համապատասխան մշակույթ ձևավորելը<sup>274</sup>: Իշխանությունների տարանջատ-

---

<sup>274</sup> Պատահական չէ, որ պետությունների մեծամասնությունում հենց այդ հանգամանքն է դիտարկվում որպես քննարկվող նպատակի ապահովման հիմնական գրավական, և ընդգծվում է, որ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը հիմնվում է ոչ թե ձևական կարգավորումների, այլ ձևավորված համապատասխան սահմանադրական պրակտիկայի ու քաղաքական մշակույթի վրա, որոնք ստեղծում են իրավական պետության գործառնության, և այդ առումով նաև սահմանադրական դատական պաշտպանության համար անհրաժեշտ միջավայր (տե՛ս Ненадич Б. Основные характеристики конституционного контроля в современной Сербии // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии,

ման սկզբունքն ինքնին ենթադրում է, որ, ունենալով իրավասությունների հստակ սահմանազատված շրջանակներ, պետական մարմիններն օժտված են մի շարք լիազորություններով, որոնք սերտորեն փոխկապված են միմյանց<sup>275</sup>: Բնական է, որ վերջիններս պետք է իրականացվեն այնպես, որպեսզի հարգանք դրսևորվի կոնկրետ բնագավառում այլ մարմինների ունեցած լիազորությունների, հետևաբար՝ նրանց հեղինակության նկատմամբ<sup>276</sup>: Դա վերաբերում է նաև սահմանադրական դատարանի

---

3(53)2011, էջ 96-97, Ляхтергандт О. Значение решений Федерального Конституционного Суда для правового порядка Германии // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 126-128, Twenty Years of the Hungarian Constitutional Court / edited by Paczolay P. Budapest, 2009, էջ 101-102): Զննարկվող հիմնախնդրի առումով հիշատակման է արժանի հատկապես Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի օրինակը, որի հաջողության գաղտնիքը համարվում է ոչ թե այն, որ վերջինս օժտված է լայն իրավասություններով, հետևաբար՝ նաև մեծ իշխանությամբ, այլ այն, որ հիշյալ մարմնի որոշումներն ընդունվում ու կատարվում են հասարակության, պետական մարմինների ու բաղադրարկների կողմից, ինչն էլ հանգեցնում է Դատարանի հեղինակության բարձրացմանը (տե՛ս Ляхтергандт О., նշված աշխատությունը, էջ 126):

<sup>275</sup> Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված այն տեսակետը, որ հենց պետական իշխանության տարանջատումն է տալիս նրանց միջև համագործակցության հնարավորություն (տե՛ս Пулбере Д. Соблюдение прав человека и контроль конституционности законов в общем и на примере Республики Молдова // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 70), և որ հիշյալ սկզբունքն անհրաժեշտ է ոչ թե իշխանության ճյուղերը միմյանցից վերջնականապես մեկուսացնելու, այլ նրանց փոխգործակցությունն ու համագործակցությունն ապահովելու համար (տե՛ս Кравец И. А. Российский конституционализм: проблемы становления, развития и осуществления. СПб., 2005, էջ 290):

<sup>276</sup> Այդ առումով հիշատակման է արժանի Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ սահմանադրական մարմինների գործունեության համակարգումը պահանջում է ... որպես նրանց անկախության երաշխիք, որպեսզի նրանք իրենց սահմանադրական գործունեությունը իրականացնելիս ներդաշնակ ձևով համագործակցեն միմյանց հետ և հրաժարվեն այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել այլ սահմանադրական մարմինների հեղինակությանը՝ այդպիսով վտանգելով ինքնին Սահմանադրությունը (տե՛ս Ляхтергандт О., նշված աշխատությունը, էջ 128): Ի վերջո, իշխանությունների տարանջատման սկզբունքի նպատակը ոչ միայն պետական իշխանության մարմինների փոխադարձ վերահսկող

որոշումների կատարման ապահովմանը և ենթադրում է այդ բնագավառում ընդգրկված բոլոր սուբյեկտների կողմից հարգանք հիշյալ մարմնի, նրա լիազորությունների, հետևաբար՝ նաև որոշումների նկատմամբ<sup>277</sup>: Այլ կերպ ասած՝ սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարման համակարգի ձևավորումը հնարավոր է սուկ քննարկվող սուբյեկտների (այդ թվում՝ սահմանադրական դատարանի) միջև փոխադարձ հարգանքի, համագործակցության<sup>278</sup> և նրանց կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանման պայմաններում<sup>279</sup>: Այդ առու-

---

ղությունն է, այլ առաջին հերթին հիմնախնդրների առավել ընդունելի և արդյունավետ լուծումներ գտնելը (տե՛ս Папир Х.-Ю. Конституционное правосудие как опора правового государства // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(42)2008, էջ 26): Տվյալ պարագայում հիշատակման է արժանի նաև Ռ-Դ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ իշխանությունների տարանջատումը ենթադրում է իրավական երաշխիքների, զսպումների ու հակակշիռների այնպիսի համակարգ, որը բացառում է իշխանության կենտրոնացումը դրանցից մեկի ձեռքերում, ապահովում է իշխանության բոլոր ճյուղերի ինքնուրույն և անկախ իրականացումն ու միաժամանակ՝ համագործակցությունը (տե՛ս Зорькин В. Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Ереван, 2(40)-3(41) 2008, էջ 28):

<sup>277</sup> Տվյալ պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել և այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանն իր հերթին որոշումների ընդունման ու կատարման ընթացքում պետք է պահպանի «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը, ինչի մասին արդեն խոսել ենք աշխատանքի շրջանակներում:

<sup>278</sup> Հունգարիայի սահմանադրական դատարանը բազմիցս նշել է, որ իրենց լիազորություններն իրականացնելիս իշխանության տարբեր ճյուղերը պետք է համագործակցեն և հարգեն դատավարական ու որոշումների կայացման ինքնավարության ոլորտների տարանջատումը: Պետական մարմինների պարտականությունն է իրենց սահմանադրական լիազորություններն իրականացնել բարեխղճորեն՝ համագործակցելով միմյանց հետ և փոխադարձաբար աջակցելով միմյանց խնդիրների իրականացմանը (տե՛ս Twenty Years of the Hungarian Constitutional Court / edited by Paczolay P. Budapest, 2009, էջ 101-102):

<sup>279</sup> Այդ առումով հիշատակման է արժանի «Սերբիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի» մասին օրենքի 108 հոդվածով ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ իր գործառույթներն իրականացնելիս Սահմանադրական դատարանը **համագործակցում է** պետական և այլ մարմինների ու կազմակերպությունների, գիտական և այլ ինստիտուտների, հիմնարկություններ-

մով կարևոր ենք համարում Ազգային ժողովում ՀՀ Սահմանադրությանն ամբողջությամբ կամ մասնակի հակասող և անվավեր ճանաչված ՀՀ օրենքներ կամ դրանցում պարունակվող դրույթներ, կամ օրենսդրության կատարելագործման խնդիրներ բովանդակող ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներից բխող՝ համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերի մշակման նպատակով աշխատանքային խմբի ստեղծումը<sup>280</sup>: 2011թ. ՀՀ արդարադատության նախարարությունում նույնպես ձևավորվեց հատուկ հանձնախումբ՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացումը երաշխավորելու նպատակով առաջարկություններ նախապատրաստելու համար:

րի ու այլ իրավաբանական անձանց հետ սահմանադրականության և օրինակա-  
նության ապահովման առումով հետաքրքրություն ներկայացնող հարցերի առն-  
չությամբ:

<sup>280</sup> Հարկ է նկատել, որ որոշ այլ պետություններում նույնպես ընտրվել է համա-  
գործակցության համանման տարբերակ: Այդ առումով հիշատակման է արժանի  
Լիտվայի օրինակը, որտեղ Սեյմի Կանոնակարգով առանձին գլուխ է նախա-  
տեսվել Սահմանադրական դատարանի ակտերի կատարման առնչությամբ:  
Սեյմում հիշյալ գործընթացի նկատմամբ վերահսկողության պատասխանատուն  
Սեյմի փոխնախագահներից մեկն է, իսկ Սահմանադրական դատարանի որոշ-  
մանը համապատասխան Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ Սեյմի  
կողմից ընդունված օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ  
ու լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծերի նախապատրաստումը կամ  
մնանատիպ նախագծեր նախապատրաստելու համար այլ հանձնաժողովներին  
առաջարկություններ ներկայացնելը իրավական հարցերի հանձնաժողովի  
խնդիրներից է: Մինևույն ժամանակ, ինչպես բխում է Կանոնակարգի 182<sup>2</sup> հոդ-  
վածի 2-րդ մասից, այդ նպատակով կարող է ստեղծվել նաև աշխատանքային  
խումբ (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public  
Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of  
European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, էջ 34,  
<http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>, Լիտվայի Հանրապետության Սեյ-  
մի Կանոնակարգի հոդված 67, գլուխ XXVIII<sup>1</sup>, [http://www3.lrs.lt/pls/inter3/  
dokpaieska.showdoc\\_e?p\\_id=389585](http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_e?p_id=389585)): Հիշատակման է արժանի նաև Բելգիայի օ-  
րինակը, որտեղ ստեղծվել է պաշտամենտական հանձնաժողով՝ Սահմանադրա-  
կան դատարանի որոշումների կատարման նպատակով օրենսդրական նախա-  
ձեռնություններ նախապատրաստելու և օրենսդրության զարգացումն ապահովե-  
լու համար (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other  
Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference  
of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, էջ 82,  
<http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>):

Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ քննարկվող հիմ-  
նախնդրի տեսանկյունից ուշադրության է արժանի նաև «Սահմա-  
նադրական դատարանի մասին» օրենքի 46 հոդվածի 5-րդ մասով  
նախատեսված՝ սահմանադրական դատարանում ՀՀ Նախագա-  
հի, Ազգային ժողովի, կառավարության, վճռաբեկ դատարանի,  
մարդու իրավունքների պաշտպանի և գլխավոր դատախազի  
պաշտոնական ներկայացուցիչների ինստիտուտը: ՀՀ սահմա-  
նադրական դատարանն իր որոշումների կատարման վիճակի վե-  
րաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս արձանագրել է,  
որ թեև վերջինս քիչ դեր չի կատարում սահմանադրական վե-  
րահսկողության համակարգում, սակայն մինևույն ժամանակ շա-  
րունակում է ձևական բնույթ կրել<sup>281</sup>: Այնուհետ է, որ քննարկվող  
ինստիտուտի նպատակը ոչ միայն սահմանադրական արդարա-  
դատության արդյունավետ իրականացմանը նպաստելն է՝ քննվող  
գործերի նյութերին ծանոթանալու, դատավարությանը մասնակ-  
ցելու, անհրաժեշտության դեպքում դատաքննության ընթացքում  
պարզաբանումներ տալու միջոցով, այլ նաև սահմանադրական  
դատարանի որոշումների կատարման պատշաճ համակարգի  
ձևավորումը՝ այդ բնագավառում համապատասխան մարմինների  
ունեցած իրավասությունների իրականացմանը նպաստելու եղա-  
նակով<sup>282</sup>: Հետևաբար, կարծում ենք, որ ճիշտ գործարկման պա-

<sup>281</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2009թթ. ընդունած որոշումների  
կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները, [http://concourt.am/  
armenian/report/index.htm](http://concourt.am/armenian/report/index.htm):

<sup>282</sup> Պատահական չէ, որ մի շարք պետություններում քննարկվող հիմնախնդրի  
տեսանկյունից հիշյալ ինստիտուտն ունի լուրջ դերակատարություն: Օրինակ՝  
«Ռ-Դ Սահմանադրական դատարանում Ռ-Դ Նախագահի լիազոր ներկայացուց-  
չի գործունեությունն ապահովելու մասին» Ռ-Դ Նախագահի 31 դեկտեմբերի  
1996թ. կարգադրության համաձայն՝ Ռ-Դ Սահմանադրական դատարանում Ռ-Դ  
Նախագահի ներկայացուցիչը նպաստում է Նախագահի՝ որպես Սահմանադ-  
րության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավո-  
րի գործունեությանը, ու ներկայացնում է Նախագահի շահերը Սահմանադրա-  
կան դատարանում: Վերջինս այդ նպատակով սահմանադրական դատավա-  
րության շրջանակներում ներկայացնում է Նախագահին «Ռ-Դ Սահմանադրա-  
կան դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքով նախատեսված

րագայում այն կարող է լուրջ դերակատարություն ունենալ սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու հարցում, և անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն ցուցաբերել այդ ինստիտուտի կայացմանը, այդ թվում՝ անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ ամրագրելու միջոցով:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ, չնայած վերը նշված մարմինների կայացումը որակական նոր աստիճան կդառնա սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու համակարգի տեսանկյունից, սակայն քննարկվող հիմնախնդրի լուծման արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե ձևավորվող մարմինների ու հիշյալ բնագավառում ընդգրկված սուբյեկտների մեծաքանակությամբ, այլ վերջիններիս կողմից իրենց գործառույթները պատշաճ իրականացնելու փաստացի մակարդակով: Հետևաբար, սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու համակարգի կայացման ընթացքում նպատակահարմար է առաջնորդվել ոչ թե անընդհատ նոր մարմիններ ստեղծելու, այլ գոյություն ունեցող մարմինների գործունեությունն արդյունավետ դարձնելու տրամաբանությամբ: Ընդ որում՝ այդ հանգամանքը պետք է ենթադրի նաև վերջիններիս միջև համագործակցության և գործառութային սահմանագատման առկայություն:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, ***չնայած ներկայացված կազմակերպական կառուցակարգերի կարևորությանը, սահմանադրական դատարանի որոշումների կատարման պատշաճ համակարգի ձևավորումը առաջին հերթին պայմանավորված***

---

բոլոր դեպքերում, համակարգում է կոնկրետ գործերով Սահմանադրական դատարանում ՌԳ՝ Նախագահի ներկայացուցիչներ նշանակված անձանց գործունեությունը, ***անհրաժեշտության դեպքում Նախագահին առաջարկություն է ներկայացնում Սահմանադրական դատարանի որոշման կատարումն ապահովելու համար միջոցառումներ ձեռնարկելու, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ կատարելու առնչությամբ*** և այլն (տե՛ս «ՌԳ՝ Սահմանադրական դատարանում ՌԳ՝ Նախագահի լիազոր ներկայացուցչի գործունեությունն ապահովելու մասին» ՌԳ՝ Նախագահի 31 դեկտեմբերի 1996թ. կարգադրությունը, [http://www.innovbusiness.ru/pravo/DocumShow\\_DocumID\\_47546.html](http://www.innovbusiness.ru/pravo/DocumShow_DocumID_47546.html)):

***է հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի համապատասխան մակարդակով: Իսկ դա ենթադրում է, որ քննարկվող նպատակի իրականացումը հնարավոր է ստսկ այն դեպքում, երբ այդ բնագավառում ընդգրկված բոլոր սուբյեկտների կողմից հարգանք դրսևորվի հիշյալ մարմնի, նրա լիազորությունների, ուստի՝ նաև որոշումների նկատմամբ: Ակնհայտ է, որ այդ հանգամանքը ՀՀ Սահմանադրության կայունության ու զարգացմանն ապահովման, այդպիսով՝ նաև հայ սահմանադրականության ամրապնդման կարևորագույն գրավականն է: Հետևաբար, կարծում ենք, որ հիշյալ բնագավառում իրականացվող բոլոր քայլերն առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինեն վերոհիշյալ մշակույթի ու դրանով պայմանավորված՝ սահմանադրական դատարանի որոշումների կատարման լիարժեք համակարգի ձևավորմանը:***



## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

**ՀՀ իրավական համակարգում սահմանադրական դատարանի որոշումների զբաղեցրած տեղի և Սահմանադրության կայունության ապահովման գործում դրանց ունեցած դերակատարության ուսումնասիրության արդյունքում կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.**

• Իրավաբանական գրականության մեջ «Սահմանադրության կայունություն» հասկացության առնչությամբ ներկայացված բազմապիսի բնորոշումների համար ընդհանուր է այն, որ վերջինս ենթադրում է սահմանադրական կարգավորումների անփոփոխելիություն: Մինչդեռ կայունության էության հիմքում ընկած է ոչ թե համակարգը այլ համակարգերից մեկուսացնելու ու տեղի ունեցող փոփոխություններից պաշտպանելու, այլ այդ փոփոխությունները կանոնակարգված ձևով հաշվի առնելու համար հնարավորություններ ստեղծելու կարողությունը: Իսկ դա նշանակում է, որ եթե նույնիսկ կայունությունը ենթադրում է անփոփոխելիություն, ապա միայն չփոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Մինչդեռ նույնը չի կարելի ասել հակառակ իրավիճակի մասին, որպիսի պայմաններում համակարգը, տվյալ պարագայում՝ Սահմանադրությունը, պետք է ունենա տեղի ունեցող փոփոխություններին արձագանքելու ու դրանք հաշվի առնելու ունակություն, ինչն իր հերթին պահանջում է, որ քննարկվող հատկանիշը ենթադրի նաև փոփոխությունների հնարավորություն: Հակառակ պարագայում Հիմնական օրենքը կվերածվի «մեռած իրավական ակտի», փաստացի հարաբերություններից անկախ գործող սոսկ փաստաթղթային մի լուծումի, որն իրականում ի վիճակի չէ իրականացնելու իր գործառույթները և կարգավորելու հասարակական հարաբերությունները, ինչը, բնականաբար, կհանգեցնի համակարգի լճացման: Հետևաբար, **Հիմնական օրենքի «կայունություն»**

**նություն» ու «փոփոխելիությունը» կամ «զարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն, և Սահմանադրության կայունությունը չպետք է դիտարկվի որպես Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների անփոփոխելիություն:**

• Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պահանջում է սահմանադրական նորմերի ամրագրման ու իրացման համար անհրաժեշտ որոշակի կառուցակարգերի առկայություն: Այդ առումով կարևոր է, որ կայուն լինելու համար Սահմանադրությունը պետք է ինքնաբավ լինի՝ ունենալով ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար համակարգ և գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները կարգավորելուց բացի առաջ քաշելով դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը: Բացի այդ, անհրաժեշտ է, որ սահմանադրական նորմերը կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն՝ չնայած, անկախ սահմանադրական նորմերի **ամրագրմանն** առնչվող վեր շարադրված տեխնիկայի կարևորությունից, դրանց **իրացման** ընթացքում որպես ելակետ պետք է ընդունել այն տրամաբանությունը, որ սահմանադրական կարգավորումների միջև չկան և չեն կարող լինել հակասություններ: Այլ կերպ ասած՝ վերջիններս անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե միմյանցից մեկուսացված ու միմյանց հակասող եղանակով, այլ դրանց միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա՝ Սահմանադրությունը դիտարկելով որպես միասնական, ամբողջական փաստաթուղթ:

Միևնույն ժամանակ, բացի վերը նշված ներսահմանադրական անհրաժեշտ լուծումներից, Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով, առաջին հերթին՝ **հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի համապատասխան մակարդակով:** Վերջինս է կանխորոշում ինչպես սահմանադրական

ներքին լուծումների բնույթը, այնպես էլ դրանց ամրագրման ու կենսունակության վրա ազդեցություն ունեցող արտաքին գործոններն ու վերջիններիս արձագանքելու մեթոդները: Հետևաբար, քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից այդ հանգամանքը պետք է արժանանա անհրաժեշտ ուշադրության:

• *Կայունությունը Սահմանադրության այն հատկանիշն է, որը ենթադրում է վերջինիս կենսունակություն վերափոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Ընդ որում՝ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում կենսագոյի հիմնական կանոնների շտրջ հասարակական համաձայնություն հանդիսացող Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Հիմնական օրենքն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին, դառնալու դրանց զարգացման խթանը, ինչը ենթադրում է, որ վերջինս պետք է լինի ինքնաբավ, սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն, կարգավորեն ոչ միայն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, այլև առաջ քաշեն դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը, իսկ Սահմանադրությունն արդյունքում պետք է ի վիճակի լինի իրականացնելու իր գործառույթները:*

• *Սահմանադրության զարգացումը Հիմնական օրենքի՝ ներքին փոխկապակցվածության ու ամբողջականության հատկանիշով օժտված այն որակական, նպատակաուղղված ու, որպես կանոն, անդառնալի փոփոխություններն են, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»:*

Չարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխություններին պետք է բնորոշ լինեն ամբողջականությունն ու ներքին փոխկապակցվածությունը, դրանք պետք է կրեն որակական բնույթ, այսինքն՝ տեղի ունենա անցում համակարգի մի որակից

մեկ այլ որակի, և առաջանա համակարգի, տվյալ պարագայում՝ Սահմանադրության, որակապես նոր վիճակ: Կարևոր է և այն, որպեսզի այդ փոփոխությունները նպատակաուղղված լինեն, ու դրանց բնորոշ լինեն իրավահաջորդությունը, նախկինի և ապագայի միջև ակումուլյատիվ (կուտակային) կապի առկայությունը և հենց դրա հիման վրա համակարգի նոր հնարավորությունների ու սահմանադրական նոր լուծումների ձևավորումը:

• Սահմանադրության զարգացումը հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել սոսկ վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու միջոցով, և Հիմնական օրենքի զարգացման կարևորագույն եղանակներից մեկը սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի կողմից տրվող Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունն է: ***Սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը:*** Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության էությունն ընդգծվում է հատկապես Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու բնագավառում, ինչը բավարար ուշադրության պետք է արժանանա ինչպես ՀՀ օրենսդրության կատարելագործման, այնպես էլ հիշյալ նպատակի իրականացման համար համապատասխան սահմանադրական մշակույթի ձևավորման տեսանկյունից:

• Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանը մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը: Ընդ որում՝ այդ մեկնաբանությունն օժտված է պաշտոնական բնույթով, քանզի տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից ու պարտադիր է այն սուբյեկտների համար,

ում հասցեագրված է: Հետևաբար, հիշյալ մեկնաբանության պաշտոնական բնույթը պայմանավորված չէ սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի կողմից Սահմանադրության վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն ունենալու հանգամանքով, ինչը ենթադրում է, որ *թեև ՀՀ սահմանադրական դատարանը չունի նման իրավասություն, սակայն իր լիազորությունների իրականացման ընթացքում նա մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը, ընդ որում՝ այդ մեկնաբանությունն օժտված է պաշտոնական բնույթով*: Ավելին, հաշվի առնելով հիշատակված տարբերակիչ հատկանիշները, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում որևէ այլ դատական ատյան չի հանդիսանում ՀՀ Սահմանադրության մեկնաբանություն իրականացնելու համար հատուկ լիազորված մարմին և չի կարող տալ Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանություն: Դա իր հերթին ենթադրում է, որ *բոլոր այլ պետական մարմինները, այդ թվում՝ դատարանները, պետք է սահմանադրական նորմերը կիրառեն սահմանադրական դատարանի կողմից տրված պաշտոնական մեկնաբանության համատեքստում, այլ ոչ թե մեկնաբանեն Սահմանադրությունն իրենց հայեցողությամբ, քննարկվող մեկնաբանության շրջանակներից դուրս*:

• *Սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս ՀՀ սահմանադրական դատարանի կողմից մեկնաբանության մեթոդները պետք է օգտագործվեն փոխհամաձայնեցված ու համակցված եղանակով*: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մեկնաբանության միակ չափանիշը չի կարող լինել լեզվական առումով հիշյալ նորմերի տառացի նշանակությունը: Դրանց իմաստը վերհանելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն կոնկրետ պատմական հանգամանքները, որոնց պայմաններում ընդունվել է համապատասխան նորմը՝ միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ իրականությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, և Հիմնական օրենքը պետք է ի վիճակի լինի համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առա-

ջընթացին: Հետևաբար, *Սահմանադրության մեկնաբանության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի այն պայմանների բացահայտումը, որոնց շրջանակներում գործում է մեկնաբանվող նորմը, և նպատակահարմար չէ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես հիմք ընդունել սոսկ վերջիններիս ընդունման առնչությամբ սահմանադրի նպատակները, այլ առավել ընդունելի է Սահմանադրության դիմամիկ մեկնաբանության տեսակետը*:

• Մեկնաբանության սահմանների, մասնավորապես, այն հիմնախնդրի տեսանկյունից, թե կարող է արդյոք սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս փոփոխություններ մտցնել հիշյալ նորմերի բովանդակության շրջանակներում, հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեությունն իրականացնելիս, մասնավորապես, Սահմանադրությունը մեկնաբանելիս, ստեղծում է իրավական նորմեր: Սակայն նոր նորմեր ստեղծելու հանգամանքը պարտադիր չէ, որպեսզի ենթադրի գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու միջոցով դրանց իմաստի փոփոխություն: ՀՀ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության արդյունքում ստեղծվող նորմերի նպատակը պետք է լինի գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում վերջինիս բովանդակությունը բացահայտելը, սակայն ոչ հիշատակված շրջանակներից դուրս դրանում փոփոխություններ մտցնելը: Դա բխում է ՀՀ սահմանադրական կարգավորումների տրամաբանությունից, որոնց շրջանակներում նախատեսվել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման բավականին բարդացված կարգ, և հստակորեն սահմանվել են այդ գործընթացի շրջանակներում ընդգրկված սուբյեկտները: Հարկ է նկատել, որ հիշատակված կարգավորմամբ սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելել Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղա-

նակներով, այլ բացառել է *այլ սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը՝ գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու* միջոցով: Իսկ դա հիմք է տալիս եզրակացնելու, որ **թեև ՀՀ Սահմանադրության զարգացումը կարելի է իրականացնել նաև, այսպես կոչված, այլընտրանքային եղանակների, մասնավորապես, վերջինիս մեկնաբանության միջոցով, սակայն այդ ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը չի կարող ստեղծել գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ պետք է սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտի և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր հանի դրանց համատեքստում՝ պահպանելով «տղջամիտ ինքնասահմանափակման» պահանջը:** Ընդ որում՝ պարտադիր չէ, որ Սահմանադրության մեկնաբանությունը լինի տառացի: Այն կարող է լինել նաև տարածական կամ սահմանափակ: **Սակայն բոլոր դեպքերում այդ մեկնաբանությունը պետք է լինի այնպիսին, որ վերջինիս շրջանակներում ապահովվի ՀՀ Սահմանադրության կայունությունը, զարգացումը, գերակայությունն ու անմիջական գործողությունը՝ որպես ելակետ ունենալով այն հանգամանքը, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, և հիմք ընդունելով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը:**

• ՀՀ օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումներն ունեն նորմատիվ բնույթ և հանդիսանում են իրավունքի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնների արտաքին արտահայտման այնպիսի պաշտոնական ձև, որն առավելապես նպաստում է իրավական կարգավորման նպատակների կենսագործմանը և իրավունքի լիարժեք իրականացմանը: Այլ կերպ ասած՝ դրանք հանդես են գալիս որպես իրավունքի ներքին կազմակերպման և արտաքին արտահայտման միջոց, հետևաբար,

**հանդիսանում են ՀՀ իրավունքի աղբյուր:** Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն իրենց առանձնահատկությունների տեսանկյունից էականորեն տարբերվում են ինչպես անգլոսաքսոնական, այնպես էլ ռոմանագերմանական դոկտրինների շրջանակներում առկա մախադեպի տարատեսակներից, հանդես չեն գալիս իրավունքի քննարկվող աղբյուրի տեսքով և հանդիսանում են **նորմատիվ բնույթ ունեցող իրավունքի առանձնահատուկ աղբյուր:**

• Սահմանադրական դատարանի «իրավական դիրքորոշումներ» հասկացությունը բնորոշում է վերջինիս վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հարցերի, հիմնախնդրների առնչությամբ, որն իր արտահայտությունն է գտնում հիշյալ մարմնի ակտերում: Դրանք կարող են ընդգրկված լինել սահմանադրական դատարանի որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում, պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ավելին, *իրավական դիրքորոշումները սահմանափակում են ոչ միայն նշված սուբյեկտներին, այլ նաև հենց իրեն՝ սահմանադրական դատարանին:* Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ ասվածը չի ենթադրում հիշյալ իրավական դիրքորոշումների բացարձակ անփոփոխելիություն: Ակնհայտ է, որ սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական դոկտրինի ձևավորումը ոչ թե մեկանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է: Հետևաբար, վերջինս կարծրացած երևույթ չէ և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է փոփոխվել: Ընդ որում՝ **այդ փոփոխությունն իրականացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բանալին, այն է՝ սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դոկտրինի**

*զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:*

• Իր լիազորությունների իրականացման ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը կարող է բացահայտել վիճարկվող օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը և սահմանափակված չէ այլ դատական ատյանների կողմից տրված օրենքի նորմի մեկնաբանությամբ: Ավելին, այդ մեկնաբանությունը, ինչպես սահմանադրական դատարանի այլ իրավական դիրքորոշումները, պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում՝ քննարկվող բնագավառում վերը նշված դատարանների իրավասությունները սահմանազատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ներքոհիշյալ չափանիշները.

- հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրությունը վճռաբեկ դատարանին է (որպես արդարադատություն իրականացնող մարմին) վերապահել օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու, իսկ սահմանադրական դատարանին՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելու առաքելությունը: Հետևաբար, քննարկվող դատական ատյանների կողմից օրենքների մեկնաբանության ոլորտային եզրագիծը պայմանավորող ելակետային չափանիշը նրանցից յուրաքանչյուրի գործունեության հիմքում ընկած հիշյալ նպատակն է, որպիսի հանգամանքը պետք է լինի այդ մարմինների գործունեության **ինքնասահմանափակման** հիմնական չափանիշը,

- վճռաբեկ դատարանի խնդիրը **սահմանադրական օրենքի միատեսակ** կիրառությունն ապահովելն է, և ոչ թե սոսկ «օրենք» անվանումն ունեցող կամայական փաստաթղթի, ինչը ենթադրում է

նաև օրենքի՝ սահմանադրական պահանջներին համապատասխանող մեկնաբանությամբ կիրառում,

- սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի խնդիրն է մատնանշել այն հանգամանքը, թե օրենքի ինչպիսի մեկնաբանությամբ կիրառումն է համապատասխանում Սահմանադրությանը, այլ կերպ ասած՝ ներկայացնելու իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը, ու որոնցից դուրս կիրառվող նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

- սահմանադրական դատարանը հիշյալ գործառույթը կարող է իրականացնել սոսկ օրենքի կամ վերջինիս համապատասխան դրույթների **սահմանադրաիրավական իմաստը** բացահայտելու, այլ ոչ ընդհանուր առմամբ օրենքի մեկնաբանություն տալու նպատակով,

- այն դեպքերում, երբ օրենքի նորմը հնարավոր է մեկնաբանել տարբեր եղանակներով, և դատարանների կողմից տրված մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը, իրավասությունների սահմանազատման տեսանկյունից նպատակահարմար է, որպեսզի սահմանադրական դատարանը կիրառի այդ մեկնաբանությունը,

- այն դեպքերում, երբ օրենքի նորմը հնարավոր է մեկնաբանել տարբեր եղանակներով, և նորմի ընդունված ընկալման ու սահմանադրական պահանջների միջև առկա է հակասություն, նպատակահարմար է, որպեսզի սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, բացահայտելով վերջինիս սահմանադրաիրավական իմաստը, ներկայացնի նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանությունը,

- հաշվի առնելով սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների տեսակների ու նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերի առնչությամբ ՀՀ օրենսդրության բնագավառում կատարված փոփոխությունները և նկատի ունենալով իրավական կանխատեսելիության սկզբունքի պահ-

պանման անհրաժեշտությունը՝ նպատակահարմար է ձևավորել օրենքի նորմի մի քանի մեկնաբանությունների հնարավորության պարագայում սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների միասնական պրակտիկա՝ կիրառելով «օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանության սկզբունքը» և օրենքի նորմը Սահմանադրությանը հակասող ճանաչելով սոսկ այն դեպքերում, երբ հնարավոր չէ այն մեկնաբանել սահմանադրական պահանջների համատեքստում:

• Թեև 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում ընդունելու հնարավորություն, որը դատավարական օրենսդրությամբ դիտարկվել է որպես նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք, սակայն ՀՀ օրենսդրության մեջ այդ հանգամանքի կապակցությամբ ընդհանուր առմամբ չի դրսևորվել ամբողջական մոտեցում, և այն անհրաժեշտ ուշադրության չի արժանացել քննարկվող կարգավորումներին առնչվող այլ դրույթների շրջանակներում: Մասնավորապես, չկատարված վարչական և դատական ակտերի կատարումը սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելուց հետո իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ անհապաղ դադարեցնելուն, սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը այն ընդունած մարմնի կողմից վերանայման ենթակա լինելուն կամ քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի դրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը վերանայման ենթակա լինելուն առնչվող նորմերը շարունա-

կում են վերաբերել սոսկ **վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված ակտերի** վրա հիմնված դատական և վարչական ակտերին: Մինչդեռ ակնհայտ է, որ գործող օրենսդրական կարգավորումների հիմքում ընկած է ՀՀ սահմանադրական դատարանի մաս հիշատակված որոշումների դեպքում քննարկվող ակտերի վերանայման հնարավորությունն ապահովելու տրամաբանությունը, քանզի միայն այդ պայմաններում կարող է երաշխավորվել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը: Հետևաբար, ՀՀ օրենսդրության բնագավառում անհրաժեշտ է ամբողջական ու հետևողական մոտեցում դրսևորել մաս հիշյալ հիմնախնդրի կարգավորման առումով:

• «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես մաս ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ակնհայտ է, որ օրենսդրական հիշյալ կարգավորումը ենթադրում է ներկայացված բոլոր սուբյեկտների կողմից սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու պարտավորություն այնքանով, որքանով նրանց լիազորությունների շրջանակները կամ գործունեության կոնկրետ տեսակն առնչվում են հիշյալ որոշումների կատարման որևէ ասպեկտին: Այլ կերպ ասած՝ նրանք սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովում են իշխանությունների տարանջատման համատեքստում առկա «զսպումների ու հակակշիռների» համակարգի կողմից տրամադրվող փաստացի հնարավորությունների շնորհիվ: Ընդ որում՝ սահմանադրական դատարանի որոշումների բնույթն ու դրանց կատարման առանձնահատկություններն այնպիսին են, որ այդ շրջանակներից դուրս ներկայացված սուբյեկտները չեն կարող ունենալ որևէ լրացուցիչ իրավասություն,

հետևաբար՝ նաև այլ մարմինների համեմատությամբ առավելություն: Իսկ այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ հնարավոր չէ քննարկվող գործընթացն ապահովել որևէ հատուկ մարմնի, այդ թվում՝ գործադիր իշխանության մարմիններին նմանատիպ սուբյեկտ դիտարկելու միջոցով: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ **քննարկվող որոշումների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններով օժտված առանցքային մարմինը հենց սահմանադրական դատարանն է:** Հատկանշական է, որ վերջինս է օժտված ինչպես իր որոշումների կատարման եղանակը սահմանելու, այնպես էլ դրանց կատարման վիճակն ամփոփելու, այդ բնագավառում առկա հիմնախնդիրները բացահայտելու ու դրանց համապատասխան լուծումներ առաջարկելու հնարավորությամբ: Ընդ որում՝ սահմանադրական դատարանի կողմից արձանագրվող այդ հանգամանքները մեծապես կարևորվում են ոչ միայն քննարկվող ակտերի կատարման վիճակը բարելավելու, այլ նաև ընդհանուր առմամբ պետության իրավական քաղաքականությունը կատարելագործելու ու սահմանադրականության գարգացմանը նպաստելու տեսանկյունից, հետևաբար, դրանք պետք է արժանանան պատշաճ ուշադրության և չեն կարող մնալ անհետևանք: Վերը շարադրվածը հիմք ընդունելով՝ նպատակահարմար ենք համարում ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմում քննարկվող որոշումների կատարման վիճակի վերլուծության հարցերով զբաղվող առանձին կառուցվածքային ստորաբաժանման ձևավորումը, որը կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում հիշյալ գործընթացի համակարգումն իրականացնող հիմնական սուբյեկտը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է բավարար ուշադրություն ցուցաբերել նաև քննարկվող նպատակի համար ստեղծված այլ մարմինների գործունեությանն ու դրա արդյունավետության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, չնայած վերը շարադրված կազմակերպական կառուցակարգերի կարևորությանը, **սահմանադրական դատարանի որոշումների կա-**

**տարման պատշաճ համակարգի ձևավորումը առաջին հերթին պայմանավորված է հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի համապատասխան մակարդակով,** և հիշյալ բնագավառին առնչվող հիմնախնդիրների մեծամասնությունը պատճառ է այդ համատեքստում առկա թերությունների: Դա առավելապես վերաբերում է պետական մարմինների գործունեությանն ու փոխհարաբերություններին: Քննարկվող հիմնախնդիրներին առնչվող միջազգային պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու հիմնական բանալին ոչ թե հիշյալ նպատակի համար հատուկ մարմնի ստեղծումը կամ գործադիր իշխանության մարմիններին դրա համար անհրաժեշտ լիազորություններով օժտելն է, այլ պետական մարմինների համագործակցության, սահմանադրական դատարանի որոշումների կատարման պատրաստակամության համապատասխան մշակույթ ձևավորելը: Իշխանությունների տարանջատման սկզբունքն ինքնին ենթադրում է, որ, ունենալով իրավասությունների հստակ սահմանագատված շրջանակներ, պետական մարմիններն օժտված են մի շարք լիազորություններով, որոնք սերտորեն փոխկապված են միմյանց: Բնական է, որ վերջիններս պետք է իրականացվեն այնպես, որպեսզի հարգանք դրսևորվի կոնկրետ բնագավառում այլ մարմինների ունեցած լիազորությունների, հետևաբար՝ նրանց հեղինակության նկատմամբ: Դա վերաբերում է նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովմանը և ենթադրում է այդ բնագավառում ընդգրկված բոլոր սուբյեկտների կողմից հարգանք հիշյալ մարմնի, նրա լիազորությունների, ուստի՝ նաև որոշումների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարման համակարգի ձևավորումը հնարավոր է սոսկ քննարկվող սուբյեկտների (այդ թվում՝ սահմանադրական դատարանի) միջև փոխադարձ հարգանքի, համագործակցության և նրանց կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանման պայմաններում:

\*\*\*

Սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության էությունն ընդգծվում է հատկապես Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու բնագավառում, ինչը բավարար ուշադրության պետք է արժանանա ինչպես ՀՀ օրենսդրության կատարելագործման, այնպես էլ հիշյալ նպատակի իրականացման համար համապատասխան սահմանադրական մշակույթի ձևավորման տեսանկյունից: Ավելին, սահմանադրական դատարանի որոշումների կատարման պատշաճ համակարգի ձևավորումն է ինքնին պայմանավորված հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի համապատասխան մակարդակով, ու քննարկվող հիմնախնդրի արդյունավետ կարգավորման հիմնական բանալին ոչ թե հիշյալ նպատակի համար հատուկ մարմնի ստեղծումը կամ գործադիր իշխանության մարմիններին դրա համար անհրաժեշտ լիազորություններով օժտելն է, այլ պետական մարմինների համագործակցության, սահմանադրական դատարանի որոշումների կատարման պատրաստակամության համապատասխան մշակույթ ձևավորելը: Իշխանությունների տարանջատման սկզբունքն ինքնին ենթադրում է, որ, ունենալով իրավասությունների հստակ սահմանազատված շրջանակներ, պետական մարմիններն օժտված են մի շարք լիազորություններով, որոնք սերտորեն փոխկապված են միմյանց: Բնական է, որ վերջիններս պետք է իրականացվեն այնպես, որպեսզի հարգանք դրսևորվի կոնկրետ բնագավա-

ռում այլ մարմինների ունեցած լիազորությունների, հետևաբար՝ նրանց հեղինակության նկատմամբ: Դա վերաբերում է նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովմանը և ենթադրում է այդ բնագավառում ընդգրկված բոլոր սուբյեկտների կողմից հարգանք հիշյալ մարմնի, նրա լիազորությունների, ուստի՝ նաև որոշումների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարման համակարգի ձևավորումը հնարավոր է սոսկ քննարկվող սուբյեկտների (այդ թվում՝ սահմանադրական դատարանի) միջև փոխադարձ հարգանքի, համագործակցության և նրանց կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանման պայմաններում, ինչն էլ պետք է դառնա ՀՀ իրավական քաղաքականության հիմնական ուղենիշը:



## РЕЗЮМЕ

### МЕСТО РЕШЕНИЙ КОНСТИТУЦИОННОГО СУДА В ПРАВОВОЙ СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ИХ РОЛЬ В ОБЕСПЕЧЕНИИ СТАБИЛЬНОСТИ КОНСТИТУЦИИ

Монография посвящена раскрытию ряда вопросов относительно правовой природы решений Конституционного Суда Республики Армения и их правовых последствий, а также роли обрассуждаемых актов в обеспечении стабильности Конституции.

В работе решения Конституционного Суда РА впервые комплексно изучены с точки зрения их функции по обеспечению стабильности и развития Основного закона, раскрыто содержание указанных понятий.

Автор определяет стабильность как свойство Конституции, предполагающее жизнеспособность последней в условиях преобразовывающихся общественных отношений. При этом в данном контексте речь не о статической, а о динамической стабильности, когда фундаментальным изменениям не подвергается “ядро”, суть Конституции (как общественного соглашения относительно основных правил жизнедеятельности), однако Конституция сама в состоянии адаптироваться к развивающимся общественным отношениям, быть стимулом их развития. Это, в свою очередь, предполагает, что Основной закон должен быть самодостаточным, конституционные нормы должны составлять взаимосвязанную, систематизированную общность, регулировать не только существующие общественные отношения, но также выдвигать обуславливающие их развитие цели, к которым должно стремиться дан-

ное социальное сообщество, а Конституция в результате должна быть в состоянии осуществлять свои функции.

Автор отмечает, что “развитие Конституции” - это качественные, направленные и, как правило, необратимые изменения Основного закона, обладающие особенностью внутренней взаимосвязанности и системности, в условиях которых сохраняется основное качество системы, “ядро Конституции”. Обосновывается, что развитие Конституции невозможно эффективно осуществлять только путем внесения изменений в ее текст, и что толкование является одним из важнейших способов развития Основного закона. В связи с этим Автор подчеркивает, что хотя Конституционный Суд РА не имеет самостоятельного полномочия по абстрактному официальному толкованию Конституции, он дает толкование Основного закона при осуществлении своих полномочий, при этом данное толкование имеет официальный характер. В данном контексте также обосновывается, что воля конституционного законодателя и буквальное значение конституционных норм не должны быть единственной основой раскрытия содержания последних, и что с точки зрения обеспечения стабильности и развития Конституции целесообразным является ее динамическое толкование. В то же время подчеркивается, что эффективное толкование Конституции Конституционным Судом РА и соблюдение принципа “целесообразного самоограничения” при этом предполагают раскрытие содержания конституционных норм и выявление решений конкретных конституционных проблем в рамках действующих конституционных регулирований, а также согласованное, а не изолированное применение способов толкования в ходе этого.

В монографии исследуется место решений Конституционного Суда в правовой системе Республики Армения. Автор обосновывает, что на основании анализа законодательства РА можно прийти к заключению, что решения Конституционного Суда по

существо дела имеют нормативный характер и являются особым источником права.

В работе представляется также определение понятия “правовые позиции”, согласно которому они характеризуют отношение Конституционного Суда относительно конкретных конституционно-правовых вопросов, проблем, которое отражается в актах указанного органа. Автор обосновывает, что обязательными являются правовые позиции, выраженные как в резолютивной, так и в мотивировочной части решения. При этом подчеркивается, что при осуществлении своих полномочий Конституционный Суд РА может раскрывать конституционно-правовое содержание оспариваемого положения закона и не ограничен толкованием нормы, данным иными судебными органами. В связи с этим Автор представляет критерии разграничения юрисдикции по толкованию законов между Конституционным Судом и иными судебными инстанциями.

В монографии содержатся также предложения относительно формирования эффективного механизма по обеспечению исполнения решений Конституционного Суда. Автор обосновывает, что ключевым органом, наделенным необходимыми полномочиями в данной сфере, является сам Конституционный Суд. Именно последний имеет возможность устанавливать способы исполнения своих решений, а также обобщать состояние их исполнения, раскрывать существующие в данной сфере проблемы и представлять соответствующие предложения по разрешению последних. Вместе с этим Автор считает, что несмотря на значимость вышеуказанных организационных механизмов, формирование надлежащей системы исполнения решений Конституционного Суда в первую очередь зависит от соответствующего уровня конституционной и политической культуры общества, и большинство проблем в данной сфере является результатом существующих в этом кон-

тексте недостатков. Это в первую очередь относится к деятельности государственных органов и их взаимоотношениям. Следовательно, основной предпосылкой обеспечения исполнения решений Конституционного Суда является формирование соответствующей культуры сотрудничества государственных органов и готовности исполнения актов Суда. А это, в свою очередь, предполагает, что достижение обсуждаемой цели возможно только в условиях взаимного уважения между указанными органами (в том числе Конституционным Судом), сопровождаемого соблюдением ими принципа “целесообразного самоограничения”.

## SUMMARY

### **THE PLACE OF THE CONSTITUTIONAL COURT DECISIONS IN THE LEGAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA AND THEIR ROLE IN ENSURING THE STABILITY OF THE CONSTITUTION**

The monograph is dedicated to revelation of a number of issues concerning the legal character of the RA Constitutional Court decisions and their legal consequences, as well as to the role of the discussed acts in ensuring the stability of the Constitution.

The work is the first to complexly study the Constitutional Court decisions from the aspect of their function of ensuring the stability and development of the Basic Law, to reveal the content of the mentioned concepts.

The author defines the stability as a feature of the Constitution, which presupposes viability of the latter in conditions of reorganizing social relations. Moreover, in this context it concerns not static, but dynamic stability, when the “core”, the essence of the Constitution (as a social agreement concerning the main rules of life) isn’t subject to fundamental changes, but the Constitution itself is able to adapt to developing social relations, be a stimulus for their development. The above-mentioned, in its turn, presupposes that the Basic Law should be self-enforcing, constitutional norms should constitute an interrelated, organic integrity, not only regulate existing social relations, but also put forward goals, conditioning their development, to which the given social community should seek, and the Constitution, in consequence, should be able to perform its functions.

The author mentions that “development of the Constitution” is qualitative, directed and, as a rule, irreversible changes to the Basic Law, possessing peculiarity of internal interrelatedness and systemness, when the main quality of the system, the “core” of the Constitution is preserved. It is substantiated that the development of

the Constitution is impossible to carry out effectively only by way of making changes in its text and that interpretation is one of the most important means of the development of the Basic Law. In this connection the author emphasizes that though the RA Constitutional Court doesn’t have a separate authority of the abstract official interpretation of the Constitution, it gives an interpretation of the Basic Law in the exercise of its powers and this interpretation has an official character. In this context it is also substantiated that the will of constitutional legislator and the literal meaning of constitutional norms should not be the only basis for revealing the content of the latter, and that from the perspective of ensuring the stability and development of the Constitution it is expedient to apply dynamic interpretation. At the same time it is emphasized that effective interpretation of the Constitution by the RA Constitutional Court and observance of the principle of “efficient self-restraint” during it presuppose revealing the content of constitutional norms and deducing solutions to concrete constitutional problems in the frames of current constitutional regulations, as well as consistent and not isolated application of the interpretation methods during it.

The monograph considers the place of the Constitutional Court decisions in the RA legal system. On the basis of the analysis of the RA legislation the author concludes that the RA Constitutional Court decisions on the merits of the case have normative character and are a peculiar source of law.

The definition of the concept “legal positions” is also presented in the work, according to which they characterize the attitude of the Constitutional Court to concrete constitutional-legal issues, problems, which is expressed in the acts of the mentioned body. The author substantiates that legal positions, expressed both in the resolute and in the reasoning part of the decision, are obligatory. It is emphasized that in the exercise of its powers the RA Constitutional Court may reveal the constitutional-legal content of the challenged provision of

law and is not bound by the interpretation given by other judicial bodies. In this connection the author presents criteria for delimitation of jurisdiction between the Constitutional Court and other judicial instances in the sphere of interpretation of laws.

The monograph also contains recommendations concerning formation of effective mechanism of ensuring the Constitutional Court decisions' execution. The author substantiates that the initial organ vested with necessary authorities in the noted sphere is the Constitutional Court itself. Just the latter has a possibility to define the ways of the execution of its decisions, as well as summarize the situation of their execution, reveal the problems existing in the given sphere and present recommendations for their solution. At the same time the author considers that despite the importance of the mentioned organizational mechanisms, formation of the proper system of execution of the Constitutional Court decisions primarily depends on the corresponding level of constitutional and political culture of the society and most of the problems in the noted sphere are the result of shortcomings existing in this context. This primarily concerns the activities of the state bodies and their interrelations. Hence, the main prerequisite for ensuring the execution of the Constitutional Court decisions is the formation of corresponding level of cooperation between the state bodies and readiness to execute the acts of the Court. This, in its turn, presupposes that the achievement of the noted goal is possible only in the conditions of mutual respect between the mentioned organs (including the Constitutional Court), accompanied with the observance of the principle of "efficient self-restraint" by them.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ՀՀ իրավական ակտեր

1. ՀՀ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրություն (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով), ՀՀՊՏ, Հատուկ թողարկում, 2005.12.05, Հոդ. 1426
2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-58-Ն, ՀՀՊՏ 2006.06.21/32(487) Հոդ.645, 01.06.2006
3. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-320, ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ.344, 03.04.2002
4. ՀՀ դատական օրենսգիրք, ՀՕ-135-Ն, ՀՀՊՏ 2007.04.18/20(544) Հոդ.489, 21.02.2007
5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՕ-247, 17.06.1998, ՀՀՊՏ 1998.09.09/20(53)
6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-248, 01.07.1998, ՀՀՊՏ 1998.09.21/22(55)
7. ՀՀ վարչական դատավարության օրենսգրիք, ՀՕ-269-Ն, 28.11.2007, ՀՀՊՏ 2007.12.19/64(588) Հոդ.1300

### ՀՀ սահմանադրական դատարանի ակտեր<sup>283</sup>

1. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 4 հոկտեմբերի 2006թ. ՍԳՈ-649 որոշում
2. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 18 հոկտեմբերի 2006թ. ՍԳՈ-652 որոշում
3. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 7 նոյեմբերի 2006թ. ՍԳՈ-664 որոշում
4. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԳՈ-701 որոշում

<sup>283</sup> ՀՀ սահմանադրական դատարանի ակտերն այլ իրավական ակտերից առանձնացված են՝ տեխնիկական մկատառումներից ելնելով:

5. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 2008թ. ՄԳ-Ո-751 որոշում
6. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 27 մայիսի 2008թ. ՄԳ-Ո-754 որոշում
7. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 9 սեպտեմբերի 2008թ. ՄԳ-Ո-758 որոշում
8. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 25 նոյեմբերի 2008թ. ՄԳ-Ո-780 որոշում
9. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30 հունիսի 2009թ. ՄԳ-Ո-810 որոշում
10. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 13 հոկտեմբերի 2009թ. ՄԳ-Ո-833 որոշում
11. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19 հունվարի 2010թ. ՄԳ-Ո-852 որոշում
12. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 10 փետրվարի 2010թ. ՄԳ-Ո-865 որոշում
13. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 4 մայիսի 2010թ. ՄԳ-Ո-881 որոշում
14. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23 նոյեմբերի 2010թ. ՄԳ-Ո-926 որոշում
15. ՀՀ սահմանադրական դատարանը 4 փետրվարի 2011թ. ՄԳ-Ո-934 որոշում
16. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 8 փետրվարի 2011թ. ՄԳ-Ո-936 որոշում
17. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՄԳ-Ո-943 որոշում
18. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 14 հունիսի 2011թ. ՄԳ-Ո-975 որոշում
19. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՄԳ-Ո-984 որոշում
20. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 5 մայիսի 2012թ. ՄԳ-Ո-1027 որոշում (բոլոր որոշումները [www.concourt.am](http://www.concourt.am) կայքում)

21. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
22. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
23. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
24. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
25. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
26. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2012, 292 էջ

#### **Արտասահմանյան երկրների իրավական ակտեր**

1. «Ալբանիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության մասին» օրենք, <http://www.gjk.gov.al>
2. «Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք
3. Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի կանոնակարգ, <http://www.kc.gov.by>
4. Բոսնիայի և Հերցեգովինայի սահմանադրական դատարանի կանոնակարգ, <http://www.ccbh.ba>
5. Գերմանիայի Գաշնային Հանրապետության Հիմնական օրենք, [http://www.gesetze-im-internet.de/englisch\\_gg/index.html](http://www.gesetze-im-internet.de/englisch_gg/index.html)

6. «Բսպանիայի Սահմանադրական դատարանի մասին» օրգանական օրենք, <http://www.tribunalconstitucional.es>

7. «Լատվիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.satv.tiesa.gov.lv>

8. «Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.lrkt.lt/>

9. Լիտվայի Հանրապետության Սեյմի Կանոնակարգ, [http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaicska.showdoc\\_e?p\\_id=389585](http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaicska.showdoc_e?p_id=389585)

10. «Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք, <http://www.usud.hr>

11. «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.mkab.hu/jog/ab-torveny>

12. «Գազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի մասին» օրենք, <http://www.constcouncil.kz>

13. Մակեդոնիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կանոնակարգ, <http://www.ustavensud.mk>

14. «Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.concourt.cz>

15. Ռ-Գ Սահմանադրություն, <http://www.ksrf.ru>

16. «Ռ-Գ Գաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենք, <http://www.ksrf.ru>

17. «Ռ-Գ դատական համակարգի մասին» դաշնային սահմանադրական օրենք, <http://www.ksrf.ru>

18. «Ռ-Գ Սահմանադրական դատարանում Ռ-Գ Նախագահի լիազոր ներկայացուցչի գործունեությունն ապահովելու մասին» Ռ-Գ Նախագահի 31 դեկտեմբերի 1996թ. կարգադրություն, [http://www.innovbusiness.ru/pravo/DocumShow\\_DocumID\\_47546.html](http://www.innovbusiness.ru/pravo/DocumShow_DocumID_47546.html)

19. «Սահմանադրական դատարանի կազմավորման, դատավորների կարգավիճակի և սահմանադրական դատավարության մասին» Սլովակիայի Հանրապետության օրենք, <http://www.concourt.sk>

20. «Սահմանադրական դատավարության մասին» Վրաստանի Հանրապետության օրենք, <http://www.constcourt.ge>

21. «Սերբիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.ustavni.sud.rs>

22. «Սլովենիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.us-rs.si>

23. «Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.constcourt.tj>

24. «Ուկրաինայի Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.ccu.gov.ua>

### **Արատասահմանյան երկրների սահմանադրական դատարանների ակտեր**

1. Ruling of The Constitutional Court of the Republic of Lithuania On the compliance of Part 4, Article 7 and Article 12 of the Law of the Republic of Lithuania "On International Treaties of the Republic of Lithuania" with the Constitution of the Republic of Lithuania of 17 October 1995, <http://www.lrkt.lt/dokumentai/1995/n5a1017a.htm>

2. Decision of The Constitutional Court of the Republic of Lithuania of 12 January 2000, <http://www.lrkt.lt/dokumentai/2000/d000112.htm>

3. Ruling No. 21/2003 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>

4. Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>

5. Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>

6. Постановление Конституционного Суда РФ от 28 ноября 1995 г. N 15-П "По делу о толковании части 2 статьи 137 Конституции Российской Федерации", [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)

7. Постановление Конституционного Суда РФ от 12 апреля 1995 г. N 2-П "По делу о толковании статей 103 (часть 3), 105 (часть 2 и 5), 107 (часть 3), 108 (часть 2), 117 (часть 3) и 135 (часть 2) Конституции Российской Федерации", [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)

8. Постановление Конституционного Суда РФ от 27 января 2011 г., [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)

9. Постановление Конституционного Суда РФ от 31 января 2011 г., [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)

10. Постановление Конституционного Суда РФ от 31 марта 2011 г., [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)

11. Определение Конституционного суда РФ от 8 октября 1998г. N 118-О, [www.ksrf.ru](http://www.ksrf.ru)

12. Չեխիայի սահմանադրական դատարանի 2008/01/31 - Pl. ÚS 24/07 որոշումը

13. Չեխիայի սահմանադրական դատարանի 2009/11/22 - IV. ÚS 956/09 որոշումը

14. Չեխիայի սահմանադրական դատարանի 2011/03/22 - Pl. ÚS 24/10 որոշումը, <http://www.concourt.cz/view/726>

15. Սլովենիայի Սահմանադրական դատարանի U-I-108/91 որոշումը, <http://odlocitve.us-rs.si/usrs/us-odl.nsf/o/299A185ABEFC89FC125717200280761>

16. Իսպանիայի Սահմանադրական դատարանի՝ 7 նոյեմբերի 2007թ. որոշումը, <http://www.tribunalconstitucional.es/en/jurisprudencia/restrad/Pages/JCC2362007en.aspx>

17. Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 1/2007 (I. 18.) AB որոշումը, [http://www.mkab.hu/letoltesek/en\\_0001\\_2007.pdf](http://www.mkab.hu/letoltesek/en_0001_2007.pdf)

18. Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 45/2005 (XII. 14.) AB որոշումը, [http://www.mkab.hu/letoltesek/en\\_0045\\_2005.pdf](http://www.mkab.hu/letoltesek/en_0045_2005.pdf)

19. Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 1997թ. N 3-56/97 եզրակացությունը Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 4 նոյեմբերի 1996թ. եզրակացությունը վերանայելու վերաբերյալ, <http://www.lawbelarus.com/repub2008/sub39/text39295.htm>

20. Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի՝ 24 սեպտեմբերի 2008թ. №7 որոշումը Սահմանադրական խորհրդի՝ 26 դեկտեմբերի 2000թ. № 22/2, 13 դեկտեմբերի 2001թ. № 16-17/3, 18 մայիսի 2006թ. № 2 որոշումները վերանայելու վերաբերյալ, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=11&rid=448>

21. Մոլդովայի Սահմանադրական դատարանի որոշումները՝ 1996-2004թթ. սահմանադրական դատավարություն իրականացնելու վերաբերյալ հաղորդումները հաստատելու մասին, <http://www.constcourt.md/ru/report/>

22. «Ղազախստանի Հանրապետությունում սահմանադրական օրինականության վիճակի վերաբերյալ» 2009, 2010, 2011թ. ընդունված հաղորդումները, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=5>

### **Տեսական գրականություն**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, 1086 էջ

2. Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, 84 էջ

3. Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, Նժար, 2004, 140 էջ
4. ՀՀ սահմանադրական իրավունք / պատասխանատու խմբագիր՝ Այվազյան Ն., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, 736 էջ
5. Նազարյան Հ. ԱՄՆ դատական համակարգը, Երևան, Նժար, 1997, 136 էջ
6. Авакьян С.А. Конституционное право России: В 2-х томах. Том 1. М.: Норма: Инфра-М, 2010, 864 էջ
7. Актуальные проблемы теории государства и права / Отв. ред. Шагиева Р. В. М.: Норма: ИНФРА-М, 2011, 576 էջ
8. Алексеев П.В., Панин А.В. Философия: Классический университетский учебник. М.: ТК Велби, Проспект, 2005, 608 էջ
9. Арутюнян Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии. Киев: Логос, 2011, 308 էջ
10. Арутюнян Г., Баглай М. Конституционное право: Энциклопедический словарь. М.: НОРМА, 2006, 544 էջ
11. Арутюнян Г. Конституционный суд в системе государственной власти /сравнительный анализ/. Ереван, Нжар, 1999, 238 էջ
12. Бондарь Н. Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. М.: Норма: ИНФРА-М, 2011, 544 էջ
13. Бростл А., Клучка Я., Мазак Я. Конституционный Суд Словацкой Республики (Организация, процесс, доктрина). Кошице: Конституционный суд Словацкой Республики, 2001, 200 էջ
14. Бучило Н. Ф., Чумаков А. Н. Философия: Учебное пособие. М.: ПЕР СЭ, 2001, 447 էջ
15. Венгеров А. Теория государства и права. М.: Омега-Л, 2008, 608 էջ

16. Витрук Н. Конституционное правосудие в России (1991-2000гг.): Очерки теории и практики. М.: Городец-издат, 2001, 508 էջ
17. Витрук Н. Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс: Учебное пособие. М., Юристь, 2005, էջ 527
18. Гаджиев Х. Толкование норм Конституции и закона конституционными судами. Баку: Озан, 2002, 168 էջ
19. Головистикова А. Н., Дмитриев Ю. А. Проблемы теории государства и права. М.: Эксмо, 2005, 832 էջ
20. Гуц А. Глобальная этносоциология: Учебное пособие. Омск: ОмГУ, 1997, 212 էջ, <http://www.univer.omsk.su/MER/ch7st.win.htm>
21. Дробышевский С., Данцева Т. Формальные источники права. М.: Норма: ИНФРА-М, 2011, 160 էջ
22. Зорькин В. Современный мир, право и Конституция. М.: Норма, 2010, 544 էջ
23. Кашанина Т. Юридическая техника. М., Норма: ИНФРА-М, 2011, 496 էջ
24. Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В. Д., Лазарева Л. В. М.: Эксмо, 2009, 1056 էջ
25. Конституционный суд РФ: Постановления. Определения. 1997-1998 / Отв. ред. Морщакова Т. Г. М.: Юристь, 2000, 504 էջ
26. Коркунов Н. М. Лекции по общей теории права. СПб.: Н.К. Мартынов, 1909, 364 էջ
27. Кравец И. А. Российский конституционализм: Проблемы становления, развития и осуществления. СПб.: Юрид. центр Пресс, 2005, 675 էջ
28. Кряжков В. А., Лазарев Л. В. Конституционная юстиция в РФ. М.: БЕК, 1998, 462 էջ



29.Кряжкова О. Н. Правовые позиции Конституционного суда РФ: теоретические основы и практика реализации судами России. М.: Формула права, 2006, 152 էջ

30.Курис Э. О стабильности Конституции, источниках конституционного права и мнимом всемогуществе Конституционных Судов // Конституционное правосудие. Вопросы теории и практики. Приложение. Ереван, 2004, 40 էջ

31.Лазарев Л. В. Правовые позиции Конституционного суда России. М.: Городец, Формула права, 2003, 528 էջ

32.Марченко М. Н. Источники права. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, 760 էջ

33.Марченко М. Н. Судебное правотворчество и судебское право. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, 512 էջ

34.Марченко М. Н. Теория государства и права. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, 648 էջ

35. Михалева Н. А. Конституционное право зарубежных стран СНГ. М.: Юристъ, 1999, 352 էջ, [http://pravo.xrcc.ru/book\\_z1019\\_page\\_23.html](http://pravo.xrcc.ru/book_z1019_page_23.html)

36.Новая философская энциклопедия / Под ред. В. С. Стёпина. М., 2001, [http://dic.academic.ru/dic.nsf/enc\\_philosophy/1013/%D0%A0%D0%90%D0%97%D0%92%D0%98%D0%A2%D0%98%D0%95](http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/1013/%D0%A0%D0%90%D0%97%D0%92%D0%98%D0%A2%D0%98%D0%95)

37.Общая теория государства и права: Академический курс в 2-х томах. Том 2 / Отв. ред. Марченко М. Н. М.: Зерцало, 1998, 656 էջ

38.Общая теория государства и права / Под ред. Лазарева В. М.: Юристъ, 2007, 575 էջ

39.Политология: энциклопедический словарь / общ. ред. и сост. Аверьянов Ю.И. М.: Издательство Моск.коммерч.ун-та, 1993, 431 էջ

40.Право и правоприменение в России: междисциплинарные исследования / под ред. Волкова В. М.: Статут, 2011, 317 էջ

41.Правоведение: Учебник / под ред. Мальцева Г. М.: Изд-во РАГС, 2003, 584 էջ, [http://lawtoday.ru/razdel/biblo/pravoved/DOC\\_064.php](http://lawtoday.ru/razdel/biblo/pravoved/DOC_064.php)

42.Пряхина Т. Конституционная доктрина РФ. М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2006, 323 էջ

43.Сандеуар П. Введение в право / Пер. с франц. М., ИнтраТЭК-Р, 1994, 324 էջ

44.Теоретические проблемы Российского конституционализма / Под общ. ред. Хабриевой Т. М.: Ин-т государства и права РАН, 2000, 209 էջ

45.Теория государства и права. курс лекций. Изд. второе, переработанное и дополненное / Под ред. Матузова Н. И., Малько А.В., <http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-1/87.htm>

46.Теория государства и права / Под ред. Корельского В., Перевалова В. М.: Изд. группа НОРМА-ИНФРА.М, 1998, 570 էջ

47.Федеральный конституционный закон "О Конституционном суде РФ": Комментарий / под ред. Витрука Н. В., Лазарева Л. В., Эбзеева Б. С. М.: Юридическая литература, 1996, 352 էջ

48.Червонюк В. Конституционное право России. М.: ИНФРА-М, 2004, 170 էջ, <http://pravoznavec.com.ua/books/97/5891/24/>

49.Balkin J. Living Originalism. London, Cambridge, Massachusetts: The Belknap Press of Harvard University Press, 2011, 474 էջ

50.Barber S. A., Fleming J. E. Constitutional Interpretation. New York: Oxford University Press, 2007, 201 էջ

51.Burgess S. The Founding Fathers, Pop Culture, and Constitutional Law. Ohio University, USA: Ashgate, reprinted 2009, 141 էջ

52.Governmental Systems of Central and Eastern European States / Editors: Chronowski N., Drinóczy T., Takács T. Warszawa: Oficyna Wolters Kluwer Polska, 2011, 844 էջ

53. How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C. Oxford and Portland, Oregon: Hart Publishing, 2011, 501 էջ

54. Kommers D. P. The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany. Durham and London: Duke University Press, 1997, 620 էջ

55. Kūris E. (with others). Constitutional justice in Lithuania. Vilnius: The Constitutional Court of the Republic of Lithuania, 2003, 677 էջ

56. Raadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009, 253 էջ, <http://dare.uvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>

57. The Basic Law of Hungary (A First Commentary) / edited by Csink L., Schanda B., Varga ZS. A. Dublin: Clarus Press, 2012, 622 էջ

58. The Twilight of Constitutionalism / edited by Dobner P. and Loughlin M. Oxford: Oxford University Press, 2010, 368 էջ

59. Twenty Years of the Hungarian Constitutional Court / edited by Paczolay P. Budapest: Constitutional Court of the Republic of Hungary, 2009, 183 էջ

### **Գիտական հոդվածներ**

1. Ալավերդյան Լ. Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը // Սահմանադրական արդարադատության հիմնախնդիրները և զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում (հոդվածների ժողովածու), Երևան, Տիգրան Մեծ, 2007, էջ 157-176

2. Ալվազյան Ն. ՀՀ Ազգային ժողովի մարմինների իրավական վիճակի բարելավման մի քանի հարցեր // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գի-

տաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 79-98

3. Գանիելյան Գ. Իշխանության տարանջատման սկզբունքի նենգափոխման արդի մարտահրավերները // Պետություն և իրավունք, N 2 (28), Երևան, 2005, էջ 5-14

4. Հարությունյան Գ. Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում, <http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan2011.pdf>

5. Ղամբարյան Ա. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման թույլատրելիությունը // Իրավագիտության հարցեր, N 1-2, Երևան, 2009, էջ 47-53

6. Վաղարշյան Ա. Իրավունքի աղբյուրների ու իրավական կարգավորման միջոցների հարաբերակցությունը և հասարակական հարաբերությունների կարգավորման ստորակարգությունը // Պետություն և իրավունք, N 2-3 (32-33), Երևան, 2006, էջ 5-10

7. Абельс Х. Проблема социального порядка в социологии Талкотта Парсонса, 2002, Перевод Минакова А. / под ред. Головина Н. А., [http://sbiblio.com/biblio/archive/abels\\_social\\_order\\_problem/](http://sbiblio.com/biblio/archive/abels_social_order_problem/)

8. Анишина В. И. Правовые позиции Конституционного суда РФ // Российская юстиция, 2000, N 7, էջ 11-12

9. Арутюнян Г. Конституционализм как фундаментальный принцип права в правовом государстве // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, 1(55)2012, էջ 5-16

10. Арутюнян Г. Особенности функционирования Конституционных Судов в условиях общественной трансформации // Доклад на международной научной конференции в Душанбе 4 ноября 2010г., <http://concourt.am/armenian/speeches/index.htm>

11. Балагурова Н. Н. Стабильность конституционных норм и обеспечение их соответствия складывающимся общественно-

политическим отношениям // Вестник Челябинского государственного университета, 2009, № 15 (153), т. 16-19, [www.lib.csu.ru/vch/153/003.pdf](http://www.lib.csu.ru/vch/153/003.pdf)

12. Бастен И. Правовые позиции Конституционного Суда РФ. Понятие, виды, юридическая сила // Вестник Челябинского университета. Серия 9. Право. 2003. №2, т. 14-22

13. Богданова Н. А. Конституционный суд РФ в системе конституционного права // Вестник Конституционного суда РФ, 1997, N 3, т. 59-68

14. Богдановская И. Судебный прецедент и его эволюция // Законность. 2007, N 3, т. 45-46

15. Бондарь Н. Конституционное правосудие – универсальный институт разрешения социальных противоречий современного общества // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(35)2007, т. 5-31

16. Головин А. Правовая природа и юридическая сила актов Конституционного суда Украины // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 58-68

17. Грызлов Б. Конституция останется неизменной, <http://gryzlov.ru/index.php?page=smi&id=223>

18. Даниелян Г. Современные проблемы комментария принципа разделения властей // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(38)2007, т. 50-61

19. Ерошкин Н. Понятие и юридическая природа правовых актов Конституционного Суда Российской Федерации, [www.law-n-life.ru/arch/159/159-7.doc](http://www.law-n-life.ru/arch/159/159-7.doc)

20. Ершова Е.А. Правовая природа постановлений и определений Конституционного Суда Российской Федерации, <http://www.top-personal.ru/lawissue.html?1679>

21. Жуйков В. М. К вопросу о судебной практике как источнике права // Судебная практика как источник права / Отв. ред. Топорнин Б. М.: Институт государства и права РАН, 1997, т. 16-23

22. Загребельский Г. Толкование законов: стабильность или трансформация? // Сравнительное конституционное обозрение. N 3(48)2004, т. 80-82

23. Зорькин В. Д. Прецедентный характер решений Конституционного суда РФ // Журнал российского права, 2004, N 12, т. 3-9

24. Зорькин В. Прецедентный характер решений Конституционного суда РФ // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 3(33)2006, т. 5-37

25. Зорькин В. Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Ереван, 2(40)-3(41) 2008, т. 26-48

26. Иванова Т. Роль Конституционного Суда Республики Беларусь в процессе правообразования: теоретический аспект, [www.law.bsu.by/pub/31/Ivanova4.doc](http://www.law.bsu.by/pub/31/Ivanova4.doc)

27. Иванова Т. Роль органов конституционного контроля в процессе правообразования (на примере Республики Беларусь и Украины), [www.law.bsu.by/pub/31/Ivanova1.doc](http://www.law.bsu.by/pub/31/Ivanova1.doc)

28. Кажлаев С.А. Судебное усмотрение в деятельности Конституционного суда РФ // Журнал российского права, N 11, 2003, т. 153-160

29. Кампо В. Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // Конституционное правосудие: Вестник

Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(47)2010, т. 22-37

30. Каримов К. Конституционный суд Республики Таджикистан в условиях глобализации и интеграции правовых систем // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, т. 156-166

31. Кряжков В. А., Кряжкова О. Н. Правовые позиции Конституционного суда РФ в его интерпретации // Государство и право, 2005, N 11, т. 13-21

32. Курис Э. О стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов // Сравнительное конституционное обозрение, 2004, N 3(48), т. 92-102

33. Кутрис Г., Спале А. Правовые последствия решений Конституционного суда в укреплении конституционного порядка: практика Конституционного суда Латвийской Республики // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 97-106

34. Люхтергандт О. Значение решений Федерального Конституционного Суда для правового порядка Германии // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 123-138

35. Марченко М. Н. Судебный прецедент: разнообразие понятий и многообразие форм проявления // Журнал российского права. М., 2006, № 6, т. 96-107

36. Марченко М. Н. Является ли судебная практика источником российского права? // Журнал российского права, 2000, N 12, т. 11-21

37. Ненадич Б. Основные характеристики конституционного контроля в современной Сербии // Конституционное правосудие:

Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, 3(53)2011, т. 85-103

38. Овсепян Ж. Конституционное судебно-процессуальное право: у истоков отрасли права, науки и учебной дисциплины // Правоведение, 1999, N 2, т. 196-212

39. Остапович И. Толкование Конституции: опыт зарубежных стран, <http://e-lib.gasu.ru/vmu/arhive/2007/01/28.pdf>

40. Папир Х.-Ю. Конституционное правосудие как опора правового государства // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(42)2008, т. 25-29

41. Петрушев В. А. Юридическая природа актов судебного толкования права // Академический юридический журнал, 2000, N 1, т. 53-54

42. Пулбере Д. Соблюдение прав человека и контроль конституционности законов в общем и на примере Республики Молдова // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, т. 58-72

43. Смирнова Е. Конституционная глобалистика: миф или реальность? // Конституционное и муниципальное право, 2012, N 4, т. 2-9

44. Сорокин В.В. Конституция Российской Федерации 1993 года: критерии стабильности, <http://tigr.wordpress.com/2010/02/01/сорокин-в-в-конституция-российской-фе/>

45. Страшун Б. Решения Конституционного Суда Российской Федерации как источник права // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(14)2001-1(15)2002, т. 154-168

46. Студенкина М. С. Вступление федерального закона в силу: правовое регулирование и практика // Журнал российского права, 2000, N 7, т. 10-21

47. Тропер М. Проблема толкования и теория верховенства Конституции // Сравнительное конституционное обозрение, N 4(53)2005, т. 171-181

48. Уитц Р. Об отсутствии определенности в толковании Конституции // Конституционное право: Восточноевропейское обозрение, N1(38)2002, т. 26-35

49. Чигринов С. Решения Конституционного суда в правовой системе Республики Беларусь // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 149-155

50. Arlovic' M. Legal Consequences of Constitutional Court Decisions on the Legal Order of the Republic of Croatia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 156-178

51. Birmontiene T. The Significance of Constitutional Review for the Development of Law // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 69-86

52. Guerra L. Latent and Manifest Functions of Constitutional Courts // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, т. 50-57

53. Guhling H. Problems of Enforcing Constitutional Court Decisions, [http://www.tribunalconstitucional.ad/docs/coloqui\\_justicia/05-HARTMUT%20GUHLING.pdf](http://www.tribunalconstitucional.ad/docs/coloqui_justicia/05-HARTMUT%20GUHLING.pdf)

54. Kališ R. Is the English Doctrine of Judicial Precedent Becoming Only an Illusion?, <http://www.law.muni.cz/sborniky/dp08/files/pdf/mezinaro/kalis.pdf>

55. Ku'ris E. Constitutional Law as Jurisprudential Law – the Lithuanian Experience, with Special Reference to Human Rights // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, т. 104-113

56. L. Van den Hauwe Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics. Brussels, Belgium: Copyright 1999 Ludwig Van den Hauwe, [encyclo.findlaw.com/0610book.pdf](http://encyclo.findlaw.com/0610book.pdf)

57. Macejkova' I. Influence of the Constitutional Court of the Slovak Republic on the monism of the Slovak Legal System // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(43)2009, т. 72-79

58. Maruste R. The Role of the Constitutional Court in Democratic Society, <http://www.juridicainternational.eu/the-role-of-the-constitutional-court-in-democratic-society>

59. Mittal S. Constitutional Stability in a Changing World, [http://politicalscience.stanford.edu/cooperationcolloqpapers/Mittal\\_cooperationmemo.pdf](http://politicalscience.stanford.edu/cooperationcolloqpapers/Mittal_cooperationmemo.pdf)

60. Naumovski B. Constitutional Judiciary in the Republic of Macedonia (Development, Competence, Experience, Challenges and Perspectives) // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, 3(53)2011, т. 164-174

61. Negretto G. L. The Durability of Constitutions in Changing Environments: A Study on Constitutional Stability in Latin America, <http://verfassungswandel.files.wordpress.com/2008/10/14-negretto-paper.pdf>

62. Ordeshook P. C. Constitutional Stability. Pasadena, California, October, 1991, <http://www.hss.caltech.edu/SSPapers/sswp779.pdf>

63. Papuashvili G. Problematic Aspects of Interrelationship between the Constitutional and Ordinary Courts, [http://www.venice.coe.int/WCCJ/Papers/GEO\\_Papuashvili\\_E.pdf](http://www.venice.coe.int/WCCJ/Papers/GEO_Papuashvili_E.pdf)

64. Papuashvili G. Problems of the Constitutional Stability in Georgia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2009, т. 48-51

65. Pavcnik M. Constitutional Interpretation (in Continental Europe), [http://ivr-enc.info/index.php?title=Constitutional\\_ Interpretation\\_%28in\\_Continental\\_Europe%29](http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_ Interpretation_%28in_Continental_Europe%29)

66. Peltason J.W. The Development of the Constitution, <http://www.america.gov/st/usg-english/2008/April/20080416002922eaifas0.5097315.html>

67. Rainer A. The decisions of the German Federal Constitutional Court and their binding force for ordinary courts, [www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer\\_Arnold\\_\(eng\).doc](http://www.constcourt.gov.az/en/download/.../9.../10.Rainer_Arnold_(eng).doc)

68. Twomey A. The Involvement of Sub-national Entities in Direct and Indirect Constitutional Amendment within Federations, <http://camlaw.rutgers.edu/statecon/workshop11greece07/workshop11/Twomey.pdf>

69. Vermeule A. Selection Effects in Constitutional Law. VERMUELEBOOK, <http://www.virginialawreview.org/content/pdfs/91/953.pdf>

70. Walter S. The Execution of the Decisions of the Federal Constitutional Court of Germany // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(10)2000, էջ 24-36

71. Wolcher L. E. Constitutional Interpretation in the United States and the United Kingdom, [http://ivr-enc.info/index.php?title=Constitutional\\_ Interpretation\\_in\\_the\\_United\\_States\\_and\\_the\\_United\\_Kingdom](http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_ Interpretation_in_the_United_States_and_the_United_Kingdom)

72. Zines L. Dead Hands or Living Tree? Stability and Change in Constitutional Law // [2004] AdelLawRw 2; (2004) 25(1) Adelaide Law Review 3, <http://www.austlii.edu.au/au/journals/AdelLawRw/2004/2.html>

## Ատենախոսություններ և ատենախոսությունների սեղմագրեր

1. Օհանյան Վ. Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը ՀՀ-ում (տեսագործնական վերլուծություն), Ատենախոսություն, Երևան, 2009, 170 էջ

2. Вересова Н. Нормотворческая функция Федерального Конституционного Суда Федеративной Республики Германии и Конституционного Суда Российской Федерации: сравнительно-правовой анализ (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). СПб., 2008, [http://elibrary.fines.ru/materials\\_files/refer/A6904\\_b.pdf](http://elibrary.fines.ru/materials_files/refer/A6904_b.pdf)

3. Голдобина З. Г. Активизм и оригинализм в деятельности Верховного суда США и в американской политико-правовой доктрине (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2007, <http://www.usla.ru/structure/dissovet/Goldobina-aref.pdf>

4. Гринева А. Понятие и виды судебных правовых позиций: Вопросы теории (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2008, <http://law.edu.ru/book/book.asp?bookID=1294170>

5. Климович Е. Механизм реализации решений Конституционного Суда Российской Федерации (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Челябинск, 2004, <http://www.dissercat.com/content/mekhanizm-realizatsii-reshenii-konstitutsionnogo-suda-rossiiskoi-federatsii>

6. Кошелева В. В. Акты судебного толкования правовых норм. Вопросы теории и практики (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Саратов, 1999, <http://www.dissercat.com/content/akty-sudebnogo-tolkovaniya-pravovykh-norm-voprosy-teorii-i-praktiki>

7. Красикова А. В. Конституционная юстиция России и Монголии: сравнительно-правовой анализ (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Омск, 2009, omsu.ru/file.php?id=4400

8. Новиков Н. И. Нормативное толкование в механизме правового регулирования (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Ростов-на-Дону, 2009, [http://www.dissercat.com/content/normativnoe-tolkovanie-v-mekhanizme-pravovogo-regulirovaniya?\\_openstat=cmVmZXJ1bi5jb207bm9kZTthZDE7](http://www.dissercat.com/content/normativnoe-tolkovanie-v-mekhanizme-pravovogo-regulirovaniya?_openstat=cmVmZXJ1bi5jb207bm9kZTthZDE7)

9. Румянцева Ю. Е. Официальное толкование норм уголовно-процессуального права (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2008, <http://www.usla.ru/structure/dissovet/Rumyanceva-aref.pdf>

10. Чернышев И. Правовые позиции Конституционного Суда России и Европейского суда по правам человека: генезис и взаимовлияние (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). СПб., 2010, [http://elibrary.finec.ru/materials\\_files/349371422.pdf](http://elibrary.finec.ru/materials_files/349371422.pdf)

### **Վեներաբլի հանճնաժողովի փաստաթղթեր և այլ նյութեր**

1. Advance with the Times // 10<sup>th</sup> National People's Congress and Chinese People's Political Consultative Conference, <http://www.china.org.cn/english/10th/88511.htm>

2. Calvert R. Coordination and Constitutional Change. Washington University in St. Louis, <http://calvert.wustl.edu/downloads/CoordConstChg.MPSA.pdf>

3. CDL-JU (99) 26, Effects, Enforceability and the Execution of the Decisions of the Constitutional Court – the Hungarian Experience // Report by Mr Peter Paczolay (Secretary General of the

Constitutional Court), Budapest, <http://www.venice.coe.int/docs/1999/CDL-JU%281999%29026-e.asp>

4. CDL-JU(99)28, Effects, Enforceability and the Execution of the Decisions of the Spanish Constitutional Court / Report by Javier Garcıa Roca (Professor of Constitutional Law, University of Valladolid, Former Staff Attorney at the Constitutional Court of Spain (Madrid)), <http://www.venice.coe.int/docs/1999/CDL-JU%281999%29028-e.pdf>

5. CDL-INF(2001)3, Report on Co-operation between the Venice Commission and the Republic of Moldova on Constitutional Reform, <http://www.venice.coe.int/docs/2001/CDL-INF%282001%29003-e.asp>

6. CDL-INF (2001) 9, Decisions of Constitutional Courts and Equivalent Bodies and Their Execution // Report adopted by the Venice Commission at its 46th plenary meeting (Venice, 9-10 March 2001), Strasbourg, 17 May 2001, <http://www.venice.coe.int/docs/2001/CDL-INF%282001%29009-e.pdf>

7. CDL-JU (2003) 18, The Binding Effect of Federal Constitutional Court Decisions upon Political Institutions, Report by Ms Anke Eilers (Federal Constitutional Court, Karlsruhe), Strasbourg, 22 May 2003, <http://www.venice.coe.int/docs/2003/CDL-JU%282003%29018-e.pdf>

8. CDL-JU(2004)024, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development // Report by Mr Aivars ENDZIŅŠ (Chairman of the Constitutional Court, Member, Latvia), Strasbourg, 20 February 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDL-JU%282004%29024-e.pdf>

9. CDL-JU(2004)031, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development Thereof // Report by Mr Uno LÖHMUS (Chief Justice of the Supreme Court, Estonia), Strasbourg, 25 February 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDL-JU%282004%29031-e.pdf>

10.CDL-JU(2008)028, Authority of the Constitutional Court as the Precondition of Execution of the Decisions // Report by Gunārs Kūtris, Strasbourg, 2 September 2008, <http://www.venice.coe.int/docs/2008/CDL-JU%282008%29028-e.pdf>

11.CDL-JU(2009)001, Reflections on the Execution of Constitutional Court Decisions in a Democratic State under the Rule of Law on the Basis of the Constitutional Law Situation in the Federal Republic of Germany // Report by Siegfried Bross, Strasbourg, 27 January 2009, <http://www.venice.coe.int/docs/2009/CDL-JU%282009%29001-e.pdf>

12.CDL-JU(2009)011, Practical Approaches to the Issue of Execution of the Decisions of the Constitutional Court of the Republic of Azerbaijan // Report by Raouf Guliyev, Strasbourg, 6 July 2009, <http://www.venice.coe.int/docs/2009/CDL-JU%282009%29011-e.pdf>

13.CDL-JU(2009)013, Effects and Execution of Constitutional Court Judgements // Report by Britta Wagner, Strasbourg, 6 July 2009, <http://www.venice.coe.int/docs/2009/CDL-JU%282009%29013-e.asp>

14.CDL-AD(2010)001, Report on Constitutional Amendment, Adopted by the Venice Commission at its 81st Plenary Session (Venice, 11-12 December 2009), <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29001-e.pdf>

15.CDL-AD(2010)039rev, Study on Individual Access to Constitutional Justice, Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010), <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29039rev-e.pdf>

16.Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities // General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, <http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>

17.Encyclopaedia Britannica, Vol. 5, 1977; Constitutional Law, [http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207\\_Public\\_Law\\_1/Readings/la207\\_encybrit\\_constitutional\\_law.html](http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207_Public_Law_1/Readings/la207_encybrit_constitutional_law.html)

18.Gillman H. Political Development and the Origins of the “Living Constitution”, 2007, <http://www.acslaw.org/files/Gillman-Vanderbilt%20Paper%209-2007.pdf>

19.Ginsburg T., Melton J., Elkins Z. The Lifespan of Written Constitutions/ American Law & Economics Association Annual Meetings, <http://law.bepress.com/cgi/viewcontent.cgi?article=1934&context=alea>

20.Inquiry to Review New Zealand’s Existing Constitutional Arrangements // Report of the Constitutional Arrangements Committee, Presented to the House of Representatives, Forty-seventh Parliament (Hon Peter Dunne, Chairperson), August 2005, [http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH\\_SCR\\_3229\\_2302.pdf](http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH_SCR_3229_2302.pdf)

21.The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Federal Republic of Germany prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Duitsland-EN.pdf>

22.The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of the Republic of Slovenia prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Slovenia-EN.pdf>

23.The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of Republic of Hungary prepared for the XIIth Congress of the Conference of



European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/General%20report-EN.pdf>

24. The relations between the Constitutional Courts and the other national courts, including the interference in this area of the action of the European courts // Report of the Constitutional Court of Bosnia and Herzegovina prepared for the XIIth Congress of the Conference of European Constitutional Courts, <http://www.confcoconsteu.org/reports/Bosnie-Herzegovina-EN.pdf>

25. Thomas Jefferson to James Madison, September 6, 1789; Letter to Samuel Kercheval, July 12, 1816, <http://etext.virginia.edu/etcbin/toccer-new2?id=JefLett.sgm&images=images/modeng&data=/texts/english/modeng/parsed&tag=public&part=244&division=div1>

### Այլ ինտերնետային կայքեր

1. <http://dic.academic.ru/dic.nsf/lower/17858>
2. [www.arlis.am](http://www.arlis.am)
3. <http://www.iuscomp.org/gla/statutes/BVerfGG.htm>
4. <http://www.businessdictionary.com/definition/stability.html>
5. [http://www.oup.com/uk/orc/bin/9780199557745/hw7e\\_ch06.pdf](http://www.oup.com/uk/orc/bin/9780199557745/hw7e_ch06.pdf)
6. <http://www.constitution.ru>

## CONTENT

<b>PREFACE</b>	<b>5</b>
<b>CHAPTER 1. THE STABILITY AND DEVELOPMENT OF THE CONSTITUTION AS A FUNDAMENTAL PREREQUISITE FOR STRENGTHENING THE CONSTITUTIONALISM</b>	<b>10</b>
§ 1. The Stability of the Constitution and its Legal Nature	
§ 2. The Development of the Constitution and its Role in Strengthening the Constitutionalism	40
<b>CHAPTER 2. THE PLACE OF THE CONSTITUTIONAL COURT DECISIONS IN THE RA LEGAL SYSTEM</b>	<b>56</b>
§ 1. The Constitutional Court Decisions as a Peculiar Source of the RA Law	56
§ 2. Legal Positions as Essential Components of the RA Constitutional Court Decisions	77
<b>CHAPTER 3. THE ROLE OF THE RA CONSTITUTIONAL COURT DECISIONS IN ENSURING THE STABILITY OF THE CONSTITUTION</b>	<b>117</b>
§ 1. The Official Interpretation of the RA Constitution as a Fundamental Prerequisite for the Development of the Basic Law	117
§ 2. The Execution of the RA Constitutional Court Decisions as a Guarantee for Strengthening the Armenian Constitutionalism	145
<b>CONCLUSION</b>	<b>193</b>
<b>SUMMARY IN RUSSIAN</b>	<b>209</b>
<b>SUMMARY IN ENGLISH</b>	<b>213</b>
<b>BIBLIOGRAPHY</b>	<b>216</b>

## Anahit Manasyan

Anahit Manasyan was born on 24 June, 1988 in Yerevan, Armenia. In 2004 she entered Law Faculty of Yerevan State University and got her Master's degree in Constitutional Law in 2010. After graduation she continued her studies at Yerevan State University as a Ph.D. student with the specialization on "Public Law – Constitutional, Administrative, Financial, Municipal, Environmental, European Law, Public Administration". In 2013 she defended her Ph.D. thesis – "The Place of the Constitutional Court Decisions in the Legal System of the Republic of Armenia and their Role in Ensuring the Stability of the Constitution" - and received the Ph.D. degree.

In 2008-2009 Ms. Manasyan worked in the staff of the RA Minister of Justice as an expert, in 2009-2013 – at the RA Constitutional Court as the Assistant to the President. Since 2013 she has been the Adviser to the President of the RA Constitutional Court.

Since 2010 Ms. Manasyan has been working at the Chair of Constitutional Law, YSU, as a lecturer. In 2008-2010 she was the President of the Student Scientific Society of YSU Law Faculty. Since 2008 she has been a member of the Bar Association of the RA. Since 2012 Ms. Manasyan has been a member of the editorial group of the Russian Annex to the Bulletin of the RA Constitutional Court, as well as a regional analyst for the International Scientific Journal "Comparative Constitutional Review", published in Moscow, Russia. Since 2013 she has been a member of the editorial board of the South Caucasus Law Journal.

In 2012 Ms. Manasyan did internship at the Constitutional Court of Hungary, in 2013 received training courses in Germany. She took part in several international conferences (including in Moscow, Saint-Petersburg), gave lectures within the frames of international seminars (including in Batumi, Budapest).

She has published more than ten scientific articles devoted to various issues of constitutional law in Armenian and foreign scientific journals.

## Անահիտ Արտյոնի Մանասյան

Անահիտ Արտյոնի Մանասյանը ծնվել է 1988թ-ի հունիսի 24-ին Երևան քաղաքում: 2004թ-ին ընդունվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատ, 2008թ-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրա, որն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ: 2013թ-ին պաշտպանել է «Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում» վերատառությամբ թեկնածուական ատենախոսությունը և ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2008-2009թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարի աշխատակազմում որպես փորձագետ, 2009-2013թթ.՝ ՀՀ սահմանադրական դատարանում որպես նախագահի օգնական: 2013թ-ից ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի խորհրդակցան է:

2010թ-ից աշխատում է ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնում որպես դասախոս: 2008-2010թթ. եղել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության նախագահը: 2008թ-ից ՀՀ իրավաբանների միության անդամ է: 2012թ-ից ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրի ռուսերեն հավելվածի հրատարակչական խմբի անդամ է, ինչպես նաև Մոսկվայում հրատարակվող «Համեմատական սահմանադրական տեսություն» միջազգային գիտական հանդեսի տարածաշրջանային թղթակից: 2013թ-ից տարածաշրջանային «Հարավային Կովկաս իրավաբանական ամսագրի» խմբագրական խորհրդի անդամ է:

2012թ-ին ստաժավորում է անցել Հունգարիայի սահմանադրական դատարանում, 2013թ-ին վերապատրաստվել է Գերմանիայում: Մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների (այդ թվում՝ Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում), դասախոսություններով հանդես է եկել միջազգային մի քանի սեմինարների շրջանակներում (այդ թվում՝ Բաթումիում, Բուդապեշտում):

Հայաստանյան և արտասահմանյան հեղինակավոր գիտական հանդեսներում հրատարակել է մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներ՝ նվիրված սահմանադրական իրավունքի տարատեսակ հիմնահարցերին:

**Մանասյան Անահիտ Արտյունի**

*Սահմանադրական դատարանի  
որոշումների տեղը ՀՀ իրավական  
համակարգում և դրանց դերը Սահմանադրության  
կայունության ապահովման գործում*

**ANAHIT MANASYAN**

**THE PLACE OF THE CONSTITUTIONAL COURT  
DECISIONS IN THE LEGAL SYSTEM OF THE REPUBLIC OF  
ARMENIA AND THEIR ROLE IN ENSURING THE  
STABILITY OF THE CONSTITUTION**

Հանձնվել է տպագրության 10.06.2013թ.

Չափսը 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>:

Ծավալը՝ 15.5 տպ. մամուլ:

Քանակը՝ 300 օրինակ: